Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4573

Մայրենի լեզու

1883

491.99-8
S-45
1883

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
1883

2011

113479-Ա

Дозволено ценз. Тифлисъ. 30 іюля 1883 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул. № 5

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մայրենի Լեզուի երրորդ և չորրորդ տարին հրատարակում ենք չորրորդ տպագրութեամբ: Սոյն տպագրութիւնը անչափ տարբերվում է նախընթացներից. այս անգամ մենք ամենայն կերպ աշխատել ենք, որ մեր գիրքը ներքին բովանդակութեամբ հայկական կեանք ամփոփած լինի իւր մէջ և այդ կեանքն արտայայտուի գլխաւորապէս հայ վիպասանների և գրողների լեզուով: Վերոյիշեալ երկու նպատակներն աչքի առաջ ունենալով, մենք մինչև անգամ թարգմանական յօդուածներից շատերը վեր ենք առել ուրիշներից, թեթև փոփոխութեան միայն ենթարկելով նոցա: Գրքի ցանկը ցոյց կը տայ, թէ որ հեղինակներից առել կամ նուազ օգուտ ենք քաղել:

Գիրքը երկու մասից է բաղկացած: Առաջին մասի բովանդակութիւնն է բնութիւնը՝ տարուայ չորս եղանակների բաժանած: Երկրորդ մասի բովանդակութիւննէ հայրենիքը՝ երկու հատուածի բաժանած՝ ա) Պատկերներ Հայի ընտանեկան կեանքից. բ) Պատկերներ Հայի պատմական կեանքից:

Բնագիտական յօդուածները զետեղած են առաջին մասնում և աւելի դժուարները տպագրուած են մանր № 10 տառերով. սոքա զրուցատրութեան համար են առաւելապէս, քան թէ ընթերցանութեան. աշակերտներին բերանացի պէտք է աւանդել այդ յօդուածների նիւթը, և այնուհետև, որպէս կրկնութիւն, կարդացնել:—Ուր որ բնագիտական առարկաների համար առանձին ուսուցիչ կայ, այնտեղ այդ մանրատառ յօդուածները պէտք է Հայոց լեզուի ուսուցչի շրջանից դուրս համարուին:

Մնացածի մասին թող ինքը գիրքը խօսի և անաչառ կրիտիկան, որ համեմատական տեսակէտը և հանգամանքները աչքից չի գցիլ իհարկէ:

Ցաւում ենք, որ անձեռնհաս գտնուեցանք աւելի հարստացնելու գրքոյկիս երկրորդ հատուածը: Շատ նիւթեր ունէինք ժողոված, բայց նոցանից մի մասը թողեցինք ուրիշ անգամուան:

ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ.

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ—ՏԱՐՈՒԱՅ ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

I. ԳԱՐՈՒՆ.

	երես
1) Գարուն՝ Րաֆֆի	1
2) Զատկից յետոյ՝ Պռօշեանց	»
3) Բնութեան կենդանանալը (Ա. Բ. Գ.)՝ Պռօշեանց	2
4) Ձագեր	7
5) Գարուն՝ Պէշիկթաշլեան	»
6) Դաշտումը	8
7) Երեխան դաշտումը՝ Թարգ. Ղուկասեանց	10
8) Անտառը և նորա օգուտը	11
9) Ծառերն ու կացինը՝ Խ. Աբովեանց	12
10) Կաղնի և եղէգն՝ Թարգ. Այվազեան (Կռիլովից)	»
11) Բոյսերի մասերը և նոցա բեղմնաւորութիւնը (Ա—Է.)	14
12) Վարդի ոստ՝ Զալալեանց	20
13) Էշն ու սոխակը՝ X.	21
14) Սար գնալը՝ Խ. Աբովեանց	22
15) Ոստիկ՝ Գամառ-Քաթիպայ	23
16) Բերդապատիկ՝ Սրուանձտեան	24

II. ԱՄԱՌ.

17) Ամառ՝ Րաֆֆի	29
18) Երկու խոփ	»
19) Վանեցի գեղջուկի տաղը՝ Գամառ-Քաթիպայ	30
20) Երաշտ՝ Պռօշեանց	»
21) Ամպեր՝ Կ. Մ. Շահնազարեան	34
22) Կարկուտ՝—Նոյն	»
23) Կալոցի ժամանակ՝ Գեղամեան	37
24) Կալի երգ՝ Արարատեան	»
25) Մի հոգի երկու մարմնի մէջ՝ Թարգ. Յ. Նազարեանց	39
26) Պարտիզպան՝ Աղայեանց	40
27) Ամառն Երևանում (Ա. Բ.)՝ Խ. Աբովեանց	»
28) Արամը (արտաքին զգայարանքներ)	44
29) Գարեգինը (գլուխ)	46
30) Արշաւիրը (ներքին գործարաններ)	48
31) Հարստութիւն՝ Թարգ. Ղուկասեանց	50
32) Ծնողասիրութիւն՝ Նոյն	51
33) Մարդու մարմնի անդամները	52
34) Հրաշալի տնակ	53
35) Բարեխիղճ խափշիկը՝ Թարգ. Ղուկասեանց	54
36) Երախտապարտը և իւր տուէրը (Կռիլովից)	»
37) Գիւղական և մշակ՝ Այվազեան (Կռիլովից)	55
38) Կապկի եղբայրը	56
39) Կապիկներ՝ Այվազեան (Կռիլովից)	59
40) Հետաքրքիր—Նոյն	60
41) Ոչխար	61
42) Արամազդը և ոչխարը	64
43) Հովիւ և մոծակ՝ Այվազեան (Կռիլով)	65
44) Գայլ և գառն՝—Նոյն	66
45) Ձի	67
46) Արամազդը և ձին	69
47) Կով	70
48) Փիղ	71
49) Փիղը և փոթոթը (Կռիլովից)	75
50) Կատուն ամէն մարդու տան զարդն է՝ Պռօշեանց	»
51) Մուկն ու կատուն՝ Խ. Աբովեանց	77
52) Առիւծն ու վագրը	78
53) Հաւատարիմ շուն	79
54) Հօտ	81
55) Կոյր հովիւներ՝ Րաֆֆի	»

III. ԱՇՈՒՆ.

56) Աշուն՝ Րաֆֆի	82
57) Աշունք՝ Պռօշեանց	»
58) Այգեկութ՝—Նոյն	83

59) Քամին և արևը՝ Թարգ. Ղուկասեանց 85
60) Բաժինք՝ Կռիլովից . . . . »
61) Ագահութեան պտուղը՝ Թարգ. Ղուկասեանց 87
62) Թռչուններ . . . . »
63) Թռչունների տեսակները 89
64) Արծիւն ու հաւը՝ Թարգ. Ղուկասեանց 93
65) Սագեր 94
66) Թռչունի երգը 95
67) Կենդանիների լեզուն՝ Մամուրեանց 98
68) Կարապը, ձուկը և խեչափառը՝ Կռիլովից . . . . »

IV. ՁՄԵՌ.

69) Ձմեռ՝ Րաֆֆի 99
70) Ձմեռ՝ Խ. Աբովեանց 100
71) Երկու այծ 101
72) Աղքատ կին՝ Նալբանդեանց . . . . »
73) Արդար դատաստան՝ Թարգ. Յ. Նազարեանց 103
74) Գիւղական և մահ (Կռիլովից) 105
75) Օդ 106
76) Ջուր (Ա. Բ.) 109

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅԻ ԱՌՏՆԻՆ ԿԵԱՆՔԻՑ.

77) Հայի գերդաստանը՝ Աղայեանց 115
78) Մեծ նանը՝ Պռօշեանց 116
79) Դրխջակ՝ Նոյն 118
80) Գիւղացու երջանկութիւնը՝ Խ. Աբովեանց 120
81) Ջրօրհնէք՝ Պռօշեանց 124
82) Հայի բարեկենդանը՝ Նոյն 126
83) Բերան-փակէք՝ Նոյն 132
84) Մեծ պասի երկուշաբթին՝ Նոյն 138
85) Ցիմար իմաստունք՝ Նոյն 140
86) Ձիք չորեքշաբթի՝ Նոյն 142

87) Ուլթի ուրբաթ՝ Ազգային աւանդութիւն 143
88) Դրընդէզ՝ Պռօշեանց 144
89) Ախտա՝ Նոյն 145
90) Ուխտագնացութիւն՝ Նոյն 147
91) Ուխտագնացների մալահալթը 150
92) Նախապաշարմունք (Ա. Բ.)՝ Գեղամեանց 152
93) Բառախաղ և շուտասելուկ՝ Գ. Յովհաննիսեան 154
94) Հանելուկներ՝ Նոյն 158

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ.

95) Մարդու ստեղծագործութիւնը 161
96) Հայի նախահայրերը 163
97) Հայկի պատերազմը Բէլի դէմ 165
98) Արամի քաջագործութիւնները 168
99) Սիրէր քո հայրենիքդ և քո ազգդ 170
100) Առ Մայրենի լեզու՝ X. 171
101) Ուսիր առաջ քո մայրենի լեզուն 172
102) Մայրենի լեզու՝ Խ. Աբովեանց 173
103) Մայրենի լեզու՝ Ս. Նազարեանց 175
104) Արայ գեղեցիկ 176
105) Արայ գեղեցիկի երգը՝ Շահազիզեանց 178
106) Տիգրան Երուանդեան . . . . »
107) Վահէն և Հայկազանց թագաւորութեան վերջանալը. . 182
108) Քաջի նկարագիրը՝ Խ. Աբովեանց 183
109) Աբգար թագ. և քրիստոնէութեան սկիզբը Հայաստանում. 186
110) Շուշան Շաւարշանայ՝ Ալիշան 190
111) Տրդատ թագաւորը և Գրիգոր Լուսաւորիչը 192
112) Մեծն Ներսէս 197
113) Մեծն Սահակ Պարթև 199
114) Քահանայ՝ Պատկանեան 201
115) Մեսրոպ վ. և հայոց տառերի գիւտը 203
116) Վայր ընկնող աստղեր՝ Նալբանդեանց 205
117) Մէկ անմոռանալի բան՝ Պռօշեանց 207

118) Մի այլ Ներսէս՝ Նոյն. 212
119) Հինգերորդ դարի Հայերը և Վարդանանց պատերազմը . 219
120) Հինգեր. դարի Հայ-կանայքը՝ Եղիշէ 235
121) Վահան Մամիկոնեան 239
122) Ձիրիդ խաղացողները՝ Խ. Աբովեանց. 242
123) Աղասու վիճակն ու հոգսերը՝ Նոյն 245
124) Աղասին Անիի աւերակներում՝ Նոյն. 252
125) Ինչեր կարող է անել քաջութիւնը՝ Նոյն. 258
126) Արաքսի արտասուքը՝ Պատկանեան 264
127) Պանդուխտ առ կռունկն՝ Ժող. երգ 266

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

(ԵՐՐՈՐԴ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ-ՏԱՐՈՒԱՅ ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ։

ԳԱՐՈՒՆ

Գալիս է գարուն, նոր կեանք է բերում՝
Վարդ ու շուշանը բացվում են, բուրում.
Թարմ և ծաղկազարդ փայլում է տերև.
Մանուկ զօրութեամբ ծագում է արև։
Շնչում է անտառ։ Երգում է ծիծառ։
Վաղորդեան ցօղը սփռում է գոհար.
Կանաչ հովիտը վառվում է պայծառ։
Զարթեց բնութիւն կուսական խանդով.
Դէպ գործ մեղուներ դիմեն եռանդով.
Վաղ առաւօտեան ձայնը կոչնակին
Կանչում է դէպ դաշտ չարքաշ մշակին։

2. ԶԱՏԿԻՑ ՅԵՏՈՅ

Զատկից յետոյ Այրարատումն ով լինի, աչքին մի նոր բան կ՚երևայ. բոլորը ծառ ու տունկ է. կանաչները նոր դուրս

եկած՝ ցընծլին են տալիս այգիների ափերումը. ուռի ծառերը՝ բաց արած իրանց լեզուակ տերևները, գարնան մեղմ քամուց խշխշալով՝ իրար են դիպչում, հէնց իմանաս թէ՝ իրար բարևում են. պտղատու ծառերը իրանց կարգին՝ որը կոկոնել է, կարծես շարած մարգարիտ լինի, որն էլ ծաղկել է եօթանասուն տարեկան ալևորի նման. մանուշակն ու յասմիկը իրանց անուշ հոտերովը քաղցր քուն են բերում այգու մէջ զբօսնողին. մանուշակը պստիկ հարսի կամ համեստ աղջկայ նման գլուխը կախ է գցել, մտել է խոտերի տակը, որ մի գուցէ երևալը հպարտութիւն համարուի. իսկ յասմիկը իւր թփի վերայիցը ճիթ-ճիթ կախընկած ու հոտով աշխարհքը լցրած՝ հէնց իմանաս թէ կանչում է անցկենողին, որ առանց իրան ու իւր պարկեշտ քրոջը տեսութիւն գալու՝ չ՛անցկենայ, չ՛գնայ. վարդն էլ ձմեռուան մերկութիւնից դուրս եկած՝ հագել է կանաչ ատլաս շորեր և իւր՝ ոսկի կոճակի նման կոկոններովը իմաց է տալիս, թէ ես ուղարկել եմ ինձանից առաջ իմ քոյր մանուշակին, որ ձեզ ուրախացնէ, մինչև որ ես էլ կը գամ իմ մէկէլ ընկեր ծաղիկների հետ։ Այսպէս ամէն բան իրանց կարգն ընկած՝ մի ուրախութիւն էին բերում մարդու վերայ Կարմիր կիրակի օրուան առաջին շաբաթ օրը։ Սարեակներն էլ՝ ծառի ճղներին կանգնած, կարմիր արեգակի դիմացը հազար ու մի տեսակ ճլվլացնում էին ու իրանք ածում, իրանք պարում։

Յ. ԲՆՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆԱՆԱԼԸ

Ա.

Մայիս ամիսն է. գարունը իւր բոլոր փառաւորութիւնով ամէն շնչաւորների վերայ իւր հրաշալի տպաւորութիւնն է ներշնչել։ Վարդահոտը բարակ զեփիւռի շնորհիւ ամէն

կողմը հետը ման է գալիս. լեռ ու դաշտ կանաչներով, սէզերով և «սիրի սիրի» համեստ երեքտերևեան խոտերով զարդարուել են. հազարաւոր գոյնզգոյն ծաղիկները՝ երեսիդ ծիծաղում՝ խնդում են, և առհասարակ մի բուռը հող եղած տեղը բուսական թագաւորութիւնը իւր գահն է դրել։

Քարափների ծերպերիցն էլ կեանք է արտադրվում. մի կտոր կոշտ ընկած տեղն էլ կանաչի գլուխ է դուրս ցցուել. էլ ապառաժ ու մերկ գետին չէ մնացել։ Աքանչելի է մայիսը։ Թռչունները իրանց աղուամազ ձագերի համար կերակուրներ են տանում։ Ո՛ւր է վազվզում օդի մէջ ծլվծլվան ծիծեռնակը։ Նայի՛ր այն ճնճղուկի կամ փայտփորի բներին. ի՜նչպէս քնքուշիկ ձագուկները՝ գեղին երիզը կտուցի չորս կողմը, բաց են անում իրանց բերանները և լեզուիկները հանած, ճիչ ու ծվվոց բարձրացրած՝ կերակուր են խնդրում իրանց մօրից. ի՜նչ քաղցր *ճռուողիւն* են բարձրացրել նոքա։

Սակայն այնպէս չէ կարգադրել բնութեան ամենագէտ Արարիչը. թո՛ղ ինչքան ուզում են սիրուն ճուտիկները միմեանց առաջը կտրեն. մայրը իւր կարգը լաւ գիտէ. նա հերթը չէ կորցնում, նա իւր հաշուի մէջ չէ սխալվում։ Նա լաւ գիտէ, թէ առաջ կերակուրը ո՛րի բերանն է դրել. նա դեռ այն էլ է հասկանում, թէ իւր ընկեր արուն ո՛րին է կերակրել։ Նա ուրախանում է իւր նախշունիկների վերայ. մի երկու րոպէ էլ կանգ է առնում բնի մօտ, քրքրում է իւր կտուցիկով ձագերի գեղին, փափուկ բուրդը, փափկացնում է նոցա անկողինը ու յետ է թռչում կրկին դէպի դաշտը։

Բ.

Աչքդ միւս կողմը դարձրո՛ւ. և ահա՛ ծառերի ճղնիկների վերայ երջանկագոյն ծտերը հպարտ հպարտ ոստից-ոստ թռչկոտում են ու ցոյց տալիս իրանց կողքներին դողալով կանգ-

նած զաւակներին թռչելու ձևը։ Մի քանի անգամ այս կողմից այն կողմն են անց կենում, սիրտ են տալիս առաջին անգամ բնից դուրս թողած ձագին, որ հետևէ իրանց օրինակին, չ՚վախենալով իրանց առաջևը բացուած անհուն տարածութիւնից, որտեղից մայրիկը անահ թևերը շարժելով՝ այնպէս վստահ լողում է։

Փոքրիկ միամիտ ճուտերը՝ չ՚գիտենալով իրանց թևերի ոյժը, սկզբումը մի քանի րոպէ զարհուրական ծիվոցներ են բարձրացնում, լալիս են մօր յետևից, աղաչում են, որ իրանց մենակ չ՚թողնէ, վզները ներս են քաշում և այդպիսով ուզում են իրանց սիրող ծնողների գութը շարժել։ Բայց ոչ. ամենօրեայ խնամող մայրը այսօր փոխուել է, նա քարասրտացել է. նա թռել գնացել է միւս ծառի վերայ կանգնել. բռնել է կտուցի մէջ անուշահամ կերակուրը և խոստանում է նորա՛ բերանը դնել, ո՛վ որ սիրտ կ՚անէ իւր մօտը գալ։ Ի՞նչ պէտք է անել. եթէ մայրիկը կանչում է, ուրեմն մի բան գիտէ, ուրեմն հեշտ է այս փոքր տեղն անց կենալ, պէտք է սիրտ անել ու բաց ընկնել օդի մէջ։

Ո՜հ, ի՜նչ ուրախութիւն, ի՜նչ հեշտ բան է. իրանք էլ միմեանց յետևից թև շարժեցին, այժմ իրանք էլ կանգնած են մայրիկի մօտ։ Մի քանի անգամ ձագերը մօր հետ այդ փորձն արին, միւս անգամին էլ նորա խօսքը չեն լսում. նոքա այժմ աւելի մեծ տարածութիւն կտրեցին։ Այժմ նոքա նոր խաղ ու պարապմունք են գտել. հիմա իրանք էլ կատարելահասակ են։

Մի այլ տեղում՝ անտառում ու ձորակներում, առուակների խոխոջիւնն ու ծառերի շառաչիւնն են միմեանց յետևից ներդաշնակօրէն միանում։ Միւս կողմը, ձորահովտի թմբին, ուր երեկ այցելուն ծարաւ պապակում էր, այսօր մի պարզ ու սառնորակ աղբիւրակ ծիծաղելով վազում ու սահում է փոքրիկ ձորի մացառուտների ու թփերի միջով։

Իսկ այդ առուակների և կարկաչող աղբիւրների ափերին բուսած հազարերանգ ծաղիկների վերայ թևերը շարժելով՝ աչքերը խտտղեցնող թիթեռնիկները երկնային գեղեցկութիւն են տալիս այս հրաշալի երևոյթին։ Մանաւանդ, երբ դոցա հետ միանում է աշխատասէր մեղուն, որ ծաղկէ ծաղիկ թևածելով, իւր համար մեղրի պաշար է պատրաստում։

Գ.

Ի՜նչ ախորժալուր է հովուական սրնգի ձայնը մայիս ամսին, երբ նա մի քարի վերայ նստած, կամ լերան գլխին թեկնած՝ սուլում է ինքնագոհ։ Դուք չ՚կարծէք, թէ նա միայն իւր սրտի ուրախութեան համար է անում. ոչ. նա դորանով հասկացրեց իւր սիրելի հօտին, թէ ժամանակ է ժողովուիլ իւր չորս կողմը և գնայքն ուղղել դէպի փարախը, ուր սիրունիկ գառները սպասում են լսելու իրանց սիրելի մայրիկների մայիւնը։

Ո՜հ, ի՜նչ հրաշալի տեսարան, ի՜նչ քաղցր րոպէ է։ Գառները լսում են հեռուից մօր ձայնը և անհամբերութիւնից ուզում են կոտրատել գմուկի դուռը, դուրս թափուիլ դիմաւորելու ամենաթանկագին մօրը, որ իրանց համար կուրծը լիքը ախորժահամ կաթն է բերում։ Մինչև որ հովիւը բաց կ՚անէ գմուկի դուռը, ուլերը՝ այն ճարպիկ, պստիկ սատանաները, քիչ է մնում, որ բարձրանան նորա ուսերը։

Նախանձելի է հովուի դրութիւնը հօտի վերադառնալու ժամանակ։ Գառն ու ուլի մկկոցը, այծ ու ոչխարի հարայհրոցը՝ նորա սրտի վերայ անպատմելի տպաւորութիւն են գործում։ Ոչ ոք չէ կարող բոլոր ցուերը չ՚մոռանալ այն միջոցին, երբ գառնուկները իրանց փափլիկ դմակները շարժելով՝ և ուլերը իրանց անհանգիստ պոչուկները խաղացնելով՝ իրար գլխով են դիպչում։

Գառն ու ոչխար իրար են խառնվում և նոցանից իւրաքանչիւրը աշխատում է գտնել իւր մօրը կամ ձագին։ Բաւական է, որ մագի ոչխարը մի փոքրիկ հոտոտէ, իսկոյն յետ է խփում իրան մօտեցող օտար գառանը և հոտոտելիքը դէպի վեր բռնած՝ ցատկում է դէպի այն կողմը, ուր իւր սիրելի հարազատն է։ Մօր անոյշ մայիւնը և խանդաղատական ակնարկը թափանցում է անմեղ գառնուկի սիրտը և վստահութիւն է տալիս նորան վազելու դէպի ինքը եկող ոչխարի կուրծը. իսկ վերջինս իսկոյն ոտքերը յետ է բաց անում և թոյլ է տալիս իւր ամենասիրելի զաւակին փչփչալով ծծել իւր պտուկները։ Եւ իւր սրտի ուրախութիւնն ու մայրական քաղցր զգուանքը աւելացնելու համար՝ նա անդադար լիզում է փոքրիկ գառնուկի թաւշանման մորթը։

Անխիղճ են այդ միջոցին մարդիկ. նոքա իրանց կենսական պիտոյքը հայթհայթելու համար՝ խլում են խեղճ գառան բերանից նորա մօր պտուկը և կաթնի մեծ մասն իրանք են կթում։ Անբան անմռունը ի հարկէ լաւ գիտէ մարդկանց անիրաւութիւնը. ինչքան էլ նոքա կթեն, նա իւր զաւակի բաժինը թագցնում է իւր կուրծի մէջ։

Ուշադրութեան արժանի է նաև կթողների իրարանցումը։ Գալիս են մանկահաս հարսները և մատաղահաս աղջիկները։ Նոքա շատ լաւ գիտեն ճաշուայ կթի ժամանակը։ Գիւղական փարախները առհասարակ շինուած են լինում գիւղից ոչ հեռու, մի ձորամիջում կամ բլրի ստորոտում, քամուց և տօթակէզ արեգակից ապահով։ Եւ ահա մեր ամօթխածները ուսում կամ շալակում են կովկիթն ու կճուճները, գլխներին դնում են կաթ-քամիչը ու մաղը և գիւղից միասին դուրս գալիս՝ երեք երեք, չորս չորս, խումբ խումբ բաժնուած՝ խնդալով, կատակներ անելով գալիս են փարախը և սպասում են արօտից հօտի վերադառնալուն։

---

4. ՁԱԳԵՐ

Ոչխարի գառը, այծի ուլ, կովի հորթ, ձիու քուռակ, մտրուկ, շան լակոտ, կ ո ր ն ա կ, արջի քոթոթ, առիւծի կորիւն, կատուի ձագ, հաւի ճուտ՝ վ ա ռ ե կ, էշի աւանակ, խոզի խոզուկ, ուղտի կոզակ, գայլի գայլակորիւն, եղնիկի եղնորթ, բազէի զաւազ։

5. ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ի՜նչ անուշ և ի՜նչպէս զով
Առաւօտուց փըչես, հո՜վիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով,
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չ՚ես հովիկ իմ Հայրենեաց,
Գնա՜, անցի՜ր սրտէս ի բաց։
Ո՜հ, ի՜նչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չ՚ես թռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա՜, թըռի՜ր սրտէս ի բաց։
Ո՜հ, ի՜նչ մրմունջ հանես վըտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քո հայելւոյդ մէջ անապակ
Նայեն գիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չ՚ես վտակ իմ Հայրենեաց,
Գնա՜, հոսէ սրտէս ի բաց։
Թէպէտ թռչնիկն և հովն Հայոց
Աւերակաց թռչին վերայ,

Թէպէտ պըղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ.
Նոքա յառաչք են Հայրենեաց,
Նոքա չ'երթան սրտէս ի բաց։

6. ԴԱՇՏՈՒՄԸ

Ո՛րքան հիանալի է լայնատարած դաշտը, ինչ հրաշալի ընդարձակութիւն, ինչ բազմազիմի տեսարաններ ես նշմարում չորս կողմդ։ Ահա հարուստ վարելահողերը—արտերը՝ աշխատասէր գիւղացու քրտնքի վաստակով գանգրաւորուած, տատանում են իրանց պտղալի հասկերը։ Ցորենի, գարու, հաճարի, վուշի արտերը օրօրուելով, քաղցր ժպիտը բերանին, ողջունում են միմեանց. մեղմ զեփիւռը խաղում է նոցա վերայ և երկրագործը՝ կանգնած մօտակայ բլրակի գլխին, զուարճանում է, տեսնելով իւր արտերի հէրանց գնալը։ Արեգակի ճառագայթները փողփողում են նոցա վերայ։ Բայց ահա մի մութ ստուեր երկչոտութեամբ սահեց արտերի երեսով. դա մի կտոր ամպ էր, որ մի րոպէում՝ զովարար ողջոյն մատուցանելով, անցաւ նոցա վերևից. դա եկաւ իմանալու, թէ արդեօք ծարաւ չե՞ն նոքա և իրանց ծաղկած հասկերի դատարկ պտղամանները լցնելու համար կարօտ չե՞ն իւր օգնութեանը։ Գիւղացին ձեռքերը տարածեց. «Աստուած իմ, դարձեալ մի առատ անձրև, և այնուհետև ես կարող եմ անվրդով ննջել ցերեկուան դաժանելի աշխատանքից յետոյ։ Աստուած լսեց բարի գիւղացու ջերմ աղաչանքը և մեղմ անձրևը, երեկոյից մինչև առաւօտ, ոռոգեց ամբողջ դաշտերը։ Գիւղացին ուրախացաւ. այժմ նա հաց կունենայ իւր ընտանիքի և դարման իւր անասունների համար։ Այդ անասուններն և շատ են նորան հարկաւոր։ Դոցա կաթը նա ուտում է, դոցանով է հերկում երկիրը, մինչև անգամ դոցա աղբը գործ է դնում հողը պարարտացնելու։ Վարուցանքի համար հիւթալի սևահող է հարկաւոր. դատարկ աւազի կամ կաւի վերայ հացաբոյս չի բուսնիլ։ Կան այնպիսի տեղեր, ուր ի հնուց բոյսերի և կենդանիների մնացորդների փտելուց սևահող է գոյացել—այդպիսի տեղերում գիւղացին համարձակ սերմն է ձգում. բայց կան և այնպիսի նիհար տափեր, ուր հարկաւոր է արուեստա-

կան կերպով հողը պարարտացնել՝ ամենատեսակ աղբ ածելով, որովհետև աղբից սևահող է գոյանում։ Սակայն այս պատուական միջոցը ամենայն տեղ չէ գործադրվում։ Հայ գիւղերից շատերում դու՝ թէ գիւղամիջում, տների առաջը, և թէ գոմերում, դիզած կ'տեսնես անասունների աղբի մեծամեծ բլուրներ, որոնք իրանց արտաշնչութեամբ ապականում են օդի մաքրութիւնը. նոյն գիւղի վարելահողերի մէջ շատերը պտղաբերութեան ընդունակութիւնից բոլորովին զրկուած կ'գտնես. բայց տես ծուլութեան, թէ ագիտութեան պտուղը. գիւղացին պատրաստ է երեք-չորս տարով առանց վարելու թողնել ուժից ընկած օրավարը, պատրաստ է մուրալ, մինչև անգամ վերջին կոպէկը տալ և իւր հարևանի աւելորդ օրավարը վարել, քան թէ իւր դրան առաջ սարացած աղբը իւր արտերը կրել և նոցա պարարտացնել։ Նայեցէ՛ք, գիւղացին անցնելով արտերի միջակներով, այս ու այն կողմից պոկում՝ դէն է ձգում ինչ ինչ բոյսեր. դոքա անօգուտ բոյսեր են, որոնք վնասում են օգտակար բոյսերի զարգանալուն։

Բայց թողնենք արտերը և անցնենք դաշտի միւս կողմը, ուր ձեզ նոյնքան հետաքրքրական բոյսեր ու ծաղիկներ կ'հանդիպեն։ Ա՜խ, ինչպէս փառաւոր է աճել այստեղ խոտը. ոտներդ խճճվում են նորա մէջ։ Վերբարձրանանք այս բլրակը, որ այսպէս հիասքանչ պճնուել է կարմիր ու սպիտակ առուոյտներով (եօնջայ). Ինչքան թիթեռնիկներ, ո՛րքան մորեխներ են թռչկոտում ու ցատքոտում այդ բազմագոյն խոտերի և ծաղիկների մէջ. խաւոտ մեղուն մի կողմն է բզզում, քաղցրաձայն արտոյտը միւս կողմը դայլայլում. իսկ թիթեռների և թռչունների թիւը չ'կայ։ Նայիր այդ բլրակից չորս կողմդ տարածուած լեռնադաշտին. տես, ո՛րքան բազմազիմի տեսարաններ, ո՛րպիսի բազմերանգ և անուշահոտ ծաղիկներ են տարածուած, մի տեղ սպիտակ, միւս տեղ դեղին, այս կողմը կանաչ, իսկ միւս կողմից կապուտակ, կարծես բազմաթիւ և այլատեսակ գորգեր են սփռած։ Հեռուից տեսնվում է եղջերուոր անասունների նախիրները, որոնք իրանց բառաչիւններով թնդացնում են օդը. նոքա առատ և հիւթալի խոտն արածած՝ մնչալով տուն են դառնում և իւրեանց հորթերը մտաբերելով՝ բառաչում են. զուարակները խայտում են, իսկ նախրապանը — ցուլը, իբրև ամեհի գազան, աչքերը արիւնով լիքը, քթի տակը մռնչալով՝ առաջ է քայլում։ Ահա մի ուրիշ նախիր խառնուեցաւ այդ

նախրի հետ. ցուլերի մռնչոցը բարձրացաւ, նոքա քանդ անելով դիմեցին միմեանց վերայ և կատաղի կռիւն սկսուեցաւ։ Կռուողները աչքերիցը կրակ է թափվում. նոցա սուր եղջիւրների չխկ-չխկոցը շատ հեռու է տարածվում. անցնում է կէս ժամ, մի ժամ, բայց կռուողներից ոչ մինը չէ կամենում տեղի տալ. նոքա աւելի և աւելի են կատաղում։ Յաղթուողի աչքը կ՚կորուի։» — ասում են տաւարածներն ու խառնվում կռուողների մէջ, և երկար չարչարանքից յետոյ հազիւ են կարողանում միմեանցից անջատել զայրացած կենդանիներին։

7. ԵՐԵԽԱՆ ԴԱՇՏՈՒՄԸ

Մէկ փոքրիկ երեխայ կար. ծնողներն ուղարկեցին նորան ուսումնարան։ Պայծառ ու գեղեցիկ առաւօտ էր. թռչունները երգում էին անուշիկ ձայնով։ Երեխայի սիրտը փոխուեցաւ. նա չէր կամենում դասի գնալ, այլ ուզում էր խաղալ։ Չորս կողմը մտիկ արաւ ու տեսաւ, որ մեղրաճանճը թռչկոտում է ծաղկից ծաղիկ։ «Ո՛վ մեղրաճանճ, ասաց նա. եկ մի քիչ խաղանք»։— «Չեմ ուզում, պատասխանեց մեղրաճանճը. ես ժամանակ չունիմ խաղալու, ես դեռ պէտք է մեղր ժողովեմ»։

Մի քանի քայլ որ հեռացաւ երեխան՝ պատահեցաւ շանը և ասաց նորան։ «Շնի՛կ, շնի՛կ, եկ մի քիչ խաղանք»։ - Չէ, պատասխանեց շունը, ես ի՛նչպէս խաղամ քեզ հետ. ես պէտք է պահպանեմ իմ տիրոջ տունը, որ գող չ՚մտնի»։

Դորանից յետոյ երեխան տեսաւ մի փոքրիկ թռչուն, որ կտուցով խոտ էր կրում իւր բունը։ «Սիրուն թռչնիկ, ասաց նորան երեխան. մի քիչ չ՚խաղա՞նք»։—«Ո՛չ, պատասխանեց թռչնակը. ես ժամանակ չունիմ խաղալու, ես դեռ պէտք է մամուռ, խոտ, բուրդ հաւաքեմ, որ բունս շինեմ»։

Երեխան հետզհետէ սկսում էր ձանձրանալ. նորա հետ խաղացող չ՚կար։ Նա տխրած վազեց առուի մօտ, որ քչքչալով հոսում էր մօտիկ անտառից։

«Ինչպէս տեսնում եմ՝ դու գործ չունիս անելու, ասաց երեխան առուակին. եկ մի քիչ խաղանք ես ու դու»։

«Ո՞վ չունի գործ, բարկացած պատասխանեց առուակը.— ծո՛յլ—ծո՛յլ տղայ։ Չե՞ս տեսնում, որ ես գիշեր ցերեկ գործում եմ անդադար։ Ո՞վ է ջուր տալիս կենդանիներին, ո՞վ է լուանում կտաւիքը, ո՞վ է պտտեցնում ջրաղացի անիւները, ո՞վ է հանգցնում հրդեհները, եթէ ոչ ես։ Տեսնո՞ւմ ես, որ ես մի րոպէ էլ ժամանակ չունիմ։ Ուրեմն ձեռք վեր ա՛ռ՝ գնա՛»։

8. ԱՆՏԱՌԸ ԵՒ ՆՈՐԱ ՕԳՈՒՏԸ

Մտնենք այս ընդարձակ անտառը. այստեղ մենք կ՚տեսնենք շատ ու բազմատեսակ ծառեր՝ հացի, բոխի, թխկի, հաճարի, սօսի, լորենի, կաղնի և այլն. սակաւ չեն նաև վայրենի պտղատու ծառերը՝ վայրենի տանձենին, խնձորենին, արջագիլասին, ցկռին, հունին և ուրիշները. անտառում բուսնում են նաև շատ թփեր, բանջարեղէններ, խոտեր և անտառային ծաղիկներ։ Անտառից մարդս մեծամեծ օգուտներ է քաղում։ Բացի այն, որ այնտեղ արածում են նորա տաւարը, որ նա իւր վառելափայտն այդ տեղից է ստանում, նա մի մեծ և անփոխարինելի օգուտ ևս ունի. ծառերը մաքրում են օդը։ Բացի սորանից անտառն արգելում է ջրի շուտով ցամաքելուն և օդի խոնաւութեան մէջ հաւասարակշռութիւն է պահպանում։ Երբ որ գարնանը ձիւները հալվում են, ջուրը բոյսերի արմատների և մամուռի մէջ պահուելով, արագ չէ սահում և մի մեծագոյն մասը մեղմ հալուելուց և դանդաղ ընթացքից հողի տակ մտնելով՝ շուտով չէ շոգիանում կամ փախչում։ Թէ ո՛րքան մեծ նշանակութիւն ունի անտառը՝ երևում է նորանից, որ երբ որև է լեռան անտառը անխնայ կտրատում են, ամբողջ պտղաբեր նահանգներ մերկ անապատ են դառնում. օդը զրկվում է իւր նախկին փափկութիւնից և մեղմութիւնից, իսկ ձիւնից և անձրևներից գոյացած հեղեղները կատաղաբար թևակոխում են դաշտերը։ Անտառների անհաշիւ կտրատելուց Հայաստանի շատ արգաւանդ դաշտեր և դրախտանման տեղեր կորցրել են իրանց նախկին գեղեցկութիւնն ու փարթամութիւնը և ամայի

անապատի ձև են ստացել։ Արարատեան նահանգը նոյն ճոխու-թեան, բուսական և կենդանական հարստութեան տասներորդը չէ ներկայացնում, որը երևում է Ղազար Փարպեցու նկարագրու-թեան մէջ։ Արաքսն ևս իւր նախնի յորդութիւնն ու գոռոզու-թիւնը չունի։ Անտառների անխոհեմ կտրատելու վնասները բազ-մաթիւ են. դորանից երկրի կլիման ևս չափազանց փոխվում է, ձմեռը լինում են սաստիկ ցրտեր, իսկ ամառն անտանելի շոգեր. այն ինչ անտառը ձմեռ ժամանակը չափաւոր ջերմութիւն է պահ-պանում իւր մէջ, իսկ ամառը նորանից մեղմ զով և խոնաւութիւն է տարածվում շրջակայքում։

9. ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՅԻՆԸ

Ծառերն անտառում երբ շատ նեղացան
Կայնի ձեռիցը ու էլ չիմացան
Ի՛նչ անեն, որ իրանց գլուխը պահեն՝
Խորհուրդ արին, որ մի հնարք գտնեն։
«Կայինն ո՞վ է որ՝ մեզ կարողանայ
Զօր անել—յաղթել, ի՞նչ մեծ բան է նա»։
Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը.
«Մենք որ կոթ չ՚տանք՝ կայինն ինչ է որ
Յանդգնի անել մեզ կտոր կտոր»։

Թող իմացողը ինքըն իմանայ
Եւ ի զուր տեղը կայնից չ՚նեղանայ.
Ով որ կոթ կը տայ պողպատէ կայնին՝
Թող «հողոյն» ասէ առաջ իւր անձին։

10. ԿԱՂՆԻ ԵՒ ԵՂԷԳՆ

Մի օր կաղնին
Եղէգնիկին
Խօսքեր նետեց այս կերպով.
«Թէ որ դու դժգոհալով

Բնութեան դէմ տըրտընջաս ու գանգատիս,
Ճշմարիտ որ հա՛ք ունիս։
Ճնճղուկ սանձդ որքան փոքր ու թեթև թռչուն է,
Եւ սակայն քեզ համար ահագին բեռ՝ ծանրութիւն է.
Թեթև ու բարակ հովիկ թէ փչէ,
Որ ջրի երեսն էլ հազիւ շարժէ,
Քեզ կը տատանի, գետին կը ծռուիս
Ու խեղճուկ-խեղճուկ կընկնես, կը պառկիս։
Իսկ ես,
Կը տեսնես,
Կովկաս սարի պէս
Փառաւորապէս
Արևի ճառագայթներն եմ արգելում
Եւ հովերի կատաղութիւնը ծաղրում.
Ես կանգնած եմ շիփ—շիտակ,
Անխռով, ան-այլայլակ։
Այն քամին որ քեզ համար սոսկալի փոթորիկ է,
Ինձ անուշ զեփիւռիկ է։
Գոնէ գայիր, ողորմելի, ինձ մօտիկ տեղ բուսնէիր,
Իմ ճիւղերիս թանձր շուքի տակ մտնէիր ու պահուէիր.
Ես քեզ կը պահպանէի մրրիկների հովերի դէմ։
Բայց ձեր կոյր բաղդն այդ է եղել, ես ի՛նչ անեմ.
Ձեր ճակատի գիրն է, որ բաց տեղ, քամու առաջ բուսնիք
Ու անդադար այս ու այն կողմ գինովի պէս տատանուիք։»
Եղէգնիկը պատասխանեց կաղնիին.
«Պա՛րոն, քո սրտիդ բարութեանը խօսք չունիմ.
Բայց ես կը խնդրեմ, որ հոգ չ՚անես ամենևին.
Դու ինձ այնքան խեղճ մի կարծիր.
Հողմ փոթորիկ ինձ շատ վնաս չեն անիլ.
Ես թէպէտ և կը ծռուիմ, բայց չեմ կոտրիլ.
Հողմի ոյժը իմ վրաս սաստիկ չի ներգործիլ,

Եւ կարծում եմ քեզ կարող է վնաս բերիլ.
Իրաւէ որ մինչև հիմա
Դիմացել ես դու փոթորկի
Մրրկի,
Մինչև հիմա ուղիղ կանգնած
Չես ծռուած
Քամիների հարուածներից
Փչուածքից.
Բայց էր շտապենք.
Վերջը կը տեսնենք:»
Հազիւ թէ եղէգն այս խօսքերն ասաւ,
Միւս կողմից յանկարծ քամին վերկացաւ,
Սաստիկ անձրևով՝ խոշոր կարկուտով
Լցրեց անտառը գոռում գոչումով:
Կաղնին ըհ չ'արաւ.
Իսկ եղէգը մինչև գետին պառկեցաւ:
Քամին կ'ասես քանի գնաց սաստկացաւ,
Մէկ կատաղեցաւ, մէկ էլ գոռաց, մըռընչեց
Ու արմատից խլեց ձգեց
Այն կաղնին
Ահագին,
Որ ամպերին հասել էր իւր գլխովը
Եւ անդունդին կըռթընած էր ոտքովը:

11. ԲՈՅՍԵՐԻ ՄԱՍԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

Ուշի ուշով նայեցէք և տեսէք, թէ ինչ կ'գտնէք բոյսերի մէջ: Վերցնենք, օրինակ, պարտիզի [illegible]: Դուրս փորեցէք նորան հողից և դուք կ'տեսնէք, որ նա իւր սպիտակաւուն արմատներով մտած է հողի մէջ, յետոյ վեր է բարձրանում նորա կլոր ցօղունը, որի վերայ լինում են երկար, ատամնաւոր տերևներ, իսկ գագաթը վերջանում է խոշոր ծաղիկներով, որոնք նստած են լինում երկայն երա-

[illegible] վերայ: Բոյսը դիտելիս՝ դուք պէտք է նկատէք, թէ որպիսի են նորա արմատները և ինչ կայ արմատին մօտ, որպիսի է ցօղունը, [illegible] և տերևները, որպիսի է ծաղիկը:

Ա.

Արմատով բոյսը սնանում է, հողի միջից դուրս է ծծում իրան հարկաւոր հիւթը: Ծառերի արմատները մեծ մեծ են և ամուր. դորանք երբեմն շատ խորն են մտնում հողի մէջ.—խոտերինը աւելի քնքուշ են և բարակ: Գազարի, շաղգամի, բողկի, ճակնդեղի արմատը սաստիկ ստուարանում է և [illegible] և նորան իբրև պտուղ գործ են ածում կերակրի մէջ. բայց սա իսկապէս պտուղ չէ, այլ հաստացած արմատ: Խոտաբոյսերից ոմանք ամառը բուսնում են, իսկ աշնանը միանգամայն մեռնում, ինչպէս ցորենը, գարին. միւսների ստորերկրեայ ցօղունը մնում է, որից միւս տարի բոյս է դուրս գալիս: Այս իսկ պատճառով բոյսերը կոչվում են միամեայ, երկամեայ և բազմամեայ: Բազմամեայ բոյսերի ստորերկրեայ ցօղունը, որ ծածկուած է թեփանման տերևներով և տալիս է ստորերկրեայ [illegible] և արմատիկներ, կոչվում է հիմնարմատ: Արմատից պէտք է զանազանել [illegible], օրինակ սոխինը և սխտորինը, որ բաղկացած է միմեանց վերայ դասաւորուած մսալի տերևներից. արմատները թելերի նման կախուած կ'գտնէք նորանց տակը: Կլորիկ կարտոֆիլը, որ տեսնում էք կարտոֆիլաբոյսի տակը, նոյնպէս ստորերկրեայ ցօղունների վերայ է աճում և արմատ չէ. դա նոյնպէս ստորերկրեայ կոկոն է, որի բոլոր մասերը միախառնուած են:

Բ.

Ծառերի, որպէս և թփերի ցօղունը հաստ է լինում, պինդ, ամուր միջուկով, և կոչվում է բուն: Խոտաբոյսերի ցօղունը փափուկ է, դիւրաբեկ, երբեմն էլ մէջը դատարկ (ծղօտ, եղէգն): Ցօղունը հաստանում է այն տեղերում, ուր որ նորան կպած են տերևները. այս հաստացած տեղերը կոչվում են հոդեր, իսկ մի կապից մինչև միւս կապը—միջհոդեր: Կան բոյսեր, որոնք միայն ստորերկրեայ ցօղուն ունին և այդ ցօղուններից ուղղակի աճում են տերևներ ու

ծաղիկներ։ (Օրինակ՝ մանուշակ, զանգակածաղիկ, եղակ, անտառաշուշան, հողմածաղիկ և այլն—այս բոյսերի թէ ծաղիկները և թէ տերևները դուք կըտեսնէք ուղղակի հողի տակից բարձրացած, առանց յայտնի ցողունի)։ Բայց այս ստորերկրեայ ցողունի կտորտանքներն այնքան մանր են, որ նկատելն էլ դժուար է։

Գ.

Տերևներ։ Տերևները լինում են անկոթ (աներախակալ)—նստած տերևներ, կամ կոթով. երբեմն նոքա ընդգրկում են ցողունը։ Տերևների վերայ դուք կընշմարէք երակներ, որոնք թելի նման կամ մէկ ուղղութեամբ են ձգվում, կամ մի գլխաւոր երակից այս ու այն կողմն են ճիւղաւորվում, երբեմն մինչև անգամ ցանցանման միմեանց հետ են խառնվում։ Դուք պէտք է նկատէք նաև, թէ ձևի կողմից ո՛րպիսի են տերևները՝ կլոր, երկարաւուն, ատամնաւոր, թէ դուրս կտրտուած եզերքով,—պարզ թէ բաղադրեալ, այն է՝ բաղկացած մի քանի զոյգ կամ անզոյգ տերևներից (օրինակ՝ սիսեռը, գազարը, հացի ծառը...)

Դ.

Ցողունը տալիս է ճիւղեր, որոնք կամ ցողունի վերայ եղած ծոցիկներից են բուսնում, կամ նոյն իսկ գագաթից։ Բացէք մի այդպիսի կոկոն և դուք նորանում կըտեսնէք նոր ցողունի սկսուածքը տերևների հետ։ Դա տերևաբեր կոկոն է։ Բայց կայ կոկոն, որ միայն ծաղիկ է արտադրում։ Ծաղիկը բոյսի ամենանշանաւոր մասն է։ Դիտենք գէթ խաշխաշի ծաղիկը։ Նորա տակը դուք տեսնում էք երկու կանաչ տերևիկներ. սոքա կազմում են ծաղկի բաժակը. նոցա հետևում են մեծամեծ վարդագոյն թերթիկներ, որոնց ստորին մասը մուգ մանիշակագոյն է. սա ծաղկի պսակն է իւր չորս թերթիկներով։ Պսակը ծաղկի մէջ պահպանում է նաև բազմաթիւ բարակ ծիլեր, որոնք կոչվում են առէջներ. իւրաքանչիւր առէջքում դուք կընշմարէք բարակ թելանման ծիլ, իսկ նորա ծայրին դեղին փոշիանոթ (անօթ ծաղկափոշիով լիքը)։ Առէջքների մէջտեղը դրուած է ծաղկի հաստ վարսանդը՝ որ ունենում է իւր վերայ տարածուած սպին, տանիքի պէս։

Ծաղիկների տեսակները։ Ցողունի վերայ ծաղիկները լինում են՝ կամ միայնակ—եզակի կամ խմբովին։ Երբեմն նոքա միասին հաւաքուած՝ մէկ փնջակ են ձևացնում, օրինակ երեքթևուկ առուոյտի կամ արևածաղկի ծաղիկները։ Ձեզ այնպէս է թւում, թէ նա մի հատ ծաղիկ է, բայց քայքայեցէք նորան և դուք կ'տեսնէք, թէ ինչպէս թափվում են նորա միջից բազմաթիւ մանր ծաղիկներ։ Նոցանից իւրաքանչիւրի խողովակաձև կամ լեզուանման պսակի մէջ դուք կըգտնէք հնգակի բարակ առէջքներ, որոնք իրանց գլխներին կ'ունենան փոշիանօթ, իսկ փոշիանօթների միջից թելի նման տարածուած կըլինի կնիքի սիւնակը (ծիլը) երկճեղքուած կնճիթով. միայն եզերքի ծաղիկներն են երբեմն անպտուղ լինում։ Այսպէս միասին ժողովուած ծաղիկներ ունեցող բոյսերը կոչվում են բարդածաղիկ, որովհետև շատ ծաղիկներ բարդուելով՝ կարծես մի ծաղիկ են բաղկացրել։ Շրթնածաղիկ բոյսերի ծաղիկներն էլ խմբվում են, բայց սոքա թէև միմեանց մօտ, սակայն առանձին առանձին են դասաւորուած։ Շրթնածաղկի օրինակը դուք կարող էք տեսնել համրաեղինձ (եղնձամէր) բանջարի վերայ։ Նա ամբողջապէս ծածկուած է մազերով, բայց այդ մազերը չեն մըրմընջացնում—չեն կծում, որպէս սովորական եղնձինը։ Մի քանի ծաղիկների գագաթը փռվում տարածվում է որպէս հովանոց։ Հովանոցանմաններին պատկանում են՝ գազարի, չամանի, սամիթի, նեխուրի, մաղդանոսի և այլ ծաղիկներ։ Շուշանը, ոլոռը...ունենում են վըձնաձև ծաղիկներ. ոմանք էլ աւելանման. հացաբոյսերն ունենում են հասկեր և այլն։

Ե.

Ի՞նչ բանի է ծառայում ծաղիկը։ Բայց ժամանակ է հարցնելու, թէ ի՞նչ բանի է ծառայում ծաղիկը. միթէ նա միայն մեզ զուարճացնելու համար է սահմանուած։ Ո՛չ. ծաղկի բաժակն ու պսակը գեղեցկութեան համար չեն ստեղծուած, այլ նորա համար, որ ծածկեն ու պահպանեն ծաղկի նշանաւոր մասերը—առէջքներն ու կնիքը։ Կնիքի մէջ է պատսպարուած բոյսի սաղմը, բայց որ նորանից, որպէս ձուից, սերմ կամ պտուղ գոյանայ, անհրաժեշտ է առէջքների ծաղկափոշին։ Երբ առէջքները հասունանում են, նոցա փոշիանօթները բացվում ու ճերմակ ծաղկափոշին տարածվում է

ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

օդի մէջ: Բաւական է, որ այդ փոշեհատիկներից գէթ մի քանիսը ընկնեն վարսանդի սպիի վրայ. հէնց փոշեհատիկը ցած է իջնում մածուցիկ կնճթի վերայ, իսկոյն նորանից դուրս է աճում մի բարակ թել, որ սիւնակի միջով ձգվում է դէպի ներս և հասնելով մասուրի մէջ գտնւող սաղմին, բեղմնաւորում է նորան: Այնուհետև միայն սաղմն սկսում է աճել կամ պտուղ դառնալ: Ո՛ր ծաղկի կնիքի կնճթին առէջքի փոշուց չ՚նստի, նա պտուղ չէ կարող արտադրել: Բեղմնաւորուելուց յետոյ ծաղկի պսակը, առէջքները և մինչև իսկ կնիքի սիւնն ու կնճիթը այլ ևս հարկաւոր չեն, ուստի և չորանում են, իսկ կնիքը (մասուրը) օրէցօր մեծանում ու հասունանում է, և տալիս է այնպիսի սերմն, որ հողի մէջ ընկնելով՝ նոր բոյս է արտադրում: Թէ ինչպէս են գտնւում սերմերը մասուրների մէջ, դուք շատ լաւ կարող էք տեսնել խաշխաշի, լոբու պատիճների և այլ ամենայն պտուղների մէջ:

Զ.

Պտուղ: Բոյսը ծաղիկ է տալիս, որ պտուղ արտադրէ: Պտուղը լինում է սերմնահատ, կորիզ կամ բնակ բազմաթիւ սերմերով (ուռենի, խաշխաշ, թութ...) Սիսեռը տալիս է սիսեռահատներ—միաբնակ, երկարաւուն պտուղներ, ուր սերմերը գտնւում են բնակի մէկ կողմը. ընդհակառակն՝ պատիճների մէջ մենք գտնում ենք երկաբնակ պտուղներ, որոնք միմեանցից բաժանուած են առանձին միջնապատով, իսկ նրանք գտնւում են միջնապատի այս և այն կողմը: Ընկուզենու վերայ լինում են ընկոյզներ—սերմ, ամփոփուած ամուր փեճեկի մէջ: Կեռասի, ծիրանի, սալորի, դեղձի պտուղներն ունենում են կորիզներ: Եղակի, մորու, մոշի, թթենու նոյն իսկ որջը, որի վերայ գտնվում է ծաղկի կնիքը, փափկանում, պտուղ է դառնում. բայց իսկապէս պտուղը սա չէ, այլ այն մանրիկ սերմերն են, որոնք լողում են դորա մէջ: Խնձորենու և տանձենու մասուրներն էլ ծաղկի որջի հետ խառնուելով՝ խնձոր ու տանձ են դառնում, որոնց մէջ, առանձին խորշերում, գտնւում են նոցա սերմերը:

Սերմերը տարածվում են ամենուրէք: Նոցա կտցահարում ուտում են թռչունները և յետոյ հեռու թռչելով, առաւելապէս իրանց տարագնացութեան ժամանակ, արտաթորում են նոցա շատ

անգամ բոլորովին անմարս: Բացի սորանից՝ նոցա հեշտութեամբ քշում—տանում է քամին. այս բանին օժանդակում են այն թռուցիկները, որոնք լինում են շատ բոյսերի վերայ: Միքանիսների սերմերը զգեստաւորուած են բամբականման աղուամազով, սոքա են թռչող սերմերը, որոնց քամին տարածում է ամենայն կողմեր: Այսպէս աճած բոյսի ամենագլխաւոր մասը պտուղն է (սերմը): Պտուղ արտադրելու համար անհրաժեշտ են կնիքը և առէջքները. հետևաբար՝ բաժակը և պսակի թերթիկները կարող են և չ՚լինել: Այն ծաղիկները, որոնք գեղեցիկ պսակ չունին, աչքի չեն զարնվում. բայց դոքա գտնվում են ամենաօգտակար բոյսերի վերայ: Ցորենի և գարու հասկերի ծաղկածածկոցի (բաժակի) փոխանակ ծառայում են երկարաձև կանաչ թեփուկներ: Ցետ բաց արէք այդ թեփուկները և դուք կ՚գտնէք երեք փոքրիկ ծաղիկներ, որոնք նոյնպէս ծածկուած կ՚լինին աւելի նուրբ թեփուկներով. նոցա տակից դուրս կ՚երևան երեք երկար առէջները՝ բարակ ծիլերով ու խոշոր փոշիանօթներով, և մազոտ, երկճեղքուած շրթերը:

Է.

Միատնակ և երկատնակ բոյսեր: Բոյսերը, որոնց առէջքները և պտղամանները, թէև առանձին ծաղիկներում, բայց մէկ ծառի վերայ են, կոչվում են միատուն բոյսեր. բայց կան և այնպիսիները, որոնց առէջքաւոր, կամ ինչպէս նոցա անուանում են, արական ծաղիկները մի ծառի վերայ են, իսկ պտղամանաւոր կամ էգական ծաղիկները միւս ծառի վերայ: Այսպէս է, օրինակ, ուռենին: Դուք, երևի, շատ անգամ տեսած կըլինիք ուռենու խաւոտ ճիւղերը իգական ծաղիկներով, երբ պտուղներն արդէն հասունացած են լինում: Այդ տեղ դուք կըտեսնէք անհամար պայթուած պտղամաններ և իւրաքանչիւր պտղամանի միջից, կարծես, դուրս են նայում սերմերը, որոնք զարդարուած են բրդոտ գանգրամազով: Այսպիսի գառնուկաւոր ճղներ չեն ունենում արական ծաղիկներ ունեցող ուռենիները: Այս տեսակ ծառերը կոչվում են երկտուն: Ուրեմն ծաղկափոշին առէջքներից ինչպէս է ընկնում պտղամանների մէջ, երբ նոքա ոչ թէ միևնոյն ծաղկի, այլ և միևնոյն ծառի վերայ չեն: Իգական ծաղիկներին այս փոշին հասցնում են՝ քամին և միջատները, առաւելապէս մեղուները. երբ

Նոքա ցած են իջնում առէջքաւոր ծաղիկների վերայ, որ դուրս ծծեն նոցա միջի մեղրահիւթը, փոշին առատութեամբ կպչում է նոցա ոտներին և այդ փոշին իրանց հետ առած՝ նոքա թռչում են դէպի այն բոյսերը, որոնք ունին միայն պտղամանաւոր ծաղիկ-ներ։ Առանց թիթեռների, բզէզների և մեղուների՝ գուցէ չ՚աճէին շատ խոտեր և ծառեր։

12. Վ Ա Ր Դ Ի Ո Ս Տ

Ասա՛ դու ինձ, ոստ վարդի,
Ո՛ւր ես ծըլել, ո՞ւր ես ծաղկել,
Ո՞ր հովիտի կամ ո՞ր դաշտի
Զարդարանք ես դու եղել։
Արդեօք ծլե՞լ ես Եդեմում,
Եւ ջրել է քեզ Եփրատ,
Թէ սնուցել է իւր ծոցում
Քեզ ծերունին Այրարատ։
Ո՞ր անգութի ձեռն է քաշել
Քեզ քո թփից մայրենական,
Կամ ո՞ր անգութն է քեզ տնկել
Այս աշխարհում պանդխտական։
Կամ թէ այն թուփ, քո օթեվան
Թառամեցա՞ւ քեզ համանման,
Թէ սոխակները քաղցրաձայն
Մխիթարում են միշտ նորան։
Բայց դու չ՚ունիս մխիթարիչ,
Ո՛վ թագուհիդ ծաղիկների,
Զունիս դու քեզ սիրոյ երգիչ՝
Թառամում ես երկրիցդ հեռի։
Մի մի ագռաւ վատահամբաւ
Գուշակում է նոր գոյժ, նոր ցաւ.
Իսկ դու տխուր, վիրաւորուած՝
Կախել ես գլուխդ թառամած։

13. ԷՇՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Բացուել էր գարուն, սար ու ձոր ծաղկել,
Անոյշ հոտն ու հովն ամէն տեղ բռնել,
Ամէն աշխարհից հեռու, տեղերից
Փախած թռչուններն իրանց բըներից
Եկան ողջունել գալուստը գարնան,
Մայր ու ձագ նստած թըփերի վերան։
Պարկեշտ սոխակն էլ իւր այրուած սրտի,
Իւր սիրուն վարդի սէրն ու իւր մտքի
Կարօտն ու աշխուժ բերան բերելով՝
Խոր ձորում նստած վիշտերը լալով՝
Նայում էր ջրին, իւր վարդի թփին,
Սպասում էր որ՝ բացուի սիրելին։
Բայց վարդն անիրաւ մնացել էր փակ,
Սոխակի սիրտը դարձել էր կրակ։
Այս դառն րոպէին սատանի քամին
Որտեղից հանեց մեր կորած էշին,
Քունըն էր հատել, թէ կերը պակսել,
Գալլն էր յետ ածել, թէ տէրը դնքսել,
Ականջներն խլշած՝
Սարն ի վեր ընկած՝
Վազեց ու հասաւ, դունչը վրայ բերեց
Անմեղ վարդի թուփն ու կոկոնն բռնեց,
Փշրեց ու ջարդեց, արաւ կտոր-կտոր,
Ու ինքն վայր ի ձոր
Գլուխն առաւ գնաց։
Սոխակն այս բանը որ տեսաւ՝
Եկաւ
Վարդի վրայ կանգնեց,
Իւր սուգն սկսեց. —

«Անմահն իմ վարդ, ցանկալի հոգուս,
Սրտիս բերկրանքի ապաւէն ու յոյս.
Ինչի՞ դառն օրհաս հանեց քեզ աշխարհ,
Երբ ոչ ոք գինըդ պէտք է չ՚իմանար.
Երկինքն է տեղըդ, ինչի՞ ես մնում
Իշի կերակուր այս փշի միջում։
Քանի փուշ ու էշ երկրից չեն պակաս՝
Մտածում եմ որ՝ անտէր կըմնաս.
Կամ այրիր դու ինձ, որ մի օր պրծնիմ,
Կամ թև տու թռչինք, երեսի՞դ մեռնիմ»։

Իմ սիրուն սոխակ, մի՛ այդքան ցաւիր,
Կա՛ց մեր միջումը, քո վարդը գովիր.
Էշն աղբի մէջն է առել իւր ծնունդ.
Նորա հոտովն էլ առնում է սնունդ.
Քեզ ծառ ու ծաղիկ, քեզ վարդ մանուշակ
Պարգևել է Տէրն, իմ ա՛զնիւ սոխակ։

14. ՍԱՐ ԳՆԱԼԸ

Գարունը բացվում է և հայ գիւղացիք սարն են գնում։ Աղբիւրների գլխին, ծաղիկների վերայ վրաններ են տնկում և տաւարը ներս են անում այս անմահական դրախտը։ Առաւօտը՝ երբ անկողնիցդ վեր ես կենում, հազար սարի ծայրից ամպն ու ծուխը միմեանց հետ խառնուած՝ երկինք են բարձրանում ու ցօղը անձրևի հետ նստում է մարդկանց շորերի ու երեսների վերայ։ Կանայք կթի տաւարի հետն են լինում, կաթը ժողովում, իւղ ու պանիր շինում. տղամարդիկ տաւարը սարն են տանում, կամ բուրդ ու իւղ են տանում փողոցը ծախում, իրանց տան պակասութիւնը լրացնում։

Միայն այս չէ կանանց գործը. ցերեկը ճախարակ են մանում, շալ, գորգ կամ կապերտ են գործում և իրանց օրը ուրախ, միամիտ անցկացնում։ Էլ ի՛նչ ասել կ՚ուզէ, որ հարս ու աղջիկ այստեղ կուճ ու ձիգ անելով չեն ման գալիս, կամ երեսները կալնում, ինչպէս տանը։ Մէկ տան պէս են, և ում օբէն (վրանը) մտնես, ամէնքը առողջ, ուրախ ու զուարթ են. այն օդի ու ջրի, այն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողի հոգին ու գոյնը ի՛նչ կը լինի ապա։ Երբ սարումը հիւր է պատահում, էլ շաբաթով ու ամսով չեն թողնում, որ հեռանայ. աղբիւրների քըչքըչոցը, ջրերի խըշխըշոցը, ծառերի սըլսըլոցը, թռչունների ծըլվըլոցը, հովուի սրինգը, գառան, ոչխարի ու տաւարի բառաչը՝ այս բոլորը կարծես ձեզ ասում են. «Դրախտ ես ուզում, այստեղ կա՛ց, այսպէս կա՛ց. սիրտդ անմեղ, միտքդ իստակ»։

15. ՈՍՏԻԿ

—«Ո՞ւր ես առաջ գընում, խեղճ ոստիկ ծառին,
Տե՛ս, չը ձըգեն քեզ ալիք անդունդը ծովին։

Ինչպէս անտէր որբիկ՝ թըշուառ, անպաշտպան,
Որ ընկել է ձեռքը չարանենգ մարդկան։

Չե՛ս ունենալ, ո՛ստիկ, ազատութեան հընար,
Զոհ կը լինիս, խե՛ղճիկ, ալեաց չարաչար։»

«Չեմ զարհուրում ծովից, ոստիկը ասաց.
Կեանքս արդէն կորել է, վաղուց եմ ցամքած։

Հարազատ այն ծառէն ինձ պոկեց հովը,
Հիմի ի՛նչ, թող տանէ, ուր կ՚ուզէ, ծովը։

Հիմկուց դէնը ինչ է էլ ինձ մխիթար.
Դալար ծառին կպչելու էլ չ՚ունիմ հընար»։

16. ԲԻԻՐԱՊԱՏԻԿ

Մի գիւղում բնակւում էին մի մարդ ու մի կին։ Մարդը շատ ժամասէր էր։ Ամէն օր եկեղեցի էր գնում և օրը մի գրօշ էր տալիս քահանային։ Քահանան էլ ամէն օր նորան ասում էր.

— Օրհնուիս դու. Բիւրապատիկը քեզ մէկի փոխանակ՝ հազար տայ։

Նա ուրախանում էր և ինքն իրան ասում. «Այս լաւ բան է. մէկ տալիս եմ՝ հազար պէտք է տայ»։

Այսպէս ամէն օր մի գրօշ տալով՝ իւր բոլոր ունեցածը տուեց քահանային, իսկ ինքը աղքատացաւ։

Մէկ օր կինը ասաց ամուսնուն.

—Վե՛ր կաց, գնա՛ քահանայի մօտ, մի հազարը բե՛ր, տանք հացի, մինչև որ մէկէլ հազարներն էլ կամաց կամաց կը տայ։

Ամուսինը գնաց։

— Օրհնեա՛, տէ՛ր։

—Աստուա՛ծ օրհնէ։

—Տէր տէր ջա՛ն, ես քեզ տուի, դու ինձ հազարներ խոստացար. հիմա բեր մէկ հազարը տո՛ւր՝ տանեմ. այն միւսներն էլ՝ յետոյ կը գամ, կը տաս։

—Օրհնուա՛ծ, ասաց քահանան. դու ինձ տուիր, որ Բիւրապատիկը քեզ մէկին հազար տայ։

—Բիւրապատիկը ո՞վ է։

Քահանան նորան մի ճանապարհ ցոյց տուեց՝ ասելով.

—Այս երկա՛յն ճանապարհովը կը գնաս, քեզ կը պատահի մի մեծ մարդ, որ նստած կը լինի ոսկէ աթոռի վերայ։ Բիւրապատիկը նա՛ է. ասա՛ նորան. «Ինձ տէրտէրն ուղարկեց. մէկ տուել եմ, հազար պէտք է տաս»։

Նա էլ գնաց այն երկար ճանապարհով։ Նորան պատահեցաւ մի քարանձաւ, ներս մտաւ և ի՜նչ տեսա՜ւ։ Քառասուն երևելի գողեր շարուել են։ Նորան պատիւ են տալիս, տեղ են բաց անում և նստեցնում են իրանց մէջ տեղը։

Ո՞վ ես դու, հարցրին նորան. այսքան ժամանակ է մեր ահից մարդ չ՚էր եկած այս կողմը. ո՞րտեղից ես գալիս և ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա. մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ։

Գողերն ասացին.

—Ե՛ղբայր, այդ խելքը խելք չէ. թո՛ղ այդ։ Արի՛ այստեղ, մենք քեզ մի բուռը ոսկի կը տանք, վե՛ր կաց, քո տունը գնա՛։

—Ո՛չ. ասաց նա, այդ փողը արդար վաստակ չէ։

—Եթէ այդպէս է, ասացին գողերը. դու արդար մարդ ես։ Երբ գնաս, Բիւրապատիկին հարցրո՛ւ, թէ միւս աշխարհումը մեզ համար էլ տեղ կա՞յ։

—Աչքիս վերայ, ասաց նա ու գնաց։

Գնաց պատահեցաւ մի ծերունու, որ նստած էր մի քարի մօտ։ Նա անդադար ասում էր. «Փա՛ռք քեզ, Ա՛ստուած, փա՛ռք քեզ»։ Եւ որքան ասում էր, այնքան ոսկի էր բղխում քարից։

Ծերունին հարցրեց այս մարդուն.

—Ե՛ղբայր, ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա. մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ։

—Արի՛ այս ոսկուց երկու բուռը տամ, յե՛տ գնա, ասաց ծերունին։

Ո՛չ, ասաց նա. այդ ո՛չ իմ տուածն է, ո՛չ իմ աշխատածը. ես դորան արժանի չեմ։

—Եթէ այդպէս է, ասաց ծերունին, երբ գնաս Բիւրա-

պատիկի մօտ, հարցրու թէ ոսկին ե՞րբ պէտք է կտրուի այս քարից։

—Աչքիս վերայ, ասաց նա ու գնաց։

Ճանապարհին տեսաւ մի այգետէր, որ հարցրեց.

—Հո՛ղածին, ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա. մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ։

—Երբ գնաս, ասաց այգետէրը. Բիւրապատիկին հարցրու, թէ ինչի՞ցն է՝ որ երբ իմ այգու պատը շինում եմ, բոլոր կանաչ պտուղները չորանում են, երբ պատը քանդում եմ՝ կանաչում են։

—Գլխիս վերայ, ասաց նա ու գնաց։

Ճանապարհին տեսաւ մի քահանայ, որի մէջքին պատ էր շարուած և ինքը մէջը տընք-տընքում էր։

—Ո՛րդի, հարցրեց քահանան, ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա. մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ։

Քահանան ասաց.

Գնա՛ Բիւրապատիկին հարցրու, թէ ես այս պատից ե՞րբ պէտք է ազատուիմ։

—Լաւ կը լինի, ասաց նա և շարունակեց ճանապարհը։

Գնաց, տեսաւ, որ մէկ մեծ մարդ նստած է ոսկէ աթոռի վերայ։

Նա հարցրեց.

—Ո՞ւր ես գնում։

—Բիւրապատիկը դո՞ւ ես, հարցրեց ճանապարհորդը։

—Այո՛, ես եմ, պատասխանեց. ի՞նչ ես ուզում։

—Մեր քահանան ուղարկեց ինձ, ասաց նա։ Ես քեզ մէկ տուել եմ, դու ինձ հազար պէտք է տաս։

Բիւրապատիկն ասաց.

—Կը գնաս տունդ, բակիդ մէջ մի թթենի կայ. փորէ՛ր

նորա տակը, մի կարաս լիք ոսկի դուրս կը գայ. վե՛ր առ քո մէկի փոխանակ հազարանոցը։

Ճանապարհորդը բացի դորանից՝ ինչ որ իրան յանձնել էին ասելու, ամէն բան ասաց Բիւրապատիկին և ամէնի պատասխանն էլ ստանալով՝ վերադարձաւ։

Հասնելով պատի մէջ տնքող քահանային՝ ասաց.

—Դու այդ տեղից այն ժամանակ կ՚ազատուիս, երբ Աստըծուն մեղայ կը գաս։

—Ես ի՞նչպէս մեղայ գամ Աստծուն, ասաց քահանան և խօսքը բերանից հանեց թէ չէ՝ իսկոյն պատի հետ միասին գետինը մտաւ։

Նա յետոյ գնաց հասաւ այգետիրոջը և ասաց.

—Եթէ այգուդ պատերը քանդես, որ անց ու դարձ անողներն ուտեն պտուղներից, այգիդ կը կանաչի։

Դեռ խօսքը բերանումն էր, իսկոյն տէրը գնաց, պատերը քանդեց և այգին կանաչեց։

Ճանապարհորդը գնալով ծերունու մօտ, ասաց.

—Քանի որ դու բերանիցդ Աստուծոյ անունը չես պակասեցնիլ, քարից էլ ոսկին չի պակասիլ։

Ծերունին ասաց.

—Մի՞թէ մարդ իւր բերանից Աստուծոյ անունը կը պակասեցնի. փա՜ռք Աստուծոյ։—Ասաց չ՚ասաց՝ քարի միւս երեսիցն էլ ոսկի դուրս թափուեցաւ՝ առաջուանից շատ։

Նա եկաւ գողերի քարանձաւը և նոցա ասաց.

—Եթէ ձեր գողութիւնը թողնէք, միւս աշխարհումը տեղ ունիք։

Գողերը թողին քարանձաւը, գնացին իրանց յանցանքը ապաշխարեցին ու փրկուեցան։

Վերջապէս մեր ճանապարհորդն եկաւ իրանց տուն, կանչեց կնոջն ու ասաց.

—Ա՛յ կին, բահ ու թի բե՛ր։

Մարդ ու կին վեր առան բահն ու թին, փորեցին թըթենու տակը և մի կարաս գտան ոսկով լիքը: Օրը մթնեցաւ և կարասը թողին, որ առաւօտը հանեն:

Գիշերը դրացիներն իմացան, եկան կարասը գողանալու. բայց տեսնելով, որ մէջը դեղին հող է, կարասը շուր տուին տան տիրոջ այգումը: Կարասը կոտրտուեցաւ ու հողը ցրուեցաւ:

Առաւօտը զարթեցան, ինչ տեսան. այգու չորս կողմը ոսկի էր փռուել: Ամուսինը գոռաց.

—Քա՛, կնի՛կ, ցախաւելը բե՛ր. բոլոր այգին ոսկի է բուսել:

Աւլեցին շողշողուն ու զրնգզրնգան ոսկիքը. մէկի փոխանակ ո՛չ թէ հազար, այլ անթիւ հազարներ ստացան, հարստացան և Աստծուն փառք տուին:

ԱՄԱՌ

Գալիս է ամառ,—այրող եղանակ,
Անխոնջ վաստակի, պտղի ժամանակ.
Իւր աստուածեղէն ջերմութեան հոգին
Կենսատու շնչով ծաւալէ արփին.
Հասել է ծիրան, տանձը մեղրածոր.
Կարմիր վարդի պէս փայլում է խնձոր.
Սաթանման—դեղին կախուած է ողկոյզ.
Մանկտին գրաւում է շլոր, նուռն և թուզ.
Սեխով, ձմերկով լիքն է բուրաստան.
Ոսկեայ հասանքով ծփի անդաստան.
Եւ արտորայքի ծանրացած հասկեր,
Խիստ հիանալի նկարեն պատկեր:
Յետ երից անգամ երգի խօսնակին՝
Զարթնում է իսկոյն հնձուորի հոգին:
Փայլում է մանգաղ: Գործում է մշակ.
Բարձած սայլակի ճռինչն անուշակ
Հնչվում է հեռու, հեռու դաշտերից,
Բերում դէպի կալ հունձքը արտերից:

18. ԵՐԿՈՒ ԽՈՓ

Մի և նոյն երկաթի կտորից և մի և նոյն արհեստանոցում շինուած էին երկու խոփ: Դոցանից մինը գնեց

մի երկրագործ և սկսեց գործ անել նորան. իսկ միւսը երկար ժամանակ ամենևին անօգուտ ընկած էր վաճառականի խանութում։ Պատահեցաւ որ՝ մի քանի ժամանակից յետոյ, երկու ընկերները դարձեալ տեսան իրար։ Երկրագործի մօտ եղած խոփը արծաթի պէս պսպղում էր և մինչև անգամ աւելի լաւ էր, քան թէ նոր շինած ժամանակը. իսկ խանութում ընկած անգործ խոփը սևացել էր ու ժանգոտել։ «Ասա՛ խնդրեմ, ինչո՞ւ դու այդպէս փայլում ես», հարցրեց ժանգոտած խոփը իւր բարեկամին։ «Աշխատելուց, սի՛րելիս, պատասխանեց միւսը. իսկ եթէ դու ժանգոտել ես և առաջուանից աւելի վատացել, այդ նորանից է, որ այսքան ժամանակ կողքիդ ընկած՝ ոչինչ չես արել»։

19. ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու.
Երթամ ախոռս, գոմշուներըս լծեմ՝ գութան վարելու։
Դէ՛հ, գո՛մշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արտը երթանք, աշխատենք,
Հարկ ու խարճի վադէն մօտ է, վօթենք արուն ու քրտինք։

Հա՛յի գութան, հա՛յի գութան, որի՞ համար կը ջանաս,
Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կըտաս։
Այն օր, երբ քեզ ձեռքըս առի՝ ազատ օրըս կորուցի,
Անվախ սիրտըս վըհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի։

20. ԵՐԱՇՏ

Գարունքը քանի գնաց՝ տաքացաւ. մայիսի կէսին կ՚ասէիր օգոստոս ամիսը լինէր. երկինքն ամէն օր այնպէս պարզ է լինում, որ տեղապէտի համար ամպի նշան չես գտնիլ. արևի թեժութիւնը քաչալի գլուխն այրում է։ Այն այգիները, որ մի քիչ ջրգլխի են, էլի կանաչի ծեղ երևում է ափերումը, ստուերապատ տեղերումը. իսկ ինչ ներքի այգիների դրութիւնն է, Աստուած հեռու անի, կ՚ասես թէ ամայի անապատ լինին. կանաչ տեղ երազումդ չես տեսնիլ։ Աշտարակի որ փողոցովն անց ես կենում, ամէնի բերնիցն էլ լսում ես, թէ այս տարի մենք ունեցած չ՚ունեցածներս պիտի վաճառենք, եթէ մի քանի օրէլ այսպէս գնայ։ «Աստուած մեր մեղքը մեր երեսովն է տալի. չորային լինելը բաւական չէ, թրթուրն էլ մի կողմիցն է ծառերը սունդ անում (փճացնում). խնձորենիքը, ծիրանիքը ու շլորենիքը կ՚ասես թէ մի մի քրդի աղայի տաղավար լինին, այնպէս են բռնուել թրթուրի ձեռիցը։ Տնաշէններ, մեր քրիստոնէութիւնը վերացել է, հաւատներս բոլորովին պակասել. ամենայն տարի այս ժամանակ սուրբ Գէորգի մասունքը, մեռնիմ նորա սուրբ զօրութեանը, երկու անգամ բերած էինք լինում, այս տարի սուրբն էլ ենք մտքից գցել, Աստուած էլ հետը։ Այս մեր կոտորուած երեխայքն էլ նուրին գոնէ չեն մանածում, որ գուցէ Աստուծու սիրտը քաղցրանայ վրաներս, մի լոյս ճար անի»։ Այսպէս խօսում էին մի քանի մարդ իրար հետ ճանճապանենց դրանը կանգնած՝ երբոր Գարեգինը շտապելով անց էր կենում այնտեղից։ «Կանգնի՛ր, կանգնի՛ր, կանչեց նրանցից մինը. Գա՛րեգին վարժապետ, ախա՛ր այս ի՞նչ պատուհաս է. գրի սև ու սպիտակը դուք էք հասկանում, ի՞նչ է ասում գիրը այս տարուան համար՝ անձրև պիտի գայ, թէ չէ ձեռներս լուանանք, յոյսներս կտրենք, յետ նստենք։»

— Ի հարկէ չի գալ, ասաց Գարեգինը. մի տեղ որ ջերմեռանդութիւն չ՚լինի, սուրբերի պատիւը վերանայ, Աստուածը մոռացուի, թափօր չ՚լինի, այնտեղից Աստուած չի՞ հեռանալ։ Վաղը ականջներդ ձէնի (ձայնի) պահեցէք, պատրաստի կացէք, առաւօտեան զանգակի ձայնը որ լսէք, դուրս եկէք, որ սուրբ Գէորգի մասունքը պէտք է բերենք, գուցէ մի փարատութիւն ընկնի։

Միւս օրը՝ արև մի փոքր բարձրանալուց յետոյ, զանգակները քաշեցին։ Տիրացուները հագան ժամաշապիկները, որը քշոցը վեր առաւ, որը խաչվառը, որն էլ մոմերը բռնած՝ առաջ ընկան։ Գարեգինն էլ՝ սրանց կարգի գցելուց յետոյ, բուրվառն ու շապիկը վեր առաւ՝ գնաց. մի տիրացու էլ շարականը խոտեց՝ տարաւ. տէրտէրներն էլ շուրջառները ժամհարի կռնատակը տուած՝ գնացին դէպի Մոզնու ուխտատեղին։ Ժողովուրդն էլ, մեծ ու փոքր, մայր ու մանուկ, բոլորը տէրտէրի յետևից մասունքի առաջը դուրս եկան։ Վանահայր վարդապետը, երբոր ժողովրդի կամքն իմացաւ, փառաւորուի ինքը, իսկոյն պատրաստուեցաւ, գնաց ժամի դռները բաց արեց, մասունքները խորանից հանեց, տէրտէրների հետ ինքն էլ շուրջառակալեց ու ամէնքը մի մի մասունք վեր կալան՝ զգեստաւորուած, շարական ասելով, խաչ ու խաչվառով, մեծ հանդէսով եկան դէպի Աշտարակ։ Հէնց որ գիւղին մօտեցան, ջերմեռանդ ժողովուրդը, որ այդտեղ սպասում էր, գլխները բաց, արտասուքն աչքերին՝ թափուեցան առաջը։ Կանայք ու մարդիկ ձեռները երկինք բարձրացրած, աղաղակում էին. «Ո՛վ սուրբ Գէորգ, քո զօրութիւնին մատաղ, մեր տէրն ու պահապանը դու ես. այս տաք ջրին մի հով ջուր ածա՛, մեր լաց ու աղաղակը լսի՛ր, մեր երեխաներին խղճա՛։» Այնուհետև հոգևորական դասը, բոլոր ժողովրդի հետ՝ գիւղի չորս կողմը թափօր տալուց յետոյ, եկան ամենափրկիչ եկեղեցու առաջը, այնտեղ էլ թափօր արին, առուի վերայ խաչալուայ արին, Սուրբ Գէորգի աջը քաշեցին ջրի մէջը, որ երթայ այգիները, թրթուրը կտրի. յետոյ տարան եկեղեցի և սեղանի վերայ բազմացրին։

Երեք օր սուրբ Գէորգը մնաց Աշտարակ։ Աստուածապաշտ ժողովուրդը այնքան զոհեր ու կարասներով գինի խոստացան, թող իրանց գցած գանձանակը, որ Մոզնու միաբանք ութ ամիս ուտէին՝ չէր վերջանալ։ Երեք օրից յետոյ՝

Սուրբ Գէորգի մասունքը ինչ հանդէսով որ բերել էին, յետ տարան։ Երեխայքն էլ Նուրին շինեցին ու ման ածեցին. երկուսը կռնիցը բռնեցին, մինն էլ տոպրակ էր վերցրել, միւսն էլ մի փոքրիկ բժուժ, ման են գալիս տները և որ դրան առաջ կանգնում են, ասում են.

Նուրին-Նուրին եկել է,
Աջբայ հուրին եկել է.
Շիլայ շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է։

Եղ բերէք՝ պորտը քսենք,
Ջուր բերէք՝ գլխին ածենք.
Մեր Նուրինի փայը տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք։

Կանայքը մի աման ջուր բերում են՝ լցնում այդ Նուրինի գլխին ու մանուկներին բրինձ, իւղ կամ ձու տալիս, որ տանեն՝ քէֆ անեն։

Այն իրիկունը՝ երբ սուրբ Գէորգի մասունքը տարան ու Նուրին էլ ման ածեցին, մի փոքրիկ ամպ Արագածի գագաթիցը վեր կացաւ, դէպի Մասիս գնաց։ Ամպը քիչ քիչ շատացաւ, երկնքի երեսը թղպեց ու կէս ժամից յետոյ՝ մի այնպիսի անձրև եկաւ, որ աշխարհը շինեց ցեխ ու բաթլախ. երեք օր միմեանց վերայ չ՝կտրուեցաւ անձրևը. այգիներն էլ կշտացան, տաւարի արօտն էլ լաւացաւ, քարքարոտ տեղերն անգամ մի թիզ կանաչեցան, բոխն էլ դուրս եկաւ, արտերն էլ իրանց կարգին յառաջ եկան, մի շաբաթումը երկու թիզ բարձրացան. աշնանավար ցորենները հասկը գցելուն մօտեցան, գարնանավարի հասկերն էլ այնպէս էին ցնծին տալիս երեկոյեան մեղմ քամու առաջ, որ մտիկ տուողի սիրտը ուրախութիւնից վեր վեր էր թռչում։ Թրթուրը հօ այնպէս փչացաւ, որ նշանն էլ չէիր գտնիլ։ Ամէն մարդու բերանից փառք ու շնորհա-

կալութիւններ էր լինում Աստուծուն. ամէնքը ուրախ էին, ամէնքի սիրտը տեղն էր ընկել։

21. ԱՄՊԵՐ

Հայոց երկնքով ամպեր են վազում
Խիստ քամու ձեռից.
Սև սև ամպերը սարերի նման
Անցնում արտերից։
«Կացէ՛ք, ա՛յ ամպեր, ինչո՞ւ էք փախչում,
Անձրև չէք թափում.
Մեր ծարաւ արտեր օրեր են համրում
Ու ձեզ սպասում։
Քամի՛, դու քամի, խղճա՛ արտերին,
Թո՛ղ այդ ամպերին,
Կանգնեն ու թափեն անձրևի շիթեր,
Ջրեն մեր արտեր»։

—

Քամին հանդարտեց. մեղմ անձրև թափուեց,
Արտերը ջրեց.
Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց
Ու հասկեր բռնեց։
Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց,
Խնդաց ու ասաց.
«Փառք քեզ, ո՛վ Աստուած, որ տուիր մեզ հաց.
Չենք մնալ քաղցած։»

22. ԿԱՐԿՈՒՏ

Անցել էր գարուն՝ ամառը մտել, բիւր անթիւ բարիք գիւղացուն բերել. կանաչ արտերի ցորենն ու գարին, կորեկն

ու հաճար ուռել ու լցուել, ոսկեգոյն ներկուել. և այգիների խնձորն ու տանձը, դամբուլն ու ծիրան հասել կարմրել, ծառերը բեռնել. իսկ սեխաստանի սեխն ու ձմերուկ, դդումն ու գազար փորներն ուռցրել, մեղրի համ առել . . .

Գետը պարզել էր, խոտը երկարել, հօտեր, նախիրներ դաշտերը փռուել. ծառերի գլխին և կամ արտերում թռչունք բուն դրել, ձագուկներ հանել . . .

Սողում էր օձը խոտերի միջից, մեղուն թռչկոտում ծաղկից դէպ ծաղիկ, կրիան վիզը հանած պատեանից, քաշվում, քաշկռտվում թփերի տակից . . .

Պայծառ էր օրը, պայծառ էր երկինք.

Ուրախ են թռչունք, անասունք, մարդիկ . . .

—

Բայց այն ի՞նչ ամպ է, որ սարի տակից, գալով գալիս է ու իրան ետքից՝ կարծես շղթայած քաշում է բերում մեծ ու սև ամպեր՝ ամէն տեղ փռում . . .

Մի րոպէ ևս. խորին մթութիւն ամէն ինչ պատեց. որոտաց երկինք, երկիր դղրդաց. փայլակն ու կայծակ իրարու խառնուած, մարդկանց սրտերը ահ ու դող ձգեց։ Մռնչաց քամին, շարժուեցին ծառեր. կաթեց, կաթկաթեց, յորդ անձրև թափուեց. անձրևի ետքից սառցէ գնդակներ, չըը՜խկ ու չըը՜խկ, երկիր գլորուեց։ Թափվում է թափվում, սար ու ձոր ծածկում, ո՛չ դաշտ է հարցնում, ո՛չ այգի ասում։

«Ա՜խ կարկո՛ւտ, կարկո՛ւտ, կանչում են մարդիկ.
Այս ի՞նչ պատիժ է. խնայէ՛ երկինք . . .»

—

Տէրը ծնկաչոք արտասուքն աչքին Աստուած է կանչում՝ խնայել երկրին. պառաւը հանած երկթէ կասկարան բակն է շպրտում ու նզով կարդում. հարս ու աղջիկներ պատի տակ շարուած, սուր դանակներով կարկուտ են կտրում՝ երկնքին նայում, իսկ նրանց մօտը մշակ—երկրագործն յուսահատ կանգ-

նած՝ ձեռը իր ծոցում, ա՜խ—վա՜խ է քաշում, գլուխը շարժում . . .

Բայց հանդերի մէջ այս ի՜նչ շփոթ է ու իրարանցում... Հօտը ցրուել է, նախիրը փախել, ձիերը խրտնել, դէս ու դէն ընկել, թռչունքը թռել, բունի մէջ պահուել, հովիւ, հորթարած, փայտհատ, կովարած՝ ամէնքն էլ իրանց գործերը թողած՝ թփերի տակին մնացել են սառած . . .

—

Դադարեց կարկուտը. որոտը լռեց,—ամպերի ճեղքից արեւը նայեց. երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ, բայց տխուր փայլ էր, որ նա ստացաւ։

Այգեպանը վազեց, իւր այգին մտաւ, դէս ու դէն նայեց, մնաց քարացած.—ծառեր տերեւաթափ, ճիւղեր կոտրտուած, բոլոր պտուղներ կարկտահար եղած.—«վա՜յ իմ աշխատանք, ափսո՜ս իմ այգի», ասաց հեռացաւ աչքերը լցուած...

Արտատէրը գնաց իր արտը հասաւ։ Թուլացան ոտները, սեւացան աչքերը, երբ տեսաւ հասկը ջարդուած փշրուած, հողին հաւասարած, անգութ հեղեղից աւազով ծածկուած. «Կորա՜ւ իմ յոյսը, փչացա՜ւ իմ արտ», ասաց ու գնաց՝ սիրտը մորմոքած . . .

Դրսում մնացած թռչունքն էլ թռան, գտան իրանց բուն. բայց ա՜խ, ի՜նչ տեսան. բունը աւերուած, ձագուկներն ընկած, չորսից միայն մին ողջ էր մնացած. իսկ այն միւսները թափուած ցեխի մէջ, անշունչ ընկել են, աչքները փակել, որի գլուխը, որի թեւիկը կարկտից ջարդուել։

Ծլվլաց թռչունը, սգաց իւր ձագուկ.
Դէս ու դէն ընկաւ՝ արեց ողբ ու սուգ . . .
Այսպէս ամէն տեղ, որ մի ժամ առաջ
Տիրում էր յոյս, կեանք, ցնծութիւն անբաւ,
Այժմ յաջորդեց կարկտի շնորհիւ
Յուսահատութիւն, տառապանք ու ցաւ . . .

23. ԿԱԼՈՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Պատահել է քեզ տեսնել, ընթերցող, մրջիւններին, որոնք ահագին քանակութեամբ վխտում են մի արտի միջին, մի թմբի գլխին։ Այդ փոքրիկ աշխատասէր կենդանիներից ոմանք մի մի հունդ շալակած՝ տնքտնքալով տանում են իրանց ստորերկրեայ բունը, ոմանք ցորնի կամ գարու քիստով բեռնաւորուած, արիւն քրտինք մտնելով, շտապում են դէպի մի ուրիշ բուն։ Այստեղ մի մրջիւն միւսի բերնից որսը խլել է կամենում, այնտեղ մրջիւնների բանակը իրանց թշնամի բոռի դէմ պատերազմ է մղում։

Ճիշտ այդպէս է գիւղական կեանքը կալերի ժամանակը։ Զառամեալ ծերերից սկսած մինչեւ երեք—չորս տարեկան երեխան կալերի մէջ գործում են։ Մինը կամն է քշում, միւսը կալը շուռ տալիս, երրորդը ծեծուած օրանը (հաշանը) եղում—եղանում, չորրորդը թեղ անում։ Սա մաղում է, նա ծանծը (կռճոնքը) քարմաղում»։ Յանկարծ ամպերը թխպեցին. գիւղացին ամէն բան թողած՝ շտապում է միմիայն կալը ժողովել եւ իրան դառը քրտինքով ձեռք բերած հացահատիկները պահել պատսպարել անձրեւից։ Դադարում է անձրեւը. միքանի ժամից կամ մի երկու օրից չորանում է գետինը եւ կալերը նորից փռւում են. րոպէական հանգստութիւնը չքանում է։ Ամէնքը, թէ մեծ եւ թէ փոքր, նորից ձեռք են առնում ընդհատուած գործը, նոր եռանդ, նոր աշխոյժ է ընկնում ամէնքի սիրտը. գործունէութիւնը տիրում է կալերում։

14. ԿԱԼԻ ԵՐԳ

Մեր գիւղացին երբ տեսնում է
Լծած եզը տնքալիս,

Երբ արևից նա այրվում է
Խուրձը հաշած անելիս,
Կաման վրայ երբ կանգնում է
Զուխտ եզներին քշելիս,
Ահա՛ այսպէս նա երգում է
Իրան կալը կալսելիս.
«Ե՛զը ջան, կա՛լ արա, կալիդ մա՛ն արա,
Հասկերը փշրէ՛ր, ցորեն դո՛ւրս արա,
Հաշանը տրորէ՛ր, լաւ դարմա՛ն արա։
Ես ու դու մին ենք—իրար եղբայր ենք,
Մինչև երեկոյ իրար հետ տանջուինք.
Ես երեկոյեան կալը կը ճեղքէմ,
Դէպի կանաչ խոտ քեզ բա՛ց կը թողեմ.
Լուսնակ գիշերին թեզը կը քամեմ,
Դարմանից ցորենն մեղմով կը ջոկեմ.
Դարմանը մղանով մարաքը կ՚ածեմ,
Ցորենը ջուալով ամբարը լցնեմ.
Երբ որ ձմեռը կը գայ, կը մրսենք,
Դուք դարման կ՚ուտէք, մենք ցորնով կ՚ապրենք.
Ե՛զը ջան, կալ արա՛,
Կալիդ ման արա՛...
Ե՛զը ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես,
Իմ թև ու թիկունք, դու իմ տան դուռն ես.
Քեզ որ չ՚ունենամ, արտ չ՚եմ ունենալ,
Կալ էլ չեմ կալսիլ, ցորեն ստանալ։
Փողի պարտք ունիմ՝ ցորնից եմ տալիս,
Հարկ ու բէգէտաը ցորնից դուրս տալիս.
Տան կարիքները ցորնով եմ հոգում,
Տէրտէրի հարկը ցորեն վըճարում.
Աղքատ-անջարին ցորեն եմ բաշխում,
Աշըղի, որբի՝ ցորնից մաս հանում.

Խօսքո՛վ, ցորենը մեր բոլոր յոյսն է,
Մեր շունչ պահողը, մեր աչքի լոյսն է.
Ման տո՛ւր, իմ եզը՛,
Ապրի քո վիզը՛...

25. ՄԻ ՀՈԳԻ ԵՐԿՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ

Երուսաղէմը դեռ չ՚շինուած, մի մշակուած դաշտ էր. և տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր, որոնցից մէկը ամուսնացած էր, միւսը՝ ամուրի։—Հնձի ժամանակ նոքա իրանց խուրձերը կապեցին և երկու հաւասար դէզ բարձրացնելով, թողին դաշտումը։

Գիշերը ամուրի եղբայրը մտածում էր.

—Եղբայրս կնոջ ու որդոց տէր է և նոցա պէտք է կերակրէ. ուստի իրաւացի չէր լինիլ, որ նորա և իմ ունեցածը հաւասար լինէին։ Գնամ իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նորա բաժնի վերայ. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։—Այս ասելով՝ նա գնաց, իւր մտածածը կատարեց։

Նոյն գիշերը միւս եղբայրը արթնանալով՝ իւր կնոջն ասաց։

—Եղբայրս ինձնից փոքր է և ամուսնացած չլինելով՝ ոչ ոք չունի, որ իրան օգնէ ու մխիթարէ. ուստի իրաւացի չէր լինիլ, որ նորա և իմ ունեցածը հաւասար լինէին։ Գնամ իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նորա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։ Այս ասելով՝ նա էլ գնաց, իւր մտածածը կատարեց։

Հետևեալ առաւօտը եղբայրները դաշտը գնացին, և ո՛րքան զարմացան, երբ տեսան, որ երկու դէզերը հաւասար էին։ Նոցանից ոչ մէկը չ՚կարողացաւ իմանալ այս հրաշքի պատճառը։

Միւս գիշերը դարձեալ նոյնպէս արին. և այսպիսով նո-

ցա դէզերը ո՛չ պակասում էին, ո՛չ աւելանում։ Վերջապէս, մի գիշեր, այս գաղտնիքը իմանալու համար՝ երկուսն էլ արթուն մնացին, և երբ խուրձերը շալակած՝ տանում էին միմեանց դէզի վրայ դնելու, յանկարծ իրար տեսան։

Այս պատճառով մարդիկ օրհնեցին այս երկու եղբայրների դաշտը և Աստուծոյ տաճարը այնտեղ շինեցին։

26. ՊԱՐՏԻԶՊԱՆ

Ամառն է։ Կարծես կրակ է բարձրանում
Գետնի երեսից և հուրհրատում.
Ոչ շունն է հաչում, ոչ ճիճին երգում.
Գորտն էլ է լռել, էլ չի կրկռում։
Ամէնքն էլ փախել՝ հով տեղ են գտել,
Իրանց բներում լռուել, պապանձուել.
Միայն մի հատիկ մարդ է երևում
Խորընկած դաշտում, առուի եզերքում։
Կանգնած է մարդը արևի տակին,
Ոտն ու ծունկը բաց, բահը իւր ուսին.
Մի շապիկ միայն ունի նա հագին
Եւ մի սպիտակ թասակ կայ գլխին։
—Բայց ի՞նչ մարդ է նա և ի՞նչ է շինում,
Արևի տակին ինչո՞ւ է այրվում.
—Նա պարտիզպան է, պարտէզ է ջրում.
Սեխն ու ձմերուկն այնտեղ են հասնում։

27. ԱՄԱՌՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Ա.

Ճաշուայ շոգն անց էր կացել։ Սար ու ձոր գլխները էլ յետ բարձրացնում էին, որ փոքր շունչ առնեն։ Արեգակը Մա-

սիսի քամակից հանդարտ աչքը բաց էր արել, մունջ մունջ Երևանու բերդին էր մտիկ տալիս և ուզում էր, որ կամաց կամաց մայր մտնի։

Թանձր խաւարը, սև մառախուղը եկել՝ բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացրել էր։

Թռչունը տեղից չէր ուզում շարժիլ, հաւը բնից գլուխը հանիլ։ Ամէն տեղից ոտքը խաղաղուել, ամէն տեղից ձէն ու ձոր լռուել, պապանձուել էր։

Ջուր ջրողը առուի վրայ էր թեք ընկել, քնած մնացել, վար ու ցանք անողը հանդումը, այգեպանը՝ իր ծառի տակին՝ շուաքումը քուն մտել, հանգստացել։ Մարդ, ինս, ջինս, գիւղերումը էլ չէին երևում։ Բացի կոնդի (բլրի) ծայրից, բացի սարի լանջից, բացի ճանպում, հանդում մէկ սև մազի չափ ստուեր սևին էր տալիս, ձիու քամակից դէս ու դէն թեքվում, երեսի, քամակի վրայ շուռ գալիս, էլ յետ գլուխը շըտկում, ասպանդակը ու սանձը ժաժ տալիս, ձիուն թափիկ տալիս, կամ մտրակում, որ ոտները մի քիչ շուտ շուտ փոխի, շուտ տեղ հասնի։ Բացինն էլ, ձեռն ականջի քամակին դրած, տխուր, բարակ ձայնով մէկ բայաթի էր բարձրացրել, քթի տակին, ձիու սանձը գլխին գցած, ինքն իրան նղղում, գընում էր, որ տուն հասնի, իր յոգնած, ջարդուած մարմինը կամ մէկ շուաքի տակի հանգստացնի, կամ իրան տան դուռը, իւր ընտանիքի երեսը, քանի որ դեռ մութը վրայ չէր հասել, տեսնի ու սիրտը բացուի։

Հօտաղներն էլ իրանց գութանի լծկանը բաց էին թողել, լուծը յետ արել ու մէկ ստուերի տակի՝ գութանը մէկ կողմը, եզները միւս, ջրերի ափին վեր էին թափուել, քաղցը քուն մտել։ Նախիրը մէկ դաշտում, ոչխարի հօտը՝ միւս, շուաք տեղը նստել, ծնօտ ծնօտի էին քսում, փնչացնում, արոճ անում։ Հովիւն էլ գլուխը մէկ քարի վրայ դրած, նղել, աչքը կպցրել էր, որ շոգը քաշուի թէ չէ՝ վեր կենայ, հօտը

իրիկնահովին մէկ լաւ խոտաւէտ տեղ տանի, արածացնի։

Արթուն շների մէկը այս ցցի վրայ, մէկը միւս բլրի ծայրին, կամ հովուի ոտի տակին՝ գլուխը դրել, նօթերը կիտել, մարաղ էր մտել, որ թէ գող, գայլ, գազան սիրտ անի մօտենայ, մէկէնիմէկ վրայ թուչի, պատառ պատառ անի, իր տիրոջ ոչխարները պահի։ Մէկ կանաչ խոտ, մէկ դալար թուփ, կամ մէկ ծաղիկ ոչ մէկ տեղ չէր երևում, որ մարդ հոտն առնի, կամ երեսին մտիկ տայ, սիրտը բացուի, ու իր ճանպի երկարութիւնը մոռանայ, կամ շոքի ձեռից այրուած խորովուած ջանին հովութիւն տայ.—այսպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձուել, պապանձուել։ Միմիայն խոտերի ցօղուններն ու թուփերի սուր սուր ծայրերն էին այստեղ այնտեղ ցից ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում, մոլորուած, պաշարուած կանգնել, մնացել։

Սև սև գիշակեր ագռաւները կամ վախլուկ տուլաշներն էին հէնց մենակ մնացել, որ այստեղ մէկ քարափի ծայրի կամ մէկ բուրջի գլխի, կամ թէ չէ ճամպի միջում իրար գլխի հաւաքուել էին, նստել, կամ պտոյտ էին գալիս, իրար կտցահարում, իրար թևերից քաշում, որ մէկի գտած որսը ձեռիցը խլեն, բաժին անեն, իրանց ձագերին էլ տան կամ հետները տանեն։

Օձ, կարիճ, մլեզ, բզեզ, ու ինչ կերպ գազան ասես՝ մօրեխ, մժեղ, հանդէս էին բաց արել։ Որը մէկ թուփի տակից, որը մէկ քարափի գլխից, որը խոտերի միջին՝ կամաց կամաց ժաժ գալով, պոչ ու գլուխը իրանց քաշելով, կամ ծլունգ լինելով, էլ յետ տագ անելով, կամ գետնի, ապառաժի վրայ սողալով, փշտացնելով, շուացնելով, փշշացնելով, ծվվալով, ծըղալով, ղըրտալով, ոտն էին ելել, ուզում էին իրանց արևի ձէնն ածեն։

Որն էլ իր բնի առաջին արևկող անելով, գլխները հանել, մուռնջ մուռնջ ականջ էին դրել, սուր սուր աչքները ցցել, պէլացել, շլացել, այս կողմ այն կողմն էին մտիկ տալիս, որ

ոտքը խաղաղուելիս՝ դուրս գան մի քիչ շունչ քաշեն, իրանց կերը ճանկեն, էլ յետ իրանց բունը մտնեն, էլ յետ գնան քնեն, հանգստանան։

Բազի պատածակի արանքից, կամ քարի ծայրից էլ մէկ անճար բու, գլուխը վեր թողած, քիթ ու պռունկ կիտած, ծանրացած, գետնին էր նայում, իր սև օրը ողբում։ Հաւի թշնամի ուրուրն էլ՝ թևերը փռած, ճանկերը սրելով, բաց ու խուփ անելով, կտուցը սրբելով, կամ կուրծքը քուջուջելով, երկնքի տակին, գլուխը կուրծքի տակին քաշ գցած, սուր աչքերը այս դէհն այն դէհն էր գցում, պտրտում, պատրաստվում, որ մէկէնիմէկ, ական թօթափել, վայր վազի մէկ լխպոր ճուտի գլխի, որ իր մօր թևերի տակին, կամ մօր գլուխը քորելով, թևը քաշելով, ծվծվալով, կտկտալով կամ կտուց կտցի տալով, մօր կըլխալուն, ծվվալուն ականջ դնելով, սուս ու փուս նստում էին իրար հետ, կամ քջուջ էին անում,—կամ մէկ խեղճ, անճար լորի քամակի խփի, ու ճվճվացնելով, ծղրտացնելով՝ վեր քաշի, քրքրի, փետրի ու իր ագահ փորին մատաղ անի . . .

Բ.

Այսպէս մեռել, լռուել էր բնութիւնը ու ոչ մէկ շփլթու մէկ տեղից չէր լսվում։ Միմիայն հեռու տեղից մէկ բարակ քամի, երբեմն երբեմն փչում, ծառի տերևները սլսլացնում, ժաժ էր գցում, ու գոլ գոլ մարդի երեսին, բերնին քնքուշ ձեռը քսում, շուտով անցկենում ու փշերի, խոտերի, քարափների, ձորերի մէջը մտնում։

Ինչպէս ծխի մէջը խրուած՝ հեռու տեղից դաշտի գիւղերը, հանդերը, փոսերը՝ մթնած, լռուած, ինչպէս սև ամպի կտորներ, կամ այրուած, խանձուած տեղեր՝ այստեղից այնտեղից սևին էին տալիս ու խառնիխուռն երևում։

Արաքսը՝ ինչպէս մէկ նետ օձ, կամ արծաթի գօտի՝ արեւմտեան կողմիցը, ձորերի միջիցը՝ իր սուր, լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել, ու մրմունջ, լուռ, հանդարտ գալիս՝ Մասիսի փէշին մի քիչ խփում, շփում էր ու էլի խեթ խեթ նայելով, նորան սպառնալիք տալով, ձէնըձոր անելով, գլուխը պտըտելով, գնում Զանգու ու Գառնի գետերն իր ծոցն առնում ու խաղալով, խայտալով վշվշալով՝ հեռանում քոյրերի հետ ու պռունկ պռունկի, լանջ լանջի, քամակ քամակի տուած, իրար գլխի, երեսի ձեռ քսելով, փաղաքշելով, հանաք անելով, աչքները խփում, Նըղզում ու Տարուրի տափարակ ծոցումը ծեծուած, ջարդուած քուն մտնում:

Այս տխուր հրապարակի չորեքշուրջը՝ աչքդ որ բաց ես անում, մէկ էլ ես տեսնում, որ երբեմն երկինքն ամպակալած՝ ուզում է որ սար ու ձոր ոտնատակ տայ՝ Արագածի, Մասիսի ու միւս սարերի գլխին բամբաչի, գետին խցկի, որ համարձակում են իրանց գագաթը այնպէս բարձր վեր քաշել, որ բոլոր ամպերը վերեւը ոտը բռնելու տեղ չունենալով, իրանց երկինք մօրիցը խռոված, վեր են գալիս ու նրանց գլխին քուլայ քուլայ դիզվում ու այնպէս իրար վերայ նըստում, որ շատը տեղ չունենալով՝ միւսներին քրինչ է տալիս, բոթբոթում, դուրս է գցում ու նրանց տեղը բռնում:

Այս հատուածի մէջ եղած օտար բառերի տեղը բուն հայերէն բառեր դրէք:

28. ԱՐԱՄԸ

(Արտաքին զգայարանքներ)

Արամը շատ շուտ զարթեցաւ, բացեց իւր աչքերի վարագոյրները՝ երկար ու թուխ թարթիչները. նորա յետեւից շարժուեցան, բարձրացան աչքի ծածկոցները—շարժուող կոպերը: Արեգակի ճառագայթները ներս մտան սենեակը, լուսաւորեցին պատուհանում դրած ծաղկամանը եւ պատի վերայ կախած փոքրիկ գանգրաւոր մանուկի պատկերը, որոնց վերայից արտացոլուելով՝ ընկան Արամի փոքրիկ աչերի ոսպի վերայ, անցան ջրային մասի միջով եւ պատկերացան ցանցաթաղանթի վերայ: Այնտեղ նեարդային մոխրագոյն թելերը յափշտակեցին նորանց եւ հաղորդեցին գլխի ուղեղին, որի միջնորդութեամբ խոկոյն ամենայն բան իմացաւ տանուտէրը—հոգին: «Ա՜, արդէն լուսացել է եւ ինչպէս գեղեցիկ առաւօտ է,»—ասաց Արամը եւ իսկոյն վեր թռաւ անկողնուց: Նա ձեռներով շփեց իւր գեղեցիկ, դուրս ցցուած ճակատը, եւ արագապէս սկսեց հագնուիլ: Հագնուելուց յետոյ՝ նա շտապով ձեռները եւ երեսը սառը ջրով լուացաւ եւ մաքուր երեսսրբիչով սրբեց: Արամը սառը ջրի շօշափումից աւելի եւս զուարթացաւ, կենդանացաւ:

Այդ րոպէին էր, որ օդի արագ հոսանքը ներս մտաւ նորա ականջը, ցնցեց խողովակի առաջը կապող Եւստաքեան փողը եւ նորա յետեւից շարժուեցան երեք փոքրիկ ոսկրները՝ մուրճը, սալը եւ ասպանդակը: Այս փոքրիկ շփոթութիւնը ականջի հեղուկների շարժողութիւն պատճառեց, որի միջի քնքոյշ նեարդը՝ այդ շարժողութիւնից գրգռուելով, յանձնեց դորա տպաւորութիւնը ուղեղին: Արամը եռանդագին կոչեց. «Ա՜խ, ինչպէս քաղցր է երգում մեր պարտիզում թռչնակը:»

Արամը մօտեցաւ լուսամուտին, գլուխը դուրս հանեց դէպի պարտէզ եւ կամենում էր զուարճանալ թռչունի գեղեցիկ երգով. բայց այդ րոպէին ծաղկային անուշահոտ փոշիով լիքը օդը ներս մտնելով նորա մաքուր քթածակերից՝ շօշափեց այնտեղ տարածուած լորձային ծոցը: Ծաղկի փոշիները գրգռեցին նորա մէջ ճիւղաւորուած նեարդերը, իսկ սորանք այդ տպաւորութիւնը հաղորդեցին մայր ուղեղին եւ իմացրին նորան, թէ ինչ է պատահում իւր շուրջը: Լեզուի նեարդերը շարժուեցան եւ Արամը ուրախագին բացականչեց. «Ինչ գեղեցիկ անուշահոտութիւն է բարձրանում մեր պարտիզի ծաղիկներից:»

Արամը կամենում էր դուրս գնալ պարտէզը, փունջ կապել այդ անուշահոտ ծաղիկներից. բայց այդ րոպէին օդը մերձակայ սենեակից մօտեցրեց նորա շրթունքներին եւ լեզուին սուրճից, սերից եւ պատրաստի նախաճաշիկից բարձրացած խոնաւութիւնը: Նորա բերանում առատ լորձունք գոյացաւ, բերանի եւ լեզուի ծը-

Ջիղերի նկարները չափչտակեցին այդ խոնաւութիւնը, հաղորդեցին գլխի ուղեղային զանգուածին և տանուտէրը—հոգին, կարծես, ասաց Արամին. «Նախաճաշիկը պատրաստ է, իսկ դու ուտելու ցանկութիւն ունիս։» Արամը ուրախ մտաւ սեղանատունը, վազեց, ողջունեց իւր մօրը. նորա ձեռների նկարները շարժուեցան և աջ նա մատներով շօշափեց, թէ որքան փափուկ է այն հացը, որ նա վերցրեց և սկսեց ախորժակով ուտել։ Նախաճաշելուց յետոյ նա զուարթագին խաղում ու վազվզում էր պարտիզում և ծաղիկների տեսքով ու նոցա անուշահոտութեամբ զմայլվում էր։

29. ԳԱՐԵԳԻՆԸ

(Գլուխ)

Գարեգինը՝ երբ ծնուեցաւ, շատ փոքր էր և թոյլ, ինչպէս առհասարակ թոյլ են լինում բոլոր նորածինները. նորա գլուխը այս ու այն կողմն էր տատանվում, որովհետև դեռ ոսկրներ չունէր։ Գլխի աճառները (ղըրճ—ղըրճուկները) իրանց ասեղնաւոր ծայրերով դեռ չէին միաւորուել միմեանց հետ։ Սկզբումը Գարեգինը միայն ճչում էր, իսկ փոքր ժամանակից յետոյ աւելի բարձրաձայն էր ցանկութիւն յայտնում ուտելու,—նա այնպէս գոռում ու լաց էր լինում, որ կարծես ողջ տունը իրանն է. մի և նոյն բանը նա անում էր, երբ անհանգիստ էր պառկացրած լինում, կամ երբ նորա բարակ ու կարմիր մաշկը փոքր ինչ ցուրտ էր զգում։ Նորա բերանի, լեզուի և շնչափողի կապերը դեռ այնքան ամրացած չէին, որ կարողանային իրան շրջապատողներին հասկանալի ձայնով արտայայտել նորա զգացմունքը։

Գլխի ուղեղն էլ դեռ այնքան ամրացած չէր. առ հասարակ նորա գլուխը դեռ կանոնաւորուած չէր, այս պատճառով էլ չէր կարողանում նորան գործ ածել, ինչպէս իրան պէտք էր և յարմար։ Գարեգնի բերանում դեռ ատամներ չ'կային, շրթունքները ձգվում էին դէպի ամենայն բան, որ մերձենում էր իրանց և կամենում էին նորան ներս քաշել։

Բայց սակաւ առ սակաւ նորա անշարժ ծնօտի և ստորին շրթունքին ծնօտի վերայի լնդերքը սկսան ուռչել, կարմրել, և նոցա տակից դուրս երևեցան առաջին երկու կտրող ատամները, որոնք սպիտակ

էին և գեղեցիկ։ Այն ժամանակ Գարեգինը աւելի էր աշխատում ամենայն բան բերանը կոխել, որովհետև նորա լնդերքը սաստիկ քոր էին գալիս։ Գարեգնի մարմնի մէջ այդ ժամանակ շատ փոփոխ ու կիր էր ժողովուել—նորա աճառներն սկսել էին պնդանալ, ոսկր դառնալ, հոգին ևս սկսել էր իւր առաջին գործողութիւնները. Գարեգինն սկսեց ճանաչել հօրը, մօրը, ժպտալ նոցա դիմացը, սկսեց ճանաչել և այն առարկաներից շատերը, որոնք միշտ շրջապատում էին նորան։ Բայց մի և նոյն ժամանակ նա այժմ աւելի էր հիւանդանում, նիհարանում, գոռում, լաց լինում։ Այն սպիտակ ոսկրիկները, որոնք իրանց արմատից ծլում շարվում էին նորա ծնօտի վերայ, ինչպէս երևում է, շատ էին անհանգիստ անում նորան։—Գարեգինը փոքր առ փոքր մեծանում էր։ Աստիճանաբար նորա գլուխը կանոնաւորուեցաւ, կլորացաւ, դուրս ցցուած ճակատից սկսած դէպի բարձր՝ գագաթը, ծոծրակը և քունքերի մի մասը զանգրաւոր մազերով ծածկուեցան, որոնց արմատները գլխի մաշկի մէջ եղած մածուցիկ հիւթը ծծելով՝ ամրապէս հիմնաւորուեցան նորա մէջ։ Եթէ նա պատահմամբ իւր գլուխը մօտեցնում էր ճրագին, նոքա ճրճռում ու կծկվում էին և եղջրային անախորժ հոտ էին արձակում. բայց այդ ժամանակ Գարեգինն ամենևին ցաւ չէր զգում, իսկ երբ այդ գխպուածին հանդիպում էին նորա փափլիկ մատները, նա ցաւից աղաղակ էր բարձրացնում։ Այսպէս փոքր առ փոքր նորա երկու ծնօտներն էլ ատամներով լցուեցան, որոնց երեսը ծածկուած էր մաքուր և սպիտակ էմալով (արծնապակի)։ Այդ ատամները թուով քսանի հասան։ Գարեգինն էլ այն մանուկը չէր. նորա դէմքը աւելի խոհուն կերպարանք էր ստացել։ Դէմքի վերայ փայլուն բծեր էին ձգուել։ Նորա փափլիկ, վարդագոյն շրթունքները այժմ պարզ արտասանում էին ոչ թէ անկապ բառեր, այլ ամբողջ պարբերութիւններ։ Այժմ նա ոչ թէ չորեքթաթ էր անում, կամ առաջուայ պէս կարասիներից բռնած էր ման գալիս, այլ ազատ ու համարձակ թռչկոտում էր ու խաղում։

Ահա Գարեգինը նստած է սեղանի մօտ և պատրաստում է իւր դասերը. նա այժմ գիտէ, որ թէև ինքը շատ մեծ չէ, բայց մարդ է, որովհետև այնպիսի հոգի և այնպիսի մարմին ունի, ինչպէս միւս մարդիկը։ Գարեգինը շատ բան գիտէ. նա գիտէ և այն, որ իւր գլուխը բաղկանում է մի քանի մասերից, որոնցից առաջին

մասը կոչւում է դէմք, վերին մասը—գագաթ, յետին մասը—ծոծրակ, իսկ կողմնային մասերը—քունքեր։ Դէմքն ունի ճակատ, յօնքեր, աչքեր, քիթ, այտեր, թշեր, բերան և ծնօտ. վերջինս բաղկացած է վերին և ստորին ծամելիքից, որոնց վերայ շարած են սպիտակ ատամներ։ Ատամների թիւը (չափահասներինը) 32 է։ Ատամները բաժանվում են՝ առաջնատամներ—որոնք կտրող էլ են կոչւում—նոցա աջ և ձախ կողմումը գտնվում են ժանիքները, իսկ ժանիքներից յետոյ—սեղանատամները, իւրաքանչիւր ծնօտի վերայ հինգ հինգ ամեն մի կողմից։ Առաջնատամներով կտրում են ուտելիքը. ժանիքներով նորան բռնում կամ պատառոտում են, իսկ սեղանատամներով մանրացնում են նորան, որպէս երկանով, ուստի դորանք աղօրիք էլ են կոչւում։

Այս բոլոր բաները այժմ Գարեգինը լաւ և գիտակցաբար գիտէ, հասկանում է, կարող է հաղորդել ուրիշներին. բայց երբ նա աւելի կըմեծանայ, իւր կրթութեան վերայ հիմնաւորապէս ուշք կըդարձնէ և նորա վերջին սեղանատամներն էլ դուրս կըգան, որոնք կոչւում են կատարելութեան ատամներ, այն ժամանակ նա շատ բան կըսովորի և առաւել հիմնաւորապէս։

30. ԱՐՇԱՒԻՐԸ

(Ներքին գործարաններ)

Առաւօտեան վաղ վեր կենալով՝ Արշաւիրը խմեց մի բաժակ կաթ, հետն էլ կերաւ մի կտոր հաց և գնաց ուսումնարան։ Նա վեր էր առել իւր հետ պայուսակը, որի մէջ դրած էին նորա գրքերը և միւս դասական իրեղէնները, և մտածում էր իւր այդ օրուան դասերի վերայ. իսկ հացը, որ կերել էր նա, այդ րոպէին ճանապարհորդում էր նորա մարմնի մէջ։ Ատամները լաւ ծամել էին նորան, լորձունքի բուշտիկները նուրբ լորձունքով պատել, իսկ փափուկ լեզուն շտապով ներս էր մղել որկորի մէջ։ Ճանապարհին նա փոքր մնաց՝ որ ընկնէր շնչափողի մէջ, բայց փոքրիկ մսեայ խցանը—կատիկը ծածկեց նորա բերանը և ծամած պատառը սահելով գլորուեցաւ դէպի ցած և ընկաւ այն մսեայ պարկի մէջ, որ ստամոքս է կոչւում։ Այդտեղ տաք էր ու մութն և որ կողմը դառնում էր, ամենայն կողմից նորան շրջապատում էր ստամոք-

սային տհաճելի հիւթը, որ կողքից պատրաստում էր կարծր փայծաղը։ Բայց նորան չէր վիճակուած երկար ժամանակ շրջել այնտեղ, որովհետև իւր ընկեր կաթնի հետ ստամոքսային հիւթի մէջ լուծուելով՝ դարձաւ մի տեսակ թանձր խիւս։ Խիւսը ստամոքսի ստորին դռնով ցած իջաւ. այդ տեղ նորա հետ խառնուեցան լեղու կաթիլներ և աւելի կերպարանափոխուած՝ աղիքներով առաջ գնացին։ Այդ ուղին առաջ լայն անցք էր. փոքր առ փոքր նա նեղանում ու նեղանում էր և հէնց ինքը հիւթն էլ աստիճանաբար փոխվում էր։ Այդ նեղ անցքերից անցնելիս՝ նա կարմիր զգեստ էր հագել և իբրև արիւն այլ և այլ երակներով վազում էր դէպի մարմնի ամենայն կողմերը։ Արիւնը որքան հեռանում էր, այնքան իւր պիտանի մասերով սննդելով մարմնի այլ և այլ մասերը, ինքը ստանում էր նոցանից անպէտք հիւթեր և նորա կաթիլները աստիճանաբար մգանում էին։ Կարծր ոսկրներին մօտենալով՝ նա իւր դեղին գիճութիւնից նորանց էլ իրանց սնունդը տուեց—ֆօսֆօր և կիր։ Եւ ահա նա բոլորովին մգացած, ամբողջ մարմինը մանեկած, ուղեղի մեծագործութիւններին և շարունակ սեղմուող ու բացուող մկնամսերի գործունէութեանը ականատես լինելուց յետոյ, վերջապէս թափվում է այն աւազանը, որ ունի երկու մուտք և երկու ելք և որին մարդիկ «սիրտ» են անուանում։

Սիրտը ձևով տանձի նման է։ Կաթիլ առ կաթիլ վերևից ու ներքևից ներս են մտնում և դուրս են գալիս այդ մսեղէն պարկից արեան կաթիլները և նորա դռնակներն ուրիշ գործ չունին, բացի փակուելն ու բացուելը։ Սիրտը մսեղէն միջնապատով բաժանվում է երկու հաւասար մասերի՝ աջակողմեան և ձախակողմեան, որոնցից իւրաքանչիւրը նոյնպէս երկու բաժանմունք ունի՝ վերին և ստորին։ Անմաքուր արեան կաթիլները թափվում են սրտի աջակողմեան վերնասենեակը և հրելով ու բանալով փոքրիկ դռնակը, թափվում են աջակողմեան «որովայնը»։ Բայց սիրտը անմաքուր արիւն չի սիրում, ուստի մկնամսերի անդադար սեղմուելովը մի այլ ճանապարհով հալածում է նորան դէպի այն ընդարձակ թևերը, որոնք կազմուած են բազմաթիւ բշտիկներից։ Մարդիկ դոցա «թոքեր» են անուանում։ Այդ տեղ կաթիլները հանդիպում են օդին, որով լցվում ու դադարկվում են թոքերը։ Օդը քթի և բերանի խոռոչներից արագապէս մտնելով՝ անցնում է դէպի թոքերի բշտիկները, շուտափոյթ նայում է նորեկ հիւրերին,

որոնք փաթաթուած են մուգ վերարկուի մէջ, մօտենում է նոցա և նորա այրող ոյժը—[illegible] թափանցում է նոցա մուգ ծածկոցը ու նորա փոխարէն տալիս է վարդագոյն զգեստ. այդ րոպէին սեղմվում են թոքերի բշտիկները և օդը արագապէս դուրս թռցնելով միևնոյն ճանապարհով՝ տանում է իւր հետ արեան անպէտք մասը—ածխային թթուն: Արեան մաքուր, վարդագոյն կաթիլները թողնելով թոքերը, նորից վերադառնում են դէպի սիրտը, բայց այժմ մտնում են նորա ձախակողմեան մասը—նախ վերին բաժանմունքը, ապա ստորին և այնտեղից դուրս գալով՝ դարձեալ սկսում են իրանց վաղեմի ճանապարհորդութիւնը: Այդպիսով նոքա տալիս են Արշաւրին կեանք, ոյժ և առողջութիւն: Արշաւիրը ուսումնարանումը աշխատում էր, առանց իմանալու, թէ ինչ բաներ են կատարվում իւր ներսը: Նա մինչև անգամ մոռացել էր, թէ ինքը հաց ու կաթն է կերել:

31. ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Մէկ չքաւոր երիտասարդ հանդիպեց իւր նախկին ուսուցչին և սկսեց շատ գանգատուիլ իւր դառն վիճակի ու անյաջողութիւնների վերայ: Մի ժամանակ նա եղած էր ուսումնարանի ամենալաւ աշակերտը և իրանից աւելի վատ ուսանողներն այժմ լաւ անուան ու հարստութեան տէր էին, այնինչ ինքն անց էր կացնում թշուառ կեանք: «Միթէ յիրաւի սաստիկ չափ աղքատ ես դու, ասաց նորան ուսուցիչը. դու, ինչպէս տեսնում եմ, առողջ ես. այդ ձեռքը, շարունակեց ուսուցիչը՝ բռնելով իւր աշակերտի աջը, ուժեղ է և կարող է գործել: Թոյլ կըտայի՞ր արդեօք, որ կտրեն դորան հազար մանէթով»:—Աստուած հեռու տանէ, և ո՛չ տասն հազարով:— «Իսկ ո՞րքանով կըտայիր քո սրատես աչքերը, որ տեսնում են լոյս աշխարհը,—քո սուր ականջները, քո արագաշարժ ոտները: Կարծեմ դու չէիր փոխիլ դոցա մի ամբողջ թագաւորութեան հետ:»—Ի հարկէ ոչ, պատասխանեց երիտասարդը:

—«Ուրեմն ի՞նչպէս ես գանգատվում քո աղքատութեան վերայ, երբ որ ունիս այդպիսի մեծ հարստութիւն,

32. ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մի օր Պրուսիոյ թագաւոր Փրիդերիկոս Բ. իւր սենեակի մէջ սաստիկ զբաղուած՝ կրկին ու կրկին զանգակը խփեց, բայց մարդ չ՚երևեցաւ: Անհամբերութիւնից դուռը բաց արեց և տեսաւ, որ սպասաւորը թախտի վերայ ընկած քնած է: Մօտ գնաց որ զարթեցնի: Այդ միջոցին աչքովն ընկաւ սպասաւորի գրպանից կիսով չափ դուրս ընկած մի նամակ: Հետաքրքրութիւնը շարժած՝ հանդարտ կերպով դուրս հանեց թուղթը, որ իմանայ թէ մէջն ինչ կայ գրած: «Իմ անգին որդի, ասուած էր նամակում. անչափ ուրախ ու շնորհակալ եմ, որ այս անգամ էլ չ՚ուշացրիր ուղարկել ինձ քո ամսականից կէսը. դու քո ծնողասիրութեամբ քաղցրացնում ես մօրդ տխուր օրերը. հաստատ յոյս ունեցիր, որ Աստուած դորա փոխանակ պիտի օրհնէ քո կեանքդ»:

Թագաւո՛րը՝ նամակը կարդալուց յետոյ, մի քսակ ոսկով լցրեց և նամակի հետ միասին դրեց տակաւին քնած երիտասարդի գրպանում, ապա դարձաւ իւր սենեակը և այնպէս սաստիկ հնչեցրեց զանգակը, որ սպասաւորը զարթնելով ներս վազեց:

«Լա՛ւ քնեցիր», ասաց նորան թագաւորը: Սպասաւորն աշխատում էր անձն արդարացնել. շփոթման մէջ ձեռքը տարաւ գրպանը և զարմացած դուրս հանեց քսակը: Ոսկիները տեսնելուն պէս՝ գոյնը թռաւ.—Տէր արքայ, ասաց սպասաւորը արտասուագին՝ թագաւորի ոտքերն ընկնելով, երևի մահս են կամենում. չ՚գիտեմ ով է դրել գրպանումս ոսկով լիքը մի քսակ»:

—«Բա՛րեկամ, պատասխանեց թագաւո՛րը. Աստուած շատ

անգամ իւր բարիքը քնած ժամանակներս է հասցնում մեզ։ Ա՛ռ այդ քսակը, ուղարկի՛ր մօրդ, ողջունի՛ր իմ կողմից և ասա՛, որ անհոգ լինի. այսուհետև ես պէտք է խնամք տանեմ նորա վերայ։ Իսկ դու, սիրելի, վստահ եղիր, որ իմ մօտ բաղդաւոր պիտի լինիս»։

33. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Միանգամ մարդու մարմնի Անդամները վիճեցին միմեանց հետ և վճռեցին այլ ևս չ՚ծառայել իրար։ Ոտներն ասացին. ինչի՞ մենք պէտք է կրենք մեզ վերայ ամբողջ մարմինը. թող նա իրան համար ուրիշ ոտներ շինէ և մանգայ՝ որքան կամենում է։ Ձեռները նոյնպէս ասացին. մենք այլ ևս չենք կամենում ուրիշների համար ծառայի պաշտօն վարել. շինեցէք ձեզ համար ուրիշ ձեռներ և թող նորանք գործեն։ Բերանը փընթփընթաց. հապա ես յիմար կըլինիմ, որ ոչինչ օգուտ չունենալով՝ ստամոքսի համար սկսեմ կերակուր ծամել, որ նա յետոյ՝ պարկի նման ձգուած, մարսի նորան. չէ՛, թո՛ղ իրան համար ուրիշ բերան գտնի. ես այսուհետև էլ չեմ կամենում նորան ծառայել։ Աչքերն ևս շատ զարմանում էին, որ իրանք պէտք է նայեն ամբողջ մարմնին և շարունակ հսկողութեան մէջ լինին։ Այսպէս խօսեցան միմեանց հետ մարդու մարմնի բոլոր անդամները և վճռեցին այլ ևս միմեանց չ՚ծառայել։ Բայց գիտէ՞ք ինչ պատահեցաւ։ Որովհետև ոտները չէին կամենում մանգալ, ձեռները դադարեցին գործ շինելուց, բերանն ևս չէր ուտում և աչքերը փակուեցան, ապա և ամբողջ մարմինն անսնունդ և անշարժ մնալով՝ սկսեց թուլանալ, նիհարել և փոքր էր մնացել, որ մեռնէր։ Բոլոր անդամները, որոնցից կազմուած էր մարմինը, ծանրացան և աւելի վատթար վիճակի մէջ կընկնէին, եթէ չ՚հասկանային, թէ ո՛րքան անմիտ է իրանց վարմունքը։ «Ո՛չ, վատ է այս տեսակ ապրիլը»,

մտածեցին նորանք, հաշտուեցան և սկսեցին ըստ առաջնոյն միասին և միաբան գործել։ Այնուհետև ամբողջ մարմինն էլ ուղղուեցաւ, նորոգուեցաւ և առողջ, ուժեղ դիրք ստացաւ։

34. ՀՐԱՇԱԼԻ ՏՆԱԿ

Ես մի հրաշալի տուն եմ ճանաչում, որի մէջ ամեն բան կարգաւորուած է և չ՚ունի ոչինչ պակասութիւն։ Նա ունի կանոնաւոր աղօրիք, ունի և խոհանոց, ուր գիշեր ցերեկ տաք կերակուր է պատրաստվում։ Տունը շատ մուտքեր և անցքեր ունի, որոնցով արխաջան ծառաները կրում են տաք կերակուրը դէպի նորա ամենայն անկիւնները։ Տունը մի հմուտ տնտես ունի. նա այնքան աշխատասէր է, որ գիշեր ու ցերեկ մի րոպէ չի հանգստանում. անդադար թխկթխկացնելով՝ նա իւր առոյգ և արագաշարժ ծառաներին մղում է այլ և այլ կողմեր, ուր որ հարկաւոր է լինում կամ կերակուր, կամ ըմպելիք, կամ ջերմութիւն և կամ որև է անկիւնը նորոգելու համար նոր նիւթ։ Տունն ունի ընդարձակ դահլիճ, ուր ազատ մաքուր օդ է ներս մտնում. ունի նոյնպէս երկու պայծառ լուսամուտներ շարժական փեղկերով։ Գիշերը այդ փեղկերը փակվում են, իսկ ցերեկը բացվում։ Տան մէջ ապրում է անտեսանելի տանտիկինը։ Թէ և նորան չի կարելի տեսնել, բայց նա ամեն բան գիտէ և ամենին բարեկարգողը և կենդանացնողը նա է։ Նորա համար է հոգում տնտեսը. նորա համար են գործում փոքրիկ ծառաները. նա ինքն է նայում պայծառ լուսամուտներից. նա է բանում և փակում նորանց։ Գիշեր և ցերեկ քնել չ՚գիտէ նա. նորա աչքերը — միտքը շատ հեռու է տեսնում։ Եթէ տանտիկինը դուրս է գնում տանիցը, այնուհետև ամբողջ տունը խոր քնով ծածկվում, թուլանում և լռում է. տնտեսը դադարում է գործելուց, ծառաները կաշկանդվում են անցքերում և ամբողջ տունը խոր

ւութեան մէջ մտնելով՝ սառչում է և քայքայվում։ Բայց ո՞ւր է գնում տանտիկինը։ Նա գնում է այնտեղ, որտեղից եկած էր. նա գնում է երկինքը։ Երկրի վերայ նա ժամանակաւոր հիւր էր. հեռացաւ հիւրը և նորա բնակարանը—մարմինը դրեցին մի այնպիսի արկղի մէջ, ուր ոչ կարելի է կանգնել, ոչ շարժուել և ոչ ուտել։ Արկղը ամփոփեցին հողի մէջ և տունը քայքայուելով հող դարձաւ։

35. ԲԱՐԵԽԻՂՃ ԽԱՓՇԻԿԸ

Մի հնդկացի խափշիկ ծխախոտ խնդրեց հարևանից։ Հարևանը ժլատ մարդ չէր, ձեռքը գրպանը տարաւ և դուրս հանեց մի ամբողջ բուռը ծխախոտ։ Միւս առաւօտը հնդկացին դարձեալ եկաւ հարևանի մօտ և տուեց նորան մի հատ արծաթի դրամ, որ գտել էր ծխախոտի մէջ։ Ինչո՞ւ չ՚պահեցիր այդ դրամը քեզ մօտ, ասաց այն տեղ պատահող սպիտակադէմ մարդը. քեզ ծխախոտ տուողը դրամն էլ է տուել»։— Խափշիկը ձեռքը դնելով սրտի վերայ՝ ասաց.—այս տեղումս երկու մարդ կայ, մինը բարի, միւսը չար։ Բարի մարդն ինձ ասաց. «Այդ փողը քոնը չէ, ուրեմն տար տիրոջը տուր»։ Իսկ չար մարդն ասաց. «Երբ տուել են քեզ այդ փողը, ուրեմն նա քոնն է»։ Բարին վրայ բերեց. «Չէ, միմիայն ծխախոտն է քոնը, և ոչ փողը»։ Չարը նորէն ասաց. «Ի զուր ես նեղութիւն քաշում. գնա դորանով արաղ առ, խմիր»։ Ես չ՚գիտէի, թէ ինչ անեմ և պառկեցայ քնելու։ Բայց բարի և չար մարդիկն ամբողջ գիշերը դադար չէին տալիս ինձ և կռվում էին. առաւօտեան ես զարթեցայ և յետ բերի փողը։

36. ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԵՒ ԻՒՐ ՍՏՈՒԵՐԸ

Մի տղայամիտ երիտասարդ կամեցաւ իւր ստուերը բռնել. բայց քանի որ նա ոտը առաջ էր դնում, շուքն էլ մի

քայլ առաջ էր փախչում. էլի ոտը փոխում էր, նա էլ նոյն բանն էր անում. յետոյ երիտասարդը սկսեց վազել, բայց զարմացած տեսաւ, որ ստուերն էլ վազում է առաջից։ Երիտասարդը զօր տուեց ոտներին. շուքն էլ սկսեց աւելի ու աւելի շուտ փախչիլ։ Ճարը կտրուած, մեր թեթևամիտ երիտասարդը երեսը շուռ տուեց և սկսեց յետ փախչիլ։ Մէկ էլ աչքի տակովը նայի ու ինչ տեսնի. շուքը կրընկակոխ վազում է իւր յետևից։

Աշխարհումս բաղդ ասածդ էլ շուքի պէս բան է. շատերը նորա յետևից են ընկնում, ոչինչ ջանք չեն խնայում, բայց չեն կարողանում ձեռք գցել. ուրիշները կարծես փախչում են բաղդից, բայց նա նորանցից չի պոկ գալիս, չի հեռանում։

37. ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿ

Երբոր գլուխըդ փորձանքի մէջ է,
Դու քեզ օգնողի ոտքըն ես պաչում.
Փորձանքը քեզնից հեռացաւ թէ չէ,
Նոյն իսկ օգնողիդ—էլ ես կըշտամբում.
Նորա արածի լաւ կողմը թողում,
Պակասը տեսնում։

Գեղջուկ ծերուկն իւր մշակը հետն առած՝
Իրիկուան դէմ տուն էր գալիս դաշտերից։
Մի արջ ելաւ ծերի դիմացը յանկարծ՝
Երբ անցնում էր մութ անտառի նա միջից.
Ծերուկն էլ ո՜ւհ, փա՜յ կանչելը չ՚կարաց.
Արջը նորան տակը կոխեց ու գոռաց,
Նըստեց վերան, շուռ-մուռ տուեց, քաշքըշեց,

Ամէն կողմից գարհուրելի կրծոտեց:
Խեղճ ծերուկի բանը վատ էր, ի՜նչ անէր.
«Մըրտո՛յ եղբայր, հասի՜ր հասի՛ր», կը կանչէր:
Մըրտոն կացինը առած՝
Կայծակի պէս մօտ վազեց,
Արջի գլխին մոլեգին
Կացնի բերնով հարուածեց,
Յետոյ հանեց դաշոյնը,
Կռնատակից ներս ցցեց
Եւ ահռելի գազանի
Թոքն ու սիրտը խոցոտեց:
Արջը ռռնաց և վայր ընկաւ կիսամեռ,
Արիւնի մէջ տապալելով հեծում էր:
Փորձանքը անցաւ,
Ծերուկն ոտք ելաւ,
Ու խեղճ Մըրտոյին
Քըֆըրել սկսաւ:
Մեր քաջ Մըրտոն ապշեցաւ,
Դարձաւ ծերուկին ասաւ.
—«Ինչու կը քըֆրես դու ինձ մահտեսի:»
—«Ինչու կը քըֆրեմ, ա՛յ յիմար քեզի.
Իմ սիրտս այրվում է. դու ուրախացիր,
Չե՞ս տեսնում որ արջի մորթը փըչացրիր:»

38. ԿԱՊԿԻ ԵՂԲԱՅՐԸ

Փոքրիկ կապկի մայրը վախճանուեցաւ և նա բոլորովին որբ մնաց: Տխրադէմ նստած էր նա ծառի վերայ և իւր սև օրը լալիս էր: Կապիկը գեղեցիկ չէր. նորա դէմքը փոքր էր և կնճռոտ, բունը վտիտ, և ունէր չորս երկար ձեռներ: Ոչ ապաքէն կապիկները ոտներ չունին,—նոքա ունին միայն չորս

ձեռներ, որովհետև նոցա ստորին վերջաւորութիւններն ևս՝ մարդու ձեռների նման, ընդունակ են գործ կատարելու, առարկաներ վերցնելու: Այս իսկ պատճառով մեծամեծ կապիկները դժուարութեամբ են մանգալիս գետնի վերայ. Նոքա առհասարակ ծառերի վերայ են ապրում և այդ բանին սաստիկ օժանդակում են նոցա չորս ձեռները: Մեր փոքրիկ կապկին ոչ ոք գեղեցիկ չէր ասիլ: Այս բաւական չէ. նա անօգնական էր գլխովին: Նա դեռ ևս չէր կարողանում մէկ ծառից միւսը ցատքիլ և նոցա վերայ բարձր ու ցածր անել՝ իւր համար կերակուր ճարելու. նորա ատամները դեռ շատ փոքր էին՝ ընկուզներ ջարդելու համար: Ինչպէս երևում էր, նորան վիճակուած էր քաղցածութիւնից մեռնիլ, ինչպէս կըմեռնէր մի փոքրիկ մանուկ, եթէ իւր մօր մահից յետոյ բոլորովին անտէրունչ մնար: Բայց ո՞վ կը հոգար մեր կապկի համար: Նորա ցեղակիցները ապրում էին խումբերով, որոնց մէջ էր և նորա մեծ եղբայրը: Ամբողջ խմբի մէջ ամենաճարպիկ խեղկատակներից մէկն էր և քանի մի տարի շարունակ՝ արդէն շատ խորամանկութիւններ էր անում անտառում: Եթէ մի տեղ կռիւ պատահէր, պէտք է հաստատ իմանայիք, որ կռուողներից մինը նա էր: Եթէ կապիկները ժողովուէին արշաւելու և կործանելու գիւղացիների սիմինդրի արտերը կամ ասպատակելու նորանց այգիները, անպատճառ մեր կապկի եղբայրը այս արշաւողներից առաջինը կը լինէր: Այս խեղկատակը տեսաւ իւր եղբօրը և բարձրացաւ դէպի նա: Կարելի էր կարծել, թէ նա փորձանք է կամենում բերել նորա գլխին, կամենում է ցնցել և վայր գլորել նորան ծառից: Բայց ո՛չ: Նա նստեց եղբօր կողքին և քնքշաբար բռնեց նորա ձեռքից: Մանուկն սկսեց փարիլ նորանով և իւր առաջին ձեռներով փաթաթուեցաւ նորա պարանոցով, իսկ յետին ձեռները պատ տուեց մէջքին. Նա մեծ կապկի հետ վարվում էր, ինչպէս իւր մօր հետ. իսկ վերջինս խնամում էր նորան իբրև ծնող. իւր կեն-

դանի բեռը գրկած՝ նա թռչում էր մի ծառից միւսը, մրջատներ էր որսում ու կերակրում էր նորան, ջոկում էր նորա համար ամենահիւթալի պտուղներ, նորա հետ իսկ որոնում էր թռչունների բներ և գողանում էր նորանց միջից ձուաներ։

Երբ փոքրիկ կապիկը սակաւ ինչ մեծացաւ և ուժեղացաւ, այն ժամանակը նորա դաստիարակը ցոյց տուեց նորան, թէ ինչպէս պէտք է ցատքել և վեր ելնել ծառերը, և սովորեցրեց այն ամենայն խորամանկութիւնները, որ պիտի իմանայ իւրաքանչիւր կապիկ, եթէ կամենում է կուշտ լինել և չ՚ընկնել փորձանքի մէջ։ Մի անգամ փոքրիկ կապիկը ծարաւեցաւ և եղբայրը տարաւ նորան սառն աղբիւրի մօտ։ Յանկարծ թփերի տակից բարձրաձայն հաչելով դուրս վազեց որսի շունը։ Բոլոր կապիկները, որոնք այնտեղ ներկայ էին, շուտափոյթ փախան այլ և այլ կողմեր և որպէս թռչուններ թագկացան ծառերի վերայ։ Միայն փոքրիկ կապիկը չը կարողացաւ վեր բարձրանալ ծառը։ Երկիւղի առաջին րոպէին նա ցատքեց մի բարձր քարի գլուխ և ամբողջ մարմնով դողում էր, իսկ չար շունը քարի մօտից կատաղաբար հաչում էր նորա վերայ։ Ահա հեռուից երևեցաւ և որսորդը։ Խեղճ կապիկն անշուշտ կը կորչէր, եթէ եղբայրը նորան չ՚փրկէր։ Նա, երբ նկատեց, որ իւր սանիկը վտանգի մէջ է, իսկոյն յետ դարձաւ և համարձակ ընթացաւ դէպի քարը. յետոյ գայլրացած նայեց շանը և այնպէս սպառնագին կրճտացրեց ատամները, որ նա չ՚համարձակուեցաւ յարձակուիլ նորա վերայ։ Այսպիսով հասաւ իւր որդեգրին, գրկեց նորան և բարձրացաւ ծառը։ Որսորդը՝ ՚ի գութ շարժուած նորա անձնանուիրութիւնից, վճռեց չ՚արձակել հրացանը և այսպիսով փոքրիկ կապիկը փրկուեցաւ։

---

39. ԿԱՊԻԿՆԵՐ

Ուրիշներից թէ խելքով առնես քեզ մի օրինակ,
Զարմանք չէ որ մեծ օգուտ շահիս ամէն ժամանակ.
Բայց թէ հետևիս մէկին կուրօրէն,
Վայ ու թուք ու մուր լսիր ամէնէն.
Այս բանիս հաստատութիւն
Առ քեզ ահա նոր պատմութիւն։

Ով որ կապիկ տեսած ունի՝ նա գիտէ,
Թէ այս վտիտ կենդանին
Ուրիշներին տրնազ տալ շատ կը սիրէ.
Կուզէ նման անել ամէն տեսածին։
Աֆրիկէի մէջ կապիկը խիստ բազմաթիւ է ու ցեղ ցեղ.
Մի օր մի մեծ ծառի վերայ ժողովուեցան միատեղ.
Որը վերևից, որը ներքևից,
Որն էլ ճղների տակից ու գլխից
Ծըկրակում էր աչքը տրնկած ու նայում՝
Թէ որսորդի մէկն ինչ կերպով,
Գետնի երեսին մի ցանց փռելով,
Ինքը նորա մէջն էր գլորվում,
Տակըն էր մըտնում, վերև բարձրանում։
Ամէն կապիկ մօտինին կըմըշտելով նըշան էր տալիս,
Եւ կ՚ասես թէ ականջն ի վեր այսպէս լինէր ասելիս.
Սըրան նայի՛ր, եղբայրիկ, ինչ է անում ժամերով.
Ինչպէս ելնում — մտնում է ծամըռուելով յոգնելով.
Մերթ պառկում է, երկարում, և մերթ կըծիկ է դառնում.
Այնպէս որ ոչ ոտքերը և ոչ ձեռքն է երևում.
Մենք դըրանից ի՛նչով ենք պակաս.

Այդ արհեստը սակայն չ՚ունինք. ինչ կայ վնաս՝
Եկէք մենք էլ փորձ փորձենք,
Գուցէ իրանից անցնենք.
Նա հերիք խաղաց իւր ուզածին պէս.
Տեսնենք երբ կերթայ.—հեռացածին պէս...»
Մէկէլ տեսնես իրօք ելաւ մէկ կողմ գընաց որսորդը՝
Այնտեղ թողեց իւր ցանցերով թակարդը։
«Շուտ անենք, ասին կապիկք իրարու,
Բայց չըկորցնենք, երթանք փորձելու։»
Իսկոյն ծառից վայր թափուեցան խեւերը,
Ցանցի վերայ շարուեցան նոր հիւրերը.
Տակը մըտան, վըրան ելան,
Կըծկըւեցան, գըլորուեցան։
Կապիկների կանչ ու ճիչը աշխարհ բըռնեց խընդալուց.
Բայց ի՜նչ փորձանք՝ թակարդի մէջ բռնուել են շատ վաղուց.
Չեն իմանում, ինչպէս ազատուին,
Էլ դուրս գալու հընարը չ՚ունին։
Իսկ որսորդը այդ վայրկենին էր սպասում.
Շուտով միքանի պարկ է վերառնում,
Գալիս հիւրերին մօտենում։
Ո՞ւր փախչէին, ինչ անէին,
Նորա ձեռքին գերի էին.
Բռնեց ամէնքին,
Տարաւ ծախեց թանկագին

40. ՀԵՏԱՔՐՔԻՐ

«Բարի՛ եկար, հազար բարի, բարեկամ,
Ո՞ւր էիր՝ տեսնամ։»
—«Թանգարանից է գալըս.
Չորս ժամ եղաւ ման-գալըս.

Ամենայն կողմ պտըտեցի, պըրպըտացի,
Բոլորը տեսայ, ոչինչ չը թողի։
Աշխարհումըս ինչեր են եղել,
Իրաւ խելքից, մըտքից վեր.
Ո՛ր կողմ նայիս՝ արմանք զարմանք հրաշալիք.
Ո՞րն էլ դիտես՝ մէկը միւսից գեղեցիկ.
Ի՜նչ գազաններ, ինչ թըռչուններ,
Թիթեռնիկներ, բըզէզներ,
Ի՜նչ զատիկներ, ի՜նչ կերպ ճանճեր,
Որքան ոսկի եզնակներ,
Որը կանանչ՝ զըմրուխտի պէս,
Որը կարմիր՝ քուստի պէս.
Հապա մանրիկ բոռոռները. հաւատա
Գընդասեղի գըլխից էլ շատ փոքրը կայ։»
—«Հապա փղին ի՜նչ ասիր.
Ի՜նչ ահագին վիթխարի.
Հարկաւ մըտքով կարծեցիր,
Թէ մի լեռ է սոսկալի։»
—«Մի՞թէ փիղը այնտեղ էր։»
—«Այնտեղ էր. ի՜նչ, չը տեսա՞ր։»
—«Ափսոս, ինչ ասեմ, եղբայր,
Փիղը աչքովս չի ընկել։»

41. ՈՉԽԱՐ

Ոչխարը մի հեզ, հանդարտ և անվրդով կենդանի է։ Բնութիւնը նորան պաշտպանուելու զէնք չի տուել. այս պատճառով նա մի թեթև որս է իւր բոլոր թշնամիների համար։ Ընտանի ոչխարներն իրանց վայրենի ցեղակիցների ճարպիկութեան և անվեհերութեան հետքն անգամ չեն պահել։ Ոչխարը մարդուս հետ միասին տարածուել է աշխարհիս ա-

մենայն մասերը, բայց սառը կամ տաք երկիրներ տանելը նորան ոչինչ օգուտ չի տուել։ Այսպիսով թէև բաւականաչափ փոխակերպուել է ոչխարի արտաքին տեսքը, բայց ամենայն տեղ նա մնացել է նոյն անբաղդ ոչխարը։

Ոչխարի արտաքինը գեղեցկութիւնից զուրկ չէ. մարմնի և անդամների մեծութիւնը համապատասխան են, գլուխը տգեղ չէ, իսկ բարակ ոտները կոկ են և սիրուն։ Բայց ոչխարի կերպարանքը չ՚ունի արտայայտութիւն. աչքերը անիմաստ և անորոշ են նայում. ամենայն վտանգ նորան շփոթութեան, անգիտակցութեան և կաշկանդման մէջ է գցում, և ոչխարը կամ անմտաբար իւր տեղը կանգնած է մնում, կամ առանց մտածելու առաջ է վազում։ Նա փախչում է միամտաբար, գլուխը վեր բարձրացրած, առանց չորս կողմը դիտելու, առանց յետ նայելու. սա վատ նշան է թէ կենդանիների և թէ մարդկանց համար։ Հրդեհը, հրաձգութիւնը, որոտումն ու կայծակը գլխովին շփոթում են նորանց։

Ոչխարը սեպհական կամք չ՚ունի, այս պատճառով նա կատարելապէս ենթարկվում է առաջնորդողին։ Ոչխարներին առաջնորդում է խոյը, հօտը պահպանող շունը, երկարամազ այծը, և վերջապէս հովուի սրինգը։ Եթէ ոչխարների առաջնորդը փարախից դուրս գայ և ցատքէ մի տեղով, միւս բոլոր ոչխարները, անգիտակցաբար նորան հետևելով՝ կը ցատքեն. եթէ նա նեղ շաւղից ջուրը գլորուի, շատերը նորան հետևելով, կը գլորուին նոյն ջրի մէջ։ Նորանք այդ ժամանակ ոչինչ չեն կամենում, բայց հետևում են իրանց առաջնորդողին այն պատճառով, որովհետև անկախ կամք չունին։

Ոչխարների մայրինը համարեա միաձև է և անմիտ։ Ձին խրխնջում է համարձակ, ուժեղ և խելացի, նոյն եռանդով բառաչում է և եզը. իսկ ոչխարը մայում է անվստահ, երկչոտ, համարեա երեխայաբար։ Բայց չ՚նայելով այս բանին, մայրը ճանաչում է իւր գառան ձայնը, իսկ գառը

որոշում է իւր մօր մայրինը հարիւրաւոր ձայների մէջ և երկուսն էլ անխափան գտնում են միմեանց։ Իւր թշնամու ձեռքն ընկնելով՝ ոչխարը անմռունչ տանում է ամենատեսակ տանջանքներ. Նա հազիւ թէ ընդդիմանում է, երբ սպանդագործը դաշնակը նորա կոկորդն է կոխում։—Ոչխարին բարկացնելն էլ դժուար է. արու ոչխարը միայն մի աննշան բարկութիւն է անտայայտում։ Մինչև անգամ մայրական սէրը նորա սառնարտութիւնը չի վրդովում։ Բոլոր կենդանիների մէջ միայն ոչխարն է, որ թողնում է յափշտակել—տանել իւր մայող գառը, առանց արտայայտելու ոչ գրկանք ու ցաւ, ոչ տխրութիւն ու խռովութիւն։

Երբէք չի յաջողուել ոչխարին մի բան սովորեցնել։ Նա հազիւ է ճանաչում իւր հովիւն ու փարախը և մոլորեալ ոչխարը շատ հազիւ է գտնում տան ճանապարհը։ Բայց լոյսը և նուագածութիւնը ոչխարի վերայ հաճելի տպաւորութիւն են անում։ Մութը գոմի մէջ ոչխարները գիշեր ցերեկ քնում են կամ կանգնում են անշարժ ու գլխակոր. իսկ երբ բաց են անում դուռը և ներս է թափանցում լոյսը, իսկոյն ոչխարները արթնանում են և զուարթանում։ Նուագածութեան ներգործութեան մասին հովիւները պատմում են, որ սրնգի ներդաշնակութեան տակ ոչխարները միշտ առաւել հանդարտ և խաղաղ են արածում, նաև մեծ ուշադրութեամբ նայում են հովիւների առաւօտեան և երեկոյեան երգ ու պարին։ Եղանակի ամենաչնչին փոփոխութիւնն անգամ ներգործում է ոչխարների վերայ. եթէ նոքա անհանգստութեամբ այս ու այն կողմն են ընկնում, ապա պէտք է գուշակել, որ փոթորիկ կըլինի. իսկ եթէ երեկոները հաճութեամբ բարձրանում են բլուրների և սարերի գլուխները և նոցա վերայ վազվըզում ու թռչկոտում են, ապա պէտք է սպասել, որ երկարատև ու բարեհամբոյր եղանակ կըլինի։

Թէ ոչխարը մի ժամանակ առաւել համարձակ և ուշիմ

է եղել, ապացուցանում են նոցա վայրենի և կիսավայրենի տեսակները, որոնք ապրում են Ասիայի լեռնոտ մասերում։ Ընտանեցնելը և անազատութիւնը զրկել են նորանց խելքից և համարձակութիւնից այն աստիճան, որ նոքա այլ ևս ինքնակամ և անկախ չեն կարող ապրել, և անզօր մանուկի նման, կարօտում են մարդու հոգատարութեանը։—Բայց չը նայելով այս անմեղ կենդանու բոլոր մտաւոր անընդունակութիւններին, նա է, համարեա, ամենաօգտակարը բոլոր ընտանի կենդանիներից։ Ոչխարը գլխովին մարդուս օգտին է ծառայում։ Նորա երկար և փափուկ բրդից պատրաստում են թէ նուրբ և թէ հաստ մահուդներ, որ մարդու ամենագլխաւոր և ամենալաւ հագուստն է։ Նորա մորթուց տաք մուշտակներ են կարում։ Նորա ճարպից պատրաստած մոմերը մենք վառում ենք, շատ անգամ դմակը իւղի տեղ ենք գործածում։ Ոչխարի կաշուից կօշիկների համար պատուական ապրանք է պատրաստվում. միսը համեղ կերակուր է, կաթնից շինում են իւղ և լաւ պանիր։

42. ԱՐԱՄԱԶԴԸ ԵՒ ՈՉԽԱՐԸ

Ոչխարը գնաց Արամազդի մօտ և դառնապէս գանգատուեցաւ իւր անպաշտպան վիճակի վերայ։

—Ես ինքս տեսնում եմ այժմ, իմ խղճուկ արարած, ասաց Արամազդը, որ քեզ չափազանց անպաշտպան եմ ստեղծել։ Այժմ ինքդ ասիր, թէ ինչով կարող եմ ուղղել իմ սխալը։ Եթէ կը ցանկանաս, ես կըտամ քեզ սուր ատամներ և ամուր ճանկեր։

«Ա՜խ, ո՛չ, ասաց ոչխարը. ես չեմ կամենում նմանուիլ արիւնարբու գազաններին։»

—Կամ գուցէ դու կը կամենաս, որ ես թոյն խառնեմ քո լորձունքի հետ։

«Ո՛չ, ո՛չ, թունաւոր օձերին ամէնքն ատում են։»

Ուրեմն ի՛նչ տամ քեզ։ Կամենաս ես կըտնկեմ ճակատիդ ամուր և սուր եղջիւրներ և կուժեղացնեմ պարանոցդ։

«Դա ևս լաւ չի լինիլ, բարի Հայր. ամուր եղջիւրներ ունենալով՝ ես կարող եմ այնպէս ոգորող լինիլ (հարու տուող) որպէս ցուլը։

—Բայց դու պէտք է միջոց ունենաս վնասել ուրիշներին, երբ կամենում ես, որ ուրիշները քեզ չ՛վնասեն։

«Եթէ այդպէս է, հառաչելով ասաց մաքին. ուրեմն թո՛ղ ինձ նոյն կացութեան մէջ, ինչպէս ստեղծուել եմ։ Ես վախենում եմ, որ մի գուցէ հնարաւորութիւն ունենալուց յետոյ, ես էլ ուրիշների պէս անիրաւութիւններ անեմ։ Չէ, առաւել լաւ է ինքս վիրաւորանք կրեմ ուրիշներից, քան թէ այլոց վիրաւորանք պատճառեմ։»

Այն օրից ոչխարը համբերութեամբ տանում է ամենատեսակ վիրաւորանք և չի տրտնջում իւր անպաշտպանութեան վերայ։

43. ՀՈՎԻՒ ԵՒ ՄՈԾԱԿ

Մի հովիւ կար՝ յոյսը դրած շըներուն
Շուքի մէջը հանգիստ անուշ քուն եղաւ.
Մի օձ պառկած էր թըփի տակ գալարուն,
Տեսաւ հեռուանց, ծածուկ սողաց, մօտ եկաւ.
Թոյնը բերանն էր լըցրել,
Քիչ մընաց որ խայթէր, խայծէր, մեռցընէր։
Մոծակը այն որ տեսաւ,
Խըղճաց վերան, թըռաւ հասաւ,
Բոլոր ուժովը կըծեց,
Հովուին քնից զարթեցրեց։
Հովիւն ելաւ, օձն սպանեց.

Բայց դորանից առաջ՝ կէս քուն
Կէս արթուն,
Խեղճ մոծակին էլ զարկեց, տրորեց։

44. ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Ուժովի մօտ միշտ տըկարն է մեղաւոր.
Այս բանիս պատմութեան մէջ օրինակներ կան բիւրաւոր.
Բայց պատմութիւն չէ մեր այստեղ գըրածը,
Ուստի տեսնենք առակաց մէջ ասուածը։

Գառնուկի մէկը ամառուան տաք օրին,
Մի առուակի մօտ կերթայ որ ջուր խըմէ.
Բայց ի՜նչ կ՚ասես խեղճին եկած փորձանքին.
Նոյն տեղերից դիմացը մի գայլ կ՚ելնէ.
Ի՛նչ լաւ որս գըտայ, ասում էր մտքում.
Բռնեմ գառնուկը, տեղ տամ իմ փորում։
Եւ օրինաւոր ձև տալ ուզելով անօրէն գործին,
Կանչում է բարձրից. «Այդ ի՛նչ լըբութիւն, ի՛նչ յանդգնութիւն,
Որ գաս իմ ջուրս քո պիղծ դընչովըդ այդպէս պըղտորես.
Նայի՛ր, ինչ արիր. բոլոր ցեխ աւազ. ի՞նչպէս խըմեմ ես.
Հիմա չար գըլուխըդ կը ճախճախեմ
Եւ ոսկորներըդ իրար կանցընեմ։»
—Ամա՜ն, աղա՛, ծառադ եմ,
Թէ հրաման տաք միայն այսքանը կ՚ասեմ,
Որ՝ ձեր գերազանցութեան կանգնած տեղից հարիւր քայլ
Ցած եմ կանգնած ոտորմելիս. զուր տեղը մի՛ք նեղանալ.
Ո՞նց կարող եմ ես պղտորել ձեր ջուրը։
—«Մի՛թէ ուրեմն սուտ եմ ասում. տեսար կերած ապուրը.
Հապա մի՞տքըդ չէ գուցէ՝ հերու չէ մէկել տարի,

Դու կրկին այս տեղերում ինչ վընաս արիր ինձի.
Եթէ դու մոռացել ես,
Ես չեմ մոռացած, գիտե՛ս։»
—Գըլխիդ ղուրբա՜ն, ծառադ եմ,
Հազիւ մէկ տարուայ լինիմ.—
Ասաւ գառնուկն արմանալով։—Նա դարձաւ՝
«Թէ դու չէիր, եղբայրդ էր։»—Եղբայր չունիմ ես—ասաւ։
—«Օ՜, անիրաւ. մի՞թէ եղբայրըդ չէր.
Թէ այդպէս է՝ խընամիդ կամ սանհերդ էր։
Վերջապէս ինչ երկարացնես.
Ո՛վ էլ լինի՝ ձեզնից մէկն էր, չեմ գիտում ես.
Դուք ամէնքըդ էլ, ա՛յ անպիտաններ,
Ոչխարներ, շներ ու չար հովիւներ,
Անիծից արմատք, ինձ թշնամի էք,
Ցեղներիցըդ գալ՝ արիւնս կը խմէք։
Ես էլ ոխս քեզանից պիտի հանեմ, որ սիրտս հովացընեմ։»
—Վա՛յ ինձ յանցանքս ի՞նչ է, աղա, ի՞նչ անեմ։
—«Ձայնըդ կտրի՛ր, փուճ կենդանի։
Հիմա նստեմ յանցանքներըդ համրե՞մ պիտի.
Քո յանցանքիդ մէկը որն է, գիտենալ կ՚ուզե՞ս.
Այս է ահա որ քէֆըս կ՚ուզէ ուտել լափել քեզ։»
Այս ասաց ու խեղճ գառնուկը քաշեց, տարաւ,
Անտառի մէջ պատըռտորեց ու կերաւ։

45. ՁԻ

Ձին խելացի կենդանի է։ Մարդս նորանից շատ օգուտներ է ստանում։ Դուք նորան ամենայն տեղ տեսած կը լինիք՝ դաշտերում, երբ նա քաշում է արօրը,—ճանապարհներում, երբ նա ամենայն ջանք գործ է դնում, որ դարիվայրի տակից վերև հանէ բեռնած սայլը,—ախոռումը, երբ

Նա ախորժակով ուտում է գարին,—արօտատեղերում, երբ նա ազատ արածում է ջոկի մէջ։ Բարի, չարքաշ, գեղեցիկ կենդանի է նա։ Այժմ մտաբերեցէք, թէ ինչ առանձնութիւններ էք նկատել նորանում։ Նորա գլուխը երկայն է, բայց գեղեցիկ, գնչի ծայրը դուրս ընկած է, ականջները մանր են և դէպի վեր են նայում. երբ ձին մի օտարոտի ձայն է լսում, կամ երբ քայլերից կամ ձայնից ճանաչում է իւր տիրոջը, այդ ականջները խլշում, վեր է ցցում։ Ականջների մէջ տեղը, ճակատի վերայ, նա մի մազէ փունջ ունի. իսկ նորա գեղեցիկ և խոշոր աչքերը որքան իմացականութիւն են արտայայտում։ Ուշադրութեամբ դիտեցէք և նորա ատամները. առաջից նա ունի թիականման կտրողներ, որոնք վեցվեց են իւրաքանչիւր ծնօտի վերայ. սորանցով է նա կծում կտրում խոտը. իսկ յետին կողմումը նա ունի վեց—վեց հաստ ատամներ վերևից և ներքևից. սորանք ձիու սեղանատամներն են, և այնպէս լայն են ու խորդ ու բորդ, որ կ՚ասես աղօրիք լինին—և իսկ որ ձին սորանցով աղում, մանրացնում է խոտը, գարմանը, գարին, որ յետոյ ստամոքսի համար դժուար չ՚լինի նորանց մարսելը։

Ձիու պարանոցը կորանում է, որպէս կարապինը. պարանոցի վերայ ունենում է երկար բաշ։ Նորա կուրծքը լայն է ու դուրս ընկած, իսկ ամբողջ մարմինը կլորաւուն, երկարաձև. մէջքին նստելու տեղը տափակ է։ Եւ ի՛նչպէս վսեմ, գեղեցկատեսիլ ձիանք են լինում, որոնք արշաւում են այնպիսի թեթևութեամբ, որ շատ անգամ չես իմանում, թէ ինչպէս են փոխում իրանց բարակ և երկար ոտները։ Ձիու յետին ոտներն առաւելապէս ուժեղ են. ում որ նա նորանցով աքացի է տալիս, շատ անգամ հէնց տեղն է մնում. գայլերն էլ են վախենում ձիու այդ հարուածից։ Ձին ոտի վերայ սմբակ ունի. սա միևնոյն է, ինչ որ մեր եղունգը, այնպէս որ եթէ կտրես էլ նորա ծայրերից, ամենևին ցաւ չի զգալ։

Նա իւրաքանչիւր ոտի վերայ մի եղունգ ունի. նշանակում է՝ մատն էլ մէկ հատ է։ Ձին ընթանալու ժամանակ իւր մատի եղունգը, այսինքն սմբակն է գետնին կպցնում։ Էլ հարկաւոր չէ յիշել ձիու գեղեցիկ, երկայնամազ պոչը, որով նա սաստիկ զանազանվում է միւս միասմբակներից։

46. ԱՐԱՄԱԶԴԸ ԵՒ ՁԻՆ

«Կենդանիների և մարդկանց Հա՛յր, ասաց ձին՝ մօտենալով Արամազդի գահին. ասում են, որ ես ամենագեղեցիկ կենդանիներից մինն եմ և ես կարծում եմ, որ այդ ճշմարիտ է. բայց ինձ թւում է, որ իմ մարմնիս մէջ շատ բան կարելի է ազնուացնել։»

—Քո կարծիքով ի՞նչ բան կարելի է ազնուացնել, ասա՛, ես պատրաստ եմ ուսանիլ քեզանից, ժպտալով հարցրեց Արամազդը։

«Կարելի է ես աւելի արագընթաց լինէի— ասաց ձին— եթէ ոտներս աւելի երկայն լինէին և բարակ. երկար, կարապային պարանոցն ինձ աւելի գեղեցկութիւն կըտար. լայն կուրծք ունենալով՝ ես առաւել ուժեղ կըլինէի, և որովհետև դու նշանակել ես, որ ես շալակած ման ածեմ քո սիրելի ստեղծուածին, մարդուն, ուստի կարող էիր և պատրաստի թամբ դնել իմ մէջքին։

Բարի է, ասաց Արամազդը, սպասի՛ր մի րոպէ։ Եւ Աստուածների հայրը հրամայեց երկրին ուղտ արտադրել։ Տեսնելով այս նոր կենդանուն՝ ձին զզուանքից և երկիւղից սկսեց դողդողալ։—Ահաւասիկ բարձր, բարակ ոտները, որ դու ցանկանում էիր, ասաց Արամազդը. ահա՛ և երկար կարապային պարանոցը, լայն կուրծքը և պատրաստի թամբը։ Կամենո՞ւմ ես, որ քեզ ևս այսպէս փոխակերպեմ։—Ձին շարունակում էր դողդողալ։

—Դնա՛ ուրեմն, ասաց աստուածների Հայրը. այս անգամ թո՛ղ սա բաւական դաս Համարուի քեզ: Իսկ դու, ասաց նա, դառնալով ուղտին. ապրի՛ր, և չ՛նայելով քո անՀամբոյր տեսքին, եղի՛ր մինը ամենաօգտակար, բարի և խելացի կենդանիներից:

Այն ժամանակից սկսած ապրում է ուղտը երկրի վերայ, իսկ ձին մինչև այժմ էլ դողդողում է ամէն անգամ, երբ նորան տեսնում է:

37. ԿՈՎ

Ներս մտնենք գոմը, նայենք՝ թէ ինչպէս են կաթը կթում տանտիկինները: Խմենք այդ թարմ և փրփրուն կաթնից Հէնց իսկոյն, կթելուն պէս: Բայց մենակ խմելուց բան չի դուրս գալ. պէտք է մի բան էլ սովորենք: Ա՛յ, մտիկ տանք մեր կովին, թէ ինչպիսի մարմին ունի, ինչով է զանազանվում նա ձիուց: Սա ձիուց քիչ ցածր է, բայց Հաստ. մէջքն էլ, տես, ինչպէս սուր է. բոլոր ոսկրները դուրս են ցցուած, իսկ կողքերը փքուած են: Կովի գլուխը այնպէս գեղեցիկ չէ. դունչը բութ է, պարանոցը բարակ, իսկ կուրծքի վերայ աւելամիս ունի կախուած: Յետին անդամների մէջ տեղը մեծ կուրծ ունի, ուր առատ կաթն է պատրաստվում:

Կովի ոտները Հաստ են և կարճ, քան ձիունը. նորանց վերայ ոչ թէ մէկ մէկ, այլ երկու երկու եղունգներ ճըճ-ղուճներ կան: Պոչը թոկի պէս կախուած է և միայն ծայրին ունի մի մազէ փունջ: Նշանակում է, կովն այնպէս գեղեցիկ չէ, ինչպէս ձին. նա չի սիրում վազել, նորա վերայ նստելն էլ յարմար չէ: Այսու ամենայնիւ եզներին գործ են ածում բեռը կրելու Համար, որովՀետև նորանք ուժեղ են և Համբերատար:

ԱՀա կովը երեսը դէպի մեզ դարձրեց և նայում է քաղ-

ցրաբար. բայց նորա աչքերը չեն արտայայտում այն իմացականութիւնը, ինչ որ ձիունը: Նորա պարանոցն էլ կարճ է և չի կարող այնպէս վեր բարձրացնել իւր լայն դունչը, ինչպէս եռանդոտ ձին: Կովը ճակատի վերայ երկու մանգաղաձև պոզեր ունի, որոնք ոսկրից կակուղ են. նորա ականջներն աւելի մեծ են և դէպի մի կողմը ուղղուած: Կովն էլ, ձիու պէս, բերանում կտրողներ (առաջնատամներ) և սեղանատամներ ունի, բայց նորա կտրողներն ուժ Հատ են և դասաւորուած են ստորին ծնօտի վերայ, իսկ վերին ծնօտի վերայ, ատամների փոխանակ, Հաստ կաշի կայ միայն: Սեղանատամները նման են ձիու սեղանատամներին թէ թուով և թէ տեսակով: Ձիերի ստորին ծնօտը կարող է շարժուիլ միայն դէպի վեր ու դէպի ցած, իսկ կովերինը, բացի դորանից, աջ ու ձախ էլ է շարժվում և այդպիսով օգնում է նորան խոտը լաւ մանրացնելու: Իսկ ինչի՞ են կովին որոճող կենդանի կոչում: Դուք, երևի, նկատած կըլինիք, որ երբ նա Հանգիստ նստած է, մինչև անգամ քնած ժամանակը, շարունակ ծամում է—որոճում է: Ձին, մարդու նման, մէկ ստամոքս ունի, իսկ կովը—չորս: Խոտը, որ փոքր ինչ ծամելով կուլ է տալիս, առաջ մտնում է առաջին երկու ստամոքսի մէջ, իսկ յետոյ կովը գունտ գունտ յետ է ծկռտում նորան դէպի բերանը և սկսում է նորից լաւ ծամել և մանրացնել. լաւ ծամելուց յետոյ կովը կերակուրն ուղարկում է փորի միւս երկու բաժանմունքը: Նշանակում է՝ կովի Համար ուտելն էլ ինքն ըստ ինքեան մի մեծ գործ է, որի պատճառով էլ նա ուրիշ շատ բան չի շինում ձիու նման:

38. ՓԻՂ

I

Բոլոր խոշոր անասունները, որոնք կենդանի ձագեր են բերում և նրանց ձագերին մի նշանակեալ ժամանակ կաթնով են կերակրում, կաթնա-

սուն կենդանիներ են կոչվում: Բայց նոքա այնքան բազմաթիւ են, որ նոցանց վերայ առանձին առանձին խօսելն անհնարին է, ուստի և մարդիկ նոցա մի քանի կարգ են բաժանել, նայելով գլխաւոր յատկութիւնների նմանութեանը: Բոլոր միակճղակ և չորոճող կենդանիները մի կարգ կազմելով՝ կոչվում են [illegible] կենդանիներ, իսկ երկակճղակ և որոճող կենդանիներն անուանվում են [illegible] և որոճող կենդանիներ: Բայց կան և այնպիսի կենդանիներ, որոնք փոխանակ երկուսի, ունին չորս և աւելի կճղակներ, այսպիսիները կոչվում են բազմաճղակներ: Այս դասակարգին պատկանում են ամենախոշոր ցամաքային կենդանիները, որոնք ունին նաև անհամեմատ հաստ կաշի, զոր օրինակ՝ խոզը, փիղը, ռնգեղջիւրը և ուրիշները: Մենք կ'խօսենք փղի վերայ:

Փիղը ցամաքային գազաններից ամենամեծը և ամենաուժեղն է և գիւրաւ է ընտելանում: Նա 4—6 արշին բարձրութիւն և 6—8 արշին երկայնութիւն ունի, մարմնի ծանրութիւնը 160 փթից աւելի է: Փղի կաշին այնքան հաստ և կարծր է, որ հրացանի գնդակով անգամ դժուար է ծակել: Նորա գլուխը մեծ է և փոքր ինչ երկայն. աչքերը մանր և խմաստալի, ականջները լայն և կախ ընկած: Փիղը վերին ծնօտի վերայ միայն երկու առաջնատամներ ունի. սեղանատամների թիւը զանազան է՝—մէկից մինչև երեք իւրաքանչիւր ծնօտի վերայ: Ժանիքը երկու են, որոնցից իւրաքանչիւրը մինչև մէկ սաժէն երկայնութիւն է ունենում: Բայց նոքա իսկապէս ժանիք չեն, այլ արու փղի երկարացած ատամները, որոնք շատ թանկ են և վաճառվում են փղոսկր անունով: Իսկական ժանիքներ փղերը չ'ունին, որպէս և միւս խոտաճարակ կենդանիները, և սորանով զանազանվում են իրանց ցեղակից մսակեր խոզից: Փղի ոտները հաստ են և իւրաքանչիւրի վերայ կայ հինգ կճղակ: Սակայն նորա մարմնի ամենահետաքրքրական մասը կնճիթն է, որը նորա քթի շարունակութիւնն է և չափազանց շարժական: Կնճիթը մի սաժէնից աւելի երկարութիւն ունի և ընդունակ է սեղմուելու, կարճանալու, երբ ինքը կամենայ: Կնճիթը նորա համար մի այնպիսի գործածական և կարևոր անդամ է, ինչպէս մեզ համար մեր

ձեռքը: Նորանով փիղը կարող է վերցնել գետնիցը թէ ամենամեծ և թէ ամենափոքր բաները. փիղը իւր կերակուրը նորանով է տանում բերանը, նորանով կարող է պարանի կապը լուծել, փակած դուռը բանալ և կրկին փակել, շէշերի բերանի խցանները դուրս հանել և այլն: Բացի այդ յատկութիւններից՝ կնճիթը սաստիկ ուժեղ է և նորա մի հարուածովը փիղը հեշտ կարող է մարդ սպանել: Նորանով մինչև հինգ փութ ծանրութիւն բարձրացնում է գետնիցը. իսկ իւր մէջքի վերայ 50—100 փութ ծանրութիւն կարող է տանել. նա վեց ձիու ուժ ունի: Երբ փիղը գնում է սովորական ընթացքով, ձին սրընթաց միայն կարողանում է նորա յետևից հասնել. սակայն փղերը կարող են նա և արշաւել և լաւ են լողում: Փղերը բնակվում են մեծամեծ խումբերով, երբեմն մինչև 400 հատ միասին: Նոքա տաք կլիմայի կենդանիներ են: Փղերը չափազանց երկարակեաց են և ապրում են մինչև 200 տարի: Նոքա կերակրվում են բոյսերով, ուստի շատ անգամ մեծ վնաս են տալիս այն դաշտերին, ուր բրինձ է լինում ցանած: Ընտանի փղերի պահելը մեծ ծախս է պահանջում. միջին թուով նոցա օրական փութ ու կէս բրինձ են տալիս և այդքան էլ խոտ կամ տերև:

II

Ընտանեցրած փղերին մարդիկ գործ են դնում զանազան բաների համար, օրինակ՝ բեռն են բարձում, նորանցով որս են գնում, իսկ Հնդկաստանում նոցա վերայ բարձում, ման են ածում զօրքի թնդանօթները: Հին ժամանակները փղերին պատերազմների ժամանակ էս գործ էին ածում: Փղերին սայլերում չեն լծում, այլ առհասարակ նոցա մէջքի վերայ փոքրիկ տուն են շինում և մէջը նստած ճանապարհորդում են: Նորան վարելու համար գլխին նստում է փղապանը և

սուր մուրճով անգադար գլխին խփում է, որ երթայ։ Փղապանի բոլոր իրաւացի պահանջները փիղը խոնարհաբար կատարում է և առանց բարկութեան կրում է արժանի պատիժը, բայց անիրաւացի և խիստ վարմունքի համար սաստիկ վրէժխնդիր է լինում։ Մի ճանապարհորդ պատմում է, որ մի անգամ փղապանը՝ փղի վերայ նստելով, կոկոսի ընկոյզները իւր հաճոյքի համար կոտրում էր և ուտում։ Կենդանին համբերութեամբ տանում էր սաստիկ ցաւը. բայց միևնոյն օրը, փողոցից անցնելիս, փիղը կանգնեց կոկոսի ընկոյզի կոյտի մօտ, կնճիթով վերառաւ նոցանից մինը և այնպէս զարկեց նորանով իւր քշողի գլխին, որ նա մեռած վայր ընկաւ գետին։

—Փիղը չափազանց նրբամիտ և հնարագէտ է։ Մի անգամ մի փիղ, քաղաքի մէջ շրջելու ժամանակը, մօտենում է մի դերձակի խանութի և, տեսնելով որ պատուհանը բաց է, կնճիթը ներս է մտցնում։ Դերձակներից մէկը՝ զուարճանալ կամենալով, ասեղներով ծակծկում է նորա կնճիթը։ Փիղը բարկանում է, գնում գտնում է մի տեղ աղտոտ ջուր, կնճիթը լաւ լցնում է և, շուտով վերադառնալով՝ պատուհանից աղտոտ ջուրը հեղեղի նման այն դերձակի գլխին է ածում և իւր ճանապարհը շարունակում։ Այսպէս հասկացող է տաք երկիրների այդ հսկան։ Նորա աչքերը իզուր չեն այնպէս իմաստալից նայում։ Բայց առանց կընճթի փիղը մի ամենախեղճ կենդանի է, և եթէ նա զրկվում է կընճթից, ապա նորան մնում է մեռնիլ. ահա թէ ինչ պատճառով այնպէս զգուշութեամբ է պահպանում նա իւր կնճիթը առիւծների և վագրերի հետ պատերազմելու ժամանակ, որոնց նա շատ անգամ յաղթում է. իւր կընճթով փիղը նորանց վեր է նետում, ապա իւր մեծ մեծ ժանիքներով ցածրից հարուածում է, կամ վայր գցելով տրորում է իւր ծանր ոտներով։ Սակայն, չ՚նայելով իւր սաստիկ ուժին, նա շատ խաղաղ բնա-

ւորութիւն ունի և երբէք առաջին անգամ ինքը չի յարձակվում, այլ, ընդհակառակն, միշտ աշխատում է թագչիլ. բայց երբ բարկանում է, սաստիկ զարհուրելի է։

39. ՓԻՂԸ ԵՒ ՔՈԹՈԹԸ

Մէկ փիղ առած ման կ՚ածէին,
Փողոցներից անցընելով,
Յանկարծ քոթոթ մի կռւասէր
Վրայ վազեց խիստ հաչելով։
Ձայնդ կտրէ, դրացի եղբայր,
Ասաց գամփռը մեր քոթոթին.
Չե՞ս տեսնում որ ծաղր եղար
Բոլոր շների դու առաջին։
Դու ո՞վ ես և փիղը ո՞վ.
Ահա քո հևքդ է բռնվում.
Իսկ նա հանդարտ և անխռով,
Հաչելուդ էլ ուշ չի դնում։
Հա՛—հա՛, հա՛—հա՛, դու, չիմացար,
Պատասխանեց մեր քոթոթը,
Ու իմ միտքս չըհասկացար.
Հեռուից կանչեմ, կռւիմ հետը,
Որ մեծ բանի մէջ երևամ
Եւ ուրիշներին էլ ասել տամ.
«Տեսէք քոթոթն ինչպէս քաջ է,
Որ փղի դէմ էլ կըհաչէ։»

40. ԿԱՏՈՒՆ ԱՄԷՆ ՄԱՐԴՈՒ ՏԱՆ ԶԱՐԴՆ Է

Գազաններէ մէջ երկուսը միայն ընտանի են մարդուն. երկուսն էլ իրանց օգուտն ունին։ Նորանցից մինը գոված է իւր հաւատարմութեամբ, և ճշտութեամբ կատարվում է իւր

պարտաւորութիւնները։ Այդ շունն է, որ շատ անգամ իւր գլուխը զոհէ տալիս տիրոջ համար։

Մարդն էլ իւր կողմից ճանաչելով շան կարեւորութիւնը, զանազան ծառայութիւնների մէջ պէտք է ածում նորան. պահապան է կարգում իւր տանը, իւր հօտին, լծում է, որսի է տանում, իւր զաւակների զուարճալիքը, իւր տան զարդը և շատ անգամ իւր ամենամօտիկ ընկերն է շինում նորան։

Միւս տեսակ ընտանի գազանը շան ոչ մի լաւ յատկութիւնը չունի. նա ոչ միայն հաւատարմութեան նշոյլ չունի, այլ և ամենաապերախտ կենդանին կարող է համարուիլ։ Ի՛նչ անես, որ նա էլ բաղդ է ունեցել մարդուս ընտանեկան շրջանի մէջ մտնել և աւելի պատիւ ստանալ, քան թէ շունը։ Շռայլ հարուստից սկսեալ մինչև օրական պարէնը դառն քրտինքով աշխատող չքաւորի սեղանի վերի կողմը բազմած պիտի լինի խորամանգ կատուն։ Թագաւորական փառահեղ բարձերից սկսած մինչև կրօնաւորի անպաճոյճ խուցը ազատ տեղ և վայելուչ պատիւ ունի նա։

Երբոր հաւատարիմ շունը անզգուշութիւն է ունենում և մօտենում է տան տիկնոջ ամաններից մինին, նա արդէն համարվում է պղծուած. պէտք է լուանալ, օրհնած ջրով ողողել, եթէ չեն կամենում դէն գցել ամանը։ — «Ա՛ղջի, մեռոնահող բեր, շունն ամանը լպստեց», հրամայում է զզուելով և շան վերայ բարկանալով պառաւ տատը և իւր ձեռքով խաչալուայ է անում շան կեղտոտած ամանը, սրբում, հալալում։ Բայց եթէ օրը հարիւր անգամ կատուն լիզի կամ լպստի իւղի բղուղը, կամ մածնի կճուճը, կամ կաթսայի տակից գողանայ տանտիկնոջ ընտիր պատառները, գետնի երեսին քաշտալով՝ տանի մի անկիւնում կէսն ուտի, — այդ ոչինչ. կը խլի պառաւը մնացորդը կատուի ձեռքից, կը լուանայ, կը մաքրի և իւր պատուական հիւրի կամ սիրելի զաւակի առաջը կը դնի, ինքն էլ մի կողմից կ՚ուտի, հարամ չի համարիլ։

Երևի շողոքորթութիւնը՝ որքան էլ ինքն ըստ ինքեան ատելի յատկութիւն է, բայց դիմացի շողոքորթուողի սրտին միշտ յաճոյական է, ապա թէ ո՛չ ի՛նչով է վաստակել կատուն տանըցոց սէրն ու համակրութիւնը։

Միակ ծառայութիւնը, որ կատուն անում է մարդուս՝ նորա մկների հետ ունեցած դարաւոր խնամութիւնն է, և հէնց այս միակ յատկութեան համար՝ կատուն ամէն մի տան անմիջական անդամն է դարձել։ Գարշելի մուկն այնքան զզուելի է, որ հաւասարապէս ատելի է մեծին ու փոքրին, հարստին ու աղքատին, աշխարհականին ու հոգևորականին։ Այդ մկնորսութիւնն է պատճառը, որ թշուառական կատուն արձակ, համարձակ ել ու մուտք ունի սուրբ մենարաններում անգամ, և ոչ ոք նորան մի թթու խօսք չի ասում։

— Ցիցի՛ — ցիցի՛, փամփո՛ — փամփո՛, փօսա՛ն — փօսա՛ն, փշի՛ — փշի՛ — փշի՛. ա՛յ, եկաւ, տե՛ս ի՛նչ մաքուր լուացած է. ա՛խ, ի՛նչ սիրուն դունչ, ի՛նչ գեղեցիկ աչքեր, ի՛նչ սպիտակ ու մետաքսի պէս մազ, ի՛նչ բրդոտ պոչ, ի՛նչքան քնքշութիւն, ի՛նչքան փափկութիւն. ցիցի՛, ցիցի՛, ցիցի՛, ձեռք է առնում ու շոյում երջանիկ կատուին իւր տէրը, որ կամ քնքոյշ տիկին է, կամ պառաւ տատիկ, կամ երիտասարդ աբեղայ, վանքի բնակիչ։

Միշտ փաղաքշանք, միշտ լաւ լաւ պատառներ, մանաւանդ եթէ կատուն ընտիր տեսակից է։ Իսկ ընտիր կատուներ համարվում են մեզանում Վանայ կատուները։

41. ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

«Ընկել եմ ճանկդ, դե՛հ, ուտում ես՝ կե՛ր,
Էլ ի՛նչ ես խառնում իմ դառը ցաւեր.
Գիտեմ, որ իմ վերջս այսօր հասել է,
Խեղճ ձագս բնում անտէր մնացել է.»

Ասաց մի խեղճ մուկ անիրաւ կատուին,
Որ ճանկել նորան՝ դրել էր առաջին։
—«Մի՞թէ ուտելն է մենակ իմ ուզած,
Պատասխան տուեց կատուն բարկացած.
Ամէն մի ձայնդ, քաղցրը ծվծրվոցդ
Որ ականջս է ընկնում, ու այդ թուլանալդ
Տեսնելիս՝ սիրտս այնպէս է ցնծում,
Որ կարծում եմ թէ՝ նոր կեանք եմ ստանում»։

42. ԱՌԻՒԾՆ ՈՒ ՎԱԳՐԸ

Ինչպէս ընտանի խոզը ունի ոչ միայն իւր վայրենի ներկայացուցիչը, այլ և իւր ցեղակիցը, հսկայամարմին և ուժեղ փիղը, նոյնպէս և մեր ընտանի քնքուշ կատուն, որին դուք այնքան սիրում ու փայփայում էք, ունի ոչ միայն իւր վայրենի տեսակները, այլ այնպիսի ցեղակիցներ, որոնք իրանց ուժով և անվեհերութեամբ գերազանցում են բոլոր չորքոտանի կենդանիներին։ Եթէ ընտանի կատուն այնքան առատութեան և փայփայանքի մէջ դարձեալ յափշտակութիւններ է անում; դարձեալ գազանաբար յարձակվում է խեղճ մկների վերայ, երբ քաղցած էլ չի լինում. դարձեալ աներկիւղ պատերազմում է իրանից չափազանց մեծ շների հետ, ուրեմն կարող ենք երևակայել, թէ որքան զարհուրելի և կատաղի կ'լինին առիւծն ու վագրը, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ մեծամեծ, հսկայամարմին կատուներ։

Առիւծը, որին իւր վսեմ տեսքի, սաստիկ ուժեղութեան և զարհուրելի ձայնի համար գազանների թագաւոր են կոչում, սովորապէս մութ դեղին գոյն ունի. Նորա մարմնի երկայնութիւնն է մօտ երեք արշին, իսկ բարձրութիւնը— արշինուկէս։ Նորա ձէտը երկար է, ծայրը փնջամազ, պարանոցի վերայ ունի երկար, թաւամազ բաշ. էգ առիւծը բաշ չ'ունի։ Առիւծը բնակվում է Աֆրիկայում և Հարաւային Ասիայում։ Ամենամեծ առիւծները Պարսկաստանումն են գտնվում։ Առիւծը միևնոյն ժամանակ վեհանձն է. նա, ինչպէս ասում են, միայն քաղցած և բարկացած ժամանակն է մարդուս վերայ յարձակվում. իսկ միւս կենդանիների վերայ յարձակվում է ոչ միայն քաղցած, այլ և կուշտ ժամանակը։

Առիւծի ույժը ցոյց տալու համար՝ բաւական է ասել, որ նա իւր թաթի մի հարուածով կարող է ձիու ողնաշարը կոտրել և եզանը գրկած փախցնել, ինչպէս փախցնում է գայլը գառանը։ Նա առաջ է գալիս մեծապանծ և իւր որսի վերայ յարձակուելիս՝ չորս սաժէնաչափ ցատքումներ է անում։ Ահա թէ ինչ է պատճառը, որ երբ անապատի մէջ կէս գիշերին առիւծի մռնչիւնը ամպի նման որոտում է, բոլոր կենդանիները, նա և մարդը, դողում և շտապում են թագչիլ։

Վագրը կենդանիներից ամենազարհուրելին և ամենաչարն է։ Նա ունի դեղնակարմիր գոյն, սև շերտերով։ Վագրը առիւծից քիչ փոքր է, բայց չափազանց ճարպիկ է և արագաշարժ. Նա աւազին ցատքումներ է անում և յարձակվում է ամենատեսակ կենդանիների վերայ, առանց զանազանելու և մարդուս, ոչ միայն իւր քաղցած, այլ և կուշտ ժամանակը։ Ուժի կողմից վագրը քիչ պակաս է առիւծից, իսկ յանդգնութեան կողմից նորանից շատ գերազանց է։

43. ՀԱՒԱՏԱՐԻՄ ՇՈՒՆ

Մի վաճառական ձիով ճանապարհորդելու դուրս եկաւ։ Նորա յետևից վազում էր իւր հաւատարիմ շունը։ Վաճառականը գնում էր մի մեծ գումար ստանալու։ Փողերն ստացաւ, լիք քսակը կապեց թամբի յետևը և վերադարձաւ դէպի տուն։ Ճանապարհին քսակը կտրուեցաւ, վայր ընկաւ, իսկ վաճառականն այս չ'նկատեց։ Սրատես շունը տեսաւ այս բանը և փորձեց վերառնել նորան ատամներով, բայց երբ զգաց, որ իւր ուժից վեր է, թողեց պարկը, վազեց—հասաւ իւր տիրոջը և կամենալով նորան մի կերպով իմացնել՝ սկսեց ձիու առաջը կտրել, յարձակուել նորա վերայ և յամառութեամբ ու կատաղութեամբ հաչելով՝ աշխատում էր նորան կանգնեցնել։

Զիմանալով պատճառը՝ վաճառականը բարկանում էր շան վերայ, նախատում էր նորան, խփում էր մտրակով, բայց ոչինչ չ՚էր օգնում։ Հաւատարիմ կենդանին շարունակում էր ձիու վերայ յարձակուիլ այնպիսի կատաղութեամբ, որ կարծես կամենում էր իւր տիրոջը վայր քաշել։ Տեսնելով, որ ոչինչ չի օգնում և որ վաճառականն աւելի ու աւելի հեռանում է, շունն սկսեց կծոտել ձիու ոտները, որ գոնէ սորանով կանգնեցնէ և յետ դարձնէ իւր տիրոջը։ Վաճառականը վախեցաւ. նա մտածեց, մի գուցէ շունը կատաղել է, և իմանալով՝ թէ որքան վտանգաւոր են կատաղի շները, վճռեց սպանել իւր հաւատարիմ ծառային։ Սակայն դեռ երկար ժամանակ աշխատում էր նա հեռացնել շանը մերթ փայփայանքներով, մերթ սպառնալիքներով և մերթ մտրակի հարուածներով. վերջապէս տեսնելով որ ոչինչ չի օգնում, հանեց ատրճանակը և սրտամորմոք արձակեց հաւատարիմ կենդանու վերայ։ Շունը վայր ընկաւ, բայց մի րոպէից յետոյ դարձեալ վերկացաւ և ցաւալի ճչիւնով ու արիւնաթաթախ սկսեց հետևիլ իւր տիրոջը։ Վաճառականը շատ էր սիրում իւր շանը. ծանր էր իրան համար տեսնել նորա չարչարանքը, այդ իսկ պատճառով շարժեց ասպանդակները և առաջ արշաւեց։ Մի փոքր հեռանալով՝ նա կամեցաւ տեսնել, թէ ինչ եղաւ խեղճ կենդանին և այստեղ ահա՛՝ յետ նայելիս, նկատեց, որ փողի քսակը չ՚կայ։ Այն ժամանակ միայն հասկացաւ վաճառականը իւր շան արարքը, և նա շան վերայ աւելի ցաւեցաւ, քան կորցրած փողի վերայ։ Ճանապարհորդն իսկոյն ձիու բերանը յետ դարձրեց, բայց շունը նոյն տեղը չ՚գտաւ, ուր թողել էր։ Արիւնի հետքը ցոյց էր տալիս, որ կենդանին յետ է դարձել։ Ո՛րքան ցաւեցաւ բարի վաճառականը, երբ արիւնը բռնած գնալով՝ նա գտաւ հաւատարիմ կենդանին վայր ընկած փողի քսակի մօտ։ Գիտակցաբար նայեց շունը իւր տիրոջը և փաղաքշանքով լիզում էր նորա ձեռները.

խեղճ կենդանին յայտնապէս գոհ էր, որ իւր տէրը վերադարձաւ և գտաւ իւր կորուստը։ Մի քանի րոպէից յետոյ շունը սատկեցաւ. իսկ վաճառականը տխուր—տրտում վերադարձաւ տուն։

54. ՀՕՏ

Ոչխարների հօտ, ձիաների ջոկ, եզների անդեայ, խոզերի երամակ, այծերի հորան, գայլերի ու շների վոհմակ, թռչունների պար կամ երամ, ագռաւների ջուխը, կռունկների տարմ, ձկների վտառ, աստղերի հո՜յլ, ծաղիկների բոյլ, խոտերի դէզ, յարդի շեղջ, ջրի շեղջ։

55. ԿՈՅՐ ՀՈՎԻՒՆԵՐ

(Եսայի Մարգարէութիւնից)

«Ուտելու եկէ՛ք, դաշտի գազաններ,
Գիշատէ՛ք հօտը, անտառի գայլեր.
Զի հովիւները յիմար են և կոյր,
Նոցա շները համր են և լուռ։»

«Նոքա թմրութեան քնովն են քնած,
Անհոգ շրներուն՝ հօտը յանձրնած.
Ա՜խ, կո՛յր հովիւներ, տխմար հովիւներ,
Անիրաւ վարձի՝—մոլի ծառաներ։»
Նոքա երգում են
Այս միակ երգը՝—
«Եկէ՛ք բերենք մենք գինի
Եւ ցքիով արբենանք.
Վաղն էլ այսպէս կը լինի.
Ամէնն առատ կ՚ունենանք։»

Ա Շ Ո Ւ Ն

Գալիս է աշուն։ Թափվում է տերև.
Սոխակն իւր վարդին տայ վերջին բարև,
Եւ տարափոխիկ արագիլ, կռունկ՝
Գաղթում են դէպ տաք երկիրներ խորունկ։
Ուժգին, ցրտաբեր փչում է հիւսիս.
Սև սև թուխպերով պատվում է Մասիս։
Մահուան դեղնութեամբ ծածկվում են դաշտեր.
Զուարճասէր սրտից չեն ցրվում վշտեր։
Լիքն է հունդերով մրջիմին ամբար,
Թէև չ՛ցանեց, չ՛կասեց իւր կալ.
Եւ իւր մոմեղէն խցում շար ի շար,
Մեղուն կազմել է ձմեռուայ պաշար։

57. Ա Շ Ո Ւ Ն Ք

Աշունքացաւ։ Արարատեան դաշտի կանանչ այգիները, որոնք մարդու սիրտ ուրախացնում էին իրանց գեղեցիկ տեսքովն ու անուշ հոտերովը, Աստուծուց փռած կանաչ խալիչաներովը, հազար տեսակ ծաղիկներովը, հիմայ այն դրութեանն էին, որ մարդի սիրտ չէր տալիս, որ վերանները նայէ. խաղողի թփերը, որ մի օր գլուխ գլխի կպցրած՝ իրանց սաթի նման ողկոյզներով մարդիս բերանի ջուրը բերում էին ու նորա երեսին ծիծաղում, հիմա մեռած մարդկանց գերեզմանների նման՝ հողի կոյտերով էին ծածկուած։ Ծառերը, որ մի թեթև քամուց իրանց տերևներով տարուբերվում ու մարդու տխրած սիրտն էլ բաց էին անում, հիմա մերկացած, մի տերև էլ չես գտնիլ վերաները. չորչոր չոփերն են երևում միայն բիզ-բիզ։ Ջրերի ափերը, որ բազմերանգ խոտերի ու ծաղիկների շատութիւնով՝ մարդու ախորժակը բաց էին անում, հիմա հէնց իմանաս թէ ութ օրէն մեռած մարդու երես են դարձել։ Ամէն բան էլ փոխուած՝ մի տխուր տեսարան էին ներկայացնում։

Բայց գործի տէր մարդիկ նոր են սկսում ուրախանալ. այգու բաներից պրծել են ու դադարել. ունեցող—չունեցողն էլ հիմայ տանից մաքուր հագնուած է դուրս գալիս։ Մարդ չ՛կայ, որ իրան կարողութեան չափ գինի չ՛ունենայ։ Ով որ հոգս ունի, ծախում է գինին ու իրան տունը նորում, ձմեռուայ պատրաստութիւն տեսնում։ Մի գիւղացի իւր ցորենի աւելորդը, միւսը իւր գինի ու արաղի մի մասը, երրորդը իւր ծեռատունկ ծառաստանի կտրտուածքը՝ ամէն մարդ իւր առատութիւնից մի բաժին վաճառում, իրանց միւս պակասութիւնները ծածկում են։ Ում հասած աղջիկ կամ տղայ ունի, մտածում է հարսանիք անելու։ Գիւղացու ուրախութիւնները մեծ մասամբ աշնան սկզբներումն են լինում։

58. Ա Յ Գ Ե Կ Ո Ւ Թ

Ցերեկը գիշերին յաղթելով ցրեց նորա թանձր մութը՝ մարդկանց քունը փախաւ գնաց աշխարհի տակը։ Սուրբ Խաչի մեռելոցք երկուշաբթի օրը արևը դեռ նոր էր իւր գլուխը հանել, որ հինգ—վեց հարիւր հոգի Կարբցիք ու Հանավանքցիք, կթոցները շալակներին, մի երկու ցամաք հաց միջին, մօտեցան Աշտարակի այգիներին։ Աշտարակցիք այսօր մի մի մարդ են ուղարկում բանւորներ բռնելու։ Դեռ արևը նոր էր բարձրացել, որ այնքան բանւորներից մէկը չ՛մնաց. բոլորը ցրուեցան այգիները։ Քաղն սկսուեցաւ։ Խաղողի տեսակները՝ իծապտուկը, քիշմիշին, ասկեարին, մսխալին, կոթռունջը, եզնաչքը, ճիլալը, եզանդարին, մէկ խօսքով ինչքան պատուական խաղողներ կային, բոլորը թլթլում էին, բոլորը քաղող

էին կանչում։ Կեանքը եռում էր այգիներում։ Քաղող քաղողի, ուտող ուտողի, տանող տանողի էր։ Աղքատների, չունեւորների աչքն էլ լիքն է այդ օրերը։ Սորանից յետոյ, մինչեւ այգեկութի վերջը, ինչոր այգետէրերի դրութիւնն է, Աստուած ոչ շհանց տայ. մարդ որքան էլ հարուստ լինի, հագին այնպիսի ցնցոտի կը լինի, որ ծլանքները ուռենու տերեւի պէս երկար երկար քաշ ընկած կը լինին. բոլորը պատառոտուել են խաղողի թփերի մասներիցը կամ տաշտակներիցը։ Կանայքը, որոնք տանն են քնում, առաւօտենց շտապով իրանց բանը կը պրծնեն ու դէպի այգին. մէկ խօսքով՝ մի մաքուր շոր չես գտնիլ, որ չիրոտ եղած, կուպր դարձած չ՚լինի։ Հէնց որ քաղից պրծան՝ բոլոր խաղողը ջոկջըկեցին, պահունին տուն տարան, կախան անելու, իսկ մնացածը հնձանը հաւաքեցին։ Քաղը վերջանալուց յետոյ՝ խաղողատէրերը եւ նոցա վարձաւորները՝ տները հանեցին, խտակ լուացան, Աստուծու անունը տուին, մտան առագաստի մէջը ու խաղողը տրորեցին. տրորելուց յետոյ դիրք դրին, ժողովեցին եւ վրան տախտակներ շարեցին, որ քամուին։ Մարդու սիրտ փառաւորվում է, երբ որ քաղցուն, աշտարակցու սրտի ուրախութիւնը, նորա տարեկան ապրուստը, առու է լինում առագաստի միջով ու թափվում տաքարը։ Աշտարակցու սրտին զանգակի ձայնից քաղցր է թւում այն զրնգ-զրնգալը, որ տաքարից լսվում է՝ քաղցուն իր մէջը լցուելիս. բայց մանաւանդ որքան մեծ է լինում նորա ուրախութիւնը, երբոր, մին էլ ես տեսնում, տաքարը շրթունքներից հետ լցվում եւ քաղցուն եկած տեղիցը յետ է դառնում, առագաստումը լճանում, իմաց տալով իւր տիրոջը, թէ ինձ կըէր, պրծէր, կարասներդ լցրու։ Քանի ու քանի փառք, գոհութիւն է վեր ուղղում մարդ այս ժամանակը։

---

59. ՔԱՄԻՆ ԵՒ ԱՐԵՒԸ

Մի անգամ արեգակն ու հիւսիսային թունդ քամին վէճ բաց արին, թէ նոցանից որն է ուժեղ։ Երկար վիճեցին նոքա. վերջապէս վճռեցին, որ իրանց ոյժը փորձեն նոյն ժամին մօտներովն անցնող ճանապարհորդի վերայ։ «Նայիր՝ թէ ինչպէս կ՚ընկնիմ նորա վերայ, ասաց քամին. մի աչքաճըպում կըխլեմ նորա վերարկուն։» Այս որ ասաց՝ սկսեց փչել ինչքան ոյժը կտրում էր. բայց որքան շատ էր աշխատում քամին, այնքան աւելի պինդ փաթըթվում էր ճանապարհորդը վերարկուի մէջ. նա 'ի հարկէ դժգոհում էր վատ եղանակից, բայց եւ աւելի շտապում էր առաջ գնալ։ Քամին բարկացաւ, կատաղեցաւ եւ թափեց խեղճ ճանապարհորդի վերայ անձրեւ ու ձիւն։ Նզովելով քամուն՝ ճանապարհորդը հագաւ վերարկուի թեւերը, վերեւից էլ գօտին կապեց։ Հիմա հասկացաւ քամին, որ էլ չի կարող նորա վերարկուն խլել։ Արեգակը տեսնելով իւր հակառակորդի անզօրութիւնը՝ ժպտաց, դուրս նայեց ամպերի յետքից, ջերմացրեց, ցամաքեցրեց երկիրը, դորա հետ միասին եւ խղճուկ սառած ճանապարհորդին։ Արեգակի ճառագայթներովը տաքացած՝ նա քաջալերուեցաւ, օրհնեց արեգակը, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամքին։ «Տեսնո՞ւմ ես, ասաց այն ժամանակ հեզիկ արեւը բարկացկոտ քամուն, քաղցրութեամբ ու բարութեամբ շատ բան կարելի է անել, քան թէ բարկութեամբ։»

60. ԲԱԺԻՆՔ

Քանի մի վարպետ վաճառականներ,
Սիրով միմեանց հետ գործ էին բռնել.
Լաւ աշխատեցան, քըրտինք թափեցին,
Լաւ էլ շահուեցան, մեծ փող դիզեցին։

Ժամը հասաւ. պէտք էր հաշիւ տեսնէին,
Եղած վաստակն իրանց մէջը բաժնէին.
Բայց ո՞ւր գտնեմ ես ընկերներ այնպիսի,
Որ բաժնուին առանց կռուի, վիճմունքի.
Այն պարոններն էլ մեծ վէճ յարուցին,
Որ ծայր-վերջ չունէր, կանչն էր ահագին։
Եւ ահա դրսից
Ձայներ կը լսեն.
«Կըրակ կայ, կըրակ.
Մարդիկ, դուրս եկէք,
Շուտ արէք, փախէք,
Թէ չէ՝ կորած էք։
Ընկերներից մէկը կանչեց.
Դուրս գանք տեսնենք ինչ պատահեց.
Միւսն այն կողմից աղաղակեց.
«Հազա՛ր ոսկիս-առաջ պարտքըս տուեցէք։
—Երկու հազար է առնելիքս, միւսն ասեց.
Մինչև փողըս ես լիուլի չ՚ստանամ,
Այս տեղից ո՞ւր պիտ՝ գընամ։
Միւս կողմ երրորդն էր գոռգոռում.
«Հաշիւն այդպէս չէ, ինչ կ՚ասես, եղբայր։»
Չորրորդը՝ գարձեալ իւր պահանջն անում,
Թէ իրան բաժին պիտ՝ տան հաւասար։
Խեղճ մարդիկը մոռացել էին,
Որ բոցերի մէջ բռնուել էին,
Այնպէս իրանց կռուին էին զբաղուած,
Որ մուխն եկաւ, խեղդեց ամէնքը յանկարծ.
Խակոյն կըրակն էլ, հասաւ, պաշարեց,
Ապրանքն ու տէրերն այրեց, տոչորեց։

—

Այս առակը դու չ՚կարդաս առանց խըրատ առնելու.

Շատ մեծամեծ գործերի մէջ վնասն ինչից է գոյանում.
Երբ փոխանակ հասարակաց փորձանքին դէմ դընելու,
Ամէն մարդ իւր օգտի համար հին ու նոր վէճն է բանում։

61. ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂԸ

Երեք մարդ միասին ճանապարհորդելիս գանձ գտան ու բաժանեցին իրանց մէջ։ Նոքա պէտք է շարունակէին ճանապարհը, բայց որովհետև ուտելու պաշարը վերջացել էր՝ վըճռեցին, որ իրանցից մինը գնայ քաղաք՝ կերակուր բերելու և յանձնեցին այս բանը աւելի փոքրահասակ ընկերին։ Սա գնաց և ճանապարհին այսպէս էր մտածում ինքն իրան.— Ես այժմ հարուստ եմ, բայց աւելի հարուստ կըլինիմ, եթէ կարողանամ ընկերներիս բաժինն էլ ինձ առնել, և այս շատ դժուար չէ,—կըթունաւորեմ այն ուտելիքը, որ պիտի գնեմ. իսկ իմ մասին կ՚ասեմ, թէ ճաշել եմ արդէն. ընկերներս առանց կասկածելու կ՚ուտեն ու կըմեռնին. այն ժամանակ ես կ՚ունենամ ամբողջ գանձը։ Բայց միւս ընկերներն այսպէս էին խօսում. Ինչո՞ւ պէտք է մենք անպատճառ բաժին տանք այս պատանի մարդուն. մի՞թէ չենք կարող գործ դնել մեր սուր դանակները նորա գլխի վերայ, որ մեր հարստութիւնը աւելի կատարեալ լինի։ Ուրեմն նա գայ թէ չէ՝ սպանենք իսկոյն։

Պատանին բերաւ թունաւորած կերակուրը. ընկերներն սպանեցին նորան շտապով, իսկ իրանք մեռան թոյնի ներգործութիւնից. գանձը մնաց անտէր։

62. ԹՌՉՈՒՆՆԵՐ

Կենդանածինները մի անգամ են ծնվում. իսկ թռչունների համար կարելի է ասել, որ նոքա ծնվում են երկու անգամ՝ առաջ

ծնվում են երբև ձու, իսկ յետոյ ձուից։ Օրինակ՝ հաւը ձու է ածում, եթէ ձուերը թողնենք և չ՚վերառնենք, նա նոցա վերայ թուխս կ՚նստի ամբողջ երեք շաբաթ և ձագեր կ՚հանի։ Հաւի բնական ջերմութիւնից ձուի դեղնոցում զարգանում է սաղմը, կերակրվում է դեղնոցով և սպիտակուցով, միայն այս կերակուրը ոչ թէ բերանովն է մտնում մարմնի մէջ, այլ այն շիւղովը, որը դեղնոցից ձգվում է դէպի նորա փորը. յետոյ մեծանալով՝ նա ներսից կոտրում է ձուի կեղևը և դուրս է գալիս երբև դեղնագոյն, փափկափետուր վառեկ և դուրս գալուն պէս սկսում է վազվզել և իւր համար կերակուր որոնել։ Ձուի կեղևը կազմվում է այն կրային մասերից, որ կուլ է տալիս թռչունը մանրիկ քարերի, սերմնահատերի և այլ կերակուրների հետ։ Այդ կեղևը առժամանակ պահպանում է քնքուշ սաղմը, իւր մէջը եղած ծակոտիներով օդ մատակարարելով նորան, որով և նա շունչ է առնում։ Փորձի համար մոմով պատիր ձուն այնպէս, որ ծակոտիները լցուին, ծածկուին, և սաղմը կ՚սատկի, կ՚ոչնչանայ։ Հաւը, չորքոտանիների նման, թոքերով է շունչ առնում. նա ևս նոցա պէս ստամոքս ունի, ուր մտնում է կերակուրը, միայն թէ ատամ չունի։ Նորա փոքրիկ գլուխը ունի եղջրային կտուց։ Կտուցի վերին մասը խողովակի նմանութիւն ունի։ Կտուցով նա հողը քրքրում է, քջուջ է անում, կտցահարում է սերմեր, որթեր, ծառերի պտուղներ....բայց չի ծամում, ուրեմն նա ինչպէս է մարսում ամենայն ամուր կերակուր։ Նորա ստամոքսը սաստիկ ուժեղ է, այնպէս որ նա անվնաս կուլ է տալիս մինչև անգամ մանր քարեր։ Բացի դորանից, կերակուրը ստամոքսը մտնելուց առաջ փափկում է քարճիկի (կտնաբքի) մէջ։ Հաւի ռունգները կտուցի կողքերումն են, աչքերը ոչ թէ ճակատի վերայ՝ այլ գլխի այս և այն կողմումը, այնպէս որ նա երկու աչքով միանգամից միևնոյն առարկան չի կարող տեսնել. Նոքա փոքր են և իւրաքանչիւրի անկիւնում մի տեսակ կոպ կայ—թռթափողական թաղանթ, որ ցանկացած ժամանակն առաջ է գալիս և ծածկում է աչքը։ Ականջը ծածկուած է գլխի մէջ (ականջի արտաքին մասը չունի)։ Գլխի վերայ նա ունի կարմիր կատար (աքաղաղինն առաւել մեծ), իսկ ներքևից, կտուցի տակը, երկու կարմիր մսաթերթիկ։ Հաւի պարանոցը երկար է և փետրապատ. մարմինը կոնաձև, որպէս իւր ձուն—կուրծքի կողմը հաստ, իսկ պոչի կողմը բարակ։

63 ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԱՅԼԵՒԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ընտանի թռչուններին պատկանում են՝ հաւերը, սագերը, բադերը, աղաւնիները, հնդուհաւերը։ Բայց կան և վայրենի հաւեր, սագեր, բադեր, աղաւնիներ։ Օրինակ՝ միևնոյն հաւի տեսակներն են դղխոյահաւը, փայտմորեկը, կաքաւը, լորամարգը, և նոքա ազատ ապրում են անտառներում ու սարերում։ Մարդս շատ վաղուց ընտելացրել, բազմացրել է ընտանի թռչունները միևնոյն վայրենի թռչուններից։ Սովորապէս տանը ապրելով և իրանց համար պատրաստի կերակուր ունենալով, նոքա, կարծես, մոռացել են թռչելը։ Թռչուններն առհասարակ թռչում են իրանց համար կերակուր որոնելու. այս նպատակով վայրենի թռչունները երբեմն ճանապարհորդում են հազարաւոր մղոններ։ Այդպիսի թռչունների կրծոսկրը ամուր է և ունի ուժեղ մկնակներ, որոնցով նոքա շարժում են իրանց թևերը. նորանց թևերն անգամ ամուր են ու երկար, մարմնի ոսկրներից շատերը դատարկ են, այն է, ոսկրուղեղ չունին։ Այս բոլորն օգնում է թռչունին հեշտութեամբ թռչել։ Առհասարակ թռչունները մեզանից արագ են շունչ առնում և առաւելապէս շատ օդ են ներշնչում. այս է պատճառը, որ նոցանից ամենափոքրներն անգամ այնպիսի ուժեղ ձայն ունին—այս է պատճառը նոյնպէս, որ նոքա կարողանում են թռչել ընդդէմ հողմի և շնչասպառ չեն լինում. ընդհակառակն, ուր օդը նոսր է, այնտեղ նոքա նիհարանում ու հիւանդանում են։—Կաթնասուն կենդանիներին միմեանցից զանազանում ենք ատամներին և թաթերին նայելով. իսկ թռչունները զանազանվում են կտուցի և ոտների կազմութեամբ։ Օրինակ՝ բադին նայելով՝ իսկոյն նկատում ես, որ նա ջրային թռչուն է. Նորա ամբողջ մարմինը տափակ դիրք ունի, իսկ կուրծքը դուրս ընկած է և ոտները պոչին աւելի մօտ են—այդ ամենն այնպէս է յարմարեցրած, որ նա կարողանայ աւելի ազատ լողալ։ Նայեցէք նորա ոտներին և դուք կ՚տեսնէք, որ մատները կապակցուած են միմեանց հետ լողացողական թաղանթով. Ջրի մէջ իւր ոտները դէպի առաջ շարժելիս՝ նա սեղմում է մատները, որ հեշտութեամբ կարէ ջուրը, իսկ յետ վարելիս—բանում տարածում է երբև լայն թիակներ։ Նորա կտուցը, որի եզերքին փշանման եղջրատամներ են շարուած,

շրջապատուած է զգայուն, շօշափողական մաշկով, այս պատճառով որսը չէ ազատվում նորանից, թէ և ջուրը պղտոր է լինում և լաւ չի տեսնում։ Երբ որ նա դուրս է գալիս, ջրի կաթիլները նորա վերայից սկսում են սահել, որովհետև նա իւր փետուրները իւղոտում է։ Իւղը նորա պոչի մօտ եղած մէկ առանձին պարկի մէջ է գտնվում։ Սագը և կարապը նոյնպէս ջրային թռչուններ են։

Կտցարը, կռունկը, արագիլը բնակվում են ճահիճների վերայ։ Իբրև օրինակ ճահճային թռչունների՝ վերառնենք չմունը։ Ձկնկուլը, որ մի արշինից աւելի բարձրութիւն ունի, արտաքուստ այնպէս ծիծաղաշարժ է, որ կարծես սապատաւոր պառաւ լինի. Հանգիստ կանգնած է նա մէկ ոտքի վերայ որ և իցէ ջրի մօտ, գլուխը մի կողմը թագցրած—բայց ահա յանկարծ նա մեկնեց իւր պտղանոցը և իւր երկար, սուր կտուցով արագապէս բռնեց մի գորտ, ողջամբ կուլ տուեց և նորից կանգնեց նոյն հանգստութեամբ, կարծես թէ ոչինչ չի պատահել։ Նորա ոտները շատ երկայն են և ունին մեծամեծ մատներ, սուր սուր, մեծ մեծ եղունգներով, իսկ միջին մատը աւելի լայն է և ատամնաւորուած։ Ձկնկուլի մերկ ոտներն այնպէս են կազմուած, որ նա կարողանայ մանգալ ճահիճներում և դուս քաշել նորա միջից ամենատեսակ ճճիներ, խխունջներ, գորտեր...Երկար ոտներ ունենալուց յետոյ, հարկաւ պէտք էր և երկար պարանոց։ Ճահճային թռչունները թշնամի են և օձերին, որոնց ամբողջով կլլանում են պատահածին պէս։

Փայտփորն (*) ընդհանրապես նախչուն թռչուն է։ Նա ունի կարճ ոտներ դէպի դուրս հակուած պճղակներով, որոնց վերայի չորս մատներից երկուսը դէպի առաջ է ուղղած, իսկ երկուսը դէպի յետ։ Մատների վերայ կան ծուռ ծուռ սուր եղունգներ։ Այսպիսի ոտների օգնութեամբ նա մագլցում է ծառերի բնափայտի վերայ և արագ արագ պտոյտ է տալիս նորա շուրջը։ Մէկէլ ես տեսնում նա կանգնեց, ամուր կպաւ ոտներով, պոչն էլ ցածից դիմհար տուեց և սկսեց եռանդագին ծակել ծառի կեղևը իւր քառանկիւնաձև ամուր կտուցով։ Այսպիսով փայտփորը հալածում, դուրս է անում այն վնասակար որդերը, որոնք բուն են դրել փայտի մէջ։ Միմեանց յետևից յաջորդող հարուածից վախենալով՝ որդերը դուրս են սողում կեղևի տակից և թռչունը, որ արագ արագ պը-

(*) Ծառածակի, ծառակտուցիկ։

տոյտ էր կազմում բնափայտի շուրջը, ուտում է նոցա։ Երբեմն պատահում է, որդերը վախենալով՝ աւելի խորն են մտնում. այն ժամանակ փայտփորը իւր երկար և սուր լեզուն ներս է տանում կեղևի տակ և նոցա դուրս է հանում այնտեղից։ Փայտփորներն անտառներին վնաս չեն. նոքա միայն փտած և չորացած ծառերն են ծակում։ Ընդհանրապէս նորանք օգտակար են և մարդիկ խնայում են ու չեն սպանում այնպիսի թռչուններ, որոնք պահպանում են ծառերը վնասակար միջատներից։ Շատ տեսակ փայտփորներ կան։

Դուք ամէնքդ շատ լաւ էք ճանաչում ճնճղուկները (ծտեր), որոնք ունին կլոր գլուխ և հաստ կտուց. գիտէք որ նորանք հաւերի պէս չեն կարող քայլել գետնի վերայ, այլ ոստոստում են և ծլվլալով ցատքոտում։ Նորանք մարդկային բնակարանների մօտ են իրանց համար բնակութեան տեղ ընտրում. խոտից բուն են շինում և նոցա մէջը փափկացնում են փետուրներով և աղուամազով։ Նորանք դաշտերում ուտում են շատ ցորեն, գարի և այլ հացահատիկներ, այդ պատճառով մարդիկ մտածեցին բոլորովին ջնջել նոցա, բայց տեսան որ՝ ուր չկան ծտեր, այնտեղ շատ անգամ որդերից փչանում է բոլոր հունձը։ Ճնճղուկների տեսակին են պատկանում արտուտները, սարեակները, դեղձանիկները, ճնճղուկները, ոսկեխները և ուրիշ երգող թռչունները։ Սոցա թւում պէտք է համարել և ծիծեռնակը, որ իւր բարակ և թոյլ ոտներով հազիւ է կարողանում մանգալ, բայց դորա փոխանակ՝ թռչելում շատ վարպետ է։ Նայեցէք, թէ նա որպիսի երկար սրածայր թևեր և եղանաձև պոչ ունի։ Ծիծեռնակը, կարծես, երբէք դադար չի առնում, այլ միշտ սլաքի նման թռչում սլանում է դաշտերի վերայ և թռչելիս էլ որսում է թիթեռներ և ամենատեսակ մժեղներ։ Նա գարնանն է մեզ մօտ գալիս տաք երկիրներից և մի որ և է ծածկոցի տակ իւր համար հողից կամ կաւից բուն է հիւսում, այս բնի մէջ ձու է ածում, ձագեր է հանում և նոցա կերակրում ու մեծացնում է. այդ ժամանակ նա կոտորում է անհամար միջատներ, որ իւր ձագերին կերակրէ։ Այս կողմից ծիծեռնակը ամենաօգտակար թռչունն է մեզ համար։

Փոքրիկ թռչուններից շատ բարձր, օդի մէջ, թռչում են մեծամեծ յափշտակողները—շահէնը, բազէն և արծիւը։ Սոքա ամէնքն ունին սուր սուր կտուցներ, ուժեղ թևեր, սրատես աչեր, (որոնցով

նկատում են առարկան ահագին հեռաւորութիւնից) և պինդ մանգաղաձև եղունգներ (ճանկեր, ճիրաններ)։ Բազէները և արծիւները մրրկի նման նետւում են իրանց որսի վերայ, ճանկերով պատառոտում և ուտում են նորան ոսկրների և փետուրների հետ միասին, կերածի ամուր մասերն էլ, որոնք չեն մարսւում ստամոքսում, բերանից դուրս են թքնում։ Բազէն դեռ այնչափ մեծ չէ, իսկ արծիւը, երբ իւր թևերը տարածում է, մի սաժէն լայնութիւն և մի արշինից աւելի երկարութիւն է ունենում։ Նոքա գլխաւորապէս ապրում են հեռու հիւսիսում, Սառուցեալ Ովկիանոսի ժայռերի վերայ, նոյնպէս Կովկասու լեռներում, Հայաստանում և ուրիշ երկիրներում։ Բազէն իւր գեղեցիկ թռիչքով աւելի է գերազանցում. նա սլաքի նման վեր է բարձրանում՝ և այնտեղ իւր թևերը տարածած, օդային ովկիանոսում ազատ լողում է։ Թռչելիս նա արագապէս յափշտակում է վայրենի աղաւնիներ, բադեր, կաքաւներ, բայց երբ նոքա խմբով են լինում, սովորապէս չի յարձակվում վերաները։ Բազէները փոքրուց բռնելով ընտելանում են իրանց տիրոջը և վարժվում են որսորդութեան մէջ։ Արծիւը, բացի թռչուններից, որսում է նոյնպէս գառներ, ուլեր, ճագարներ, նապաստակներ, կատուներ...բայց բարեբաղդաբար մարդկային բնակութեան շատ հազիւ է մօտենում։ Գիւղացիների համար յափշտակող թռչուններից ամենավնասակարը ցինն է (ուրուրը)։ Նա յափշտակում է նոցա հաւերի և բադերի ձագերը, կոտորում է շատ օգտակար թռչուններ, շատ անգամ քանդում է նոցա բոյնը և ուտում է միջի ձուերը։ Գիւղացիք ամենայն կերպով աշխատում են այդ վնասակար թռչուններին ոչնչացնել թէ հրացաններով, թէ թակարդներով։

Գիշերային յափշտակող թռչուններից յայտնի են բոցփետուրը և բուն։ Սոքա ցերեկը ծառերի խոռոչներում կամ աւերակ շինութիւնների ճեղքուածներում նստած են մնում, իսկ գիշերը դուրս գալով որսում են թռչուններ, մկներ և ուրիշ մանր կենդանիներ։ Բոցփետուրը թանձր մազով ծածկուած է, իսկ ականջակոթերի մազերը աւելի երկար են. նորա մեծ մեծ փայլուն աչերը ոչ թէ գլխի այս և այն կողմն են դասաւորուած, այլ առաջին կողմը, որոնք նոյնպէս շրջապատուած են երկար մազերով։ Նորա աչքերի խոշոր բիբերը չեն կարող տանել ցերեկուայ լոյսը. իսկ գիշերային ամենանուաղ լոյսն անգամ բաւական է, որ նա առարկաները որոշ

տեսնէ։ Նա ունի անախորժ և թափանցիկ ձայն։ Տգեղ կազմուածքը և գիշերային շարունակ միաձև գոչիւնը վատ գաղափար է տուել խեղճ թռչունի համար, այնպէս որ նորա անունը պարսաւանքի առարկայ է դարձել։ Տգէտ մարդիկ մանաւանդ վախենում են նորանից և նորա գոչիւնը մի չարագուշակ մարգարէութեան տեղ են ընդունում, մինչդեռ բուն մի անվնաս թռչուն է և միանգամայն անտեղի է նորան արհամարհել և նորանից վախենալ։— Առհասարակ թռչունները մեզ աւելի օգուտ են տալիս, քան թէ վնաս։ Նոցանից մանրերը վնասակար միջատներն են ոչնչացնում, նորանցով թէ իրանց ձագերին և թէ իրանք կերակրուելով։ Ջրային և ճահճային թռչունները գորտերի, մասամբ էլ օձերի բազմանալուն են արգելք լինում։ Յափշտակող թռչուններն ուտելով լէշերը՝ օդն ապականութիւնից ազատում են։

64. ԱՐԾԻՒՆ ՈՒ ՀԱՒԸ

Մի անգամ գիշատիչ արծիւն ընկել էր երկաթեայ վանդակի մէջ. տխուր ու մունջ էր նա և կատաղաբար չորս կողմը նայելով՝ չէր մօտենում առաջն ածած մսի կտորներին։ Վանդակը դրած էր դուրսը և նորա մօտով ման էին գալիս հաւերը։ Դոքա սկզբում բաւականին հեռու էին շրջում արծուից՝ գող ի գող մտիկ տալով ահարկու թռչունին. բայց յետոյ հասկանալով՝ որ նա չի կարող վնաս տալ վանդակի մէջից, փոքր առ փոքր սիրտ առան, սկսեցին պտըտիլ վանդակին շատ մօտ, և վերջապէս սկսեցին խօսիլ արծուի հետ։

«Ինչո՞ւ չես ուտում, ասաց նորան մի բարեսիրտ հաւ. մի՞ թէ չես տեսնում առաջդ թափած քո սիրելի կերակուրը։ Տե՛ս ինչպէս ախորժակով ենք ուտում մենք գարու հատիկները։ Կե՛ր, մեր տէրն էլի կը տայ քեզ։ Որ չուտես՝ կը մեռնիս։ Հոգս մի՛ անիր, անազատ կեանքն այնքան վատ չէ, ինչպէս դու կարծում ես. վանդակդ էլ բաւականին ընդարձակ է։

—«Այո՛, այդպէս է, բայց հաւերի և ոչ արծիւների համար», ձայն տուեց վերջապէս տխուր կալանաւորը, հաւի

բոլոր դատարկախօսութիւնը զզուանքով լսելուց յետոյ։ «Էգուց, աւելացրեց նա, ձեզ շամփրի կ'անցկացնեն կամ կը ձգեն սպասի մէջ, իսկ դուք այնքան տխմար էք, որ չէք հասկանում ձեր թշուառ դրութիւնը և այնչափ կուրացած էք ստրկութեամբ, որ չէք կարողանում սիրել ազատութիւնը, ինչպէս ես եմ սիրում նորան։ Դուք փոխել էք նորան չնչին հատիկների հետ, որ ձրի թափուած են դաշտերում. իսկ ինձ համար անազատ կեանքը «ոչինչ գին չունի»։

65. ՍԱԳԵՐ

Արտաշէսը տեսաւ վայրի սագերի երամը, որոնք շըղթայաձև ընթանում էին բարձր օդի մէջ։ Արտաշէսը հարցրեց իւր հօրը. «Հա՛յրիկ, մեր ընտանի սագերն էլ կարո՞ղ են այդպէս թռչիլ։

—Հայրը. Ո՛չ, չեն կարող։

Ո. Ո՞վ է կերակրում վայրենի սագերին։

Հ. Իրանք են գտնում իրանց համար կերակուր։

Ո. Իսկ ձմեռը։

Հ. Ձմեռն սկսուելուն պէս՝ վայրենի սագերը թռչում են տաք երկիրները, իսկ գարնանը նորից վերադառնում են։

Ո. Բայց ի՞նչու ընտանի սագերը չեն կարողանում թըռչիլ նոյնքան լաւ և ինչո՞ւ նոքա ևս ձմեռը չեն գնում տաք երկիրները։

Հ. Որովհետև ընտանի կենդանիները մասամբ կորցրել են իրանց նախկին ճարպիկութիւնը և ոյժը, և նոցա զգացողութիւնն այնքան նուրբ չէ, որքան վայրենիներինը։

Ո. Եւ ի՞նչու է այդպէս։

Հ. Որովհետև մարդիկ հոգում են նորանց համար և չեն թողում, որ նորանք օգուտ քաղեն իրանց սեփական ուժերից։ Սորանից դու կարող ես հասկանալ, որ մարդիկն էլ

պէտք է աշխատեն անձամբ կատարել բոլորը, ինչ որ կարող են։ Այն մանուկները, որոնք իրանց յոյսը ուրիշների վերայ են դնում և չեն սովորում ինքնին կատարել իրանց բոլոր պարտականութիւնները, երբէք չեն լինիլ ուժեղ, խելացի և ճարպիկ մարդիկ։

Ո. Ո՛չ, հա՛յրիկ, այժմ ես կ'աշխատեմ ամենայն բան ինքս անել, որ մի գուցէ մեր ընտանի սագերի նման զրկուիմ իմ բնական ընդունակութիւններից։

66. ԹՌՉՈՒՆԻ ԵՐԳԸ

Վենդրիայի մի մեծ քաղաքի նեղ ու ամուր բանտի մէջ նստած էր մի խեղճ բանդարկեալ։ Բանդը խոնաւ էր, մութ և ցուրտ։ Անկողնի փոխանակ նորա տակը խոնաւ դարման էր ածած։ Նորա համար օրական մի կտոր հաց և մի աման ջուր էին բերում։ Նա նստած էր այնտեղ շատ տարիներ—դժգոյն, հիւանդ տխրադէմ։ Արեգակը հազիւ էր լուսաւորում բանտի նեղ լուսամուտից. թարմ օդ չէր ներս մտնում նորա մէջ։ Վշտամաշ կերպով նա մտածում էր իւր սիրելի ազգականների, իւր ընտանիքի, իւր փոքրիկ զաւակների վերայ. մտածում էր, որ գուցէ վաղուց ամէնքը մոռացել են իրան, համարելով՝ թէ մեռած է։ «Ա՜խ, արդեօք ի՞նչ է կատարվում մեր աշխարհում, ի՞նչ է անվում իմ ցանկալի հայրենիքում.» —Բանտարկեալը մօտեցաւ լուսամուտին։ Ամարային սքանչելի երեկոյ էր։ Արեգակը մայր էր մտնում անտառի յետևը, լուսաւորելով ծառերի կատարները իւր ոսկեճաճանչ ճառագայթներով. իսկ մարդիկ անց ու դարձ էին անում փողոցներում։ Բանտը բարձր էր, ուստի և մարդիկ ցածրում մանր էին երևում։ Նա ձայն տուեց, բայց նրան ոչ ոք չ'լսեց։ Կապոյտ երկնքի վերայ թռչուններ էին թռչում։ Լուսամուտի առաջից հանդարտ անցնում է արծիւը։ «Արծիւ, ա՛յ

արծիւ, բացականչեց բանտարկեալը. Նստի՛ր իմ լուսամուտիս առաջ, պատմի՛ր խնդրեմ՝ ի՛նչ է լինում աշխարհում, երգի՛ր ինձ համար։—Ո՛չ, պատասխանեց արծիւը. քո լուսամուտը շատ փոքր է, ինձ տեղ չի լինիլ նստելու։ Ես չեմ պատմիլ քեզ, ինչ որ լինում է երկրի վերայ, որովհետև հազիւ եմ իջնում այնտեղ։ Ես հիւսում եմ իմ բոյնս ամենաբարձր ժայռերի և հազարամեայ կաղնիների վերայ, չար մարդկանցից հեռու, որ նոքա չ՚քանդեն նորան։ Ես քեզ համար երգ չեմ երգիլ, որովհետև երբէք չեմ երգում երկրի վերայ։ Ես սլանում եմ բարձր, շատ բարձր և իմ երգս կ՚լսի միայն յաւիտենական արևը։ Եւ իւր լայն թևերն ուժգին շարժելով՝ արծիւը հպարտ բարձրացաւ դէպ երկինք և ծածկուեցաւ նորա աչքից։—Կա՛րապ, ա՛յ կարապ, պատմի՛ր, թէ ի՛նչ է լինում աշխարհում. մի երգ երգի՛ր ինձ համար։ «Ո՛չ, պատասխանեց կարապը. ես չեմ պատմիլ քեզ, ինչ որ գործվում է երկրի վերայ. ես միշտ լողում եմ ջրի, մաքուր, սառը ջրի երեսին, կանաչ եղէգների միջով։ Երբ որ ջուրը առաւօտեան արշալուսին վարդի գոյն է ստանում, ես բարձրաձայն կոչում եմ. ողջո՛յն քեզ, կե՛նսաբեր արշալոյս։ Ես չեմ երգիլ քեզ համար, որովհետև միայն մեռնելիս եմ երգում։» Եւ կարապը լողաց օդի մէջ, փայլելով իւր սպիտակ թևերը։—Ծնծղուկներ, փո՛քրիկ ծնծղուկներ, նստեցէք իմ լուսամուտի առաջ, պատմեցէ՛ք մի բան իմ կարօտեալ հայրենիքից. երգեցէ՛ք, մխիթարեցէ՛ք ինձ։—«Չէ՛, չէ՛, մենք ժամանակ չ՚ունինք. մենք դեռ պէտք է գնանք ժողովելու այն հատիկները, որ ջրաղացպանը յանկարծակի շաղ տուեց…

Բայց այդ րոպէին մօտ թռաւ մի գորշագոյն թռչնակ, պտոյտ պտոյտ արեց լուսամուտի առաջ և նստեց երկաթէ վանդակի վերայ։ Բարո՛վ քեզ, սո՛խակ, շնորհակալ եմ, քնքոյշ թռչնակ, որ այց ելար ինձ։ Պատմի՛ր, աղաչում եմ, ի՛նչ է լինում աշխարհում, իմ կարօտեալ հայրենիքում։

«Ես կ՚պատմեմ քեզ, ի՛նչ որ լինում է երկրի վերայ, ես երգ կ՚յօրինեմ քեզ համար քո ցանկալի աշխարհից, քո կարօտած հայրենիքից»։ Եւ սոխակը յորդեց այնպիսի ձայնով, որ խեղճ բանտարկեալն ուրախութիւնից արտասուեցաւ։ Նա վայր ընկաւ դարմանի վերայ և շարունակ հեկեկում ու լսում էր։

«Երեկ առաւօտը, լուսաբացին—երգում էր սոխակը—օդը չափազանց թարմ էր և զով։ Ես մօտ գնացի քո տնակին, նստեցայ կոկոնաշատ վարդենու վերայ՝ բաց լուսամուտի առաջ, և շարունակ երգեցի ու երգեցի։ Մանկիկդ պարկած էր օրօրոցում։ Նա բաց արաւ իւր մեծ, փայլուն աչերը և հարցրեց. «Ո՞ւր է հայրիկս,» յետոյ սկսեց լսել իմ երգը։ Քո ազգականներդ արտասվում են քեզ մտաբերելով. նոքա սիրում են քեզ, շա՛տ սիրում են և կամենում են քեզ տեսնել։ Մի՛ վհատուի՛ր. Աստուած տեսնում է, թէ ինչպէս անմեղ ես դու. չար մարդիկը կ՚արձակեն քեզ և դու նորից կ՚ազատուիս, լոյս աշխարհ դուրս կ՚գաս, մաքուր օդ կ՚ծծես։ Քո որդիքը քեզ կ՚գգուեն և կ՚համբուրեն։ Ամարային հանդարտ երեկոները, երբ ծառերի երկար ստուերները կ՚ձգուին, երբ արեգակի վերջին ճառագայթների տակ կ՚փայլին լուսամուտի ապակիները, դու՝ պատշգամբի վերայ նստած, կ՚պատմես քո զաւակներին, թէ ո՛րքան նեղութիւններ ես կրել։ Դու կ՚ուսուցանես նոցա, որ երբ մեծանան, չար մարդկանց տեղիք չ՚տան չարութիւն անելու, չ՚բարկանան չարերի վերայ, այլ զգուշանան նորանցից և աղօթեն Աստուծուն, որ ամէնքը սիրեն միմեանց, ինչպէս եղբայրն իւր եղբօրը…Եւ որդիքդ կ՚լսեն քեզ։ Երբ նոքա կ՚մեծանան, դու կ՚տեսնես, որ նոքա բարի և ազնիւ մարդիկ են դարձել. դու կ՚տեսնես, թէ ինչպէս կ՚օգնեն նոքա խեղճերին։ Դու կապրես երկար, շա՛տ երկար։ Քո մազերը կ՚ճերմակին, բայց սիրտդ ուրախ կ՚զարկի։ Եւ երբ դու կ՚մեռնիս, ամէնքը կ՚արտասուեն և կ՚աղօթեն քեզ համար ու կ՚տանեն քեզ կանաչապատ հանգստարան։ Քո գերեզմանիդ վերայ

վարդի թփեր կ'տնկեն և ես մայիսեան պայծառ ու գեղեցիկ առաւօտները, լուսաբացին, նոցա վերայ նըստած՝ քաղցրիկ երգեր կ'երգեմ։»

67. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Շունը հաչում է. քամին կաղկանձում է. գայլը ոռնում է. էշը զռում է. ձին խրխնջում է. ոչխարը մայում է. կովը բառաչում է. փիղը գոչում է. խոզը խռնչում է. արջը մռմռում է. առիւծը մռնչում է. եղնիկը բորբռում է. աղուէսը ղօղանջում է. վագրը խռնչում է. կատուն մլաւում է. գորտը կռռչում է. ագռաւը կռաւում է. արծիւը կռռչում է. աքաղաղը երգում է. սիրամարգը ճչում է. հաւը կրկչում է. սագը ռնգում է. օձը սուլում է. աղաւնին ճչում է. տատրակը կուրկուրում է. թութակը խօսում է. ճնճղուկը ճռուողում է. բուն աղաղակում է. սոխակը դայլայլում է. ճանճը բզզում է. միայն մարդն է, որ իւր միտքը յայտնում է խօսքերով։

68. ԿԱՐԱՊԸ, ԶՈՒԿԸ ԵՒ ԽԵՉԱՓԱՐԸ

Երբ ընկերաց մէջ միութիւն չը կայ,
Ոչ երբէք նոցա գործն առաջ կ'երթայ.
Գործ էլ մի կոչիր դու այն աշխատանք,
Այլ անտանելի վիշտ ու չարչարանք։

Մի օր Կարապը, Զուկն ու Խեչափար,—
Չեմ գիտում ինչպէս՝ որ գտան իրար,—
Մի բեռնաբարձ սայլ տանիլ կ'ուզէին.
Երեքը մէկէն լըծուեցան սայլին.
Երեքն էլ արիւն քրտինք են մտնում,
Սակայն իւր տեղից սայլը չի շարժվում։
«Զարմանք, ասում են նոքա մէկ մէկու.
Չը գիտենք ինչու.
Չենք կարողանում շարժել այս սայլը.
Ոչ ճանբան է վատ, ոչ ծանըր բեռը։

Բայց չէս ասիլ՝
Կարապն ըսկըսեց դէպի վեր քաշիլ,
Խեչափարը յետուլետ,
Զուկն իւր կողմից դէպի գետ։

—

Ծուռը ո՞վ էր, կամ թէ ո՞ւմն էր իրաւունք,
Այն թողունք.
Բայց բանն այս է որ
Հէնց մինչև այսօր
Սայլն այնտեղ է բեռնովը.—
Այսպէս կ'ասէ Կրիլովը։

ՁՄԵՌ

Գալիս է Ձմեռ,—ալևոր ծերուկ,
Խոժոռած դէմքով, սպիտակ մօրուք.
Զրկայ մի ժպիտ նորա աչքերում,
Դառնաշունչ ձայնով սարսափ է բերում.
Սառած է արիւն ողջ երակներում,
Սիրոյ ջերմութիւն չըկայ իւր սրտում։
Մահաբեր ձեռքով ձիւնեղէն պաստառ
Տարածում է նա։ Սար, դաշտ և անտառ
Ողջ ծածկըվում են սպիտակ պատանով...
Լռում է թռչնիկ. մեռնում է ծաղիկ.
Սառցապատ գետակ մնչում է լռիկ։
Կտուրի վերայ նստեց ագռաւը
Ծերի գալստեան բերաւ Համբաւը.
Կռռաց, կրկռաց և չարագուշակ
Ձայնով գուշակեց աշխարհի վիճակ։

70. ՁՄԵՌ

Բարիկենդան էր։ Ձիւնն եկել, դիզուել, սար ու ձոր բռնել էր։ Պարզըկայ գիշերն այնպէս էր գետինը սառցրել, որ ամէն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում, ճըրճըռում, ճաքճքում էր, և մարդու մարմինը սրսռացնում, ձայն տալիս։ Ամէն մէկ ծառի ճղներից, ամէն մէկ տան բաշից՝ հազար տեսակ սառուցի շուշայ, հազար տեսակ ձիւնի քուլայ՝ կախ էր եղել ու բիզ-բիզ իրար վրայ սառել։ Հէնց գիտես՝ սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել՝ մահուան դուռն ընկել։ Թռչուն, գազան, անասուն, սողուն՝ որը փէտացել, այստեղ—այնտեղ վայր էր ընկել, որն էլ վազուց, ամսով առաջ բունը մտել՝ ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։ Գետերի, առուների երեսը սառուցը մէկ գազ եկել, հաստացել, իրար վրայ դիզուել և այնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուպ տուել, որ մօտներին կանգնողը միմիայն նորանց խուլ ձայնն էր լսում, որ սառուցի տակին տխուր—տրտում քչքչում էր ու էլ յետ այստեղ այնտեղ կամաց կամաց ձայնը կտրում, պապանձվում, սառչում։

Արեգակն այս առաւօտ որ քնատեղիցն ու աղօթարանիցը գլուխը չ՚բարձրացրեց ու աչքը աշխարհի վերայ գցեց, շողքը (ճառագայթները) սարերի գագաթին, դաշտերի գլխին այնպէս էր փայլում, պսպղում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս՝ որ հէնց իմանաս անդամանդ, զմրուխտ, եաղութ ու հազար տեսակ տեսակ անգին քարեր լինէին դաշտերի, սարերի գլխին, երեսին, կրծքին փըռած։ Սարերի սառը բուքը, ձորերի դառնաչունչ քամին՝ այնպէս էր հրապարակ բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձիւնի թեփը իրար գլխով տալիս, որ ճանապարհորդէ քիթ ու պռունգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին—երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում,

շատին էլ կամ ձորերը գցում խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փէտացած, ճանապարհից խռկում, սար ու ձոր գցում, խեղդում, կամ քարեքար տալիս։

71. ԵՐԿՈՒ ԱՅԾ

Երկու կամակոր այծ պատահեցան իրար մի նեղ գերանի վերայ, որ կամուրջ էր ձգած գետակի վերայով։ Կամուրջը նեղ էր. երկուսը միասին չէին կարող անցնիլ. նոցանից մինը պէտք է յետ կանգնէր և միւսին ճանապարհ տար։

—«Թող ես անց կենամ», ասաց մէկը։

—Ի՛նչ պտուղ է, հազիր ես անց կենամ, պատասխանեց միւսը։

«Մի քիչ յետ կանգնիր, ասում եմ. առաջ ես եմ բարձրացել կամուրջը։

—Ներողութիւն կանես. ես այնքան յիմար չեմ, որ մեծ միրուքովս խոնարհուիմ մի ծծկերի։

Այս ասելուց յետոյ երկուսն էլ ճակատ ճակատի զարկեցին, եղջիւր եղջիւրի ձգեցին և բարակ ոտները գերանին դէմ տալով՝ սկսեցին կռուիլ։ Հակառակի պէս՝ գերանը թաց էր. երկու կամակորներն էլ սահեցան և ընկան ջրի մէջ։

72. ԱՂՔԱՏ ԿԻՆ

Ցուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
Ձիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն
Պատսպարուիլ ցրտիցը։

Ժամի դռնում դողդողալով

Կանգնած է մի աղքատ կին.
Նորա հանդերձ պատառ պատառ,
Չունի շապիկ իւր հագին.
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում է անցկացողին՝—
«Ողորմութիւն արէք, պա՛րոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Ձեզ, սիրելիք, ասեմ ով էր
Այս խղճալի աղքատը
Այն ցրտումը ոտաբոբիկ
Կանգնած՝ ժամի դռնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատւով
Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով.
Այժմ վախով նա իւր ձեռքը
Պարզում է անցկացողին՝—
«Ողորմութիւն արէք, պա՛րոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր.
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան ու տաղեր.
Այժմ զրկուած ամէն բանից,
Չունի անգամ հացի գին՝—
«Ողորմութիւն արէք, պա՛րոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր իւր գլուխը

Անուշահոտ ջրերով
Լուանում էր, մազը սանրում
Կրիայի սանրերով.
Նա հագնում էր բեհեզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանկագին
Եւ արծաթի պակասութիւն
Չէր ունեցել բընաւին.
Այժմ անլուայ, մազերն արձակ,
Չունի հագուստ, թէև հին՝—
«Ողորմութիւն արէք, պա՛րոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան՝ «Խղճո՛ւկ,
Ե՛կ դու մեզ մօտ, մենք կ՚ամոքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն։»
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին՝—
«Ողորմութիւն արէք, պա՛րոն,
Անտուն, անտէր աղքատին։»

73. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

— «Ողորմութիւն արէք», աղաղակեցին ողբալի ձայնով երկու պանդուխտ մուրացկաններ մի տաճիկ դատաւորի տան պատուհանի տակից։

Տան տէրը այդ միջոցին նստած էր մի փառաւոր բազմոցի վերայ և գիրք էր կարդում։

—Մեծ մարգարէն տայ, ասաց դատաւորը՝ կրթնելով լուսամուտի վերայ։

—«Ողորմեցէք ի սէր մարգարէի», նորից կրկնեցին օտարականները։

—Կորէք այստեղից, անպիտաններ, աղաղակեց դատաւորը զայրանալով, և բարկութիւնից գիրքը վայր ձգեց յատակի վերայ։

«Ո՜, խղճացէք մեզ վերայ և ողորմութիւն արէք, թէկուզ ի սէր Աստուծոյ», արտասուքն աչքըներին կրկնեցին օտարականները։

Այն ժամանակ դատաւորը վեր ցատկեց բազմոցից և գոչեց զարհուրելի ձայնով. «Է՜յ, Մահմուդ, Ազամէդ, կապեցէք այս թափառականներին և բանտը ձգեցէք»։—Բայց օտարականներն արդէն անյայտացել էին։

Անց կացաւ սորանից երեք օր. դատաւորը մեծ հրաւէրք ունէր, և ինքը կրկթնելով լուսամուտի վերայ՝ կանգնած էր մեծ մուֆթիի հետ և դիտում էր Բաղդադի շրջակայքը, երբ պատուհանին մօտեցան երկու օտարական։

—«Դու մեծ ուրախութեան մէջ ես, մե՛ծ դատաւոր, ասացին օտարականները ցաւալի ձայնով. մի քիչ էլ մեզ մասը հանի՛ր այդ ուրախութիւնից»։

—Մե՛ծ մուֆթի, ասաց դատաւորը. ահա՛ արդէն երկրորդ անգամն է որ գալիս են այս թափառականները ինձ նեղացնելու։—Ի՞նչ է շինում մեր խելօք խալֆան։ Նա քնած է և չէ հրամայում, որ տանեն բանտարկեն այս դատարկաշրջիկներին։ Բայց ես կը հրամայեմ շղթայակապ անել, որ էլ չ՚կարողանան շրջել Բաղդադի փողոցներովը։ Է՛յ, ձայն տուեց նա իւր ստրուկներին. եկէք կապեցէք այս թափառականներին։

Այս ժամանակ օտարականները ներս մտան դահլիճը, և նոցանից մէկը դէն ձգելով իւր վերայից պատառոտուած վերարկուն, ասաց սպառնալի ձայնով.

—Դա՛տաւոր, այդպէս դու կարեկից և արդարադատ ես դէպի խեղճերը։ Ես կարծում էի, թէ դու իմ ժողովրդի գըթասիրտ և արդարասէր դատաւորն ես. բայց սաստիկ սխալուած եմ եղել։ Ջա՛ֆար, վե՛ր առ այս չնչին որդը և դատի՛ր մեր իմաստուն օրէնքով։ Թո՛ղ գիտենան ամէնքը, որ թագաւորին չէ կարելի խաբել, և որ՝ վաղ թէ ուշ՝ վատ գործքերը կը յայտնուին ու կը պատժուին։

Բոլոր հիւրերը զարմանքից ու երկիւղից քարացան, տեսնելով, որ օտարականի հագուստով խօսող մարդը իրանց թագաւոր՝ Հարուն—Ալ-Ռաշիդն է. իսկ նորա ընկերը՝ մեծ վեզիր Ջաֆարը։

74. ԳԻՂԱԿԱՆ ԵՒ ՄԱՀ

Մի գիւղացի ծերացել՝ աղքատութիւնից ու աշխատութիւնից մաշուել, թառամել էր։ Ձմեռուայ ցուրտ եղանակին՝ մի շալակ փայտ կռնակն առած, կամաց կամաց գնում էր դէպի տուն։ Ծերունին ծանր բեռան տակ հագում ու տնքում էր։ Մի փոքր առաջ գնալուց յետոյ՝ նա յոգնեցաւ, կանգնեց, փայտերը գետին դրեց, վերան նստեց ու ախ քաշեց։ Ծերունին ասաց. «Ո՜հ, Տէր Աստուած, ինչ օր եմ քաշում. մի կողմից չքաւորութիւն, միւս կողմից զաւակներ. սորա վերայ աւելացրու զանազան ծախքեր, տուրքեր…Արդեօք կեանքիս մէջ մի լաւ օր տեսած եմ ես էլ։» Այս կերպով սիրտը կոտրած, ամէն բանից յոյսը կտրած, ծերունին կանչում էր. «Ո՜վ մահ, ո՞ւր ես, ո՛ւր, արի՛, հոգիս ա՛ռ։» Մահն էլ հօ, Երբ նորան կանչես, միշտ պատրաստ է, կասես թէ միշտ յետևներս կանգնած լինի։ Հէնց որ ծերունու խօսքերը լսեց, իսկոյն եկաւ, երևեցաւ և ասաց. «Ծերո՛ւկ, դու ինձ ի՞նչի կանչեցիր։» Ծերը որ մահի ահեղ կերպարանքը տեսաւ, գունատուեցաւ, շփոթուեցաւ, խօսքի կարգը կորցրեց և հազիւ թէ կարողացաւ

այս խօսքերը վրվըլթալ. «Թողութիւն կ՚անես. ես քեզ կանչեցի որ այս փայտը շալակս տաս»:

—

Զարմացք է: Մարդս որքան էլ ձանձրանում ու դժգոհ է լինում իւր կեանքից, որքան էլ բերանով մահ է խնդրում, բայց էլի կեանքը նորա համար քաղցր է. նա շատ է վախենում մեռնելուց:

75. Օ Դ

Դրեցէք սեղանի վերայ մի փետուր և մի թերթ թուղթ շարժեցէք նորա առաջը: Չ՚նայելով որ դուք չ՚դիպաք փետուրին, նա շարժուեցաւ և ընկաւ յատակի վերայ: Ինչի՞ց վայր ընկաւ փետուրը: Իհարկէ վախենալուց չէր այդ: Երևի փետուրի և թղթի մէջ տեղում կայ մի ուրիշ անտեսանելի մարմին, որը թղթից հրուելով, դէպի ցած մղեց փետուրը սեղանի վերայից: — Վեր առէք մի խողովակ, նայեցէք նորա վերայ՝ — նա դատարկ է. այժմ փչեցէք այդ խողովակի մի ծայրից և դուք կ՚լսէք, որ նորա մէջ մի ինչ որ ղողանջում է: Սա ևս նոյն անտեսանելի մարմինն է, որ դիպչելով խողովակի պատերին, մինչև անգամ շառաչիւն յառաջ բերեց: — Լայն բանալով ձեր փեշերը՝ արագապէս վազեցէք քամու հակառակ և դուք կ՚զգաք, որ մի բան սաստիկ դիմադրում է ձեզ. սա ևս նոյն անտեսանելի մարմինն է, որ գտնվում է ամենայն տեղ: — Նայեցէք, ձեր կուրծքը անդադար բարձր ու ցածր է անում և ամենայն անգամ, երբ նա բարձրանում է, ձեր բերանից և ռունգներից մի բան ներս է հոսում, իսկ երբ նա ցածրանում է, այդ հիւրը նորից դուրս է վազում այնտեղից. սա միևնոյն անտեսանելի մարմինն է, որ մինչև անգամ ձեր մարմնու ներսն այցելութիւն է գնում: Այս անտեսանելի մարմինը կոչվում է օդ: Այսպէս ուրեմն, օդը մենք

չենք տեսնում, բայց մեր միւս զգայարանքներով—շօշափելիքով. լսելիքով և հոտոտելիքով նորա ներկայութիւնն իմանում ենք:

Բայց ինչի՞ մենք նորան չենք տեսնում: Եթէ լուսամուտի ապակին շատ մաքուր է, շատ անգամ դուք կարծում էք, թէ շրջանակի մէջ ապակի չ՚կայ: Մենք ապակին չենք տեսնում, որովհետև նա շատ թափանցիկ է. իսկ օդն ապակուց ևս առաւել թափանցիկ է: Այնու ամենայնիւ՝ եթէ օդի շերտը շատ հաստ է, նա տեսնվում է և կապոյտ գոյն է ունենում: Կապոյտ երկնակամարը, որ տարածվում է մեր գլխավերևը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ օդի շերտը, որի հաստութիւնը 60 վերստից աւելի է, և որի միջից, որպէս չափազանց թափանցիկ առարկայի միջից, տեսնում ենք երկնային լուսաւորները: Բոլոր օդը, որ շրջապատում է ամբողջ երկիրը, մթնոլորտ է կոչվում:

Եթէ օդը մարմին է, նա պիտի բռնի որև է տարածութիւն, պիտի ունենայ և որոշ ծանրութիւն: Օդը այդ երկու յատկութիւններն էլ ունի: Վեր առնենք մի բաժակ և մի ջրով լիքը գաւաթ: Բաժակը շուռ տուած դնենք ջրի վերայ և սկսենք սակաւ առ սակաւ իջեցնել ջրի մէջ: Մենք կ՚տեսնենք, որ ջուրը նորա մի փոքրիկ մասը կ՚լցնի, իսկ բաժակի վերին մասը դադարկ կ՚մնայ, չ՚նայելով որ մենք մինչև վերջը խորասուզեցինք նորան ջրի մէջ: Ի՞նչն է արգելում ջրին լցնել բաժակը: Բաժակում, բացի օդը, ուրիշ ոչինչ չի կարող լինել, որովհետև նա դադարկ է. նշանակում է՝ արգելք դնողն օդն է: Ուրեմն օդն ևս մարմին է, որ բաժակում բռնում է իւր որոշ տեղը և թոյլ չէ տալիս մի ուրիշ մարմնու նոյն տեղը բռնել, իսկ երկու մարմին միանգամից միևնոյն տեղումը չեն կարող լինել: Երբ մենք բաժակը ջրի մէջն ենք իջեցնում, զգալի է լինում, թէ ինչպէս մի բան տակից դիմադրում է և բաժակը դժուարութեամբ է իջ-

նում. իսկ երբ նորան մի փոքր ծակէինք, ջուրը մի կողմի վերայ առաւել ճնշելով, միւս կողմից դուրս կ'պայթէր տակից դիմադրող օդը և բաժակն ինքնին կ'խորասուզուէր ջրի մէջ։

Բաժակը ջրի մէջ ընկղմելուց յետոյ՝ հանենք նորան, բայց ուղղաձիգ կերպով և բերանը դէպի գաւաթի յատակը։ Մենք կ'տեսնենք, որ ինչքան բարձրացնում ենք բաժակը, նորա հետ բարձրանում է և նորա միջի ջուրը, չ'նայելով, որ նա ջրի մակերևոյթից բարձր է կանգնած արդէն։ Ինչի՞։ Որովհետև այժմ արտաքին օդը երեսի կողմից ճնշում է գաւաթի ջրին և որովհետև բաժակում օդ չ'կայ, նա բոլորովին դատարկ է, ուստի ջուրը չորս կողմից ճնշուելով, մտնում է այդ դատարկութեան մէջ։ Նշանակում է՝ օդը մարմին է, բայց շատ նուրբ և թափանցիկ. նա ունի ծանրութիւն, որը, սակայն, շատ աննշան է։ Օդը ջրից շատ թեթև է, որովհետև նորա մասնիկները չափազանց թոյլ և հեռու հեռու են կապակցուած միմեանց հետ, քան թէ ջրինը։ Այն մարմինները, որոնց մասերը այնպէս թոյլ և հեռու են կապակցուած և այնպէս նուրբ են, որ մենք չենք կարող նոցա տեսնել, կոչվում են օդային կամ գազային մարմիններ։

Օդն ամէնքից հարկաւոր է. առանց օդի չի կարող ապրել ոչ մի կենդանի, չի կարող աճել ոչ մէկ բոյս։ Այս պատճառով էլ նախախնամութիւնն օդին տուել է մի այնպիսի յատկութիւն, որ նա ամենայն տեղ գտնվում է, թէ ջրերի մէջ, թէ հողի տակը փորած որջերում և թէ մինչև անգամ պինդ մարմինների ամենափոքր ծակոտիներում, միով բանիւ ամենայն դատարկ տեղ բնութեան մէջ լիքն է օդով։ Երբ ջուրը եռ է գալիս, դուք տեսնում էք, որ նորա մակերևոյթի վերայ պղպջակներ են բարձրանում. դոքա ոչ այլ ինչ են, եթէ ոչ ջրի մէջ եղած օդը, որ լայնանալով ուռչում ու բարձրանալով ջրի երեսը, գոլորշիների հետ ցնդվում է սառն օդի մէջ։

Օդն ամենայն կողմից շրջապատում է երկրագունդը որպէս մի ահագին ովկիանոս և այդ ովկիանոսի մէջն ապրում են մարդիկը ու բոլոր կենդանիներն այնպէս, ինչպէս ձկները ջրի մէջը։ Նա բարձրանում է մինչև տասն մղոն։ Որքան մօտ է նա երկրին, այնքան թանձր է ու ծանր. իսկ որքան հեռանում է երկրից, այնքան նօսրանում ու թեթևանում է։ Մի մղոն բարձրութեան վերայ նա այնքան է նօսրանում, որ մարդուն անկարելի է այնտեղ ապրել, որովհետև նորա շնչառութիւնը դժուարանում է։ Թռչուններն ևս այդչափ բարձրութեան վերայ չեն կարողանում թռչել։

76. ՋՈՒՐ

Ա.

Երբ հեշտաեռի կամ կաթսայի ջուրը եռ է գալիս՝ մենք գոլորշի ենք նշմարում և գիտենք, որ այդ գոլորշին միևնոյն եռ-եկած ջուրն է։ Ամենքդ տեսած կ'լինիք սաղնէ պղպջակներ։ Գոլորշին էլ միևնոյն տեսակ ջրային պղպջակ է, որի մէջը լիքն է օդով, բայց այդ պղպջակներն այնքան մանր են, մաքուր և փայլուն, որ նոցանից հասարակ աչքով միշտ չի կարելի տեսնել։ Ահա գոլորշին բարձրանում է կաթսայի վերայից ու չքանում։ Բայց ո՞ւր է կորչում։ Նորա պղպջակները ցնդվում են օդի մէջ և նա աննկատելի է դառնում. նշանակում է նա տեսնվում է այն ժամանակ, երբ շատ պղպջակներ են ժողովում միասին՝ ինչպէս օրինակ, կաթսայի վերայ կամ բաղանիքներում։ Մենք շունչ ենք առնում և մեր բերանից, ոչպէս և ամբողջ մարմնուց, օդի հետ գոլորշի էլ է դուրս գալիս։ Այս բանը դու կարող ես նկատել, երբ տաք սենեակից դուրս կ'գաս դէպի ցուրտը։ Ուրեմն ուր մարդիկ են բնակվում, այն սենեակում պէտք է գոլորշի լինի։ Գոլորշին առաւելապէս գոյանում է տաքացրած ջրերից, կերակուրներից, թէյից, թէև մենք նորան միշտ չենք նշմարում։ Փորձի համար ձմեռուայ մի ցուրտ օր տաք սենեակի դուռը միանգամից բաց արա և դու թանձր շոգի կ'նշմարես սենեակում. ուրեմն նորա պղպջակները, որ առաջ

ցրուած էին օդի մէջ, այժմ ցրտի ներգործութիւնից սեղմուելով միացան, Թանձրացան և նշմարելի եղան։ Եւ այսպէս՝ շոգին գոյանում է ջրից. չի՞ կարելի արդեօք նորան նորից ջուր դարձնել։

—Եթէ սենեակի մէջ ներս բերես սառը գաւաթ, կամ մի բաժակ սառը ջրով լիքը, դու իսկոյն թէ գաւաթի և թէ բաժակի վերայ կաթիլներ կ'նշմարես. նշանակում է սենեակի աննշմարելի գոլորշին, դիպչելով սառն ամաններին, ոչ թէ Թանձրացաւ, այլ և ջուր դարձաւ և նորանց միաւորութիւնից կաթիլներ գոյացան։ Միևնոյն է լինում և լուսամուտի ապակիների վերայ։ Երբ մարդս ցուրտ օդի մէջն է, նորա բերանից և ռունգներից դուրս եկած շոգին ոչ միայն նշմարվում, այլ և երբեմն ջուր Թափվում է նորա ընչացքից ու մօրուսից և մինչև անգամ ձիւն ու սառոյց է դառնում։ Նշանակում է՝ գոլորշուց միշտ կարելի է անձրև (ջուր) ստանալ։ Բայց ի՞նչ էք կարծում, մի՞թէ անպատճառ պէտք է ջուրը եռացնել, որ նա գոլորշիանայ։ Դուք իմանում էք, որ Թաց լուացքը դուրսը ցամաքում է նաև ցուրտ եղանակին, մանաւանդ երբ քամի է լինում, որովհետև քամին նորանից հեռացնում է ջրի պղպջակները և դորանով օժանդակում է նորա շուտով ցամաքելուն։ Շորը Թաց հագնելը շատ վնասակար է, որովհետև ջուրը նորանից գոլորշիանալով՝ սաստիկ սառեցնում է մարմինը։ Պէտք է ասել, որ նոյն իսկ սառուցը դուրսը, ցրտում դրած ժամանակը, մաշվում է, որովհետև նորանից ևս գոլորշի է բարձրանում։ Նշանակում է՝ ջուրը միշտ կ'գոլորշիանայ, բաւական է, որ ամենափոքր տաքութիւն լինի. իսկ այդչափ տաքութիւն մինչև անգամ սառուցի և սառնամանիքների մէջ կայ։ Երբ տեսնում ենք, որ գետերը սառան, օդը ցրտեց, ձիւն եկաւ, մեր մաշկին զգայ արտաքին օդի փոփոխութիւնը, ասում ենք, թէ ցուրտ է, բայց աւելի ուղիղ կ'լինէր, եթէ ասէինք թէ շատ սակաւ տաքութիւն կայ։ Երբ որ ջերմաչափը 10° ցրտութիւնից իջնում է մինչև—5°, ո՞չ ապաքէն մենք ասում ենք, թէ եղանակը փոքր ինչ կոտրուեցաւ, օդը քիչ տաքացաւ։ Եւ այդ շատ ուղիղ է, որովհետև այդ ժամանակ ևս տաքութիւն կայ։

Այսպէս ուրեմն՝ ջուրը գոլորշիանում է ամենայն ժամանակ, ամառ թէ ձմեռ, միայն ամառն առաւել շատ, իսկ ձմեռը սակաւ։ Այսպէս ևս ամառը շոգիացումն աւելի առատ է տաք եղանակին, քան զով, ցերեկը քան թէ գիշերը։ Սակայն անցնում է տօթ օրը

և մենք գոլորշին միայն գիշերն ենք նշմարում. բայց այդ չէ նշանակում, թէ նոքա գիշերն իսկ գոյացան, այլ որովհետև ցերեկը ջերմութիւնը սաստիկ էր, նոքա այնպէս լայնացած և հեռացած էին միմեանցից, որ անկարելի էր նշմարել, իսկ պարզկայ գիշերը նոքա մօտենալով միմեանց՝ Թանձրացան։ Արեգակը կ'տաքացնի նոցա և նոքա նորից լայնանալով կ'անյայտանան։ Երբ որ տաք եղանակից յետոյ յանկարծ ցուրտ քամի է փչում, այն ժամանակ օդը մառախուղով լցվում է, որ կ'նշանակէ թէ երկիրն այնքան տաք է, որ առատ գոլորշի է գոյանում, բայց արտաքին օդը յանկարծակի այնպէս ցրտեց, որ այդ գոլորշիները սեղմեց — Թանձրացրեց նոյն իսկ գոյանալուն պէս, չ'Թոյլ տալով նոցա բարձրանալ երկրից։ Գարնանը և աշնանը մէգը շատ յաճախ է պատահում, որովհետև այդ ժամանակներումն եղանակն առհասարակ խառն ու փոփոխական է լինում։ Երբ միևնոյն գոլորշին աննկատելի կերպով վերանում է շատ բարձր, այնտեղ, ուր շարունակ ցուրտ է լինում, այն ժամանակ մէգը ոչ թէ մեզ մօտ է կազմվում, այլ բարձր — երկնքում և մենք նորան ամպ ենք անուանում։ Եթէ հեռուից նայես բաղանիքից բարձրացող գոլորշու վերայ, դու նորան ևս ամպ կ'համարես։ Ամպերը զանազան բարձրութեան վերայ են լինում, սկսած մի վերստից մինչև վեց, եօթն և աւելի։ Կան այնպիսի լեառներ, որոնք ամպերից բարձր են. նոցա վերայ մշտապէս ձիւնն ու սառուցն անպակաս է լինում. նոցանից կարկաչելով գլորվում ու Թափվում են սրընթաց առուակներ։ Սարի ստորոտից նայում տեսնում ես, որ ամպերը միջից կտրում են նորան. բարձրանում ես և միայն Թանձր մառախուղ ես նշմարում շուրջդ. փոքր ևս բարձրանում ես և ամպերը քեզանից շատ ներքև են մնում. ներքևում շատ անգամ անձրև է գալիս, որոտում է, իսկ քեզանից բարձր տարածվում է պայծառ երկինքը։

Երբ որ օդի մէջ գոլորշիներ են ժողովվում, ամպերը Թանձրանում են և անձրև է գալիս, այսինքն՝ այդ միախառնութիւնից առաջացած կաթիլները իրանց հենարանից՝ — օդից ծանրանալով՝ ցած են ընկնում։ Շատ անգամ պատահում է, որ ամպերը ցած իջնելով՝ հանդիպում են ջերմ օդի, որից լայնանում ու նորից չքանում են առանց անձրև բերելու. նշանակում է նոցա փոքր ինչ սեղմուած ու Թանձրացած փամփուշտները ցրուեցան, յառաջ քան թէ կ'միախառնուէին և կաթիլներ կ'կազմէին։ Ընդհակառակն

պատահում է, որ ամենապարզ եղանակին անձրև է գալիս, երբ յանկարծ սառը հողմ է հնչում. ուրեմն անտեսանելի ջրային գոլորշիները սառը քամու ներգործութիւնից, արագ միախառնուելով՝ կաթիլներ են գոյացնում, մինչդեռ մենք ոչ ամպ ենք տեսնում երկնքի վերայ և ոչ իսկ մէգ, կամ եթէ տեսնում ենք, շատ աննշան։

Եթէ օդի բարեխառնութիւնը 0-ից ցած է, այն ժամանակ ջրային գոլորշիները մի որոշ բարձրութեան հասնելով և փոքր ինչ թանձրանալով տեղն ու տեղը սառչում են և զանազան ձևեր կազմելով—խաչաձև, աստղաձև, փետրաձև... ցած են թափվում։ Այդպիսի սառած գոլորշիները ձիւն են կոչվում։ Ձիւնը մեզ մօտ, երկրի վերայ ևս կարող է գոյանալ, գարնանային կամ աշնանային ցուրտ գիշերները՝ ցերեկը գոյացած և դեռ ևս բաւականաչափ չ'բարձրացած գոլորշիները քսուելով սառն առարկաներին՝ քարերին, խոտերին, ծառերին, տաշեղներին, նրանք ևս սառչում են և նոցա վերայ նստում։ Այս տեսակ ձիւնը եղեամ է կոչվում։ Շատ հաւանական էր կարծել, որ կարկուտն ևս ձմեռը գար, բայց այդ կարծիքն ուղիղ չէր լինի։ Կարկուտն ամառն է գալիս. նշանակում է՝ նա շատ բարձր ամպերում է գոյանում, այնտեղ, ուր մշտական ցուրտ է թագաւորում։ Ցրտութիւնից գոլորշիները միախառնուելով խոշոր կաթիլներ են գոյացնում, որոնք թէ այդ բարձրութեան վերայ և թէ ճանապարհին սառչում, ամրանում են իբրև սառուցի կտորներ և ցած են թափվում երկնքից։ Բայց թէ ինչից է առաջանում ցօղը, մենք այդ մասին մի խօսք անգամ չենք ասել։ Ցօղը լինում է ամառը, այն ևս պարզ գիշերները, ջերմ ցերեկից յետոյ։ Դու, գուցէ, նկատած կ'լինիս, որ պարզկայ գիշերներն աւելի ցուրտ է լինում, քան թէ թուխպ գիշերները. սորա պատճառն այն է, որ ջերմութիւնը տաքացած երկրից բարձրանալով՝ պարզ գիշերը ազատաբար ընդլայնվում և կորչում է օդի մէջ, իսկ թուխպը արգելք է լինում տաքութեան բարձրանալուն և նորան յետ է մղում։ Այսպէս է լինում և ձմեռը—պարզ և անամպ օրերը սաստիկ ցուրտ է լինում, քան ամպոտ օրերը։ Այժմ հասկանալի է թէ ինչի ամառուայ պարզ գիշերներին՝ ջրային փամփուշտները, որոնք երեկոյից իսկ բարձրանում են երկրից, հեռու չեն կարողանում գնալ և իսկոյն, կաթիլներ կազմելով, նստում են սառն առարկաների վերայ։ Որև է ծածկոցի կամ ծառի տակ համարեա թէ ցօղ

չէ լինում, որովհետև գետնի ջերմութիւնն ուղիղ շաւղով վեր բարձրանալով՝ զարկվում է ծածկոցի կամ ծառի տերևներին և անդրադառնում է։ Պարզկայ գիշերները բացօդեայ տեղում մի հարթ և մի անհարթ տախտակ դիր, միևնոյն ժամանակ դիր բուրդ, սև ու սպիտակ տախտակներ։ Առաւօտեան դու կ'տեսնես, որ հարթ տախտակի վերայ առաւել սակաւ կ'լինի շաղ, քան անհարթի, սև տախտակի վերայ շատ, քան սպիտակի, իսկ բրդի վերայ կամ բոլորովին չի լինել, կամ եթէ լինի, համարեա աննշմարելի։ Ինչի՞։ Որովհետև սև ու խորդուբորդ առարկաները շուտ են անցուցանում ջերմութիւնը—շուտով տաքանում և շուտով ևս սառչում են, հետևաբար, գիշերը նոքա աւելի շուտ պիտի սառչեն և նոցա շուրջն եկած գոլորշին աւելի շատ պիտի թանձրանայ նոցա քսուելով, իսկ սպիտակ և հարթ առարկաներն ընդհակառակն։ Բուրդը, իբրև վատ անցուցանող տաքութեան, համարեա բոլոր ցերեկեան տաքութիւնն իւր մէջ է պահում, ուստի և ցօղ չէ առնում։ Իմացար ուրեմն, թէ ինչի սպիտակ հագուստի մէջ ամառն աւելի զով ենք զգում մեզ քան սև հագուստի մէջ, ինչի նոր պղձէ թէյամացում կամ կաթսայում ջուրը դժուարութեամբ և ուշ է տաքանում, քան հնի մէջ. նոր ամանը հարթ է և կոկ, իսկ հինը շրջապատուած ձանձախարիթով։

Բ.

Ջուրը հեղուկ մարմին է, այսինքն նորա մասերն այնպէս թոյլ են միաւորուած միմեանց հետ, որ շարունակ ձըգտում են միմեանցից անջատուել. նոքա միմեանց ամուր չեն կարող բռնել, մինչև նոցա կողքերից դու դիտմամբ մի ուրիշ մարմնով չ'պարփակես։ Այս է պատճառը, որ ջուրը, որպէս և միւս հեղուկները, ամաններում են պահվում։ Սակայն երբ ջրի քանակութիւնը շատ փոքր է, օրինակ մի կաթիլ, այն ժամանակ նորա մասերը որքան և իցէ կարողանում են միմեանց պահել, այնպէս որ, երբեմն մի այնպիսի կաթիլ կախվում է տերևից և երկար ժամանակ չի բաժանվում իւր

մասնիկից, այս պատճառով էլ ջուրը կոչվում է կախլահեղուկ մարմին։

Ջուրը լուծում է իւր մէջ շատ առարկաներ՝ աղ, շաքար, կիր, կենդանիների և բոյսերի մնացորդներ և այլն։ Եւ որովետև ջուրը հոսելով գետերի և լճերի մէջ, մտնելով հողի տակ, ողողուելով ջրհորներում, շարունակ շփվում է այլ և այլ առարկաների հետ, այդ պատճառով էլ բնութեան մէջ մաքուր ջուր չ՛կայ. ամենից մաքուրն է անձրևի կամ ձիւնի ջուրը։ Ջուրը, եթէ բովանդակում է իւր մէջ կրային մասեր, կոչվում է կրային ջուր և սապոնը նորա մէջ շատ դժուարութեամբ է լուծվում։ Ծովային ջուրը դառնաղի համ ունի, որովհետև նորա մէջ լուծուած են այլ և այլ աղեր։ Քանի մի տեսակ գետերի և լճերի ջուրը լիքն է օրգանական մարմինների մնացորդներով և շուտ է հոտում ու վնասակար է խմելու համար։ Բայց այդ տեղ ոչ թէ ջուրն է հոտում, այլ այն օրգանական մասերը, որոնք լուծուած են նորանում. մաքուր և զուտ ջուրը միշտ միևնոյն է և երբէք չի փչանալ։ Հանքային աղբիւրներում ջուրն ստանում է այն հանքերի հոտը և շատ անգամ գոյնը, որոնց միջով նա անցնում է։ Եթէ ջուրը մաքրենք ամենայն արտաքին խառնուրդներից, այն ժամանակ նա լինում է շատ թափանցիկ, չի ունենում ոչ որոշ գոյն, ոչ հոտ և ոչ համ,

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅԻ ԱՌՏՆԻՆ ԿԵԱՆՔԻՑ

77. ՀԱՅԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ։

Դ.... գիւղի վերի թաղումը մի տուն կար՝ բոլորովին հեռու միւս տներից։ Այդ տան չորս կողմովը բաւականին բարձր չափար էր քաշած, որ պարսպի ամրութիւն ունէր, և ինչպէս ասում են հեքիաթներումը, ծիտն իրան թևովը, օձն իրան փորովը չէր կարող դորա վերայով ներս թափանցել։ Ժամանակով մեծ տուն էր այդ տունը։ Միանգամից ութ իննը օրօրոց էր օրօրվում այդ տանը, չորս հինգ թոռան հաց էր թխվում Աստուծու օրը։ Երկու գութան էր դուրս գալիս այդ տանիցը, վաթսուն գլուխ կով ու գոմէշ էր կթվում. հարյուրով ոչխարներ, տասնեակներով խոզեր, եզներով ձիաներ էին պահվում։ Այդքան ապրանքի կառավարութեան համար ոչ մի վարձկան ծառայ չունէին։ Տասն եղբայր էին որդոց ու թոռանց տէր, որոնց թիւը հասնում էր եօթանասունի։ Բայց երբէք չէր պատահում, որ դոքա ամէնքը երբ և իցէ միասին մի սուփրի վրայ գտնուին, միասին իրանց նահապետի չորս կողմը ժողովուին։ Քանի մի հոգի տարուայ մեծ մասը սարերումն էին անցկացնում, ըստ որում ոչխարներ էին պահում, մի քանիսը որպէս տաւարած՝ գոմերումն էին մնում, որ մի օրուան չափ հեռու էր գիւղիցը, մնացածները

էլ հեռաւոր դաշտերում վարուցանքով էին պարապում։ Թէպէտ որքա այսպէս միշտ տանից հեռու էին մնում, այնուամենայնիւ իրարու կարօտ էին քաշում և իրարու հետ սիրով մնում։

Ահագին մեծութիւն ունէր այդ տան շինութիւնը, և եթէ այդպէս չէն չ՚լինէր, մտնողի վրայ սարսափ կը բերէր, ինչպէս որ հէքիաթներում ամայի տունը սարսափ է բերում մտնողի վրայ, մանաւանդ նախապաշարեալ գիւղացու վրայ։ Հարիւր երեսուն տարեկան էր՝ որ մեռաւ, այս տան վերջին նահապետը և ինքը ականատես էր իւր բոլոր ժառանգների և հարստութեան կարճ միջոցում ոչնչանալուն, բայց Աստուծոյ փառքը իւր բերանից չ՚պակսեցրեց մինչեւ մահը։ Յակովբ էր նորա անունը և միշտ միտս էր ձգում Հրէից Յակովբ նահապետին։ Շատ անգամ եմ համբուրել նորա ձեռքը և նա ինձ օրհնել է։ Դորա օրհնութիւնը մեծ տպաւորութիւն էր գործում իմ մանկական սրտի վրայ։ Սուրբ էր համարվում դրանց օջաղը և սովորութիւն կար գիւղի մէջ, որ նորապսակ հարս ու փեսաներին, եկեղեցուց դուրս բերելուց յետոյ, կը բերէին դրանց օջաղը համբուրելու։ Զոգում էին նորապսակները և ծերունազարդ Յակովբի օրհնութիւնը ստանալով՝ գնում էին իրանց մուրազին հասնում։

Նշանակած բառերի տեղ հայերէն բառեր դրէ՛ք։

78. ՄԵԾ ՆԱՆԸ։

Այն անդամը, որ ամենից աւելի նախապատիւ է համարվում գերդաստանի մէջ և ամենքի վերայ իշխում է, սովորաբար հայր է կոչվում։ Այդ անունի վերայ է բոլոր տան բեռը, հոգսը, սնուցանելու և հագցնելու ծանրութիւնը։

Մի այդպիսի անուն էլ կայ տան մէջ, որ քանի այս հայրը կենդանի է, նա երկրորդական դեր է խաղում, իսկ

նորա մահից յետոյ՝ անմիջապէս միահեծան տէր է դառնում, իւր վերայ է առնում ամբողջ գերդաստանի սանձը և վայելում է ընդհանուրի յարգանքը։

Այս անձը մայրն է. սա այն այրին է, որ կարծես իւր ամուսնու մեծ կորուստից յետոյ՝ մի մխիթարական վարձատրութիւն է գտնում։

Այս կինն է՝ որ կրում է իւր վերայ "նանի՛", աղի՛, մեծ նանի՛ յարգելի մականունները, և դորա մէջ էլ կենդրոնացնում է իւր անպայման իշխանութիւնը. մանաւանդ եթէ դեռ եւս կայտառ և առոյգ է նա։ Այն օրուանից առանց նորա անօրէնութեան և խորհրդի՝ ոչինչ բան չի կատարուիլ։ Ո՛չ միայն իգական սեռը, ոչ միայն տան փոքրիկները, նորա կատարելահասակ որդիկն էլ առանց նանի կամ մեծ նանի ոչինչ գործ չեն բռնիլ։ Թողենք մի յարկի տակ ժողովուած անբաժան եղբայրները, որոնք ամէն երեկոյ մանրամասնօրէն հաշիւ կը տան իրանց մօրը բոլոր կատարած գործողութիւնների համար,—բաժանուած և անհամաձայն որդիքն էլ առանձնապէս իրանց մօրը կը հաղորդեն իրանց գործելիքը և կը լսեն նորա տուած բարի խորհուրդները։

—Գնամ նանիս հարցնեմ, օրհնէ այս իմ նոր գործը, որ Աստուած էլ յաջողի։

Իւր որդոց բաժտն ժամանակը նանը ապրում է նոցա որեւիցէ մէկի մօտ, որն աւելի կարօտութիւն ունի իւր հոգածութիւններին, որի երեխայքը մանր են կամ կինը աւելի պատանի ու անփորձ է. բայց և այնպէս նա լիակատար իրաւունք է պահում և իւր բոլոր որդոց տները իւր սեպհականութիւն է համարում. ժամանակ ժամանակ մտնել, կարգադրել, բարեկամներին հիւրասիրել, կերակրները եփել ու առանց իւր հարսին հարցնելու բաժիններ ուղարկել իւր միւս որդոցը կամ ամուսնացած աղջիկներին ու մօտիկ չքաւոր հարեւաններին, այս ամէնը նա կատարում է ամենայն իրաւամբ։

Այդ ինքնիշխան կինը շատ լաւ գիտէ, որ իւր համեստ հարսին հաճելի չէ իւր արարքը, բայց ում ինչ. հարսն ինչպէս կը յանդգնի, քանի սկեսուրը գլխին պտտում է, տանտիկնութեան իրաւունքների մէջ մտնել: Այսօր նա մեծ նանն է, քանի որդի ունի, այնքան էլ տուն ու օջաղ ունի, այնքան էլ շերեփ կայ ձեռքին:

Այսքան ահա մեծ է ամուսնու մահից յետոյ նորա այրի կնոջ յարգը:

Եթէ ներկայումս փոքր առ փոքր ընկնում են այս նահապետական սովորութիւնները, հարսներն աներեսանում են, որդիքը մօր վերայ գոռում, նորան մարդատեղ չեն դցում, հին ժամանակներումը այդպէս չէր, հին ժամանակը Աստուծոյ կրակը կը թափուէր այդպէս անողների գլխին:

Մեծ նանին ոչ թէ միայն հարազատ որդիքն են լսել, այլ և երեք չորս հօր եղբօր որդիք իրանց զաւակներով, թոռներով ու ծոռներով նայել են մի ժրաջան տանտիկնոջ ձեռքին: Քառասուն, յիսուն, վաթսուն, մինչև ութսուն հոգի մի ընտանիք են կազմել և այդ փոքրիկ գիւղի ամրութիւնը, պնդակազմութիւնը, ներքին կապը՝ մեծ նանն է եղել, նա է իւր ձեռքովն ամենքին իւր արժանաւորութեան համեմատ բաժին տուել ու նորա արածի վերայ ոչոք չի տրտնջացել:

79. ԴՐԻՋԱԿ:

Նահապետական պարզ սովորութիւններն օր ըստ օրէ անհետանում են. բարեկամութիւն, հարևանութիւն սուրբ բառերն իրանց նշանակութիւնը միմիայն քաղաքավարութեան ձևերի մէջ են պահում. էլ չ'կայ այն ընտանեկան կապը, որ օտարներին միմեանց հետ մի տան պէս պահում էր. խոր գիւղերումը որպէս և իցէ այժմ էլ կը տեսնես նախկին քաղցրութեան ստուէրը, իսկ քաղաքներումն ու մեծամեծ

գիւղերումը՝ երբէք: Մի անմխիթար ապագայ է գուշակում մեզ այս բանը:

Սորանից քսան կամ քսան և հինգ տարի առաջ, իմ լաւ միտքս է, մեր գիւղերումն երկու դրացի մի տան պէս էին ապրում. մի առած ունէին, որը պատգամի նման ընդունուած էր ամենքից. «փոխը օխտը (եօթը) տուն ա պահել»: Այս առածի սուրբ նշանակութիւնն ամենքին լաւ յայտնի էր. պատեպատ հարևաններն եղբօր նման միմեանց կարիքին հասնում էին: Ինչպէս այսօր՝ ես յիշում եմ դրիջակը, որ բացած էր մեր և մեր պատկից դրացի Ազատենց պատի մէջ: Այս մի փոքրիկ թափանցիկ պատուհան էր՝ երկու հարևանների միջնապատումը շինած: Ո՛չ վարագոյրն էր ծածկում այդ պատուհանը և ոչինչ զգալի արգելք խափան էր լինում ականատես լինել միմեանց տան գաղտնիքին. մի բարոյական զգացմունք էր, որ հաստ պատի նման փականք էր դնում դրիջակի վերայ, այն է՝ ամէն մարդ սուրբ պարտականութիւն էր համարում դրիջակը գործ դնել կարևոր ժամանակը միայն՝ ճրագ ուզել միմեանցից, կերակրի բաժին տալ իրարու, քաղցր զրոյցներ անել պարապ միջոցները, մէկմէկու նեղութիւնին օգնութիւն հասնել. ահա ինչ էր դրիջակի նշանակութիւնը. ընդհակառակն՝ աններելի յանցանք էր, եթէ մինը չար դիտաւորութեամբ ձգտէր իւր դրիջակակից դրացու տան գաղտնիքն իմանալ. եթէ որպէս և իցէ դիպուածով նա տեղեկանար դրիջակովը իւր հարևանի տան որ և իցէ ընտանեկան խորհրդին, նա պատրաստ էր իւր լեզուն ընիցը պոկել, քան թէ մեղանչել դրացիութեան սուրբ պարտականութեան դէմ:

Այսչափ մեծ էր այն նուիրական փոքրիկ պատուհանի սրբութիւնը մեր պարզ և առաքինի պապերի համար:

—«Ո՛րդիք ջան, ձեզ մատաղ, առանց պատը ծեծելու դրիջակովը մտիկ չ'տաք. ո՛վ գիտէ, ինչ բանի են,» զգուշացնում էր մեզ ամէն ժամանակ իմ լուսահոգի մայրը»:

Մի կողմից էլ որքան այս գրիջակները շինուած էին փոխադարձ օգնութեան նպատակով և կամ գուցէ պարսկական բռնակալութիւնից ազատուելու համար, բայց և մի և նոյն գրիջակի միջով երկու սիրով հարևան տանտիկիններ ազատ միջոցները ժամերով ծնօտները դէմ էին տալիս գրիջակի քարին և քաղցր զրոյցների մէջ խորասուզվում. գրիջակների միջնորդութեամբ գերդաստանի մայրերը, առանց իրանց ամուսինների ու որդոց համաձայնութեան, խնամի էին դառնում։

80. ԳԻՒՂԱՑՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Ճշմարիտ է, շատի հագինը տրեխ է, գուլպայ էլ չունի, որ ոտը ծածկէ, շատին չուխի վրայ հարիւր կարկատան կայ. բայց ինչ կանես՝ որ տունն ու մառանը հազար բարութիւնով լիքը՝ տրաքում էին։ Գինին կարասներով շարած, ամբարը հացով լիքը, կթի կովն ու գոմէշը, հորթ ու ձագը տակներին՝ գոմումը կապած, նժոյգ ձին ախոռումը, գութանը դրանը լծած, մառանը սեխով, կախանի տանձ ու խնձորով խըլթխըլթում և մտնողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում էր։ Որը երկու, որը երեք այգի ունի, ծառայ ու հօտաղ դրանը պատրաստ ու տան ներսն ու դուռ—ծակը բազմութեամբ լիքը։ Կարասներով աղդրած կողակ, կճուճներով պանիր ու ղաւուրմա, տաշներով գոխ ու բոխ, բղուղներով եղ ու կարագ, մոթալներով պանիր—մի խօսքով ծով՝ և ոչ թէ տուն։ Տասը հիւր որ մի և նոյն ժամին մէկի դրանը ցած գային, ամբողջ ամիս ուտէին, խմէին, կտրէին, ջարդէին, փչացնէին, նորա տան բարիքը կար ու կար, և եթէ մինչև անգամ վայրենի օտարականը նոցա դռնով անցկենար, իրանք թևիցը կը քաշէին, տուն կը կանչէին, որ նրանց սեղանի համն առնի ու այնպէս ճանապարհը շարունակի։ Շատ անգամ

եկեղեցումը որ մէկ օտարական կը տեսնէին, «սուրբ սուրբն» ասածին պէս՝ շատը կերթար՝ եկեղեցու դուռը կը կտրէր, որ ամենից առաջ ինքը նրան իր տունը տանի և շատ անգամ՝ երբ խնդրողները շատ լինէին, խօսքը մին կանէին, որ մի երկու շաբաթ նորան իրանց միջումը պահեն, պատիւ տան և բոլորը միասին մէկ օր սրա տանը, միւս օր նրա՝ ուրախութիւն անեն, օտարականի սիրտը առնեն։ Շատերը ոչխարի հօտեր ունէին։ Այնպիսի մարդ կար, որ տարէնը երկու հարիւր, երեք հարիւր լիտր տանձ, խնձոր, ծիրան էր ծախում, ու մէկ այնքան էլ աղքատի ու ճանապարհորդի ուտացնում, կամ դեղապետի համար պահում, որ սարերում բնակուողները, որոնք այգիներ չ՚ունէին, մէկ հիւանդ պատահելիս՝ գան տանեն ու իրանց հիւանդի աչքը դրանը չ՚մնայ, որովհետև մեր աշխարհումը, ինչ հիւանդ էլ որ լինի, նորա առաջին ու վերջին դեղը պտուղն է։ Ամենայն մարդ իր բաժաջի գինին առանձին ունէր պահած, որ համ իւր եկեղեցուն էր տալիս, համ էլ այն գիւղացիներին, ուր տեղ այգի չ՚կար։ Ամէն նաւակատիքի՝ ոչխար ասես, կով ասես, մորթում էին, մատաղ անում, ժամ—պատարագ անել տալիս, ժամից բաժանում ու տանով տեղով գնում, իրանց սիրելիների գերեզմաններն օրհնել էին տալիս ու աղքատներին կշտացնում։ Մէկ կոպէկի բան փողոցիցը տուն չէր գալ, բացի իրանց հագնելու շորիցը, այն էլ կտաւ, շապկացու, չուխացու շատը հարսներն ու աղջկերքն էին նորանց համար մանում, գործում, կարում։ Նրանց կանանցը որ մտիկ տայիր, խելքդ կերթար՝ խասի ու նուրբ կտորների մէջ կորած էին. բերաններից կտրում էին, իրանց ընտանիքի ոտն ու գլուխը մաքուր պահում. տղամարդը իր օրը մեծ մասամբ հանդումն է անցկացնում, ինչ փոյթ, եթէ վատ էլ հագնի. կինարմատը միշտ պէտք է պատշաճապէս հագնի, պատշաճապէս մաշի։ Շատը չորս—հինգ հարս ունէր տանը, որ մէկ

տեղը ցաւելիս՝ կամենում էին գլխովը պտուտ գան ու ոտները ջուր անեն՝ խմեն։ Մէկ հիւր պատահելիս՝ այս պատիւը հիւրինն էր։ Աչքը կթած՝ կանգնած են համեստ հարսները, որ տեսնեն, թէ իրանց տէրը կամ հիւրը՝ ինչ կը հրամայի, որ կատարեն։

«Բո՛ղդ, բո՛ղդ սա է. փողի օգուտն էլ անիծած, նորա կորուղն էլ». ասում էին շատ անգամ գիւղացիք, ու գլխները շարժում։ Այսօր ջէբդ լցնես, վաղը պէտք է մատդ լպստես։ Ոչ գիշերը քունդ է տանում, ոչ ցերեկը հանգիստ ունիս. փորացաւ ընկածի պէս՝ մարդ չի իմանում, թէ պտտաւը որ կողմովն է կուլ գնում։ Փողը որ կայ՝ ժանգ է, ձեռի կեղտ. այսօր կայ, վաղը՝ Աստուծով մխիթարուիս»։ Մեռնելուցդ յետոյ էլ՝ պէտք է շներոց, գայլերոց լինի։ Թէկուզ փողի համն առած, թէ կուզ՝ իր միսը կերած, հաշիւը մէկ է։ Սարդարն էլ է մեր դուռը գալիս, փողատէրն էլ։ Տաշտումը հաց ունենամ, կարասումը գինի, ջուալումն ալիւր. հէրն անիծած, եթէ բոլորովին մերկ էլ լինիմ և հոգս անեմ։ Օջաղս լիքը լինի, տունս առատ, որդիքս ողջ—առողջ, թող օրը հազար մարդ մտնի, հազար մարդ դուրս գայ, ինչ եմ հոգում. հացն էլ է Աստուծունը, ես էլ. ո՞վ հասնի, թող ուտի։ Գդակս ծուռը կը դնեմ, ուրախութիւնս կը շարունակեմ. ո՞վ ծոյլ է, թող նա հոգս անի։ Տարէնը որ հազար շուն, գայլ, թուրք, հայ, աղքատ, օտարական, հացս չ՚ուտեն, տանս չ՚քնեն, գինիս չ՚խմեն, իմ աչքը իսկի քուն կը գա՞յ։ Բացի ուտացնել, խըմացնելուց, այնպէս եմ պատուիրել, որ խուրջիններն էլ լըցնեն ու տանեն իրանց տները։ Իր տնկած ծառի տակին քնելը, նորա պտուղն ուտելը՝ աշխարհք արժէ։ Նոր չեմ հագնիլ, հին կը հագնեմ, ձեռքս ո՞վ է բռնում, ո՞վ է գլուխս ծեծում. ես չե՞մ իմ գլխիս տէրը։»

«Քաղաքը որ մտնում եմ՝ հենց իմանաս թէ աշխարհք սով է ընկել, էլ ոչ խէր կայ, ո՞չ Բարոփիոն։ Մէկ տեղ որ հացն

ու ջուրը փողով լինին ծախում ու առնում, էլ ուր դուռը գնաս, ձեռդ ուր դէմ անես։ Երբեմն էլ կիտուկ կիտուկ փողերը համարելիս՝ փողատէրը այնպէս սրսրթում է, որ հենց իմանաս թէ առաջիցը թև կ՚առնի, կը թռչի։ Թո՛ւհ, մարդ իրան հոգին պէտք է ծախի՞ փողի պատճառով։ Հազար տարի էլ որ քո ամենասիրելի բարեկամի դրանը շլինքդ ծռես՝ կանգնես, սոված մեռնելիս լինես, հազար տարի անօթի փորով գկռտաս, ոչ ոք քեզ տուն չի կանչիլ, սառը ջուր չի խմացնիլ։ Մինչև անգամ այն մարդը, որ քո տանը կերել, խմել, ամսով—տարով քո աղ ու հացի վրայ է եղել, աչքը աչքիդ առնելիս՝ հենց իմանաս թէ գնդակով խփեցին. յետեն է քեզ անում ու աչքը քամակը գցում։ Տօ, օրհնուած, ասենք թէ աչքերդ կուրացրել ես ու ինձ չես ուզում ճանաչել, ասենք թէ չես կամենում քո օրհնուած սեղանիդ կողքը ինձ ցոյց տալ, մէկ՝ «բա՛րով, Աստուծու բարին» գոնէ ասա՛, հօ բերանիցդ վարձ չես ուզում, դա էլ հօ փողով չէ, ա՛յ փողակեր, հողակեր։ Ասենք թէ չուխէս մահուդ չէ. հին մաշուած բըրդից է, իսկ քոնը նոր, կանաչ մահուդից. ձեռքիցդ հօ չեմ խլում։ Քեզպէս հազար մահուդամարդ իմ այս աղքատ չուխիս մատաղ լինի, որ առանց հիւրի հաց չի ուտում։ Այսպէս են ահա քաղքի մարդիկը։ Էլի Աստուած օրհնի մեր ջուրը, մեր հողը. էլի թէ հոգի կայ, հաւատ կայ, մեզանում է։ Մարդ ինչ անի, իր առաջը կը գայ. լաւութիւն կ՚անես, լաւութիւն կը տեսնես, վատութիւն կանես, վատութիւն կ՚ստանաս։ Հարիւր տարի կը լինի, որ լուսահոգի Ս.Ֆոհը մեռել է, բայց նորա ողորմին կայ ու կայ. թուրք ու հայ նորա գերեզմանովն են երդվում, նորա բարերարութիւնները սահման չունէր. տալիս էր՝ ինչ որ կարողանում էր, և ոչ ոքի դադարկաձեռն չէր բաց թողում։

---

81. Ջ՛Ր Օ Ր Հ Ն Է Ք։

Յունուարի 6-ին, առաւօտեան արշալուսից առաջ, Աշտարակ գիւղի եկեղեցու զանգերը խփեցին. ամեն մարդ իւր ընտանիքով գնաց եկեղեցի։ Հէնց որ պատարագը վերջացաւ, տէրտէրներն ու տիրացուները առօք փառօք զարդարուած, խաչ ու խաչվառով, քշոցները չղկչղկացնելով, բուրվառները շղշղկացնելով, կնդրուկի հոտը աշխարհը լցնելով, ժողովուրդը առաջներին գլխաբաց գնալով, խաչը տարան «Մելիքի բաղչէն», այնտեղ առուումը ջուրը ձգելու համար։ Առուի եզերքի ուռիների վերայ ամուրի երիտասարդները հրացանները վառօդով լցրած՝ կանգնել էին. մեր Սօսն էր դոցա գլխաւորը։ Առուի երկու կողմը շարուել էին մեծ բազմութիւն. «Ազրգենց կալը» կանանցով ու հարս ու աղջկերանցով զարդարուել էր. մի մարդ չ՚կար, որ մի փոքրիկ «փուչ» կամ մի շիշ չ՚ունենար խաչջրուայ վերցնելու համար։

Հէնց որ Մեռոնը ջրի մէջն ընկաւ, ուռիների միջից հրացաններն սկսեցին որոտալ. ամէն բերանից այս խօսքերն էին դուրս գալիս. «Ո՛վ Սուրբ Մեռոն, դու մեր Հայոց ազգը հաստատ պահես, ամէն ցաւի փարատում լինիս, ամէն ցաւումի զովութիւն տաս»։ Կանայքն էլ արտասուք թափելով՝ ջերմեռանդութեամբ աղօթում և իրանց ցաւերին դարման էին խնդրում։ Առուի վերայ կանգնածներն էլ մի մի փարչ խաչջրուայ էին վեր առնում, աչքներին քսում, մի քիչ խըմում ու պահում տուն տանելու համար։

Խաչը ջրից հանելու ժամանակը, փառաւորուն տէր հայրը, մի այնպիսի ազդու քարոզ տուեց, որ թէ ինքը լաց եղաւ և թէ ժողովրդին լացացրեց։ Ահա նորա քարոզը.

«Օրհնեալ ժողովուրդ, դուք գիտէք, որ ամէնքս էլ հայ քրիստոնեայ ենք, Լուսաւորչի լոյս հաւատին ենք, 12 խաչապաշտի գլուխը մենք ենք. մեր Մեռոնը ամէն ազգի մեռո-

նիցն էլ զօրաւոր է, ոչ մի ազգի Մեռոն ինքն իրան չի կարողանում եռ գալ։ Էջմիածինը մեր սուրբ Աթոռն է, Լուսաւորչի լուսաթաթախ սուրբ Աջը այնտեղ բազմացրած՝ մեզ համար բարեխօսութիւն է անում, որ Աստուծու աչքը մեզ վերայ քաղցր լինի. արենակոլոլ սուրբ Գեղարդը, կենաց փայտը այնտեղ են. մեր ազգին ամէն նեղութիւնից ազատել են և մինչև վերջը պէտք է ազատեն. աշխարհիս բոլոր սրբերի մասունքներիցն էլ այնտեղ կայ. զինաւոր Սուրբ Գէորգն էլ այստեղ, ծառայ եմ նորա սուրբ զօրութեանը, մեզ թև ու թիկունք է, մեր բանին ու գործին յաջողութիւն է տալիս, մեր այգիները կարկուտից, թրթուրից, ժանգից ազատում է. մենք էլ, օրհնեա՛լ լինիք, սորա փոխարէն պէտք է մեր ջերմեռանդութիւնը ցոյց տանք, սրտներս բաց անենք, ոչինչ չ՚խնայենք։ Քրիստոս Տէրն մեր ինքը այսօր մկրտվում է. Յովհաննէս Մկրտիչը այսօր նորան կնքահայր դարձաւ, մենք էլ այն օրինակն ենք պահում։ Պէտք է որ այս խաչը, որ Քրիստոսի փոխանակ ջուրն ենք դրել, մէկդ հանէք՝ սուրբ եկեղեցուն օգուտ տաք. ինչ որ ձեր սրտիցը կը բղխի։ Օրհնեա՛լ լինիք, մի՛ խնայէք, ո՛վ որ ձեզանից շատ կը տայ, թո՛ղ նա հանի. միւսներդ էլ՝ եթէ ուզում էք, տուէք, թո՛ղ եկեղեցին շահուի։ Դէ՛հ տեսնեմ, ո՛րդիք, ո՛վ է գալիս Խաչին կնքահայր դառնում։ Խաչի զօրութիւնը ձեր տուն ու տեղի, ձեր ազգի ու ընտանիքի, ձեր անդ ու անդաստանի վերայ լինի»։

Տէրտէրի քարոզը ամէն մարդու սիրտն էլ գութ ձգեց. բայց մեր ջերմեռանդ Սօսը ամէնքից առաջ ընկաւ, ծառի վերայից ձայն տուեց. «Ես երեք ռուբլի կը տամ, կը հանեմ. իմ կարողութիւնս այսքան է ներում. ո՛վ աւելի կը տայ՝ համեցէք»։

— Դէ՛հ ցած արի, օրհնեա՛լ լինի քո ծնունդը, ձայն տուեց մեծ քահանան, անցեալ տարի դռնաբացէքը դու առիր, հիմա էլ խաչին ես կնքահայր դառնում։

Սօսը ցած իջաւ, հրացանն ու զէնքերը եզբօրը տուեց, գնաց տէրտէրի կողքին կանգնեց։

—Օրհնեա՛լ լինի Սօսը, բարձր ձայնով ասաց տէր Հայրը, Աստուած սորա հաւատն օրհնի՛, շա՛տ ապրի, Քրիստոս սորա սրտի խորհուրդը կատարի. անցեալ տարի ժամի դուռը բաց արեց, հիմա խաչն է ջրիցը հանում, Յովհաննէս Մկրտչին փոխանորդ դառնում, երեք ռուբլի էլ փող է տալիս սուրբ եկեղեցու օգտին։

Ամէն տեղից կանչեցին. «Զօրանայ ինքը, խաչն իրան պահի, շատ լաւ է անում»։

Խաչը տէրտէրը ջրիցը հանեց, Թաշկինակը ձգեց Սօսի կրծքին, տուեց գիրկը ու շարական ասելով յետ դարձան դէպի եկեղեցին։ Մինչև եկեղեցի մտնելը երիտասարդներն իրանց հրացանները ճանապարհին տրաքտրաքցրին։

Խաչը տարան եկեղեցի. Սօսին կանգնեցրին սեղանի առաջը՝ խաչը գրկին. ջերմեռանդ ժողովուրդն եկան համբուրեցին ու գնացին իրանց տները։

Ժամերգութիւնից յետոյ, տէրտէրները, տիրացուները, երեցփոխը և մի քանի պատուաւոր մարդիկ գնացին Սօսենց տունը՝ հաց ուտելու։

82. ՀԱՅԻ ԲԱՐԻԿԵՆԴԱՆԸ։

Սորանից երեսուն կամ քառասուն տարի առաջ՝ բուն բարիկենդանի վերջին շաբաթը Աշտարակի փողոցներովն անց կենալ չէր լինիլ։ Ամէն տեղ ուրախութիւն, ամէն տեղ սէր ու խնջոյք, ամէն բարձր կտուրի սեղան փռել—բաց անելը հասարակաց էր. էլ պատանի ու հասակաւոր չ՛կար, էլ երիտասարդ ու միրուքաւոր չէիր ջոկիլ, բոլորը միասին երիտասարդացել, կայտառացել էին։ Գայլիս պէս պատուելի իշխանները կալերումը լախտի էին խաղում ու հաստ կտաւէ գօտկից ոլորած լախտն այնպէս էին փռռացնում, իրար մէջքի կպցնում, որ մէջքի կաշին վեր էր կենում։ Տէրտէրն էլ՝ վերարկուն ծալած մի կողմը դրած, կարի ծլրփան փէշերը կոկիկ հաւաքած՝ գօտիկը խրած, այնպէս էր ծուլ—ծուլ լինում ճժի բոլորքովը՝ որ կասես թէ սա իրան կեանքումը միշտ ըմբշամարտ է եղել. միայն լախտը որ մէջքախառն ուսագլխին հասնում էր, զգում էր որ այնպիսի բան իւր օրումը չի տեսել։

—«Դէհ, օրհնած, մի փոքր էլ կարգիս խնայեցէք, կամաց խփեցէք է,» ասում էր մեր տէր-Հայրն ու էլ յետ Թռչկոտում ճժի չորս կողմը, աշխատելով լախտը խլել բռնողի ձեռքից։

«Ոչինչ, տէրտէր ջան, այսօր արձակուրդ է. բարիկենդան օրեր է, խելքներս կորել է», պատասխանում էին մեր իշխաններն ու իրանց խաղի հետ ընկնում։

Այսպիսի իրարանցում, այսպիսի գոռում—գոչում, Թէ ուրիշ ժամանակ լինէր, ամէնքը կը կարծէին, Թէ գիւղը կոխեցին, աւար տուին. մօտազայ գիւղերիցն անգամ գուցէ օգնութիւն կը գային. բայց հիմա ամբողջ Արագածոտն գաւառն է այդպէս. ինչ պէտք է արած։

—Դէ հէրիք ջարդուեցինք ծեծուելով, լա՛ւ ալիւր—ազցան եղանք, մի քիչ էլ վէգ խաղանք. ո՛վ տարուի՝ մէկի տեղակ՝ երկու կաւ գինի բերի։

Սկսում էին այնուհետև մեր մազով ու միրուքով իշխանները վէգը ձեռների մէջ պտտեցնել և ճժի մէջ շարած ընկոյզներին աչքել։

«Ա՜յ գիտի, երանի՜ էր այն օրը, երբ մենք երիտասարդ էինք, միտս է գալիս՝ ես էի ամենքից լաւ խաղացողը, պարծենում էին ամէն մէկը. քանի տարի կը լինի վէգի «ախէն» ձեռս չեմ առել. ի հարկէ որ երիտասարդները մեզ կը տանեն ու մեր կարասի ծեփը կը պոկուի. պա՛հ, պա՛հ, պա՛հ,

ձեզ մատաղ՝ ինչ գինի ունիմ, քաղցրութիւնից կծպծում է, կծպծում, պռօշներդ իրար կը կպչին. չէ, եղբայր, ես պիտի տարուիմ. թէ որ այսօր մեր ներքի այգու գինու համը չ՚տեսնեմ, ձեզ էլ չ՚խմացնեմ, ես կը մեռնիմ. էլ ո՞ր օրի համար եմ պահել:»

—«Տօ՛, դէ վէգդ գցում ես՝ գցի, քանի խօսես ու քո քացախի պէս գինին գովես: Քո ջգրու ես պիտի տարուիմ, որ մեր մեծ այգու գինու համը բերնումդ թողեմ. սրան տես է, ես կը թողեմ, որ դու պարծենաս. այս բռպէիս տասը կարասի ծեփ կը պոկեմ՝—մինը միւսից լաւ»: Ասում էր երկրորդն ու վէգը ձգում, գիտակցութեամբ [illegible] գալիս:

«Տօ՛, սատանայ Դէվոյ, ես չեմ տեսնում, որ դու գիտամբ ես փուստ գալիս. որ մեռնիս, համ ընկոյզները կը տանեմ, համ էլ մէկի տեղակ չորս կաւ գինի կը բերեմ. գերեզմանս հօ չ՚պիտի լցնեմ. Աստուած այնքան տուել է, փառք Իրան, որ ճտահար է:» Ասում էր երրորդն ու վէգը շպրտում:

—«Տօ դէ՛ հերիք է, հերիք, միրուքներիցդ ամաչեցէք, այն մանուկներից գոնէ քաշուեցէք: Գնանք մենք էլ մի փոքր կոկորդներս թաց անենք: Փարրու խանը հիմա կը գայ:»

«Ա՛յ տղայ, մարգարէի որդի էիր. ահա՛ Փարրու խանի աղուէսը—համբաւաբերը գալիս է:»

Մէկ էլ այն տեսար, գլուխը երկար պոչաւոր թաղիքի գդակ անցկացրած՝ ոչխարի գզգզուած մորթին՝ բուրդը դէպի դուրս, մէջքին կապած՝ երեսն ալիւր քսած՝ մի ահագին կրակախառնի ձեռքին սիւն տալով՝ մէկը եկաւ, խոր գլուխ տուեց մեր իշխաններին:

«Հը՛, ինչ մարդ ես, ո՞վ ես, ո՞ր աշխարհի քամին է քեզ պատել՝ մեր գիւղը գցել», հարցնում է մի ծերունի:

—«Խնդիրս առէք՝ պատմեմ Աշտարակի հասարակութեանը, որ մեր Փարրու տէրը, քաջերի քաջ Եգգեար խանը, իւր նախարարներով ու իշխաններով, իւր մեծամեծներով և

ստորադրեալներով՝ հինգհարիւր մարդու հետ գալիս է ձեր սեղանը չէն անելու, մեր բարեկամութիւնը հաստատ պահելու: Նորա հրամանն է, որ ողջ գիւղը իշխաններով դուրս գայ նորա առաջ:»

«Մեր գլխի, մեր աչքի վերայ տեղ ունի ձեր խանը. մենք վաղուց նորա համար օթեւան ենք պատրաստել տանուտէրի վերնայարկի կտրին. սեղանը լի առատ, գաթայ-հալուան հոգի պէս. հազար մարդով էլ որ գայ, մեզանից ոչինչ չի պակսիլ: Տղէք, Փարրու աղուէսին մի պարգև բերէք,» հրամայում էր իշխաններից մինը:

Այս խօսքերն ասելուն պէս՝ մօտիկ տանից մի շալան [illegible] - չորացրած դեղձ էին բերում և ձգում մեր պատգամաբերի վիզը, մէջքին էլ մի քանի լաւաշ կպցնելով՝ ճանապարհ դնում:

«Էլ ինչ էք ուշանում, գնանք էլի՛, հիմա կը գայ մեր Եգգեարը:»

Գնում էին այնուհետև մեր իշխանները և իրանց համար վաղուց փռուած սփռոցի չորս կողմովը շարվում. [illegible] էլ դրանց պոչիցը կպած էր. ուր երթային, հետները տանում էին:

«Տանուտէր, դու ուտել-խմելու յետևից ես, էլ չ՚ես ասում՝ Փարրու խանի ընծան ինչ պիտի լինի:»

—Դուք ուրախութիւն արէք, ես վաղուց պատրաստել եմ:

«Եալլա՛», գոռում են փողոցներումը. «Եալլա՛», լսվում է ամէն կտուրներից: Ամենայն տեղից դիմում են Փարրու խանին, որ գիւղի մի կողմից երևացել էր արդէն:

—Ա՛յ, հա՛յ, հա՛յ, այս ինչ շատուոր են. ամբողջ գիւղը հետը բերում է տնաշէն Եգգեարը»: Միայն մեր տանուտէրը, իշխաններն ու տէրտէրը յառաջ չեն գնալ, ինքը խանը պէտք է գայ և նորանց սեղանի վերայ գտնի:

Ուռած ուռած բազմած է մեր Փարբեցի Եդգեարը իշի վերայ՝ պոչը ձեռքին բռնած՝ երեսը դէպի յետ՝ մի երկար ճիպոտ էլ միւս ձեռքին իբրև ծխաքարշ դնչին դէմ արած. նա գլխին դրած ունի մի գզգզած պարսից խանի երկար գդակ՝ վերան հին փալասներ փաթաթած. նորա երեսին քըսած է աթարով վառուող տան առաստաղի մուր. նորա պարանոցին ձգած է զանազան ոսկրների կտորներից կազմած մի շարան. հագած ունի նա մի պատառոտուն, ծլանքները հազար տեղից քաշ ընկած արխալուխ. նորա կուրծքը ցած է և նոյնպէս մրով սևացրած, կողքիցն էլ մի երկար փայտէ սուր կախած։ Երկու երիտասարդ՝ նոյնպէս այլանդակ հագնուած, քաշում են իշի սանձը. երկուսն էլ յետևից մի մի մեծ՝ ծայրերը սրած, գաւազանով բզում են իշին. դափ ու զուռնէն ածելով՝ գնում է այդ հանդէսը դէպի տանուտէրի կտուրը, իսկ խուռն ամբոխը շարունակ «եալլա՛» է կանչում։

Եւ ահա խանն իշի վերայ նստած՝ մտաւ տանուտէրի բակը։ Ազդակը սատկանում է։ Կառավարչի հրամանով խանի մարդիկը մի րոպէում բարձրացնում են ուսների վերայ խանին և տանում կտուրը։ Այդ միջոցին կտրին նստողները առատ ալիւր են թափում բարձրացնողների գլխին։ Ծիծաղը, խնդումը, ուրախութիւնն ընդհանրանում է։

«Գլո՛ւխ, գլո՛ւխ տուէք, Աշտարակի իշխաններ, մեր ողորմած խանին, կարգադրում է ընդհանուր կառավարիչը։

Վեր են կենում բոլորը սեղանի վրայից և իրանց տեղը կանգնած՝ խոնարհութեամբ գլուխ իջեցնում։ Վա՜յ նորան, ով գլուխը մի փոքր ուշ կը կռացնի. աչքով է անում խանն իւր կառավարչին և բարակ ճիպոտը կպչում է այդ յանդուգն մարդուն։

Հրապարակ քաշեցէք տանուտէրին և ոտները փալախայի մէջ դրէք, հրամայում է խանը։

Տասը-քսան այլանդակ հագնուած երիտասարդներ մօտե-

նում են տանուտէրին, պառկացնում և ոտները փալախայի մէջ ոլորում։

—«Հարցրո՛ւ դրան, հրամայում է խանը իւր նազիրին, դա քանի գլխանի էր, որ մեր հրամանը չ՚կատարեց, մեզ բանի տեղը չ՚դրեց, մեր առաջը չ՚եկաւ։»

«Թողութիւն կ՚անես, խանն ապրած կենայ, խնդրում է տանուտէրը պառկած տեղից. ես քո մեծութեան համար պատրաստութիւն էի տեսնում այստեղ իմ իշխաններով. տեսնում ես՝ հրամանոցդ համար սուփրէն բացարած է, վարդի նեկտարը գաւաթի մէջ լիքը պատրաստ դրած, որսահաւը ձողու ծայրին կախ արած՝ որ հրամայես թէ չէ, խորովենք՝ անուշ անես. քո ընծադ էլ, լաւ նայիր, ոտները կապած գառը այստեղ պատրաստ, երբ որ ուզես՝ փլաւի գլխին առաջդ կը բերենք։»

—«Կեցցես, կեցցես, տանուտէր. տղէք, բա՛ց թողէք դորան։»

Առնում է իսկոյն մեր տանուտէրը գաւաթով լիքը քա՛ցախը և խոնարհութեամբ մատուցանում խանին։

Շատ լաւ էլ գիտէ բարձրապատիւ խանը՝ որ նեկտար կոչուածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թունդ քացախ, բայց ոչինչ դէմք չ՚ցոյց տալով՝ առնում է ձեռքը և մօտեցնում բերանին։—«Օ՜խ, ի՜նչ լաւ էր շինած, սիրտս հովացաւ. շատ ծարաւ էի։»

—Այ տղա՛յ, հօրսը մօտ բերէք, հրամայում է տանուտէրը։

Վերցնում են ջահելները ձողու ծայրին կախած՝ սպանած ագռաւը և յառաջ բերում։

«Ծա՛ռայ, հրամայում է խանը. վերկալ այս կաքաւը. երբ որ մեր երկիրը կերթանք, փլաւի գլխին տապակած առաջս կը բերես։»

—«Այստեղ բերէք գառը», տնօրինում է տանուտէրը։

Մօտ են բերում ոտները կապած՝ տոփուրի մէջ դրած մի սև կատու, համեցէք անում խանին։

«Այ տնպիտաններ, ձեր գառը կատու դառաւ. շուտ, շուտ կապոտեցէք Աշտարակի բոլոր իշխաններին. թոնդի մէջ պիտի փթացնեմ, մինչև որ խելքները գլուխը գայ, նորից կատուն ոչխար շինեն, հրամայում է խանը։ Բայց նորա այս հրամանն էլ չի կատարվում, որովհետև խսկոյն միւս կողմից յառաջ է բերվում մի մեծ և պարարտ որձ ոչխար և գիւղի կողմից ընծայվում է խանին։ Այնուհետև մասնաւոր անձանց կողմից էլ զանազան ընծաներ ստանալուց և ամեն ընծայ բերողին իւր առաջը չոքացնելուց և զանազան խեղկատակութիւններ անելուց յետոյ՝ խանը կամենում է հեռանալ։

«Շատ շնորհակալ եմ Աշտարակ գիւղի մեծ և փոքրից. իրանց պատիւն իմ աչքի, իմ գլխի վերայ, այժմ մնացէք բարով,» ասում է խանը և կամենում է հեռանալ իւր հանդիսականներով։ Բայց ինչպէս կարելի է։ Մինչև հիմա արածները կատակ էին, հիմա սկսվում է ուղիղ հիւրասիրութիւնը։ Խանի հետ եկողները բոլորը պիտի վայելեն աշտարակցոց սեղանիցը և պիտի խմեն՝ երկու գիւղերին միաբանութիւն և յարատևութիւն ցանկանալով և ապա մի և նոյն կերպով «եալլա» կանչելով՝ ճանապարհ ընկնեն դէպի մի ուրիշ մերձակայ գիւղ։

83. ԲԵՐԱՆ—ՓԱԿԷՔ։

Բուն բարիկենդանի կիւրակէ երեկոյին Աշտարակցիք վերջ դրին երկու շաբաթուան զուարճութիւններին. ամէնքը միմեանց բարի գիշեր ասելով՝ ուրախ զատիկ ցանկանալով՝ իւրաքանչիւրը մտան իրանց յարկի տակն՝ իրանց ընտանեաց հետ մեծ պասին դիմաւորելու։

Գիւղումը լռութիւնը տիրեց. կերուխումը վերջացաւ.

բոլորովին մի հասարակ երեկոյի նմանութիւն առաւ օրը. կարծես թէ այս գիւղի մէջ երկու շաբաթ շարունակ ոչինչ արտաքոյ կարգի բան չէր պատահել։ Այս արտաքուստ երևոյթը ամէն մարդի տունը և բոլորովին ուրիշ տեսարան կը տեսնես։

Տան նախանդամը կամ ծերունին՝ շուրջ առած իւր բոլոր գերդաստանը, շարուել են [illegible] տակը՝ բերան փակէք անելու։

Այստեղ աչա նահապետական սուրբ աւանդութիւնը պարզ փայլում է. տան նահապետն իւր լիազօր իրաւունքի մէջն է. ամէնքը նորա աչքին են նայում, նրանից ակնածում։ Իսկ մեր պապը՝ քաղցրութիւնն ու սէրը երեսին՝ չէ թէ այս անցեալ երկու շաբաթուան նման աղաղակներով ու հարայ-հրոցներով է դիմաւորում պասին, քաւ լիցի. նա համեստ և զուարճալի բարոյական առակներով՝ յիսուն օրուայ հիւր եկող մեծ պասի վերայ խօսելով, բարիկենդանի ուրախութիւնները գժութիւն համարելով՝ գովում է պասը։

Մեր ծերունին որտանց ուրախ է. նա ոչ մի օր իւր չորս կողմն այսպէս հաւաքուած չի տեսել իւր ընտանիքը և մերձաւորները. այսօր նա միայն իւր փոքրիկ գերդաստանի հետ չի սեղան նստել. նա բազմել է այն սեղանի գլխին, որի չորս կողմը իւր մերձաւոր ազգականներն են շարուած։

Բաժանուած փոքր եղբայրներ, հօրեղբօր որդիք, ամուսնացած աղջիկներ իրանց այրերի և զաւակների հետ, բոլորը՝ բոլորը հաւաքվում են իրանց ազգապետ ծերունու մօտ՝ նորա օրհնութիւնն առնելու՝ նորա հետ միասին բերան-փակէք անելու։

Ծերունու տանը ոչինչ նոր պատրաստութիւն չի տեսնուելու. ամէն եկող գերդաստան իւր հետ բերում է բարիկենդանից մնացած ուտելիքները և մի կաւ գինի ու խառնում նորանց տան եղածի հետ։ Այս երեկոյ վառարան չ'պի-

տի վառուի, պապոնց վառարանից միայն ծուխ պիտի բարձրանայ, այն էլ բերան—փակէքի ձուաձեղն անելու համար։

«Աղջկերք, տղերք, հէնց որ կերթաք պապոնց, ամէնքդ էլ պապի ձեռը պաչեցէք ու ասացէք. «Շնորհաւոր բարեկենդան։»

Ի՜նչ ուրախութեամբ սերընդի նահապետը գրկում է իւր սիրելիներին և աչքերը դէպի երկինք բարձրացնելով՝ օրհնում վերին նախախնամութիւնը և աղօթում, որ արժանացնի իրան նորանց մի բուռն հողին։

—«Պապի ջա՜ն, մի առակ ասե՜ս։»

—Դէ թող թուշիցդ պաչեմ։

Երեխան թուշը դէմ արեց. պապը մկան ու կատուի առակը պատմեց։

—«Պապի ջա՜ն, ինձ համար էլ ասա՛։»

—Դեռ կաց. այս մէկը Գրիգորիս համար եմ ասում։

—«Պապի ջա՜ն, բա՛ ինձ համա՞ր։

—Դեռ այս լսի՛ր, աղուէսի ու հաւերի առակն էլ քեզ համար եմ պատրաստել։

—«Պապի ջա՜ն, բա՛ ինձ համա՞ր. ագատ բարձրանում է մի երեք չորս տարեկան մանուկ—մեծ աղջկայ տղան—պապի ծնգանը նստում ու մօրուսի թելերի հետ խաղում։

Յանկարծ պապը բերանը մօտեցնում է նորան և ատամներով բռնում սիրուն տղայի փափլիկ կուռը։—Ամէնքը ծիծաղում և ուրախանում են։

«Իմ կո՛ւռն էլ, իմ կո՛ւռն էլ, պապի ջան, իմ կուռն էլ կծի՛ր։»

—Չէ, քո կուռը պահի՛ր, ոչխարներ պիտի չինեմ կռանդ վերայ։

Էլի երեխաների կչկչոցը տունը բռնում է։

Մեծերն էլ կամաց կամաց մասնակից են լինում այս անմեղ զուարճութիւններին։

Բաւական միջոց անցկացաւ և առակը մոռացուեցաւ։

—Վա՜յ, առակը կիսատ մնաց, աղուէսը կը խռովի։

«Հա՛, հա՛, պապի ջան, առակն ասա՛, առա՛կը։

—Որտեղ մնաց, մտիցս ընկաւ։

«Ը՜—ը՜—ը՜, վա՜յ, մոռացանք։»

—Դէ, մտքամոլորներ, ասենք ես եմ ալևորել, դուք ինչի պիտի մոռանայիք. ամօ՛թ քեզ, Մկրտիչ, այս քո առակն էր՝ ով մոռանար, դու չ՚պիտի մոռանայիր. պիտի մտքումդ պահէիր։

«Է՛լ յետ գլխի՛ցը՝ պապի ջան, էլ յետ գլխի՛ցը։

—Գլուխն էլ մտքիցս թռաւ. մինչև որ հերթով մի մի համբոյր չ՚տաք, միտս չի գալ. ով շուտ թուշը դէմ կ՚անի, նորա համար կ՚ասեմ։

Միմեանց յետ մղելով՝ երեխայքն ուրախ ուրախ պապի գիրկը և ուսերը հեծան և աշխատում էին երեսները շուտ մօտեցնել նորա բերանին։

—Է՛լ չեմ ասում, համբուրելուց յետոյ հրաժարվում էր պապը. սոված փորս վէց-վեց է անում. դէ գնացէք՝ տատին ասացէք, թող հացը քաշի՝ միքիչ փորներս լցնենք, հացից յետոյ շատ բան ունիմ պատմելու։

«Չէ՛, չէ՛, խաբում ես, այսօր բարեկենդան էր. ամբողջ օրը կերել ես. մենք սոված չենք. ա՛յ ջէբումս գաթի կտոր ունիմ, ախորժակ չ՚կայ, որ ուտեմ. կամենաս քեզ տամ։»

—Չէ՛, ես հաց ուտել եմ ուզում. կերակուրները կը մընան, վաղը դէն կածենք, շներին կըտանք։

—«Տատի ջան, դէ դու էլ շուտ արա՛, նոր կերակուր հօ չես եփելու, էլ ինչ ես ուշացնում. փոքրիկ շրթունքներն ուռեցնելով՝ քաշքշում են տանտիկնոջ փեշերը մեր գառնուկները. պապը քաղցած է. ի՜նչ անկուշտն է. բոլոր բարեկենդանին շարունակ ուտում է ու դեռ ասում է, թէ փորս մի կողմը դատարկ է։»

—«Էլ քունջ ու պուճախ մի՛ ընկնէք, ինչ ունիք չունիք բերէք, մէջ տեղը լցրէք ու դուք էլ նստոտեցէք. այս երեկոյ մի հալալ հաց ուտենք, բերան - փակէք անենք՝ էլ ո՛վ կենդան, ո՛վ մեռած մինչև միւս տարի», հրամայեց պապը ու ամէնքը միասին շարուեցան։

—«Ա՛յ պառաւ, դու այնպէս նստիր, որ կէս երեսդ մեր կողմը լինի, կէսը՝ հարսների. դու երկու տխռանի ես», կատակ անելով ասում էր պապը իւր կնոջը։

Տղամարդկանց քամակին շարվում են հարսն ու աղջիկները և երեսները միւս կողմը դարձրած՝ քամակները դէպի այր մարդիկը, ընթրում են։

—Ա՛յ կնիկ, այսքան բանը որ մեր առաջն ես լցրել, այդ ջահել—ջհուլին ինչ է մնացել, հոգում էր պապը։

—Տօ, ճար կտրածի մա՛րդ, այստեղ այնքան է թափած, որ մի շաբաթ էլ բարեկենդան լինէր՝ չէր հատնիլ. մի տես քանի տնւոր ենք. ամէն տանից էլ եկել է. մի առող լինի՝ այսքանը բերում էիք՝ թէ ինչ։

Սեղանի վերայ ևս կարճ կարճ ծիծաղաշարժ ասացուածներ են լինում։

—Դուք էլ հօ փոքրիկ հարսներ չէք, յանդիմանում է պապը այր մարդկանցը. մենակ ես հօ չ՚պէտք է խօսեմ. ինչ էք բերաններդ հուպ տուել. երևի մի մի բան էլ դուք կիմանաք, ասացէք էլի։

Ուրախութիւնն ընդհանրանում է. արձակուրդ է. պապը հրաման տուեց. ամէնքն ինչ սրախօսութիւն գիտեն՝ գործ են դնում։

Հարսներն էլ փառ — փառ ծիծաղում են։

— «Դէհ, ով խաղ գիտէ, չ՚պահի։

Ամէն մարդ իւր շնորհքը բանեցնում է։

—Դէ, ա՛յ կնիկ, վերկաց, վառարանը վառիր, բերան—փակէքի ձուաձեղն արա՛, հացը վեր քաղենք, երեխայքը մի փոքր ուրախութիւն անեն։

Տանտիկինը մէջ տեղ բերեց մի հաստ ձուաձեղ։ Ամէն մարդ մի մի պատառ վերցրեց, բերանը դրեց. ծծի երեխաների պռօշներին էլ որդեսէր մայրերը քսեցին և պապը մի երկար օրհնութիւն ու քարոզ սկսեց։

— «Տարուան մէջը շատ ուրախ օրեր են գալիս, գնում» ասաց պապը՝ մի թաս գինի ձեռքին բռնած, «զատիկ, ջրօրհնէք, հինգ նաւակատիք, ես ինչ գիտեմ, որ մինն ասեմ, մենք այդ օրերին էլ ուրախանում ենք. բայց ձմեռուայ տօնային գործերի թեթև ժամանակամիջոցին մեր պապերը սահմանել են բարեկենդանը, որ ամէն աշխատանք թողնենք, ուրախութեան հետ լինինք։ Ինչ գժութիւններ արինք, ինչ կերանք, ինչ խմեցինք, վերջացաւ, պրծաւ. յիսուն օր մեծ պաս է գալիս, ինչքան որ պարապ օրեր ենք անցկացրել, այս եօթը շաբաթուան մէջ պէտք է փոխարէնը հանենք։ Վաղը միւս օրը աշխատանքի օրերը դուրս կը գան. պէտք է ամէն մարդ իւր Աստուծոյ անունը տայ, գլուխը քաշ՝ իւր աշխատանքին կենայ, որ Աստուած էլ նորա ճակատի քըրտինքն օրհնի, նորա վար ու ցանքին, նորա անդ ու անդաստանին, նորա այգիներին լիութիւն, առատութիւն տայ։ Այս երեկոյ ձուով բերաններս փակեցինք, մինչև զատիկ շաբաթ երեկոյ ո՛վ ապրի՝ թող տեսնի, կարմիր ձուով Քրիստոսյարեաւ անենք։ Աստուած այսպիսի ուրախ սրտով, ցամաք աչքով զատկին արժանացնի ամէն հայ-քրիստոնէի, նորանց բաղդերն էլ ձեզ, իմ որդիք, ձեր զաւակներով, ձեր ընտանիքով։ Մօտ եկէք, զաւակներս, ամէնքիդ էլ համբուրեմ։ Բարով դուք էլ իմ օրը դառնաք, շատ շատ տարիներ այսպէս ուրախ սեղան բաց անէք, փեսաների, թոռների, ծոռների տէր դառնաք, ձեր զաւակների կարմիրը կապէք։ Ա՛յ հարսներ, ա՛յ աղջիկներ, շատ ապրիք, հնազանդ լինիք, դուք էլ պառաւիք

ու ձեր տատի պէս որդով—թոռնով հացի նստիք. բարով սև օրեր չ՚տեսնէք. ձեր սև օքերն այսօրուան պէս լինին։ Ինձ ու իմ պառաւին էլ ձեր ձեռովը հողը դնէք, որդիք, ձեր մի բուռը հողին արժանանանք։ Երկնային թագաւորիցն էլ խնդրել եմ անարժան բերանովս, որ մեզ իւր արքայութեանն արժանացնի. ամէն։»

Անխտիր ամէնքը վերկացան, պապի ու տատի ձեռքը համբուրեցին. տորանք էլ նոցա երեսները պաչեցին և սեղանը հաւաքուեցաւ։

84. ՄԵԾ ՊԱՍԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Մեծ պասի երկուշաբթի առաւօտը՝ ծէգելահան, ամէն պառաւ տանտիկին տեղից շուտ կը վերկենայ, տան միւս անդամներին կը զարթնացնի, տղայ—մարդկանցը ժամ կ՚ուղարկի, կնիկ—արմատներին էլ կը հրամայի պղնձ-կարգը ցած բերել, պասահան կ՚անի, ուտիսի հոտը միջից կը կտրի ու խստակ խստակ լուացած՝ տեղերը կը շարի։

—«Աղջիկներ, մի սոխ ու եօթը փետուր բերէք, կը հրամայէ տանտիկինը, և սոխի վերայ եօթը փետուր կարգով կը շարէ սայլի անիւի ճաղերի նման ու իւր ձեռքովը կը տանէ՝ տան երթկից կը կախէ։

Եօթը փետուրը պասի եօթը շաբաթն է. ամէն կիւրակէ մի մի փետուր պիտի քաշեն սոխի վերայից, վերջին փետուրն էլ ծաղկազարդին կը հանեն և դա նշան է, որ պասը վերջին է հասել, զատկի հոտը փչում է, կարմիր ձուն ներկելու օրերն եկել են։

—«Ձեզ մատաղ, աչքներդ երթկին գցեցէք, ասում է տանտիկինը սոխը կախելուց յետոյ. շնորհաւոր մեծ պաս, բարով զատիկ հասնենք, ուրախ սրտով, ցամաք աչքով, պապին շընորհաւորեցէք, տեսէք՝ թևաւորուած ոտները կախ արեց մեր

երթկովը, ծանր ծանր նստեց. բարով պապի փետուրներն էլ պոկելով՝ տկլորացնենք, կեանքը լոբի պոչ շինենք, յետ տածենք—քշենք, գնայ քարափների տակին թագկենայ *)։

Մեծ պասի երկուշաբթին հայ գիւղացու համար շատ մեծ և նշանաւոր օր է. նոքա զատկից պակաս ուրախութեամբ չեն դիմաւորում մեծ պասին. նոքա այսօր պաս շնորհաւորելու ունին։

Առաւօտեան՝ ժամումը «լուացարուք սրբեցարուքը» լըսելուց յետոյ, ամէնքը տնետուն կ՚ընկնեն և միմեանց համբոյրներ տալով՝ կը շնորհաւորեն մեծ պասը։

Նորափեսաներն էլ, որոնք այս ձմեռ պսակուել են, այսօր շատ մեծ գործի վերայ են։ Սորանցից մինը Մաթումենց Սահակը, այսօր իւր խաչեղբօրն ու փեսեղբօրն առած, իւր նորափեսայութեան հանդերձը հագած, մի կաւ գինի և մի ափսէով չոր միրգ փեսեղբօր ձեռքը տուած, գնաց իւր աներանց տունը՝ նրանց պասը շնորհաւորելու։

Սաթումենց տանն այսօր մեծ հրաւէրք է. նորահարսի համար պէտք է այսօր պասուան բաժին գար իւր մօր ու բոլոր բարեկամների տներից. այսօր նորահարսը պիտի հաւաքէր իւր բոլոր ընկերուհիներին և նրանց հետ պաս բռնէր։

Աներոջ ձեռքն ու զոքանչի կուրծքը համբուրելուց յետոյ, մեր նորափեսայ Սահակը իւր ընկերներով նստեց փուրստու վերևի կողմը։

—Ա՛յ կնիկ, էլ մի յետացնիր, երեք ժամ մի ծուծուացնիր, տնօրինէց Սահակի աները. ես գիտեմ՝ այսօր խեղճ փեսայիս քաշ պիտի տաս քո բարեկամների դռներին. այնքան ազգ ու ընտանիք ունի, որ Մողնի գիւղի նախրիցը շատ են. մինչև երեկոյ հացիւ կը պրծնեն խեղճ տղայքս. բեր սրանց պարգևը։

---

*) Տան. կարճացնենք, ճիչպէս որ լոբի պոչը կարճ է։

Սահակի զոքանչը բերեց մի զույգ խորասանու նախշուն գուլպայ, դրեց պատուաւոր հիւրերի առաջը՝ իսկ փեսային՝ բացի գուլպան, մի բաղդադի ալլուխ էլ, վիզը փաթաթեց և թուշը համբուրեց։

—Դէ, հրամայիր, խնամի, խօսեցաւ փեսեղբայրը. տեսնենք քանի տուն ենք սրա շնորհաւորէք գնալու. այսօր մենք քո ստրուկներն ենք. ժայռից էլ որ վայր գցես՝ լսելու ենք։

—Բարով դու էլ այսօրին արժանանաս, զաւակս, օրհնեց նորան Սահակի զոքանչը, և սկսեց մէկ մէկ համարել իւր մերձաւոր բարեկամների տները։ «Ձեզ մատաղ, չմոռանաք, աւելացրեց նա, թէ չէ էլ մեր ազգականների ձեռքիցը պրծնիլ չեմ. կ՚առնեն Տողակաթը արժան չտեսաւ իւր փեսին մեր տունն ուղարկելու։

—Դու միամիտ կաց, խնամի ջան, մենք ամէնքի տունն էլ կայցելենք, ասաց փեսեղբայրը և միւսների հետ դուրս եկաւ գնաց խնամոնց բոլոր բարեկամների պսակը շնորհաւորելու։

85. ՅԻՄԱՐ—ԻՄԱՍՏՈՒՆՔ

Այսօր, որ աւագ երեքշաբթի է, մեր գիւղի որ փողոցովն անց ես կենում, կնանիքը մի մի փայտէ խնոցի ուսներին դրած, փողոցէ փողոց են ընկել. բան ու գործը այսօր է մտքներն ընկել. ամէն կողմից խնոցի հարելու ձայն է գալիս. ամբողջ մեծ պասին, թէ կուզ երբ ասես հարած լինին բայց վերջին հարը այսօր պէտք է տան, թէ չէ վաղը՝ որ չիք չորեքշաբթին վրայովն անց կենայ, կարագը կը չքուի, թան կը կորուի. այսօր պիտի հարեն, որ աւագ հինգշաբթի օրուան համար նոր կարագ վեր առնեն, որ ժամհարը հաւաքելիս՝ իրանք էլ տան, որ իրանց կովերը կաթնալի, խինալի լինին, եթէ ոչ պտուկը կը քոռանայ։ Այսօր մինչև

երեկոյ խնոցաբանի են։ Իրիկնապահին՝ որ խնոցուց պրծան, նոր կերակուրը կ՚եփեն, անուշ կ՚անեն. յետոյ վեր կը կենան, նոր շորերը կը բերեն, կը հագնեն, կը նստեն քուրսու տակին։ Հէնց որ զանգակի ձէնը զնգացրին, կարմիր ծուղէքը կը քաշեն ոտները ու դէպի ժամը։

Ժամի ժամանակ Սօսն էլ հագաւ շորերը և գնաց ուսումնարան՝ Գարեգին վարժապետի մօտ, տեսաւ որ նա էլ յիմար իմաստունի թղթերը գրոտել էր տասը հատ՝ հինգի վերայ իմաստուն, հինգի վերայ յիմար։ Ժամը որ տուին՝ Գարեգինը աշակերտներին առաւ գնաց ժամ։ Հէնց որ վերջին աւետարանն սկսեցին կարդալ, վարժապետը տասը երեխանց շապիկ հագցրած՝ տարաւ աւետարանի տակին կանգնացրեց և ամենի ձեռը մի մի մոմ տուեց։ Հէնց որ քահանան հասաւ այն տեղը, որ ասում է՝ «Յայնժամ նմանեսցի արքայութիւնն երկնից տասն կուսանաց», թղթերը բերեց և բաժանեց մանուկներին։ Իսկ երբ որ կարդաց՝ «հինգն ի նոցանէ յիմարք էին և հինգն իմաստունք», բաց արեց մանուկների թղթերը և որը իմաստուն էր ընկել, այնտեղ թողեց կանգնած մինչև աւետարանի աւարտը, իսկ որը յիմար էր, կռնիցը բռնեց՝ հեռացրեց։ Վարպետ Փառնաւուզն էլ, որի բերանումն ատամ չէր մնացել, երկու անգամ ամուսնացած, եօթը որդատէր մարդ, մուր էր շինել, ձեռին բռնել. իւր ծերութեանը գոնէ պատիւ չտուեց, այդ յիմար ընկնող մանուկներից որին պատահեց, երեսները քսեց, սևացրեց։ Բայց երեխաներից մինն էլ նորա հախիցն եկաւ. մի բուռը մուր վեր կալաւ ամանից ու նորա սպիտակած մազերը սևացրեց, նորան ջահելացրեց։ Երեխանցը ոչինչ վնաս չեղաւ, բայց ինքն ամաչեց—ով եղաւ, վերան ծիծաղեց, որ մանուկների խելքովն է ընկել։

86. ՁԻԹ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ։

Զորեքշաբթի գիշերը՝ լոյս աւագ հինգշաբթի, դեռ Ադամայ մութը չէր կոխել, Սօսի մայրը ճրագը վառեց, Սօսին անուշ քնից վեր կացրեց. «վերկա՛ց, ասաց, ա՛ռ կացինդ, անխօս գնա՛ մեր պահունի խնձորենու, մեղրակենի տկլոր ծիրանենու, և մեծ մալաչի տանձենու արմատին երեք անգամ կացնով տո՛ւր։ Այսօր աւագ հինգ շաբթի է. ասա՝ պտուղ ես տալիս, տո՛ւր, թէ չէ, կտրում եմ։ Ահա՛ տասը տարի է, երեքն էլ, չ՚գիտեմ աչք է դիպել, թէ ինչ՚ից է, մի հատ պտուղ չեն տալիս. ողորմած հոգի հայրդ ձեզ պէս աշխատաւոր էր, ա՛յ, անխօս ամէն տարի այսօր վեր կը կենար՝ կ՚երթա՛ր, ծառ չէր թողալ, կ՚տար կացնով։ Քանի լուսահոգին կենդանի էր, ամէն բարութիւններս էլ կար. ինքը մեռաւ, եղած չեղածն էլ հետը տարաւ։ Սօսը անխօս վերկացաւ, առաւ իւր ծայրը պողպատած (զօդած) կացինը, կապեց իւր երախակալը փղոսկրեայ դաշնակը և մտքումը մի երկու անգամ Աստուծու անունը տուեց ու ծէգաբացին, ոչ խեր արած ոչ շառ, եափունջին վրան գցեց ու գնաց հասաւ այգին։ Ամենափոքրիկ տնկից սկսած մինչև ամենամեծ ընկուզենին՝ ամէնին երեք-երեք անգամ զարկեց և ասաց. «Բար ես տալիս, տո՛ւր, թէ չէ՝ կտրում եմ։ Յետոյ միտքն ընկաւ, որ այսօր եթէ վայրենի գաղձը (անանուխը) ճմբով հանես և շուռ տուած, արմատները դէպի վեր, տնկես, կը փոխուի՝ ռեհան կը դառնայ։ Այս պատճառով էլ՝ գնաց մի քանի ճիմբը կտրեց դաղձալի տեղերից, բերեց մի քանի տեղերում շուռ տուած տնկեց, որ ռեհան դառնայ։ Երբ որ տեսաւ, որ փոքր է մնացել, որ առաւօտեայ ժամը տան, այն է՝ ծէգծէգում է, յետ դարձաւ տուն։

---

87. ՈՒԹԻ ՈՒՐԲԱԹ։

Ութի ուրբաթ գիշերը՝ աքլորականչից առաջ, դարբինները անխօս եկան իրանց դուքանները բաց արին, զնդանին երեք անգամ մրճեցին, որ Արտաւազդի շղթան հաստանայ և նա չ՚կարողանայ դուրս գալ, աշխարհը քանդել, տակն ու վրայ անել։ Զնդանին խփելուց յետոյ, նոյնպէս անխօս, ինչպէս եկել էին, դռները փակեցին ու գնացին ժամ՝ կոչակը լսելու։ Այդ գիշեր՝ Քրիստոսի թաղման առիթով, պէտք է սուգ անէին և կոչակը կարդային եկեղեցում։ Բայց ով էր Արտաւազդը, որի շղթաները հաստացնում էին դարբինները։

Արտաւազդը Արտաշէս թագաւորի որդին էր։ Արտաշէսը Հայոց հզօր թագաւորներից մինն էր։ Ժողովուրդը Աստուծու չափ սիրում և պատւում էր նորան։ Երբ որ Արտաշէսը մեռաւ, ժողովրդից շատերը յօժարակամ նահատակեցին իրանց, որ այդպիսի թագաւորից յետոյ էլ կեանք չ՚տեսնեն։ Թագաւորի աւագ որդուն շատ էլ դուր չեկաւ ժողովրդի ցոյց տուած այդ անսահման սէրը. նա նախանձեցաւ հօր փառքին։ Թաղման հանդէսը կատարելիս՝ նա կանչեց հօր քամակից. «Երբ որ դու գնացիր, բոլոր աշխարհը քեզ հետ տարար. արդ՝ ես աւերակների վերայ ինչպէս թագաւորեմ։» Բարկացաւ հանգուցեալը. նորա ուրուականը գլուխը շարժեց և վրէժխնդրութեամբ անիծեց Արտաւազդին. «Որովհետև դու նախանձեցիր քո հօր փառքին, ապա երբ որ դու ազատ Մասիսն ի վեր որս անելու կ՚երթաս, թո՛ղ բռնեն քեզ քաջերը և տանեն Մասիս սարի անդունդները. այնտեղ մնաս միշտ և լոյս չ՚տեսնես։»

Արտաւազդը քաջ և կատաղաբարոյ երիտասարդ էր. նախանձ էր, որ նորան կուրացրեց և ոչ թէ փոքրոգութիւ-

նը։ Նորա քաջութիւնից երկիւղ կրելով՝ ասում են, վիշապները նորան կախարդել էին։ Հօր մահից մի քանի տարի յետոյ՝ մի օր Արտաւազդը որս անելու գնաց Մասիսի ստորոտներում։ Վարազների յետևից արշաւելիս՝ նա ընկաւ խոր խորխորատի մէջ իւր երիվարով և հաւատարիմ շներով։ Նորա անակնկալ կորուստը այնպէս մեկնեցին, իբր թէ հօր անէծքը կատարուեցաւ, իբր թէ Մասիսի քաջերը հասան, բռնեցին և երկաթէ շղթաներով կապկպելով, մի այրի մէջ փակեցին։ Նորա երկու հաւատարիմ շները մինչև այսօր էլ կրծում են նորա ոտների շղթաները, որ նորան ազատեն։ Զայրացած արքայազնը, հէնց որ ազատուի, մի ակնթարթում պիտի կործանի աշխարհը։ Բայց ինչքան որ աշխատում են հաւատարիմ կենդանիները, այնու ամենայնիւ նոցա տէրը չի ազատվում. ուստի ուրբաթ գիշերը, երբ մի փոքր է մնացած լինում, որ երկաթը կտրուի, դարբինները երեք անգամ զարկում են սալին և այն րոպէին Արտաւազդի ոտների շղթաները իրանց առաջուան հաստութիւնն են ստանում։

Այսքան ուժ ունի ահա՛ հօր անէծքը որդու ապագայի վերայ։

88. ԴՐԸՆԴԷԶ։

Հայաստանի հին սովորութիւններից մինն է և դրընդէզը, որ առաջ հայ գիւղերում կատարվում էր մեծ հանդիսով, իսկ այժմ տարէց տարի կորցնում է իւր նշանակութիւնը։ Դրընդէզի հանդէսը կատարում են մեծ պասի վերջին շաբաթը, Տեառնընդառաջի տօնին։ Այդ օրը ժամը դուրսն են ասում։ Եկեղեցու բակումը մի ահագին դրընդէզ է շինած՝ որ համարեա մի խոտի դէզի չափ է. բոլոր նորափեսայքը շարուած են նորա չորս կողմը, ձեռներին մի մի մոմ բռնած։ Երբ «Քրիստոս Փառաց Թագաւորն» երգում են, տէրտէրն

առաջինը մօտենում է դրընդէզին և վառում. մօտենում են նորա հետ և բոլոր փեսաներն ու խոտը վառում։ Հուրը բորբոքվում է և ժամաւորների ջերմեռանդութիւնը կրկնապատկվում։

Ժամերգութիւնից յետոյ՝ նորափեսայքը նոյն մոմերը ձեռներին, առանց հանգցնելու, իրանց խաչեղբօր ու փեսեղբօր հետ գալիս՝ բարձրանում են իրանց կտուրները և երեք ծունր կրկնելուց և իրանց մտքումը որ և իցէ մի ուխտագրութիւն անելուց յետոյ, վառում են իրանց դրընդէզները։

Նորահարսներին առաջուց չարսաւաւորած կանգնեցնում են կտրին. դրընդէզը կպցնելուն պէս՝ ամէն նորափեսայ բռնում է իւր սիրելի հարսի կուռը և երեք անգամ վառուած կրակի գլխովը պտոյտ է գալիս։ Այդ [illegible] չ՚լինելու համար է։

Մանր երեխայքն էլ, որոնք կտրները լցուած, ատամները սրած՝ փոխինձ ուտելու էին սպասում, անվախ թռչկոտում են բոցավառ կրակի գլխովը։

Մի հիանալի տեսարան է ներկայացնում գիւղը այդ երեկոյ մօտիկ հանդիսականներին. երկինքը շառագունում է. լոյսը մինչև հորիզոնն է խփում՝ և խառնուելով երեկոյեան վերջալուսի հետ՝ կարմիր ծիրանի գոյն է տալիս առաջդ ձգուող պատկերին։ Միևնոյն բանը հեռուից դիտողին բոլորովին այլ կերպ է երևում. բոլոր գիւղը կարծես հրդեհի մէջ է. տանիքներից բարձրացող ծուխերը խառնվում են միմեանց հետ և բոցի հրեղէն լեզուները օձի պէս դուրս են ձգվում նոցա միջից։ Ի հարկէ այս երկիւղը մի քանի րոպէ է տևում։ Չոր խոտը մի րոպէի մէջ բոցի կերակուր է դառնում, և ամէն բան վերջանում է։

89. ԱԽԱՌ։

Ձմեռուան պղտոր օրերն անցնում են. մեծ պասը բե-

րում է իւր հետ Արարատեան դաշտի համար ջերմ և պայծառ արեգակը. ձիւները հալւում՝ առուներ են կազմում. գետերը բարձրանում են. գետինը կակղում, կանաչում է. հազար տեսակ բուսեղէնների ու բանջարեղէնների հետ՝ դուրս են գալիս գիւղացոց աշխատանքի քաղցր և կարևոր օրերը. երկրագործն իւր գութանն է սարքում և մաճը բռնած՝ դաշտը հերկում. այգեգործն իւր բահն ու հոտոցն է սրում և այգին մշակում, թաղած տեղից Ղազարոսի յարութիւնը տալիս մեռած խաղողի բարունակներին և հոտոցն առնում, աւելորդ մասները կտրատում: Գիւղացի կանանց գործն էլ շատացաւ. առաւօտաղէմ շուտ հաւաք-տեղակ են անում տունը և մշակաւորների համար ճաշ-կերակուր պատրաստում, մատաղահաս հարսների ու աղջիկների հետ ուղարկում հանդը կամ այգին. հարսներին էլ պատուիրում են, որ հացը վերցնելուց յետոյ՝ աղցան քաղեն իրիկուան բանւորների համար: Պառաւ կանայքն ու անգործ ծերունիքն էլ ուրախացել են. ժամերն երկարացել են, օրը երեք անգամ փայտը սիւն տալով ժամ են գնում, «տէրողորմեան» քաշերով դուրս գալիս, և տէրտէրի ու իշխանների հետ քաղցր զրոյցներ անելով, տուն դառնում, արևկող տեղերում նստում և Աստուծու բարիքը — արևի տաքութիւնը վայելում:

Բայց ահա մօտենում է վերջին շաբաթը և գիւղի քահանան հրաւիրում է ժողովրդին, որ ամէն տարուայ պէս, այս տարի էլ «խաչ»-ի հոգսը քաշեն:

— «Օրհնեալ ժողովուրդ, քարոզում էր տէրտէրը վեցերորդ կիւրակէին. գիտէք որ մեր պապենական սովորութիւնն է՝ զատիկ կիւրակէ առաւօտեան հայ քրիստոնեան պէտք է ծէգելահան ախտաւի մսով բերանը բաց անի. շաբաթ երեկոյեան նաւակատիկ ենք լինում, մսեղէն չենք ուտում. այն քրիստոնեան, որ ախտաւով չ՝մասնաւորուի, ամբողջ տարին իրաւունք չունի մսի համ տեսնելու: Ախտաւի եզը որ կայ՝ հայ-քրիստոնէի նշանն է. մենք էլ հօ, փառք Աստուծու, հայ-քրիստոնեայ ենք: Դէ որ այդպէս է, ժամից յետոյ դռանը հաւաքուեցէք, երեցփոխանին ընկեր երկու մարդ ջոկեցէք, որ նրանք ախտաւի համար փող հաւաքեն՝ զատիկ կիրակի մորթելու համար: Աստուած ձեր քսակի բերանը բաց պահի. որդիք, լիաբուռը տուէք, մի խնայէք, էլի ձեր վերայ պիտի բաժանուի, աղքատ — տնանկ պիտի ուտեն, եթէ որ մի բան էլ փողից կամ կաշուցը կը մնայ, այն էլ եկեղեցու, տէրտէրի բաժին կերթայ, էլի վարձքը ձերը կը լինի: Օրհնեալ էք և օրհնեալ եղերուք, ամէն:»

Խէչանեանց Խէչանը, թէպէտ ոչինչ բանի չէր խառնւում, բայց իւր մէջ ուխտ էր արել, որ ամէն տարի ախտաւի փող հաւաքողներից մինն էլ ինքը լինի: Այս տարի էլ իւր պաշտօնը շատ արիութեամբ կատարեց:

90. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ:

Վարդավառի շաբաթ օրն էր: Գարեգինն ու Սօսը կէսօրուան շոգի ժամանակ երեսների քրտինքը սրբելով, ձորամիջի ջրումը լողացած, տնքալով, քրտնաթաթախ դուրս էին գալիս ձորից: Հեռուից նկատեցին, որ ուխտաւորների մի մեծ բազմութիւն Երևանի կողմից ուրախ ու զուարթ ձի հեծած՝ արշաւում են դէպի Ս. Կարապետի վանքը, դատարկելով իրանց հրացանները և օդը թնդացնելով:

Երբ մօտ եկան սոցա, Գարեգինը ոչ մէկին չ՝թողեց անցկենալու. քաշեց իրան ծանօթ բարեկամ Հրաչեայի ձիու սանձն ու դիմեց դէպի իրանց տունը: Դրան առաջը ճանապարհորդները իջան ձիաներից և բակումը նստեցին մի կապերտի վերայ, հով տեղում:

—Մի քիչ սառը ջուր չունի՞ք, ասաց Հրաչեան:

Իսկոյն ներքնատնից հանեցին մի այնպիսի սառը ջուր, որ կարծես Ջրօրհնէքին լինէր լցրած:

Հէնց խմեց Հրաչեան, «Օխա՜յ, ասաց, ակդ օրհնուի. քո պատճառ դարձողի հոգին դրախտական լինի. ես այսքան ման եմ եկել, լաւ ջրեր շատ եմ տեսել, բայց այս օրհնուած Աշտարակի ջրի պէս մաքրական ու քաղցր ջուր ոչ մի տեղ չկայ: Վարդավառ շաբաթ օրն այսպիսի ջուր. Երեւանայ երկիրը քանդես՝ չես գտնիլ. Աբարան շատ աղբիւրներ կան, Ալագեազ շատ քաղցր ջրեր կան, բայց ոչ մէկը սորա պէս մաքրական չէ. Ամբերթը գոված ջուր է, բայց սորա խումը չունի»:

— Մեռնիմ սուրբ Ականատեսի զօրութեանը. նա մեր գիւղի համար այս լաւութիւնն է արել, ասաց Գարեգինը. Կարբու ներքեւից գետիցը զաւազանն առել է, աղօթք անելով ճանապարհ է ընկել և առաջ գնալով դէպի ցած, ուր զաւազանը գետնին է դիպել, լայն առու է գոյացել, ջուրը հետն եկել է, ինչպէս որ ուլերը մարդու ետեւիցը. որտեղ ապառաժ քար է եղել, զաւազանով խփել երկու կտոր է արել, կամ մէջիցը ծակել, ջուրը անցկացրել, մինչեւ բերել հանել է գիւղատեղը: Նոր յետոյ կամաց կամաց մարդիկ են եկել, տեսել են՝ ջուր կայ, գիւղ են շինել, որ ահա այս աննման Աշտարակն է: Ինքն էլ վերադարձել գնացել է Սաղմոսավանք՝ ճգնութիւն անելու. մեռնիմ նորա լոյս գերեզմանին. մենք նորան շատ ենք պարտական. նորա սուրբ գերեզմանը հիմա էլ Սաղմոսավանքի եկեղեցու մէջն է և մեզ համար աղօթք է անում:

Գարեգինը հիւրերին նստեցրեց և գնաց կախանոցից լաւ, ընտիր խաղող դուրս բերեց, լուաց սառը ջրով ու դրեց նոցա առաջը. «Հրամեցէք, ասաց, ներեցէք, որ չեմ կարողանում լաւ հիւրասիրել ձեզ. տանը ոչոք չկայ, ամէնքը այգին են գնացել»:

Խաղողը ուտելուց և մի փոքր հանգստանալուց յետոյ Հրաչեան ձայն տուեց. «Դէհ, տղէք ջան, վե՛ր կացէք, մըթնում է արդէն. շնորհակալութիւն, սիրելի Գարեգին, Աստուած օջախդ հաստատ պահի»:

Ամէնքն էլ «ամէն» ասացին, ձի հեծան և դիմեցին դէպի Հանավանքը:

Հետեւեալ առաւօտը, արեգակը նոր էր ծագել, դեռ այնքան զօրութիւն չունէր, որ մարդու աչքերը ծակծկէր, Աշտարակայ ուխտաւորներն էլ ճանապարհ ընկան: Ամուրիները խումբ խումբ իրանց հացըները կապել էին շալակներին ու առաջն էին գնում. պաս պահողներն էլ խնձորներ էին լցրել գրպանները և մուրացկաններին բաժանելով՝ վազում էին, որ պատարագին հասնեն, սրբութիւն առնեն: Բազմութիւնը այնքան մեծ էր, որ քիչ էր մնացել՝ կանանց մի տաւար Հանավանք հասնի. մինչդեռ միւս տաւարը դեռ նոր էր դուրս գալիս գիւղից: Երեխայքն էլ գրպանները խնձորներ լցրած, ձեռք ձեռքից բռնել էին ու կանանց առաջն ընկած վազում էին: Գարեգինն էլ մատաղացու ոչխարը մորթել էր տուել ու միսը լցրել մի մեծ կաթսայի մէջ:

Երբ տեղ հասան, պատարագն աւարտուեցաւ, պաս պահողները հաղորդուեցան: Սօսն էլ գնաց գործակալի մօտ, խնդրեց նորան, որ ժամարարին, միւս քահանաներին ու տիրացուներին հետն առած՝ գայ իրանց սեղանին:

Կանաչ խոտի վերայ սփռոցը տարածեցին ու սեղան բաց արին. ամէն՝ բան կար, Աստուծու բարութիւնն էլ այնտեղ էր: Հացկերոյթի վերայ լաւ ուրախ ժամանակ անց կացնելուց յետոյ՝ ուխտաւորները սկսեցին կամաց կամաց քաշուիլ գնալ: Մնացին պարտէզներում զուարճացող մի քանի երիտասարդներ. սոքա էլ կամաց կամաց գնացին ձորը, շորըհան եղան և կիսամերկ ընկան գետի մէջը. իսկ ո՛վ չէր ուզում իւր շորերի թրջուիլը, նորա վերայ ջուր էին ցանում՝ ասելով թէ. «Վարդավառ է»: Միմեանց այնքան թրջեցին, որ ջուրը ծլծլալով վերաներից թափւում էր: Լողանալը վերջացնելուց յետոյ,

գետումը ձուկ բռնելով գնում էին դէպի Աշտարակ, որ այնտեղ դուրս գան, գնան այգիներն ու դարձեալ մի լաւ ուրախ ժամանակ անց կացնեն։

91. ՈՒԽՏԱԳՆԱՑՆԵՐԻ ՄԱՍԼԱՀԱԹԸ։

Մուղնու ուխտաւորները իրանց ճլվստան սայլերով փոքր առ փոքր Էջմիածնի պարիսպը, դրսի բագը, Թղթարանի առաջը լցվում են։ Սուրբ Գէորգի տօնի շաբաթը, քանի մութը գետինն առնում էր, այնքան Մուղնու ուխտաւորը պակասում էր, Էջմիածնինն աւելանում։

Հեռաւոր ճանապարհորդներն այս ուխտին երկու փափագ են տանում. առաջինը սուրբ Գէորգն է, որ Աշտարակից երկու ասպարէզ վերև, Մուղնի գիւղումը պահապան հրեշտակի պէս հսկում է Էջմիածնայ գաւառի և Արարատեան դաշտի գիւղերի վերայ։ Երկրորդն մեր Մայր Աթոռն է, որ Սուրբ Գէորգի շնորհիւ ասենք, թէ մի ուրիշ մտքով՝ այսօր է կատարում իւր ուխտը։

Ղարսի և այլ տեղերի ջերմեռանդ Հայ ժողովուրդը, թէպէտ երեք զանազան տէրութեանց հպատակ, այդ մի իրաւունքն են ձեռք բերել շատ դժուարութիւնով, որ տարենը մի անգամ իրանց թոյլ է տրուել՝ վայր ձգել երեսի վերայ ամէն գործ ու գնալ իրանց իղձը կատարել, սուրբ Գէորգի ու Էջմիածնի հողերը համբուրել։

Նաև կարելի է, որ այս ուխտաւորներից շատերը սրտանց էլ փափագին՝ Յօշականի հանդոյն անցկենալիս, մեր Մեսրովբ բազմաշխատ Թարգմանչին և՛ մի բարև տալ, բայց ինչ հարկաւոր է իրանց նեղութիւն պատճառել, մի ժամաչափ տեղ մէկ էլ ձռուիլ ճանապարհից։ Սուրբ Մեսրովբն անյիշաչար է. Նա կը ներէ իւր որդոց ապերախտութիւնը. Նա ձեռըն առ Աստուած ուղղած, բարեխօս է Հայոց ազգի գոյու-

թեան համար. Նորա միակ աղաչանքն այս է, որ քանի աշխարհս կայ, նորա հետ էլ մշտնջենաւորուի իւր տաժանակիր աշխատանքի քաղցը պտուղը, հայերէն ա յ բ ո ւ բ ե ն ը։ Մեսրոպը մեզ համար այդ է աղօթում, թէև մենք շատ սակաւ ենք ուշք դարձնում այդ սրբազան աւանդը անմահացնողի վերայ։

Քանի՜ քանի՜ սուրբեր ունինք, որոնց տարէնը մի, երկու, երեք օր ենք յատկացրել և ջերմեռանդութեամբ ուխտ ենք գնում. իսկ Մեսրոպ Թարգմանիչը, որ ոչ միայն լոկ սուրբ էր, այլ և մեր ազգին ամենամեծ ծառայութիւն մատուցանող անձն, տարէն տասներկու ամիս աչքը կթած Յօշականումն սպասում է, որ տեսնէ թէ երբ իրան սիրելի զաւակներից մինը առանձնապէս մի օր իրան համար կը զոհէ և իւր վկայարանը ուխտ կը գայ։ Բայց շատ տարիներ են անցնում և այդ չէ պատահում։

Յարիւր տարի սորանից առաջ, Մուղնու սուրբ Գևորգի տօնին, Սուրբ Մեսրովբի վկայարանի սև քարերը իրանց դիմացից անցնող բազմաթիւ ուխտաւորներից հետևեալ խօսակցութիւնն էին լսում։

—Ա՛պէր, Օ՛սէփ ապէր, մի՛ աչքըդ դէպի այն կողմը գցիր, քեզ մատաղ գնամ. տեսնո՞ւմ ես էն ժամը, որ երևում է, էն ո՞ր սուրբն է։»

—Ա՛յ քո հասկացողութիւնդ քեզ խռով կենայ, պատասխանում է Օսէփ ապէրը. մի՞թէ չես իմանում, որ նա Թարգմանիչն է։

«Քո հօրն ողորմի, ա՛պէր, հլա մի հասկացրու՝ էդ Թարգմանիչն է մեծ, թէ Սուրբ Մուղնին, մեռնի՜մ նորա զօրութեանը», մէջ է մտնում երրորդը։

—Դէ՛ Մուղնու չափ ինչի՜ կը լինի, փոքր ինչ մտածելով և մտքի մէջ վճռաբար համեմատութիւն անելով, բացատրում է Օսէփ ապէրը. ադա Մուղնին որ կայ, բոլոր սըր-

բերի գլուխն է. մենակ սուրբ Մարիամ Աստուածածինն է նորանից մեծը, մնացողները ոնց որ քեօխլի կշտին գիւղի գզիրը։»

Ահա այսպիսի գնահատութիւն ունէր անմահ Մեսրոպը հայ ուխտաւորների, հայ գիւղացիների աչքում հարիւր տարի առաջ։ Եւ մինչև այսօր էլ նորան չեն հասկացել, նորան չեն գնահատել։

92. ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ

I.

188... թուականի մարտ ամսի 9-նն էր։ Կէս օրը մօտ էր և արեգական ճեռուցիչ ճառագայթները սփռուելով գիւղի շրջակայ ձիւնոտ դաշտերի վերայ՝ անտանելի կերպով խրտըտացնում էին մարդկանց աչքերը։ Տների և մարագների դըռների առաջ, չոր կտուրների վերայ մանուանդ, ոմանք կանգնած, շատերը ծալապատիկ նստոտած՝ հարիւրաւոր գիւղացիներ, տղամարդ և կինարմատ, մեծ և փոքր, ակնապիշ դիտում էին այդ օրը իրանց գիւղը ժամանող արագիլը, որը բազմած էր իրան փնջաձև բոյնի վերայ, մի երկայն գերանի գլխին, գիւղի արևմտեան ծայրում։ Գիւղացիների բոլորի երեսներն էլ առհասարակ ուրախութեան նշաններ էին արտայայտում։ Ծերերն էին մենակ, որոնք իրանց կարճատեսութեան շնորհիւ չ՚կարողանալով տեսնել արագիլը, անդադար այլ և այլ հարցմունքներ էին անում, թէ արդեօ՞ք ճիշդ է, ջահիլներն իսկապէս տեսա՞ն արագլի բերած կանանչ խոտը, մի՞ գուցէ կանանչ օձը կամ մողէսը նոքա կանանչ խոտի տեղ ընդունած լինին, արդեօք որևիցէ արեան նշան չ՚տեսա՞ն ջահէլները արագլի կտուցին, կանանչ խոտը մե՞ծ էր, թէ փոքր, հնդե՞ր կային նորա վերայ... Այս բոլոր հարցմունքներին գոհացուցիչ պատասխան ստանալով՝ սրատես ջահիլներից՝ կարճատես ծերերը նոյնպէս ուրախանում էին։ Հաւատալով արագլի բերած բարեգուշակ նշանին և հետևաբար առաջիկայ տարումը լինելիք երկրի պտղաբերութեան և առատութեան—գիւղացիք հետզհետէ կտուրներից ցած էին իջնում պատկից քարեայ նեղ սանդուղների վերայով, ուրախութիւններից միմեանց հրելով—հրշտկելով, միմեանց հետ զանազան կատակ ու ծաղրածութիւններ անելով։ Կէս ժամ չանցած՝ Կարգախի գրեթէ ամէն մի տան առաջ, եկայն սրահների մէջ, սկսուեցաւ գիւղական կեանքի գործունէութիւնը։ Գիւղացիներից ոմանք մարագից դուրս բերելով մաճն ու գութանը, մեծ եռանդով սկսեցին սրել դոցա խոփը, կռել, կոփել այդ գործիքների երկաթեայ զանազան մասերը. ոմանք բացի միջի թառերից վեր բերելով լծկան եզների և գոմէշների լուծն ու սամիքը՝ մաքրատում և կապկպում էին. ուրիշները մանգաղ ու գերանդի սրում, յեսանում, փոցխի և եղանի ճանկերը փոխում, տաշում, սայլ և սայլակի ցցերն ու անիւները անցկացնում, դէս ու դէն շուռ տալիս, պտտեցնում, սերմնացուցորենի և գարու ամբարների դռները բաց անում, աչքից անցկացնում, շոյում ու շոյշոյում այնտեղ եղած հաց-հատիկները։

Գարնանային յորդ անձրևների շնորհիւ դաշտերի խոտը, անցանք արօսն ու [illegible] այնքան առատ էր եղել այս տարի, որ գիւղացոց ուրախութեանն ու աշխատութեանը չափ չ՚կար։ Իսկ երբ նոքա մտաբերում էին ցանքերի առաջիկայ առատութիւնը ևս, կամայ ակամայ մի ներքին յարգանք էին զգում դէպի արագիլը, որը այդ միջոցում՝ գիւղի հարաւ-արևմտեան կողմում ձգուած ընդարձակ ճահճային խոտոցում օրն ի բուն թրև գալով՝ աներկիւղ և առատ առատ իրան որսն անելով, իրիկնապահերին գալիս էր և առօք-փառօք ձագուկների մօտ նստում։

II.

Օգոստոսն եկել հասել էր, բայց դեռ անձրև չ՚կար. ցանքերը թէև առատ էին, բայց լաւ առողջացած ու բարձրացած չէին։ Կարգախի ամբողջ հովիտը ծածկող հացաբոյսերի գլուխները արևի այրող ճառագայթների առաջ չորացել, ճկուել ու խոնարհուել էին։ Իւրաքանչիւր գիւղացի գիտում և վկայում էր, որ այդ տարին յարդը սակաւ կը լինի, որովհետև երաշտութեան պատճառով ցանքերը կարճ են մնացել։ Եթէ մինչև վարդավառ գոնէ մի երկու անգամ անձրև չ՚գայ, հացահատիկների բանն էլ պրծած կը լինի և փոխանակ առատութեան ու աժանութեան, սակաւութիւն և սղութիւն առաջ կը գայ։ Տղերի, մանաւանդ ջահիլների մէջ՝ այն յոյսը ու հաւատը, որ ունէին նոքա դէպի արագիլը և նորա բերած բարեգուշական նշանը, սկսած էր տատանուիլ, կասկածի ենթարկուիլ։ Բայց փորձառու ծերերը դեռևս աշխատում էին հերքել ջահիլների կասկածը։ Երաշտութեան միակ պատճառը հինաւուրց մարդիկը մեկնում էին իրանց մեղքերի շատանալով և գիւղական կենցաղավարութեան գեղխանալով։

Բայց որքան էլ աշխատէին ծերերը իրանց մէջ արմատացած նախապաշարմունքը ճշմարտութեան տեղ ծախել, այսու ամենայնիւ տարուայ վերջին իրանք էլ համոզուեցան, որ դատարկ բաների հաւատ չ՚պետք է ընծայել։ Այս թուականին Կարգախի և շրջակայ գիւղերի արտերը համարեա ամբողջապէս ոչնչացան՝ մասամբ երաշտից և մասամբ անձրևախառն կարկտից։

93. ԲԱՌԱԽԱՂ ԵՒ ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ։

Միանգամ, երբ Մայիսեան գեղեցիկ հանդարտ երեկոյ էր, երբ պարզ երկնքի լուսինը և աստղերը ձգել էին իրանց

լոյսը Ղոյթուլի (Դարալագեազում) կանաչազարդ այգիների վերայ, երբ Ալագեազ գետը գիւղի մօտ, Ջրաղացի առաջ, հանդարտ օդի մէջ տարածում էր իւր խոխոջման ձայնը, գիւղի միւս ծայրում լսվում էին մանր երեխանց ծիծաղ, երգ և այլ անորոշ ձայներ, որ մերթ հանդարտվում էին և մերթ կրկին սփռվում։ Ես թողնելով իմ մարախլապատ սենեակը՝ գնացի դէպի մանուկները։ Այդպիսի դէպքում մի անծանօթ մարդու ներկայութիւնը կարող էր խանգարել մանուկների զուարճութիւնը, վասնորոյ ես ընտրեցի մի այնպիսի տեղ, որ անյայտ մնայի խմբից, բայց կարողանայի ուշադրութեան առնել նորանց արարմունքը և խօսակցութիւնը։

Մինչև երեսուն մանուկներ, 8-ից մինչ 15 տարեկան, ժողովուել էին մի տան պատի տակ, իրանցից սորան կամ նորան հրում էին, միմեանց վերայ ծիծաղում և մինչև անգամ շատ կոպիտ կերպով հայհոյանքներ էին թափում։ Հայհոյելը գիւղացի մանուկների ամենավատ սովորութիւններից մինն է։

—«Տո՛, տղա՛յք, եկէք բառախաղ անենք», ձայն տուեց նոցանից մինը.

«Եկէք, եկէք» ձայն տուին միւսները։

—Մէկը առաջարկեց «Ասա՛՝ ցախաւելը դցեմ մարագ»։

Միւսը պատասխանեց «Ուտես կովի կարագ»։

Յաջորդ և շուտ պատասխանի վերայ մանուկներն ուրախացան և իբրև նշան գոհունակութեան, ամէն տեղից կրկնեցին պատասխան տուողին. «Հա՛յ ջան, Հա՛յ ջան։»

—Ասէր կոնք, առաջարկեց մի ուրիշը։

—Աչքիդ վերևը յօնք, կրկնեց պատասխանը։

—Ասա՛ կանանչի։

—Դրողը քեզ կանչի։

Հա՛յ ջան, ձայնեցին շատերը, ծափ տուին և ծիծաղեցան։ Բառախաղը երեխաների համար կենդանի զբաղմունք դար-

ձու, վասնորոյ ամէնքն սկսեցին կարգով առաջարկութիւններ անել և լուծել առաջարկածը։

—Ասա մէկ։

—Երեսդ է չէկ, գլուխդ քաշեմ լէկ (կաշի, մորթ)։

—Ասա երկու։

—Կերածդ է ձու։

—Ասա երեք։

—Կողքդ քերենք։

—Ասա չորս։

—Հաց կեր գնա հորս։

—Ասա հինգ։

—Աչքդ մտնի լինգ։

—Ասիր վեց։

—Մեծ նանը քեզ խոտեց, գլխիդ ջուխտ բամփեց, ծվվոցդ վեր արեց։

—Ասիր եօթը։

—Առնես հօրդ բօթը, բերանդ թիու կօթը։

—Հայ ասիր, ութ։

—Ուտես մի կողով թութ։

Րոպէական լռութենից յետոյ՝ կրկին շարունակեցին։

—Հայ, ասա տասը։

—Դու ինքդ ես թարսը, ուտես թանէ ապասը, վառ մարգ է քո հարսը, վկայ է սուրբ մասը, արագ արագ կրկնեց պատասխանը։

—Հայ, ասիր հաց։

—Բերանդ բաց, վազէ ջաղաց։

—Հայ, ասիր բրինձ։

Այս առաջարկութեանը ոչ ոք իսկոյն պատասխան չգտաւ և ընդհանուր կարճ լռութիւնից յետոյ, առաջարկողը, ինչպէս պահանջում է կարգը, նորից կրկնեց. «Հայ, ասիր բրրինձ։»

—Մատաղ լինիս ինձ, պատասխանեց մինը և ամէնքը ուրախ ուրախ ծիծաղեցան։

—Հայ, ասիր սանիր։

—Ոտներդ հանիր, ճախրակը մանիր, ձեր տանը բանիր։

—Հայ, ասիր երթանք ձեր տունը։

—Ուտենք մածունը, քանդենք ժամտունը, կրակ տանք սիւնը։

—Հայ, ասիր հաց էր։

—Դռները բաց էր, աչքերդ թաց էր, մարդի գուրցած էր, մանուկ կը լացէր։

—Հայ, ասիր ձիուն կայ։

—Տներումը սիւն կայ, ճնճղուկին բուն կայ, աչքերին քուն կայ։

Այսպէս երկար ժամանակ մանուկները զուարճանում էին սուր առաջարկութիւններ անելով և պատասխաններ տալով։ Բայց բառախաղը, որ սկզբումը սաստիկ գրաւել էր նոցա, փոքր առ փոքր թուլացաւ և մի րոպէաչափ բոլորը լռեցին, կարծես ձանձրանալուց։ Ընկերներից մինի առաջարկութեամբ խաղի տեսակը փոխուեցաւ։ Սկսուեցան շուտ ասելուկներ։

—Տղէք, ով կարող է ձեզանից շուտ շուտ ասել. «ձուկ գցեմ, ձուկ կուլտամ, մուկ գցեմ, ձուկ կուլտամ։» Շատերը սկսեցին կրկնել։ Մանուկների կրկչոցը երկինքն էր հանում մանաւանդ, երբ շուտ ասելու ժամանակ, ձուկ կուլտալու փոխանակ մուկ էր կուլտալիս ասողը։

—Ով կարող է ասել՝ գետի այն կողմը մի աղուէս՝ «ես չիր ուտեմ, նա փթիր, նա փթիր ուտի ես չիր.»

—Սկսեցին արագ արագ կրկնել վերջին խօսքերը։ Ով որ ընտելացած չէր, շուտ շուտ սխալվում էր. իւր ուտիլին աղուէսին էր տալիս, իսկ աղուէսի ուտելին ինքն էր անուշ անում և ընկերներին ծիծաղու կոտորում։

Մինն առաջարկեց կրկնել հետեւեալ պարբերութիւնը։ «Ուլն ելաւ ուռի ծառը, ուլի ձեռով ու ոլորեց։»

—Միւսն առաջարկեց կրկնել «Տէր Կարապետենց տանձի ծառին, երկու ծանր տանձ կայ ծէրին։

—Երրորդն ասաց՝ «Սեխովը թռչեմ սեխ ուտեմ, ցեխովը թռչեմ սեխ ուտեմ։

94. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ։

—Տղէք, եկէք հանելուկ ասենք, ձայն տուեց մանուկներից մինը։

—Ասենք, ասենք, ասենք, պատասխանեցին շատերը։

Ես ուրախ էի, որ գիւղական մրջիւնանման այդ անգրագէտ բանաստեղծները կամենում են արտայայտել իրանց հանճարը, խելքը, սրամտութիւնը։ Գիւղական երեխաները հանելուկների անսպառ աղբիւր են. նոքա՝ երեկոյեան ժամանակ, հանելուկներ ասելու համար հաւաքվում են մէկ տեղ և երկու խումբի բաժանուելով՝ մէկ մէկու առաջարկութիւններ են անում։

Այսպէս և այժմ՝ իմ զննած մանուկները երկու բաժին եղան և հանդարտութեամբ մի բաժինը նստեց միւսի դէմ։ Մի բաժնի առաջարկած հանելուկները լուծում էին միւս բաժնի անդամները և փոխադարձաբար իրանք առաջարկում։ Կարգը և խաղաղութիւնը պահպանելու համար փոխադարձ երդումով պայմանաւորուեցին, որ ոչոք անկարգութիւն չ՚անի։

—Ականջ դրէք՝ ինչ եմ ասելու, ձայն տուեց բաժնի անդամներից մինը։

—Ասա՛ տեսնենք, պատասխանեցին միւս բաժնից։

—Էն ինչն է որ՝ կարմիր թաղին ընկել է սև թաղու յետևը։

—Էդ ով չի իմանում, որ կրակն է. կարմիր թաղին կրակի բոցն է, սև թաղին էլ ծուխն է։

—Էն ինչն է որ՝ խալին փռեմ, լագեանը (կոնք) դնեմ, նուշերը ցրուեմ։

—Խալին երկինքն է, լագեանը լուսնիակն է, նուշերն էլ աստղերն են։

—Էն ինչն է որ՝ մէկ տուն ունիմ, սիւն չունի։

—Էդ էլ գիտենք։

—Հա՛, գիտես, դէ ասա՛ տեսնենք։

—Էդ ով չի իմանում, որ ամպն է. Աստուած այնպէս է շինել, որ առանց սիւն կանգնում է։

—Էն ինչն է որ՝ երկար աղիք, ծէրը ծաղիկ։

Մանուկները մտածման մէջ ընկան։ Բաւականաչափ լռուելուց յետոյ՝ նոքա ձայն տուին. չիմացանք, յաղթուեցանք, ասացէք տեսնենք։

—Չէ, մինչև մի քաղաք չ՚տաք չենք ասիլ։

—Տալիս ենք, հը՛ Երևանը ձեզ։

—Ուտեմ, խմեմ Երևան, հագնեմ-մաշեմ Երևան, նժոյգ ձին հեծնեմ, քաղաքի մէջ ման-ման անեմ, թշնամիներիս աչքը հանեմ, ընկերներիս հետ ես մի մեղրահոր ընկնեմ, դուք մի ցեխահոր.—իմ ասածը մոմն է, ծայրի ծաղիկն էլ վառուած տեղն է։—Դէ հիմի դուք ասացէք։

Յաղթողները լռեցին։ Յաղթուողներն սկսեցին։

—Էն ինչն է որ՝ նեղլիկ, կլորուկ, մէջը լի կարմիր հուլունք։

—Դա նուռն է։

—Էն ինչէ որ՝ քեզ տուի, կպաւ։

—Անունն է, որ մկրտելիս կը տան, մարդուց կը կպչի։

—Էն ինչն է որ՝ երկու եղբայր մի սարի լանջին, որքան աշխատում են, միմեանց չեն տեսնում։

—Դոքա աչքերն են, որ միմեանց չեն տեսնում։

—Էն ինչն է որ՝ երկու տուն է մի սիւն։

—Երկու տունը քթածակերն են. մի սիւնը նրանց միջի պատն է։

—Էն ինչն է որ՝ մութը տուն, Դաւիթը քուն, երկաթէ սիւն։

—Մութը տունը թուանքն է, Դաւիթը գնդակն ու վառօդը, երկաթէ սիւնն էլ ճիպոտն է։

—Էն ինչն է որ՝ մի ծառ ունիմ, երկու թուփ ունի՝ մէկը սև, միւսը սպիտակ։

—Գիշեր-ցերեկն է։

—Էն ինչն է որ՝ մէկ բան ունիմ ճիճան է (գզգզուած), ճիճանի տակը մէյդան է, մէյդանի տակը բաժակ է, բաժակի տակը զուռնայ է, զուռնայի տակը մարագ է, մարագի մէջը ուրագ է։

—Չիմացանք, բալամ, սամ տեսնենք, պատասխանեց Հակառակ կողմը։

—Ի՞նչ էք տալիս, որ ասեմ։

—Մի գիւղ կը տանք։

—Չէ, մենք քաղաք ենք տուել, քաղաք էլ կ՚առնենք։

—Լաւ, լաւ, Գիւմրին ձեզ տուինք։

—Ուտեմ, խմեմ Գիւմրին, Հագնեմ-մաշեմ Գիւմրին, աջ գնամ, գործս աջողի, ձախ գնամ, բանս շինուի. նժոյգ ձին նստեմ, Գիւմրու մէջ մտնեմ, թշնամուս աչքը Հանեմ. ես նի բլիմ, թախտին նստիմ, դուք վեր գաք տափին նստէք, մեզ ղուլ ու ծառայ ըլէք։—Դէ Հիմի լսեցէք ու Հասկացէք.

—Ճիճանը գլուխն է, մէյդանը ճակատն է, բաժակն աչքերն են, զուռնեն քիթն է, մարագը բերանն է, ուրագն էլ ատամներն են։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

95. ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ։

Գեղեցիկ էր նախաստեղծ աշխարհը, երբ դեռ նոր էր գոյացել Աստուծոյ խօսքով. բայց նորա վերայ դեռ ևս մարդ չկար և ոչ ոք էր, որ նորա գեղեցկութիւններով զուարճանար։ Ցերեկը փայլուն արևը բարձրանում էր երկինքը և թափում էր երկրի վերայ լոյս ու ջերմութիւն. գիշերը երևում էր Համեստ լուսինը և փայլում էին անՀամար աստղեր. երկնքի կապոյտ կամարը՝ զարդարուած ոսկեփայլ և արծաթանման ամպերով, բարձր տարածում էր իւր Հրաշալի անսաՀման վրանը. ալեկոծվում և վրդովւում էր անեզր ծովը. բարձրագոյն լեռները իրանց ձիւնափայլ գագաթներն ամպերից վեր էին բարձրացնում. ամենայն կողմը Հոսում էին յորդառատ կապոյտ գետեր և եռում—ցանում էին իրանց ցոլմունքները՝ ջրվէժներ կազմելով. փրփրալից առուները խոխոջում էին, Հոսելով անուշաՀոտ և Հիւթալի խոտերի վերայով. բարձր արմաւենիները շարժում էին իրանց Հպարտ կատարները. ստուերաշատ անտառները խօսակցում էին թեթև, զովարար զեփիւռի Հետ. կանաչ դաշտը, լցուած փարթամ ծաղիկներով, անուշաՀոտութիւն էր բուրում. սիրունիկ կենդանիները ցատքում էին և զուարճանում. խայտապխակ թռչունները և փայլուն միջատները՝ անդամանդի նման ցո-

լալով՝ սլանում էին օդի մէջ. սոխակը հնչում էր իւր բարձրահնչիւն երգը.—բայց դեռ չէր ստեղծուած մարդը և ոչ ոք էր, որ վայելէր աշխարհիս բոլոր փարթամութիւնները։

Արեգակը, լուսինը և աստղերը, թէև գեղազարդ, բայց անզգայ, ընթանում էին իրանց համար սահմանած ճանապարհով, ոչինչ չ՛նկատելով և ոչինչ չ՛զգալով, մինչև անգամ իրանց սեպհական հրաշալիքներին անտեղեակ։ Վարդը պճնվում էր և բուրում, առանց իմանալ կարողանալու, թէ ո՛րքան գեղանի է ինքը. սոխակի երգը չէր քաղցրացնում ոչ ոքի լսելիքը։ Կենդանիքը թէև ամենայն ինչ տեսնում ու լսում էին, բայց չէին հասկանում ոչ բնութեան գեղեցկութիւնը և ոչ այն ամենիմաստ օրէնսդրութիւնը, որով նա ստեղծուած էր. նոցանից ոչ մէկը չէր կարողանում մինչև անգամ գլուխը դէպի երկինքը բարձրացնել և երախտագիտութեամբ ասել. «Ստեղծող, ո՛րքան մեծ ու ողորմած ես դու, ի՛նչքան սիրում եմ ես Քեզ։»

Տեսնելով, թէ ո՛րքան գեղեցիկ է աշխարհս, Աստուած, լի անսպառելի սիրով, կամեցաւ ստեղծել մի էակ, որ իւր անմահ հոգով նմանուէր տիեզերքի Արարչին և կատարէր նորա օրէնքը, ոչ թէ կարիքից ստիպուած, որպէս միւս անբան արարածները, այլ հասկանալով այդ օրէնքի զգօնութիւնը և քաղցրութիւնը, որը ձգտէր դէպի ճշմարիտ բարին և գեղեցիկը և իւր քննութեամբ ու ցանկութեամբ հրաժարուէր չարից ու յանցանքից։

«Ստեղծենք մարդ մեր պատկերի և նմանութեան պէս» —ասաց Տէրը—և, ստեղծելով հողից անչափ գեղեցիկ մարմին, ներշնչեց նորա մէջ իւր աստուածային բերանից բանիմաց հոգի։ Մարդը բացաւ աչերը, զարմացած և հիացած նայեց աշխարհին, և նորա հոգին, զգալով իւր աստուածային ծագումը, լցուեցաւ երջանկութեամբ, երախտապարտութեամբ և սիրով դէպի իւր Ստեղծողը։

«Զ՛նայելով որ այսքան գեղեցիկ է երկիրը, բայց մարդս միայնակ տխուր կապրի նորա վերայ»—մտածեց Աստուած և կամենալով կատարեալ կացուցանել նորա բաղդաւորութիւնը, ստեղծեց նորան գեղեցիկ կենակից։ Ստեղծագործութիւնը վերջացնելով՝ Աստուած ասաց առաջին մարդկանցը. «Սիրեցէք միմեանց, աճեցէք և բազմացէք, լցրէք երկիրը, տիրեցէք նորան. բոլորը, ինչ որ կայ նորա վերայ, ձեզ եմ շնորհում։»

Այն աշխարհը, որտեղ ապրում էին նախաստեղծ մարդիկ, գտնվում էր այն գեղեցիկ ու հարուստ երկրի վերայ, ուր հոսում են Տիգրիս, Եփրատ, Ճորոխ և Երասխ գետերը, ուր բարձրանում է ծերունին Մասիս, որտեղից տարածուեցաւ մարդկային ցեղը։ Բայց աւա՜ղ, այն գեղեցիկ աշխարհը, այն փարթամ դրախտային վայրերը այժմ շատ տեղերում ամայի և անշուք են։ Նախնի փառահեղութիւնների և հարստութիւնների տեղը հոյակապ քաղաքների տխուր աւերակներն են մնացել։ Արեգակը և երկնային լուսաւորները փայլում են նոյն փառահեղութեամբ, բայց մեր նախահայրերի դրախտը կորցրել է իւր ճոխութիւնը։

96. ՀԱՅԻ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ։

Ես կամենում եմ ձեզ պատմել, սիրելի մանուկներ, այն աշխարհի մի քանի երևելի անցքերը, որի մէջ ապրել մեծացել են մեր պապերը, որի պահպանութեան համար նոքա արիւն են թափել, որի քաղցր օդով նոքա շնչել են։ Այդ աշխարհը Հայաստանն է։ Բայց թէ ի՛նչի է դա Հայաստան կոչվում, ո՛վքեր են եղել նորա առաջին իշխողները, ի՛նչ արժանայիշատակ գործողութիւններ են արել նոքա, այդ դուք չէք իմանում։ Սրբազան պատմութիւնը կարդալիս՝ դուք շատ անգամ լսում էք, որ Նոյեան տապանը կանգնեցաւ Արարատ

սարի վերայ, որ Ադամը և Եւան ապրում էին դրախտում, որ դրախտը ոռոգվում էր Տիգրիս և Եփրատ գետերով։ Իսկ Տիգրիս և Եփրատ գետերը բղխում են Հայաստանից և անհերքելի կերպով վկայում են, որ այդ աշխարհն է եղել մարդկութեան օրրանը, այնտեղ է բնակեցրել Աստուած նախաստեղծ մարդուն, այնտեղ է եղել վայելչագեղ դրախտը։ Մասիս սարը, իբրև երկրորդ վկայ, հսկայաբար բարձրացրել է իւր գլուխը և անբարբառ վկայում է աշխարհին, որ Հայաստանից երկրորդ անգամ բազմացաւ մարդկային ազգը։ Երբ արդարադատ Աստուածը նոցա իրանց յանցանքի համար ջրհեղեղով կոտորեց, Մասիս սարը իւր վերայ ընդունեց Նոյեան տապանը, որը և դուրս գալով տապանից, նորա ստորոտում սեղան կանգնեց և պատարագ մատոյց Աստուծուն, ինչպէս կարծւում է Ակոռի (արկուռի) գիւղի մօտ։ Նախիջևանը և Երևանը ամենահին քաղաքներն են, ուր Նոյի սերունդները բնակութիւն հաստատեցին և այդ տեղից բազմանալով սփռուեցան նոցա զաւակները դէպի աշխարհիս չորս կողմերը։ Սակայն բազմանալով և ամբարտաւանութիւնն իրանց մէջ մեծացնելով, այն ժամանակուայ բոլոր ժողովրդապետները կամ, ինչպէս անուանում են, նահապետները Բաբելոն քաղաքում ժողովուեցան և կամեցան մի այնպիսի աշտարակ կանգնեցնել, որի գագաթը երկինքին հասնէր, որպէս զի իրանց մեծութեան յիշատակը ազգից ազգ մնար և, եթէ դարձեալ համաշխարհական ջրհեղեղ լինէր, նոցա վերայ բարձրանալով, կործանումից ազատուէին։ Բայց Աստուծուն հաճելի չ'թուեցաւ այս ամբարտաւան ձեռնարկութիւնը. նա խառնակեց նոցա լեզուն և սարսափելի փոթորիկով կործանեց աշտարակը։ Այդ ընդհանուր խառնակութեան ժամանակները՝ ոմանք քաջ նահապետներից զէնքի զօրութեամբ կամենում էին տիրել ում որ կարող էին։ Այդ հսկաների մէջ կար և մինը, Բէլ անունով (Նեբրովթ), որ կամենում էր իւր ձեռքի տակ ընկ-

ճել բոլոր մարդկութիւնը և իրան իբրև Աստուած դաւանել տալ։ Ազատամիտ Հայկը, որ մեր ազգի նահապետն էր և Նոյի Յաբէթ որդու թոռը, Բաբելոնում եղած նշանաւոր նահապետներից մինը, ինքնավստահ կերպով ընդիմացաւ Բէլի եսական ինքնիշխանութեանը և չ'կամենալով ենթարկուիլ նորա բռնութեանը, իւր Արմենակ որդու հետ, որ Բաբելոնումն էր ծնուել, ուղևորուեցաւ դէպի Արարատեան աշխարհը, իւր հետ առնելով իւր բոլոր զաւակներին, թոռներին և մերձաւորներին, որոնք թւով երեք հարիւր հոգի էին, բացի իրանց հպատակներից և ծառաներից։ Մօտենալով մեր հայրենիքին, նա բնակուեցաւ մի հովտում, մի լերան ստորոտում, որ կարծելի է Կորդուաց և Մոկաց աշխարհները. այդտեղ նա բնակութիւն շինեց, իւր ձեռքի տակ առնելով տեղդ բնակուած յաբեթական ցեղերը։ Հայկն այդ երկիրները տուեց իւր թոռանը, Արմենակի որդի Կադմոսին, իսկ ինքն իւր Արմենակ որդու և միւսների հետ գնաց Բզնունեաց ծովի արևմտահիւսիսի կողմերն ու բնակուեցաւ մի բարձրավանդակ դաշտում։ Այդ լեռնադաշտը Հարք անուանեցաւ։ Այդտեղ Հայկը քաղաք շինեց և անուանեց Հայկաշէն։ Հայկի գալուց առաջ այնտեղ բնակվում էին սակաւաթիւ ազատաշրջիկ ժողովուրդ, որոնք ինքնակամ մտան դիւցազնի իշխանութեան տակ։ Այս անցքերը պատահեցան 2200 տարի Ք. Ա. ուրեմն մեզանից առաւել քան 4000 տարի առաջ։

97. ՀԱՅԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԷԼԻ ԴԷՄ։

Մինչդեռ Հայկը Հայոց երկրի և նորա վիճակի բարելաւութեան վերայ էր մտածում, Տիտանեան Բէլը, որ արդէն իւր հզօր տէրութիւնը հաստատել և կառավարում էր, շատ նահապետներ իւր ձեռքի տակն ընկճելով, կամենում էր, որ Հայկն էլ նորա իշխանութեան ենթարկուի, ուստի իւր որ-

դուն մի քանի թիկնապահներով դեսպան է ուղարկում Հայկի մօտ և ասում է. «Բնակուեցար սառնամանիքի և ցրտութեան մէջ, այժմ մեղմիր քո հպարտացած բարքի ցրտութիւնը, հնազանդուիր ինձ և հանգիստ ապրիր իմ երկրիս մէջ, որտեղ հաճոյ կ՚լինի քեզ։» Հայկը, այս պատգամաւորութիւնը լսելով, խստութեամբ յետ դարձրեց նորանց։ Բէլը՝ բարկանալով Հայկի յանդգնութեան վերայ, ահագին զօրք ժողովեց և դիմեց դէպի Հայաստան։ Երբ որ նա մօտեցաւ մեր Հայրենիքի սահմանին, Կադմոսի իշխանութեանը, վերջինս շուտով մարդիկ ուղարկեց Հայկի մօտ և ապսպրեց. «Գիտացիր, ով մեծդ դիւցազանց, որ Բէլը գալիս է քաջ և բարձրահասակ հսկաներով, և ես իմանալով նորա մօտաւորութիւնը, ահա քեզ իմաց եմ տալիս. ուրեմն մտածիր և ինչ որ անելու ես, արա. ես ինքս էլ բոլոր մարդիկներով շտապում եմ քեզ մօտ հասնելու։»

Այն ժամանակ ուշիմ և խոհեմ Հայկը իւր մատաղ տէրութիւնից զօրք ժողովեց, որոնք թւով անհամեմատ փոքր էին քան Բէլի զօրքը և բաղկացած էին գլխաւորապէս իւր որդիներից և թոռներից, և գնաց Բզնունեաց ծովի մօտ Բէլին հանդիպելու։ Իսկ Բէլը իւր յանդուգն և ահագին գնտով մրրկալից փոթորկի նման շտապում էր հասնել Հայկի բնակութեանը, բոլորովին վստահ և յուսադիր իւր զօրքի առաւելութեան վերայ։ Այս առաւելութեանը խելացին Հայկ նոյնպէս տեղեակ լինելով, չ՚վախեցաւ, այլ ժողովելով իւր շուրջը իւր սակաւաթիւ զօրագունդը, անվեհեր կերպով սկսեց խրախուսել նոցա։ «Երբ կ՚հանդիպենք Բէլի բազմաթիւ զօրքին, պէտք է աշխատենք ճեղքել և մտնել այն զօրախմբի մէջ, ուր պատսպարուած է նա. կամ մեռնենք և ապա մեր բոլոր ընտանիքը ստրուկ դառնայ թշնամուն, մեր սրբազան երկիրը մեր մեռնելուց յետոյ միայն օտնակոխ լինի նոցանից և կամ յաղթենք ու օրինակ լինինք մեր յետագաներին։ Առիթ չը-

տանք թշնամիներին ծիծաղել մեր զէնքի և քաջութեան վերայ, այլ ապացուցանենք նոցա մեր նետերի զօրութիւնը և և ցոյց տանք մեր սերունդներին, որ մենք մեր կեանքը չենք խնայել այն հայրենիքի ազատութեան համար, որին մեզանից յետոյ իրանց ենք ժառանգորդ թողել։» Այսպէս ասելով՝ Հայկն առաջ ընթացաւ դէպի Բզնունեաց ծովի հարաւային լեռները և այն տեղից տեսաւ Բէլին ու նորա բազմաթիւ զօրքին։ Նա շուտով կարգաւորեց իւր զօրքը, եռանկիւնի ձևով կանգնացնելով նորանց. առաջին տեղը ինքը բռնեց իւր մարդիկներով, աջ կողմը կանգնացրեց իւր Արմենակ որդուն իւր մարդիկներով, իսկ ձախ կողմը Կադմոսին իւրայիններով։

Բէլը՝ տեսնելով Հայկի զօրքի սակաւութիւնը և զարմանալով նորա համարձակութեան վերայ, ջոկեց իւր խմբի միջից ընտիր քաջերին և նոցա հետ արշաւեց Հայկի դէմ։ Մեծ տարածութիւն կար նորա և իւր մնացած զօրքի մէջ։ Հայկը այսպիսի յաջող դիպուածը ձեռքից չ՚թողեց, յարձակուեցաւ Բէլի վերայ, փակեց նորա ամբոխը իւր եռանկիւնու մէջ և կատաղի կռիւն սկսուեցաւ։ Երկու կողմից քաջ քաջի հանդիպեցան և նետերի ճայթիւնն սկսեց օդը թնդացնել։ Սակաւ հսկաներ չընկան երկու կողմից ևս և կատաղի մարտնչողների համար յաղթութիւնը տարակուսելի էր։ Բայց Բէլը՝ զարհուրելով այս անակնկալ դիմադրութիւնից, կամեցաւ յետ ընթանալ և խառնուիլ իւր յետամնաց զօրքի հետ։ Քաջն Հայկ՝ հասկանալով նորա դիտաւորութիւնը, առաջ խաղաց և իւր երեքթևեան նետը հզօր բազուկներով այնպիսի սաստկութեամբ արձակեց, որ դիպչելով Բէլի կուրծքին՝ թիկունքից դուրս եկաւ։ Հսկայամարմին բռնաւորը վայր ընկաւ և շունչը փչեց. իսկ նորա զօրքը՝ տեսնելով իրանց անպարտելի հրամանատարի կործանումը, իրարով անցան և յետ փախան դէպի Բաբելոն։ Պատերազմի տեղը Հայկը քաղաք շինեց և անուանեց Հայք, որից և այդ նահանգը կոչուեցաւ Հայոց

Ձոր։ Այն բլուրը, որի վերայ կործանուեցաւ Բէլը իւր քաջերով, Հայկը Գերեզմանք անուանեց։ Իսկ նորա զմռսած մարմինը հրամայեց տանել Հարք և թաղել մի բարձր բլուրի վերայ, որ վկայ լինի անպարտանութեան պատմուելուն և իւր փայլուն յաղթութեանը։

98. ԱՐԱՄԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Հայկի յաջորդների մէջ իբրև լուսաւոր աստղ փայլում է նորա թոռան թոռը, Արամը։ Արամի նախորդները, հետևելով իրանց պապ Հայկի օրինակին, միշտ իրանց ժառանգական երկիրը թողում էին իրանց որդուն և իրանք դիմում էին ուրիշ մի նոր մասը տիրելու և շէն դարձնելու։ Այսպիսով մինչև Արամը մեր երկիրը բաւական ընդարձակուել, բայց և բաւական կտոր կտոր էր եղել, այնպէս որ իրաքանչիւր մի կտորի իշխանը, իրաւ է, իրան յանձնած երկիրը հայրաբար կառավարում էր, բայց ամբողջ տէրութիւնը հարևան ազգութիւնների առաջ մեծ նշանակութիւն չէր ունենում. այս պատճառով էլ զանազան կողմերից յարձակողական արշաւանքների էր ենթարկվում մեր նախնի հայրենիքը։ Արամը, քաջասիրտ և իւր հայրենիքին անձնանուէր Արամը, իւր թևի տակ հաւաքելով բոլոր նահապետների զօրութիւնը, թէ իւր ազգականներից և թէ հպատակներից քաջամարտիկ զօրք է ժողովում՝ թւով մինչև 50,000 և դիմում է Հայաստանի արևելեան կողմն ասպատակող Մարաց (Մեդացոց) զօրքի դէմ, որ իրանց զօրապետ Նիւքարի առաջնորդութեամբ երկու տարի շարունակ վրդովում էին Հայաստանի խաղաղութիւնը իրանց աւազակային յարձակմունքներով։ Արամը անակնկալ յարձակվում է նոցա վերայ. կռիւը շարունակվում է մինչև արևի մայր մտնելը։ Թշնամի զօրքի կէս մասը կոտորվում, իսկ կէսը փախուստ է տալիս. իսկ նոցա առաջնորդ Նիւքարին Արամը

բռնում է ու բերում իւր մայրաքաղաքը Արմաւիր, և պարսպի բուրգի վերայ մեխել է տալիս ի պատիժ իւր երկարամեայ արիւնհեղութեան։ Արամը նորա երկրի վերայ հարկ է դնում մինչև Նինոսի թագաւորիլը Նինուէի և Ասորեստանի վերայ։ Նինոսը՝ Նինուէի վերայ թագաւորելով, մտաբերում է իւր պապ Բէլի կործանումը Հայաստանում, ուստի և մտադրում է վրէժ առնել Հայկի սերունդներից. բայց լսելով Արամի քաջութեան համբաւը, վախենում է, որ մի՛ գուցէ պատերազմն սկսելով՝ անյաջողութիւն ունենայ, ուստի մտադրում է առժամանակ հաշտ ապրել Հայերի հետ և մեր Արամին խրախուսում է իւր քաջագործութիւնների մէջ։

Արևելեան ազգերին ընկճելով՝ Արամը իւր քաջ գնդով դիմում է արևմտահարաւ, դէպի Ասորեստանի սահմանները, ուր հանդիպում է իւր տէրութեան աւերիչ թշնամուն, Բարշամ անունով, որը 40,000 հետևակ և 5,000 հեծելազօրքով ասպատակում էր Հայաստանի արևմուտքը, նոցա վերայ անլսելի հարկեր էր դնում և տանջում էր բնիկներին։ Արամը, պատերազմելով նորա հետ, կոտորում է նորա զօրքի մեծ մասը և իրան էլ ստիպում է Կորդուաց աշխարհով փախչել դէպի Ասորեստանի դաշտերը։ Փախուստի ժամանակ Բարշամը սպանվում է Արամի զինակիրներից։ Արամը երկար տարիներ հարկ է առնում Ասորեստանի սահմանակից դաշտավայրերի բնակիչներից։

Իւր ընկճած և խաղաղեցրած երկիրներում Հայկի սերունդներից իշխաններ կարգելով, Արամն առաջ գնաց հանդիպելու Պայապիս Քաղիային, որ Պոնտոսի և Միջերկրական ծովի միջնավայրի երկիրները նուաճած բռնաբարում էր։ Արամը յարձակուելով յաղթում, հալածում է նորան և թողնելով այնտեղ իւր ազգականներից մինին, Մշակ անունով, ինքը վերադառնում է մեծ Հայաստան։ Այս երկիրն անուանուեցաւ Առաջին Հայք, իսկ նորա առաջնորդների ժամանակ ընդար-

ձակուեցաւ և կոչուեցաւ Կեսարիայ։ Այստեղից մինչև իւր իսկական իշխանութեան սահմանը՝ Արամը բնակեցրեց շատ անմարդաբնակ երկիրներ, որոնք յետոյ կոչուեցան Երկրորդ և Երրորդ Հայք։ Իւր նուաճած երկիրներում նա հրամայեց ճանաչել և գործածել պետական լեզուն։ Արամի ճշմարտապէս պանծալի քաջագործութիւններն այնպէս հռչակուեցան հին ժամանակուայ բոլոր ազգերի մէջ, որ նորանք մեր ազգը և մեր հայրենիքը Արամի անունով Արմեն և Արմենիայ կոչեցին։

99. ՍԻՐԻՐ ՔՈ ՀԱՅՐԵՆԻՔԴ ԵՒ ՔՈ ԱԶԳԴ։

Սիրելի՛ Արամ,—ասում էր միշտ հայրը իւր որդուն—ծնողներիցդ յետոյ քեզ ամենից մերձաւորը և ամենից սիրելին քո ազգդ է. այս պատճառով՝ ինչպէս որ պարտական ես քո ծնողներիդ սիրել, մեծարել և նոցա ծառայել, նոյնպէս էլ պարտական ես քո ազգդ և քո հայրենակիցներդ սիրել և քո կարողութեանդ համեմատ նորանց օգնել։ Այս պարտքը քեզ սովորեցնում է հ ա յ ր ե ն ա ս ի ր ո ւ թ ի ւ ն ը, որը, կարծես, նոյն իսկ բնութեան մէջ տնկուած է, որովհետև վայրենի ազգերի և մինչև անգամ անբան անասունների մէջ էլ երևում է այդ ձգտումը։ Այժմ լաւ մտածի՛ր, սիրելիդ իմ, թէ ո՛րչափ մեծ ամօթ և նախատինք կ՚լինէր քեզ, եթէ այսպիսի մեծակշիռ յատկութեան կողմից աւելի պակասաւոր լինէիր, քան վայրենիները, կամ քո հայրենասիրութիւնդ նոցա հայրենասիրութիւնից աւելի մեծ և ազնիւ չ՚լինէր։ Հայրենասիրութիւնը կրթուած մարդկանց վերայ աւելի մեծ պարտականութիւններ է դնում և որչափ քո տարիքդ աւելանում են, այնքան էլ պարտականութիւններդ դէպի քո ազգի օգուտները՝ շատանում և բազմապատկվում են։ Սիրի՛ր բարին, սիրելի զաւակս, վախեցի՛ր և փախի՛ր չարութիւնից, մտքումդ պահի՛ր քո պապերի, քո արժանաւոր նախահայրերի արարքը,

որոնք իրանց անձը չեն խնայել իրանց հայրենիքի համար, և դու կարողես քո պարտքերդ սրբութեամբ կատարել։ Ինչպէս որ բարի զաւակը պատիւ է համարվում իւր ծնողացը, նոյնպէս էլ բարի մարդը պարծանք և պատիւ է իւր ազգին։ Եւ ինչպէս որ հայրը իւր անպիտան որդուց իրաւունք ունի տրտնջալու, այնպէս էլ ազգը իրաւունք ունի իւր անպիտան անդամների վերայ գանգատուելու։ Ուրեմն ազգիդ պատիւ ու պարծանք լինելու համար հետևիր միշտ առաքինութիւն գործել և չարութիւնից հեռանալ։»

100. ԱՌ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ։

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,
Ո՛վ հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն բառերուդ
Նըման արդեօ՞ք այլ տեղ կան։
Դու որ նախ ինձ հընչեցիր
Նախ սիրոյ, ո՜հ, հեշտ խօսքեր,
Այն նախ զքեզ թոթովելս
Դեռ իմ մտքէն չէ ելեր։
    Ի՛մ մայրենի քաղցր լեզու,
    Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ,
    Կեա՛ց միշտ, լեզուդ հայկարժան,
    Կեա՛ց ծաղկալից՝ ծաղկաւէտ։
Լեզու համակ սիրաշարժ
Քանի ճոխ պերճ ու պայծառ
Մինչ կը հնչես՝ դու քեզի
Սրտերն ամէն գողացար.
Հընչէ՛, հընչէ՛ յաւիտեան,
Վե՛հ՝ դիւցազանց պերճ երգ դու,
Թոթուէ՛ փոշիդ խոր մութէն

Ե՛լ երևան, պերճ երգ դու։
Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեցցես անսասան, կեցցես յաւէտ,
Կեցցես միշտ, լեզուդ Հայկարժան,
Կեցցես ծաղկալից, ծաղկաւէտ։
Յաւերժական սուրբ գրոց մէջ
Կեցցես միշտ նորէն ու նորէն,
Կշռեալ անուշ քո տողերդ
Թող ամէն սիրտ արծարծեն՝
Շնորհ ունել Արարչէն,
Կամ պէտք ըլլայ աղօթել,
Շրթունքս սրտէ բորբոքած
Կաղապակէ անարգել.
Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեցցես անսասան, կեցցես յաւէտ,
Կեցցես միշտ, լեզուդ Հայկարժան,
Կեցցես ծաղկալից, ծաղկաւէտ։

101. ՈՒՍԻՐ ԱՌԱՋ ՔՈ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ։

Ծառայել Հայրենիքին և օգնել նորա կարիքներին կարելի է այն ժամանակ, երբ դու տեղեակ ես նոցա, երբ դու ուսումնասիրել ես նորա պիտոյքները, երբ դու իմանում ես քո ազգի լեզուն։ Ամենայն ուսման հիմը և գիտութիւն ստանալու միակ և ճիշտ ճանապարհը լեզուագիտութիւնն է, և եթէ դու կամենում ես կարգով ու հեշտ սովորել ուրիշ լեզուներ, աշխատիր ուսանիլ նախ քո մայրենի լեզուն։ Լեզուն է ազգայնութեան առաջին և գլխաւոր նշանը. լեզուն է այն միակ կապը, որ ազգի անդամներին կապում է միմեանց հետ. այս պատճառով կարելի է ասել, թէ իւր մայրենի լեզուն չիմացողը համարեա թէ իւր ազգութիւնից հրաժարած և

իւր ազգից օտարացած է։ Սա բնութիւնից դրած մի պարտականութիւն է, որ մարդս իմանայ իւր ազգի լեզուն. այս բնական պարտքը նոյն իսկ վայրենի ազգերը կատարում են ճշտութեամբ. չ՛նայելով, որ նոցա լեզուն անկիրթ է, աղքատ, չ՛մշակուած. ուրեմն որչափ անպատշաճ բան կ՛լինի, եթէ մէկը ազնիւ, հարուստ, հիմնաւոր և մշակուած լեզու ունենայ և չ՛կամենայ սովորել։ Բայց մայրենի լեզուի գիտութիւնը, բացի օգտակար լինելուց, պարտք էլ է. ամէն մարդ պարտաւոր է իւր Հայրենիքին և ազգին ծառայել, բայց այս պարտքը մարդս չէ կարող ըստ արժանոյն լցուցանել, եթէ իւր լեզուն լաւ չիմանայ։ Այս պատճառով ուսեալ և կրթեալ ազգերի մէջ մեծ ամօթ և նախատինք է իւր լեզուն չիմանալը և շատ անգամ ընկերութիւնների մէջ այսպիսիներին չեն ընդունում և նոցա երեսին չեն մտիկ տալիս։ Ուրեմն ամենայն մարդ իւր ազգային պարտականութիւնները կատարելու համար պէտք է ուսանի իւր մայրենի լեզուն, որով և կարողանայ իւր ազգի հետ միանալ, նորա ուրախութիւններին ուրախակից և նեղութիւններին վշտակից լինիլ։

102. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ։

Այն սիրտը, այն հոգին, այն հաւատը, այն սէրն ունէր հայ ազգը, որ թշնամու, գազանի ձեռքի երկիր, աշխարհ, ազատութիւն, մեծութիւն, բոլորը կորցրեց, իւր հաւատին մատաղ տուեց, աշխատութիւն, ծառայութիւն, գերութիւն, տանջանք, չարչարանք, սով, մահ յանձն առաւ, որ իր սուրբ եկեղեցին, իր լուսաւորչական լոյս օրէնքը ամուր, հաստատ ու անխախտ պահպանէ։ Սա է հսկայութիւնը, սրտապնդութիւնը, մեծահոգութիւնը, քաջութիւնը, կամքի հաստատութիւնը, հոգու կարողութիւնն ու զօրութիւնը, որի նմանը աշխարհիս վերայ՝ ջրհեղեղից դէսը՝ ոչ մէկ ազգ մինչև այսօր

չ՛կարողացաւ և չի էլ կարող ցոյց տալ։ Սար լինէր, փուլ կը գար, երկաթ լինէր, կը հալուէր, կը ցամաքէր, բայց աստուածասէր հայ ազգը մինչև այսօր գերօրինակ հսկայութեամբ տարաւ բոլորը ու իւր անունը պահեց։

Հայոց ազգի ջանին մատաղ, մէկ նորա մանուկներին ուսումն տուր, նոցա այն լուսաթաթախ հոգին կրթիր, կրթել եմ ասում, թուղթ խաղալ, ֆրանսերէն խօսել, անգիր բերան անիլ չեմ ասում, տեսնեմ թէ ջան կը տայ քեզ, թէ չէ։ Մինչև գարունը չը գայ, ծառը չի ծաղկիլ, առանց ամառի՝ պտուղ չի հասնիլ, իսկ դու ուզում ես որ ձմեռուայ այն սաստիկ ցուրտ, սառած ժամանակին վարդի հոտ առնես քո այգումը, հասած պտուղ քաղես քո պարտէզումը. դա եղա՞ծ բան է կամ կարող է լինի՞լ։

Ա՜խ լեզո՛ւն, լեզո՛ւն, լեզուն որ չ՛լինի, մարդ ինչի՞ նման կը լինի։ Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն է ու հաւատը։ Լեզուդ փոխի՛ր, հաւատդ ուրացի՛ր. էլ ինչո՞վ կարող ես ասել, թէ ո՛ր ազգիցն ես։ Ինչ քաղցր, պատուական կերակուր էլ տաս երեխային, դարձեալ իւր մօր կաթը նորա համար շաքարից էլ քաղցր է, մեղրից էլ։ Մեր աչքը որ հանենք, ուրիշին տանք, ուրիշը կարելի՞ է դնել տեղը։ Մեր օրօրոցի վերայ մեր լեզուով մեզ նանիկ ասացին. գոնէ այն մեր միտքը չ՛պէ՞տք բերենք։ Վայրենի ազգերն էլ իրանց սուրբ լեզուն աշխարհի հետ չեն փոխիլ։ Այնպիսի մարդ կայ՝ տասը—տասնևհինգ լեզու գիտէ, բայց նա իւր լեզուն միշտ ամէնից լաւ է համարում, իր ազգի հետ խօսելիս՝ ամօթ է համարում կամ ուրիշի լեզուով իր միտքը ասել, կամ օտար բառ իւր լեզուի հետ խառնել։ Խառնիր քո սիրական խաշի հետ՝ ձուկը, շաքար, շաքարեղէն, չամիչ, չիր, խաւեար, տես ինչ համ կունենայ։ Ապա որ քո մայրենի լեզուի հետ այնքան օտար բառեր ես խառնում, միևնոյն չէ, թէ խաշի մէջ շաքարեղէն ու խաւեար խառնել, կամ մածնի հետ ձուկը, սերի

հետ երշիկ խառնշտորել։ Ի՛սկ գիտուն, լուսաւորեալ մարդը նա է, որ ամէն լեզու, քանի կարող է, իստակ է խօսում։ Դու որ քո լեզուն իստակ խօսես՝ ի՞նչ վնաս ունի. հէնց գիտես խելքդ ձեռքիցդ կ՚առնեն, թէ սովորած իմաստութիւնդ ջուրը կը թափի։ Այն էլ բաւական է, որ Թուրքի լեզուն, որ իրանք Թուրքերը չեն գրում, այլ միայն խօսում են, մեր լեզուի վրայ այնքան ներգործութիւն է ունեցել, որ շատ տեղեր մինչև անգամ Թուրքերէն ենք խօսում, Թուրքերէն երգում։ Ազգին անհաւատ ենք անուանում, լեզուն սիրում. զարմանալու չէ։ Այսքան խառը լեզուի հետ դու էլ որ քո պրօգուլկիվատսան, քո բոնժուրներն ես խառնում, ա՞րդեօք դրանից ի՞նչ համ է դուրս գալիս։ Էլ աւետարան, գիրք, ժամասացութիւն ի՞նչ կը հասկանաս։

Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, Հա՛յոց նորահաս երիտասարդներ, ձեր անունին մեռնիմ, ձեր արևին մատաղ. տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը ամուր բռնեցէք։ Մէկ դատարկ լեզուն ի՞նչ է, որ մարդ չ՛կարողանայ սովորիլ։ Բաս չէք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրէք, ազգի միջումն անուն թողէք, ձեր անունը յաւիտեանս յաւիտենից անմահ մնայ։ Աստուած կեանք տայ այն ծնողացը, որոնք իրանց պարտականութիւնները հասկանում են, որոնք իրանց որդոցը միշտ պատուիրում, հասկացնում, ստիպում են, որ ուրիշ լեզուների հետ և իրանց կենդանի, մայրենի լեզուն սովորեն, նորան սիրեն, ծաղկացնեն։

103. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ։

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար,
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,

Մանկական լեզուիս թոթովանք տըկար
Հընչում ես իմ մէջ դու միշտ անդադար։
Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին՝ հոգով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից։
Հնչիր դու հնչիր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացիր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու, մոռացուած վաղուց։
Զգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով։
Ամէն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է այս միւս այլ ձև ու ոճը,
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական մտածութիւնքը,—
Ապա կը խօսեմ իմ մօրս խօսքը։

104. ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ։

Արամի մահից յետոյ Հայաստանը կառավարում է նորա Արայ որդին, որը իւր չափազանց գեղապատշաճ հասակի և գրաւիչ դէմքի պատճառով՝ գեղեցիկ մականունն է ստանում։ Արայի ժամանակ Ասորեստանում, որ այն ժամանակուայ ամենահզօր տէրութիւնն էր, թագաւորում էր Շամիրամ թագուհին, որ իւր մարդուն սպանելուց, թէ աքսորելուց յետոյ, սկսեց միահեծան կառավարել իւր ընդարձակ տէրութիւնը։ Շամիրամը մի չափազանց անբարոյական և վտանգաւոր կին

էր. նա լսելով Արայի գեղեցկութեան մասին, մտադրեց նորա սրտին տիրել, ուստի և դեսպաններ ուղարկեց Արայի մօտ և առաջարկեց նորան գնալ Ասորեստան, ամուսնանալ իրան հետ և տիրել իւր երկրին։ Արան իւր ժողովրդի բարիքը գերադասելով ուրիշների մեծափառութիւնից և ողջախոհութեամբ ատելով այլասպան Շամիրամի անվայել կեանքը, մերժում է նորա կրկնակի առաջարկութիւնները։ Շամիրամը՝ տեսնելով, որ չի կարող խաղաղ ճանապարհով տիրել Արայի կամքին, մտածեց զէնքի զօրութեամբ առաջ տանել իւր կամքը. ուստի և անթիւ զօրք ժողովելով, դիմում է դէպի Հայաստան և մտնում է այն դաշտը, որ Արայի անունով կոչվում էր Արարատեան։ Հայոց զօրքը Արայի առաջնորդութեամբ հանդիպում է Ասորոց զօրքին։ Շամիրամը կանխօրէն պատուիրում է իւր զօրականներին խնայել Հայոց թագաւորի անձը և չսպանել նորան, այլ աշխատել գերի անել։ Բայց կատաղի կռուի ժամանակ թագուհու պատուէրը չի կատարվում։ Արան, որպէս մի հասարակ զօրական, յարձակվում է թշնամի զօրքի վերայ և սպանվում է։ Հայոց զօրքը յաղթվում է։ Շամիրամը՝ լսելով Արայի մահուան լուրը, արտասվում է, և դիակապուտներ ուղարկելով պատերազմի դաշտը, գտնում է նորա դիակը և դնելով իւր վերնատունը, դիմում է աստուածներին, որ կենդանացնեն նորան։ Եւ երբ Հայոց զօրքը՝ երկրորդ անգամ հաւաքուելով, կամենում էին վրէժխնդիր լինել Արայի մահուան, Շամիրամը իւր պալատականներից մինին Արայի շորերը հագցնելով՝ ցոյց է տալիս Հայոց զօրքին և ասում է՝ թէ սա է ձեր թագաւորը. ես հրամայեցի յարալէզ աստուածներին, որոնք նորա վէրքերը լիզելով կենդանացրին։

Շամիրամը՝ հաւանելով Հայաստանի կլիմային, Բզնունեաց ծովի մօտ ընտրում է մի ամենագեղեցիկ տեղ և շինում է մի ընդարձակ և հոյակապ քաղաք, Շամիրամակերտ

անունով, Իբրև ամարանոց։ Այդ քաղաքը կայ մինչև այսօր և կոչվում է Վան։

105. ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿԻ ԵՐԳԸ։

Սիրուն պատկեր։ Պարզ գիշեր էր,
Եւ օդեղէն ովկիանում
Փայլում էին անթիւ աստղեր,
Եւ ուրախ էր սիրտս զարկում.
Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշութիւն էին բուրում,
Եւ երկնքի ցօղ կենարար
Բնութիւնն էր զովացնում.
Ես անխռով երգում էի,
Իմ երգս սուրբ և մաքուր էր.
Ազնուութիւն էի երգում,
Հայրենիքի պարծանք ու սէր։

106. ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ։

Արայ գեղեցկի մահից յետոյ Հայաստանը մեծ կախումն է ունենում Ասորեստանից։ Նա թէև կառավարվում է Հայկազն իշխաններով, բայց նորա կառավարիչները հաստատվում են Ասորեստանի թագաւորներից։ Այն ժամանակ Ասորեստանը այնքան զօրեղացած է լինում, որ իւր ձեռքի տակն է ունենում այդ ժամանակուայ գլխաւոր ազգերին՝ Մեդացիներին (Մարաց), Պարսիկներին և Հայերին։ Բայց Ասորեստանի ծաղկած թագաւորութիւնը փոքր առ փոքր սկսում է թուլանալ և գեխաբարոյ Սարդանաբանալի ժամանակը Մարաց Վարբակէս իշխանը և մեր Պարոյրը դաշնակից զօրքով պատերազմում են Ասորոց դէմ, մերժում են իրանցից օտարի հրա-

մանատարութիւնը և սկսում են անկախ թագաւորել։ Պարոյրը մեր նահապետներից առաջինն է լինում, որ թագաւորական թագ է դնում իւր գլխին և ընդունում է՝ տաւջին Բա-գուհեր Բագաւոր տիտղոսը (610 թ. Ք. Ա.)։

Պարոյրի յաջորդները երկար ժամանակ անկախ թագաւորելով՝ շատ կամ սակաւ բարելաւացնում են իրանց տէրութիւնը։ Բայց դոցանից ամենաերևելին լինում է Տիգրան Ա. որի թէ բարոյական և թէ պատերազմական արժանաւորութիւնները գերազանց էին իւր նախորդներից։ Տիգրանը չափաւոր էր կերակրի մէջ և ատում էր զեղխ խնջոյքներ։ Ճարտարախօս և իմաստալի, նա հասկանում էր, որ թագաւորի պարտականութիւնն է իւր հպատակների բարօրութեան և հայրենիքի փառքի վերայ հոգալ և ոչ թէ զեղխութիւնների յետևից ընկնիլ։ Նա շատ ուժեղ, բարձրահասակ, վայելչակազմ և ճարպիկ մարդ էր։ Բարձր խելքի և քաղաքական հմտութիւնների տէր լինելով, նա բարեկարգում և կազմակերպում է իւր զօրքը և նախնի հետևակ զօրքի մօտ աւելացնում է նաև հեծելազօրք. լոկ շերտաւորների տեղ կարգում է սուսերաւորներ և տեգաւորներ, թեթև հագնուած զօրքի տեղ՝ վահանաւորներ, սպառազէններ և զինակիրներ. իսկ մեր աղեղնաւորները և պարսաւորները, որոնք պէտք է հեռուից կռուէին, զօված էին ամենայն ազգերից։

Այսպիսի կազմակերպուած զօրք ունենալով և այն էլ մի իմաստուն թագաւորի առաջնորդութեան տակ, հասկանալի է, որ Հայաստանը ներքուստ և արտաքուստ աւելի կ՚զօրեղանար։ Տիգրանի ժամանակ Հայաստանի սահմաններն ընդարձակվում են, Փոքր Ասիայի մեծ մասը և մինչև անգամ Յունական գաղթականութիւններից մէկ քանիսը ընկնում են Հայերի ձեռքի տակը և նորանց հարկ են տալիս։ Վաճառականութիւնն ու արհեստները ծաղկում են և Հայերն սկսում են նաև արտաքին վաճառականութեամբ պարապել և առև-

տրական հաղորդակցութիւն ունենալ հին աշխարհի բոլոր առևտրական ազգերի հետ։ Տիգրանի պատերազմական ընդունակութիւնը նորա գլխաւոր յատկութիւններից մինն էր. նա որքան քաջ, նոյնքան և հեռատես ու շրջահայեաց էր, այնպէս որ ամենախորամանկ ձևերով անգամ նորան անհնարին էր որոգայթի մէջ ձգել։

Տիգրանի ժամանակ զօրեղագոյն թագաւորութիւն համարվում էր Մարացը, որի հետ նա, իւր նախորդների օրինակով, հաշտ ու բարեկամ էր։ Բայց որովհետև Պարսից Կիւրոս թագաւորն ևս՝ տեղեկանալով Տիգրանի քաջութիւններին, նոյնպէս բարեկամութիւն էր հաստատել նորա հետ, ուստի Մարաց Աժդահակ թագաւորը երկմտեցաւ, որ մի գուցէ Տիգրանը Կիւրոսին օգնէ իւր տէրութիւնը կործանելու, մանաւանդ որ վերջինս հաշտ չէր իրան հետ։ Այս երկիւղի և մտատանջութեան մէջ՝ մի գիշեր Աժդահակը երազ է տեսնում, որ իբր թէ Հայոց բարձր լեռներից մէկի վերայ մէկ կին երկունքի մէջ է։ Ծանր երկունքից յետոյ՝ կինը ծնում է երեք դիւցազունք. առաջինը՝ առիւծի վերայ նստած, գնում է դէպի արևմուտք, երկրորդը՝ ընձու վերայ նստած, դիմումէ դէպի հիւսիս, իսկ երրորդը՝ մի անարի վիշապ սանձելով, գալիս է իւր տէրութեան վերայ։ Սա՝ հասնելով Աժդահակի պալատին, ուր նա զոհ էր մատուցանում կուռքերին, կամենում է խորտակել նորանց։ Աժդահակը մէջն է մտնում և կամենալով արգելել, սպանվում է նոցանից։ Թագաւորը սարսափած զարթնում է, ժողովում է իւր պալատականներին, մոգերին, իմաստուններին, երազագէտներին և պատմելով նորանց այդ սարսափելի տեսիլքը, բացատրութիւն է պահանջում։ Խորհրդականներն այսպէս են բացատրում. դէպի արևմուտք ուղևորուող դիւցազնը Կիւրոսն է, դէպի հիւսիս գնացողը Բաբելացոց թագաւորը, իսկ քո տէրութեանդ վերայ եկողը Հայոց Տիգրան թագաւորն է։ Պալատականները խորհուրդ են

տալիս թագաւորին մեծ զօրք ժողովել և այս բանի առաջն առնելու համար, կործանել Հայոց կարողութիւնը։ Բայց Աժդահակը այլապէս էր մտածում. նա երկիւղ կրելով Տիգրանի քաջութիւնից, կամենում էր խորամանկութեամբ ոչնչացնել նորան։ Եւ որովհետև դորա համար բարեկամութիւնն ամենայարմար միջոցն էր համարվում, ուստի նամակ է գրում և իւր մեծամեծների ձեռքով ուղարկում է Տիգրանին ու խնդրում է, որ իւր քոյր Տիգրանուհուն իրան կնութեան տայ։ Տիգրանը, նորա չար մտադրութեանն անտեղեակ, հաւանում է և մեծ փառքով ուղևորում է իւր քոյրը Մարաց մեծամեծների հետ։ Աժդահակը Տիգրանուհուն աւագութիւն է տալիս, շինում է նորան թագուհիների թագուհի և այնուհետև սկսում է ամենայն բան նորա խելացի խորհրդով կատարել։ Կամենալով քրոջ ձեռքով հարազատ եղբօրը կորուստ պատրաստել, Աժդահակը զանազան հնարքներով կամենում է քաղցրանալ Տիգրանուհուն և մի օր, վերջապէս, յիշելով այն բոլոր փառքերը, որ վայելում է նա իւր պալատում, աւելացնում է՝ թէ գիտե՞ս, որ քո եղբայր Տիգրանի կինը, Զարուհին, նախանձում է քո տիկնաց տիկին լինելուդ, ուստի և նորա խորհրդով Տիգրանը կամենում է մեզ և մեր թագաւորութիւնը կործանել։ Այս ասելուց յետոյ, առաջարկում է խաբելով կանչել Տիգրանին և սպանել, աւելացնելով միևնոյն ժամանակ, որ եթէ նա չ՚համաձայնուի, ինքն էլ կ՚սպանուի։ Տիգրանուհին չէ խաբվում իւր խորամանկ մարդու առաջարկութեամբ. ընդհակառակն նա հասկանում է, որ բոլոր սէրը և յարգանքը, որ ինքը վայելում էր նորանից, առ երեսս էր և թէ նորա բարեկամութիւնը ստոր է ամենայն թշնամութիւնից. ուստի համեստ ու խոհեմ հայուհին շտապում է գաղտնի կերպով իւր եղբօրն իմացնել բոլորը։

Տիգրանը՝ իմանալով Աժդահակի մտադրութիւնը, պատրաստվում է հարուածել նենգ ու դաւաճան բարեկամին, կան-

խապէս հոգ տանելով իւր անուշիկ քրոջ ազատութեան մասին։ Այս միջոցներին Աժդահակը պատգամաւորներ է ուղարկում և խնդրում է Տիգրանին հիւր գալ իւր մօտ, յայտնելով՝ որ շատ կարևոր գործի մասին ունի խորհրդակցիլ նորա հետ, վերաբերեալ երկու տէրութիւնների երջանկութեանը։ «Մենք շուտով կ՚տեսնուինք միմեանց հետ պատերազմի դաշտումը» — ապսպրում է Տիգրանը։ Այնուհետև Հայոց զօրքը շարժվում է դէպի Մարաց սահմանները։ Այնտեղ պատերազմն ուշանում է առժամանակ, մինչև Տիգրանուհին փախչում է եղբօր մօտ։ Կիւրոսն էլ վերայ է հասնում և դաշնակից զօրքը 535 թ. Ք. Ա. պատերազմ է սկսում։ Մեդացիք սաստիկ հարուած են ստանում դաշնակիցներից և կոտորվում են։ Քաջ Տիգրանի ուժեղ նետը ճեղքում է Մեդացի Աժդահակին և նորա զօրքը փախուստ է առնում։ Պատերազմը վերջանալուց յետոյ Տիգրանը 10,000 մարդ գերելով Մեդացիներից, իրանց Անոյշ թագուհու հետ բնակեցնում է Մասիս սարի արևելեան կողմը, Երասխ գետի ափերումը, որոնցից յետոյ ծագում են Վիշապազունք. իսկ իւր Տիգրանուհի քրոջ համար Երնջակ գաւառումը Տիգրանակերտ քաղաքն է շինում և նորան ու նորա սերունդներին այնտեղ է բնակեցնում։

107. ՎԱՀԷՆ ԵՒ ՀԱՅԿԱԶԱՆՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԱՆԱԼԸ։

Քաջ Տիգրանի հզօր և կազմակերպուած տէրութիւնը երկար ժամանակ փառաւոր կերպով ծաղկում էր։ Նորա սերունդները եթէ չ՚ընդարձակեցին նորա տէրութիւնը, գոնէ պահպանեցին նորան նոյն ամբողջութեամբ, որով ստացան իրանց նախորդից։ Տիգրանի Վահագն որդու քաջագործութիւններն այնքան մեծ և բազմաթիւ էին, որ երգիչները նորան Հ ր ա ծ ի ն էին անուանում, նորա աչքերի ցոլմունքները նմանեցնում էին արեգակի ցոլմանը։ Վահագն այնպիսի մե-

ծամեծ քաջութիւններ արեց, որ նորա մահից յետոյ կռապաշտ հայերն աստուածացրին նորան։ Մինչև անգամ հարևան ազգերն արձան կանգնեցրին և սկսան երկրպագել, ինչպէս էին Վրացիք։ Այսպէս՝ Տիգրանի յաջորդները խաղաղութեամբ կառավարում էին մեր աշխարհը մինչև Վահէ թագաւորը, որի ժամանակ Ալէքսանդր Մակեդոնացին զօրանալով տիրում է բոլոր աշխարհին։ Հայոց թագաւոր Վահէն՝ Պարսից դաշնակցութեամբ, դուրս է գալիս Մակեդոնացի աշխարհակալի դէմ, բայց յաղթվում է նորանից։ Այնուհետև թէ Պարսից և թէ Հայոց վերայ իշխում են Մակեդոնացիք 328 թուականից սկսած։ Հայկազանց իշխանութիւնը տևելով 2200 թուականից մինչև 238 թ. Ք. Ա. վերջանում է։ Թագաւորութիւնը վերջանում է, բայց Հայկը, Արամը, Տիգրանը բարձր ի գլուխ կանգնած, անմահ արձանների նման, վկայում են մեզ մեր անցած փառքի և մեծութեան, մեր անմահ նախորդների անձնուրաց ծառայութեան և հայրենասիրութեան մասին։

108. ԲԱԶԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ։

Դսեղեցի Մեհրաբեան Թումանեան Յովակիմի անունը քարերը սարսափեցնում էր։ Սարերի, ձորերի միջում մեծացած, գազանի ու հարամու արիւնը թափելով էր նորա ոսկորները հաստացել։ Երկու տղամարդ նորա մէջքը չէին կարող խոտրել. Հինգ մարդ նորա մէկ ձեռը չէին կարող ոլորել. Նորա գլուխը մէկ օր չէր ցաւել։ Կերածը մեղր ու կարագ էր, հագածը շալ, կոխածը ծաղիկ, և կանաչ խոտով ծածկուած աղբիւրների ու անտառի միջումն էր աչքը բաց արել։ Նորան ի՞նչ կը դիմանար։ Աժդահայ և ոչ տղամարդ։ Չորս գազ ու կէս հասակն էր, գազ ու կէս թիկունքի լայնութիւնը. կուրծքը ապառաժի պէս հաստ, ամէն մէկ ձեռը մէկ սիւնի չափ, ամէն մէկ ոտքը մէկ կաղնու ճիւղք, պարանոցը մէկ ծառի բնի հաստութիւնով, երեսը մազն եկել, կոխել եր-

կու թզաչափ, ճակատի տակին սև սև ունքերն այնպէս էին բռնել ու նորա արծուի աչքերն ու քիթը կոխել, ինչպէս կարկտախառն ամպը ծածկում է գիշերուան աստղերը։ Ութ եղբայր ունէր, մէկը քան միւսը աժդահայ. ամէն մէկը հինգ—վեց որդի ունէին, շատի ոչ թէ հարսանիքն էին մենակ նորանք տեսել, այլ թոռներն էլ մեծացել, առաջներին խաղում, սարն էին գնում։

Այս Յովակիմը մի օր լողանալիս է լինում՝ անտառից յանկարծ տասնուհինգ լազգի են դուրս գալիս և յարձակվում վերան. ինքն էլ անվրդով ջրիցը դուրս է գալիս և որպէս թէ նորանց բանի տեղ չի գցում, սկսում է շորերը հագնել։ Լազգիքը սովորաբար մարդ չեն սպանիլ, ողջ ողջ կը բռնեն, որ տանեն ծախեն։ Հէնց որ մօտենում են, ձայն է տալիս այս հսկան, որ կանգնեն ու ասում է՝ որ տղամարդութիւնն այն չէ, որ տասնևհինգ մարդ մէկի վերայ թափուին, բռնեն. եթէ սիրտ ունին, իրանք մէկ կողմը կանգնեն ու ինքը մէն—մենակ միւս կողմը. թէ որ յաղթեն, թող այն ժամանակ բռնեն տանեն։ Լազգիքն էլ իրանց գլուխն այնքան ցած չ՚համարելով՝ համաձայնում են։ Առիւծ Յովակիմը հրացանը գցելն ու առաջին մարդին սպանիլը մէկ է անում։ Այս տաք բոպէին էլ գնդակին չի մտիկ տալիս, թուրը հանում է, մէջներն ընկնում. թշնամին երեսը յետ է շուռ տալիս. տասնուչորսին այստեղ այնտեղ ո՛րը թրով, ո՛րը փշտովով (կարաբինայ) սպանում՝ աղցան է անում։ Վերջին տասն և հինգերորդն էլ՝ որ գերու պէս չոքում՝ գլուխը դէմ չի անում քաջին, նա թևիցը բռնում՝ վեր է կացնում ու ասում. «Քո կեանքը քեզ կը բաշխեմ, որ գնաս ձեր երկիրն ու ձեր քաջ ազգին պատմես, որ իմանան թէ մենակ իրանք չ՚գիտեն թուր խփել, թէ Լոռու Դսեղ գիւղումը այսպէս ինձ նման հազարաւորները կան, որ եթէ ուզենան, ձեր երկիրը ոտի տակ կը տան, կը ջնջեն։

Այս Յովակիմը, այս Լօռու ձորերի աստուածը, այս սարերի արծիւը, այս անտառների վագրը՝ մենակ հերիք էր, որ մէկ քարի քամակից ձայն տալիս, մէկ հանդում պատահելիս՝ հարիւր թուրքի լեղին ջուր կտրուի, աչքերը սևանայ։ Այն սևացած՝ արևի և անձրևի ներգործութիւնից մուր դարձած ունքերի տակիցը՝ որ աչքը չէր ընկնում մարդու երեսին, դիմացինը այնպէս էր իմանում, թէ կայծակն է խփում ու սար ու ձոր սևանում իւր գլխին. գետինը կասես թէ պտտում էր և ինքը քար դարձած մնում էր առաջին կանգնած։ Քանի՛ քանի՛ այսպիսի քաջ տղամարդիկ քամակին գցած՝ գիշեր ցերեկ, այս ահագին հսկայն վիշապի պէս պտտում և Լօռուայ ձորերումն ու սարերի գլխին՝ թռչունը երկնքիցը վեր էր բերում, և ձիաւորի ոտի հետքերը բռնած, ձորէձոր ընկնում, հորսէ քամակիցը հասնում ու տասը ձիաւորով հարիւր ձիաւորի մէջը ճղում, ճարդուփուրդ անում, բայց դարձեալ՝ թուրքերի վրաների միջից անցկենալիս՝ ոչ մէկը չէր յամարձակվում, որ աչքը խէթի նորա վերայ։ Ինչպէս ինքն էր մեծացել, այնպէս էլ իր բոլոր ընկերները. ամէն մէկ տան հինգ վեց տղամարդ կար, բացի մեծն ու պստիկը. սարի սեզախոտը, ծաղիկը, աղբիւրը, ձորերն ու այրերն էին նորանց կեանքը, նորանց հոգին։ Փափուկ վերմակների մէջ, տաք վառարանի առաջ ձգուած հօ չէին մեծացել, որ ահ ունենային կամ թուլութիւն։ Շատ անգամ անձրև, կարկուտ գալիս էր՝ — նորանք հանդումը կամ սարումը քնած տեղը՝ գլուխ չէին բարձրացնում, որ քունը չ՚փախչի։ Նրանց վառարանը, նորանց հընոցը իրանց տան մէջ տեղն էր՝ մի լայն օջաղ, երկու երեք ահագին ծառ իրար վերայ գցած, առաւօտից մինչև երեկոյ այրվում էր ու իրանք էլ դռները բաց, շատ անգամ շապկանց, գլխաբաց՝ կրակի չորս կողմը կտրում, խմորը գունտ էին անում, միջումը թխում, միս էին խորովում, հաց էին ուտում ու իրանց ձորերի պատմութիւնն անում և որդին

Հօր պարանոցովն ընկած, եղբայրը քրոջը խտրտած, անմեղ գառի պէս կրակի շուրջը վեր թափվում, քնում։ Մէկ վրդովմունք ընկնելիս էլ՝ իրանց ունեցած չունեցածը ամուր և անմերձենալի ժայրերի մէջ պատսպարելուց յետոյ՝ իրանք Հրացաններն ուսներին՝ սար ու ձոր ոտի տակ էին տալիս։

Ա՜խ, ի՜նչ տեղ են կենում, որ այսպէս չանեն։ Ամենայն քար նորանց Համար գիրք է, ամէն ապառաժ նորանց Համար պատմութիւն, ամէն Հին բերդ, քանդուած մատուռ կամ եկեղեցի՝ որ այդ տեղերը լիքն են, նորանց Համար կենդանի վարժապետ։ Ամէն գերեզման, ամէն արձան նորանց Համար կենդանի վկայ ու պատմագիր։ Լօռուայ անառիկ բերդը, Սանահնի ու Հաղպատի վանքերի պատերը, տաճարները, սրահները նորանց Համար վարժարան։ Իրանք, ճշմարիտ է, կարդալ չ՚գիտեն, բայց սրտներումը երկաթի պէս գրած է թէ ա՛յս այն սուրբ Հողերն են, այն սուրբ դաշտերը, ուր մեծն Շահն-շահ, Աշոտ Բագրատունի, Սմբատ, Զաքարէ սպասալար, Արղութեանց երկայնաբազուկ նախնիք, Յովհան օձնեցի իմաստասէր, Յովհան երզնկացի՝ արծուի պէս խոյանում, առիւծի պէս մռնչում էին ու Հրեղէն սերովբէի ու քերովբէի պէս թուրը ձեռն առած՝ երկրումը՝ Օմարի, Յունաց, Չինգիզխանին, Թամուրլանգին էին քաղում, իսկ երկնքումը իրանց Համար անմահութեան բրաբիոն, անթառամ պսակ էին պատրաստում։

109. ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ։

Հայկազանց իշխանութիւնը վերջանալուց յետոյ՝ Հայոց աշխարհը բաւական ժամանակ օտարների ձեռքի տակ մնաց, մինչև որ մի այլ տոհմ—Արշակունի Վաղարշակ թագաւորի ձեռքով իւր իշխանութիւնը տարածեց Հայաստանի վերայ։ Թէ ինքը Վաղարշակը և թէ նորա յաջորդները բարեկարգում

և ընդլայնում են Հայոց աշխարհը և Հայերի անունն ու Հռչակը տարածվում է այն ժամանակուայ մեծ ազգերի մէջ՝ որպէս քաջ, անվեհեր և իրանց Հայրենիքի փառքի նախանձախնդիր ժողովուրդ։ Վաղարշակի մօտաւոր յաջորդներից գերազանցվում են առաւելապէս Արտաշէս Ա. և նորա որդի Տիգրան Բ-ը, որը մինչև անգամ այն ժամանակուայ ամենահզօր կայսրութեան—Հռոմայեցոց դէմ մի քանի յաղթութիւններ տարաւ։ Բայց Տիգրանի մահից յետոյ, նորա յաջորդների ժամանակ, որոնք առաւել զեղխութեամբ էին պարապում, քան թէ արքունի գործերով, Հայաստանը փոքր առ փոքր ընկնում է Հռովմայեցոց իշխանութեան տակ և մեր թագաւորները Հարկ են տալիս Հռովմէական կայսրութեանը։ Տիգրանի յաջորդներից նշանաւոր էր Աբգարը, որը թէև Հարկ էր տալիս Հռովմայեցոց, բայց իբրև խելացի թագաւոր, կառավարում էր իւր տէրութիւնը խաղաղութեամբ և բարօրութեամբ։ Աբգարի ժամանակն էր, որ մեր Փրկիչ Յիսուսը Երուսաղէմում Հրաշքներ և բժշկութիւններ էր անում և Իսրայէլացոց ազգին քարոզում էր դէպի ապաշխարութիւն։ Աբգարը, լսելով նորա Հրաշագործութիւնների մասին և ինքն էլ Հիւանդոտ ու մարդկային բժշկութիւնից յոյսը կտրած լինելով, դեսպաններ է ուղարկում Յիսուսի մօտ և խնդրում է Նորան գալ, բժշկել իրան Հիւանդութիւնը։ Թագաւորը իւր նամակի մէջ յիշում է այն Հրաշագործութիւնների մասին, որ գործում էր նա Երուսաղէմում և խոստովանում է, որ Նա Աստուած է և Աստուծոյ Որդի, ուստի առաջարկում է Նորան գալ և բնակուիլ իւր քաղաքում, ասելով՝ որ ես ունիմ մի փոքրիկ քաղաք, Եդեսիա անունով, որը ինձ և Քեզ բաւական է. այնտեղ Դու կարող ես խաղաղ լինել և ազատուիլ Հրէաների ամբաստանութիւններից և Հալածանքներից։ Յիսուսը ստանալով Աբգարի նամակը, ասում է։ «Երանի նորան, որ դեռ չ՚տեսած Հաւատում է ինձ, որովՀետև որոնք

տեսնում են ինձ, չեն հաւատում, իսկ որոնք չեն տեսնում, հաւատում են և կապրեն:» Յետոյ աւելացնում է, որ ինքը չէ կարող գալ և նորան բժշկել, որովհետև պէտք է կատարէ այն ամէնը, ինչի համար որ աշխարհ է եկել. բայց խոստանում է իւր մահից յետոյ իրան առաքեալներից մէկին ուղարկել, որ նորան բժշկէ: Յիսուսը իւր նամակի հետ, որ գրում է Թոմաս առաքեալը, ուղարկում է և իւր անձեռագործ պատկերը—Դաստառակը, որը երկար ժամանակ պահվում էր Եդեսիայում:

Յիսուսի յարութիւնից յետոյ, ինչպէս որ Տէրը հրամայել էր, Թոմաս առաքեալը ուղարկեց Թադէոս առաքեալին, որ Քրիստոսի եօթանասուն աշակերտներից մինն էր, Աբգարին բժշկելու: Թադէոս առաքեալն եկաւ, բժշկեց թագաւորին և մկրտեց թէ թագաւորական տունը և թէ պալատականներից շատերին: Աբգար թագաւորը ուրիշ վեհապետների նման չըկամեցաւ ուժով տարածել Քրիստոնէական հաւատը, այլ տուեց իւր հպատակներին խղճմտանքի և կամքի ազատութիւն, ընդունելու նոր կրօնի վարդապետութիւնը. իսկ ինքը միայն բարոյապէս էր նպաստում նորա ընդհանրանալուն: Այս իսկ պատճառով նա երկու անգամ նամակ գրեց Հռոմայեցոց կայսր Տիբերիոսին, յայտնելով այն սքանչելիքների մասին, որոնք գործել էր Յիսուսը և որոնք գործում էին նորա աշակերտները նորա անունով: Կայսրը իւր կողմից Աբգարին խոստացաւ, որ ազատութիւն կ՚տայ իւր հպատակներին դաւանաբանական գործերում և խիստ կերպով կ՚պատժէ նոցա, որոնք կ՚հալածեն քրիստոնեաներին: Աբգարը նամակ գրեց նաև իւր ցեղակից և դաշնակից թագաւորներին — Պարսից Արտաշէսին և Բաբելացոց Ներսեհին նոյն բովանդակութեամբ, ինչպէս էր կայսրինը: Բայց առաջին քրիստոնեայ թագաւորը դեռ չ՚ստացած իւր վերջին երկու նամակների պատասխանը, մեռնում է 32 թուականին Ք. Յ.:

Երբ Թադէոս առաքեալը քարոզում և մկրտում է թէ թագաւորին և թէ պալատականներից շատերին, թագաւորի թագագործ Ադդէին իրան տեղապահ եպիսկոպոս է ձեռնադրում և նորան հովիւ և առաջնորդ է կարգում հաւատացեալների վերայ, իսկ ինքը գնում է Բարձր Հայք, ուր այն ժամանակ թագաւորում էր Աբգարի քեռորդին՝ Սանատրուկը: Թագաւորը և նորա դուստր Սանդուխտը և ուրիշ շատերն ընդունում են քրիստոնէական հաւատը և հիմնում են եկեղեցի: Նոցա համար մի բարեպաշտ անձն, Զաքարիա անունով, եպիսկոպոս ձեռնադրելով, Թադէոսը գնում է Կապադովկիայ քարոզելու:

Աբգարի մահից յետոյ թագաւորում է նորա որդի Անանէն, որ ոչ մի բանով չէր նմանվում իւր խոհեմ և բարեպաշտ հօրը: Հեթանոսական կրօնն աւելի հեշտասիրական լինելով՝ Անանէն բաց արաւ իւր հօր փակած կռատուները և հրամայեց Ադդէ եպիսկոպոսին իրան համար ոսկէ խոյրեր հիւսել: Ադդէն պատասխանում է, որ իւր ձեռքերը խոյր չեն գործիլ այն անարժան գլխի համար, որ չի երկրպագում Յիսուսին, կենդանի Աստուծուն: Այս օրինակ պատասխանը սաստիկ զայրացնում է թագաւորին. նա հրամայում է իւր զինակիրներից մէկին գնալ և նորա ոտները կտրատել: Զինուորը գնում գտնում է եպիսկոպոսին նստած իւր ուսուցչական աթոռի վերայ և բարբարոսաբար կտրատում է նորա ոտները, որից և իսկոյն վախճանվում է սուրբը: Անիրաւ թագաւորը իւր բարբարոսութեան պատիժը շուտով է ստանում: Մի օր կամենալով մարմարեայ արձան կանգնեցնել իւր պալատի պատշգամբի վերայ, արձանը վայր է ընկնում և նորա ոտը փշրելով՝ սպանում է:

Անանէի մահից յետոյ Հայոց թագաւորութիւնը ամբողջապէս Սանատրուկի ձեռքն է անցնում, որ նոյնպէս ուրանում է քրիստոնէական հաւատը և Եդեսիայում ջնջելով Աբ-

գար Թագաւորի արական սերունդը, հալածում է քրիստոնեաներին և հրամայում է կուռքերին երկրպագել։ Թադէոս առաքեալը՝ այս անցքերը լսելով Կեսարիայում, շտապում է վերադառնալ Հայաստան Սանատրուկ Թագաւորի մօտ, բայց երբ հասնում է Միջագետքի սահմանը, նորան պատահում են Հռովմայեցի դեսպաններ՝ հինգ հոգի, որոնք գնում էին Սանատրուկի մօտ։ Թադէոս առաքեալը քարոզում և քրիստոնեայ է դարձնում նորանց, որոնք իրանց գլխաւորի անունով (Խրիւս—ոսկի) Ոսկեանք են կոչվում։ Սանատրուկը երբ լսում է այս անցքը, հրամայում է կանչել Ս. Առաքեալին Շաւարշան քաղաքը և նորան նահատակել է տալիս։ Առաքեալի հետ նահատակվում է և Սանատրուկի դուստր Սանդուխտը։ Անգութ հայրը նոյն իսկ իւր սիրասուն դուստրը զոհում է իւր չար մոլորութեանը։ Ժողովրդից շատերը Ս. կոյսի նահատակութեան ժամանակ սքանչելիք տեսնելով՝ հաւատում են Քրիստոսին և տեղնուտեղը նահատակվում են։

110. ՇՈՒՇԱՆ ՇԱՒԱՐՇԱՆԱՑ։

Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։
Պայծառ պատկեր կուսանաց՝
Հայոց պսակ պարծանաց։
Ճակատն ի քող խորոտիկ՝
Ցանած ի հով խոպոպիկ.
Տարրակ դոտամբ մանրաքայլ
Մանդայ ի դաշտ ցօղափայլ.
Մեղր կաթէ շրթներուն,
Փայլ կը տան աչքըն սիրուն։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Հիւսիսային մեր աստղիկ,
Հայաստանեայց գեղեցիկ,
Արևանման հայելի,
Արքայադստրիկ նազելի,
Սիրասնունդն Սանդուխդ,
Որում արև ելքն ու մուտ՝
Փափագէին սրտմաշուկ,
Հարսն է ելեր շընորհաշուք։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։
Քանց զարուսեակ պըսպըղուն
Ի մէջ մանրիկ ամպերուն.
Քանց վարդենի արևակ
Ի խնձորի տերևակ.
Քանց Երասխայ նունուֆար
Գլխիկն ի ցօղ շարուշար.
Քանց զամէնն այլ գեղեցիկ
Նազլի Սանդուխտըն բամբշիկ։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։
Միպտակ սաւերն յայնոր տես
Հալին լինին կարմրերես.
Ծառ ու ծաղկունք տան պըպլուկ (բողբոջ)
Խօսի ամէն պըլպըլուկ.
Նարկիզ՝ աչեր բիւր հանէ,
Ուր որ Սանդուխտ անցանէ.
Ցայնոր շընչէն հաւասար,
Ծածկին ծաղկով ձոր ու սար։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։
Բարձրապսակ ճակատներ

Հողու հուսար են եկեր.
Ոսկի գոհար տեղ ցանած,
Զորն են լերին հատուցած
Եւ մարգարտէ բարկ աւազ
Ուր որ անցնի Հեզանող
Հայոց օրւորդըն Սանդուխտ՝
Տոտանց հետքին կան ի յուխտ:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Նաւարշան:

111. ՏՐԴԱՏ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ:

Տրդատը Հայոց նշանաւոր թագաւորներից մինն էր: Պատմական դառն պատահարներից ստիպուած, նա դեռ մանուկ հասակում փախաւ Հայաստանից և պատսպարուեցաւ Հռոմէացոց կայսեր պալատում, ուր և ապրեցաւ շատ տարիներ: Նորա մանկութիւնը շատ յաջողակ էր. նա ուսաւ Յունական լեզուն և հարստացրեց իւր միտքը այն ժամանակուայ գիտութիւններով: Տրդատը ֆիզիքապէս եւս չափազանց ուժեղ և անպարտելի անձն էր և Հռոմայեցոց կայսեր պալատում յայտնի էր իւր պատերազմական ընդունակութիւններով: Տրդատի անսովոր ոյժը ցոյց տալու համար բաւական է ասել, թէ ինչպէս նա միանգամ հրապարակական ձիարշաւի ժամանակ բռնեց իւր հակառակորդի կառքի անիւներից և կանգնեցրեց նորան, երբ վերջինս, մտրակելով իւր նժոյգներին, կամենում էր փախչիլ:

Մինչդեռ Տրդատը Հռոմի արքունիքումն էր, Գոթացոց թագաւորը զօրքով եկաւ Հռոմայեցոց Դիոկղէտիանոս կայսրի վերայ 286 թ. և առաջարկեց, որ փոխանակ զօրքերը պատերազմելու, իրանք մենամարտեն և պարտութիւնը յաղթողի կողմը լինի: Տարակուսած կայսրին օգնեց Տրդատը, որ

իբրև արքայազուն, մենամարտելով սպանեց Գոթացի թագաւորին: Կայսրը իւրան երախտագիտութիւնը ցոյց տալու համար պսակեց նորան թագաւորական թագով և իւր բազմաթիւ լեգէօններով ուղարկեց Հայաստան՝ իւր հօր գահը ժառանգելու: Երբ որ Տրդատը հասաւ Կեսարիայ, Հայոց նախարարներից շատերը նորա առաջ եկան: Նախարարների հետ էր և Սմբատ Բագրատունին, որ ըստ նախնական ծիսի պսակեց նորան՝ իբրև Արշակունի թագաւորների թագադիր: Այստեղ Տրդատը միքանի առձեռն կարգադրութիւններ անելով և իւր ցեղին հաւատարիմ մնացած ու որևէ ծառայութիւն արած իշխաններին պատիւ և պաշտօն տալով, Հայոց և Հռոմայեցոց զօրքով մտաւ Հայաստան, հալածական արեց Պարսից զօրքը և ազատեց մեր աշխարհը անիրաւ բռնակալների ձեռքից. Տրդատի պատերազմական բազմաթիւ գործերը մենք չենք պատմիլ միառմի, որովհետև դա շատ կ՚երկարէր. մանաւանդ որ կամենում ենք նորա ներքին բարեգործութիւնների և հեղափոխութիւնների մասին միքանի խօսք ասել:

Երբ Տրդատը դեռ ևս Հռոմումն էր, նորա մօտ ծառայում էր մի Գրիգոր անունով մարդ: Գրիգորի անձնուրաց ծառայութիւնը աննկարագրելի էր: Գրիգորը այն եղեռնագործի (Անակի) որդին էր, որ սպանեց Տրդատի հօրը, Խոսրով թագաւորին, որի ժամանակ և ինքն ու իւրան բոլոր գերդաստանն էլ մերձիմահ թագաւորի հրամանով սպանուեցաւ: Անակի որդիներից միայն Գրիգորն ազատուեցաւ սպանուելուց, այն որդին, որ ծնուել էր Վաղարշապատում. Եւթաղ անունով մի մարդ ազատեց նորան և իւր ստնդու Սոֆիայի հետ տարաւ Կեսարիայ, ուր և մկրտել տուեց և անուանեց նորան Գրիգոր: Գրիգորը կրթուեցաւ քրիստոնէական ուսման մէջ, նաև առաքինութեամբ և ուսաւ հելլէնական դպրութիւն: Յետոյ նա ամուսնացաւ մի Մարիամ անունով քրիստոնեայ աղջկայ հետ և նորանից ու-

նեցաւ երկու զաւակ, Արիստակէս և Վրթանէս։ Երեք տա-
րուց յետոյ երկու ամուսնակիցները միահաւան քակեցին ի-
րանց ամուսնական կապը. Մարիամը փոքր որդին վերառնե-
լով վանք քաշուեցաւ, իսկ Գրիգորը իւր մեծ որդին թողնե-
լով դայեակի մօտ, գնաց Հռոմ։ Գրիգորը լսել էր, որ իւր
հայր Անակը սպանել է Տրդատի հօրը, ուստի և մտքումը
դրեց իւր ծառայութեամբ քաւել հօր յանցանքը։ Գրիգորը
Տրդատի հետ եկաւ Հայաստան։ Երիզայ քաղաքումը, երբ
Տրդատը իւր յաղթութիւնների համար զոհ էր անում Անա-
հիտ աստուծուն, հրամայեց Գրիգորին որ նա էլ երկրպագէ
միւսների նման։ Գրիգորն առաջին անգամն էր, որ ընդդի-
մացաւ իւր տիրոջ հրամանին։ Բարկացած թագաւորը հրա-
մայեց սարսափելի չարչարանքների ենթարկել նորան, մանա-
ւանդ երբ տեղեկացաւ, թէ նա Անակի որդին է. բայց Սուր-
բը անտրտունջ տանում էր ամենը։ Աստուծոյ զօրութեամբ
մխիթարուած և նախախնամութեան տնօրէնութեամբ մեծ
առաքելութեան համար սահմանուած լինելով, սուրբ Գրիգո-
րը դիմացաւ տասն և չորս անտանելի պատիժների։ Այդ պա-
տիժներից յետոյ Տրդատը հրամայեց ձգել նորան մահապարտ-
ների խոր վիրապը, որ գտնվում էր Մասիսի ստորոտում։ Այս
անցքը պատահեցաւ 287 թուին։ Այնուհետև զայրացած թա-
գաւորը միմեանց յետևից երկու հրովարտակ հանեց, որոնցով
խստօրէն արգելում էր քրիստոնէութիւնը և հրամայում էր
ջերմեռանդութեամբ պաշտօն մատուցանել անկենդան կուռ-
քերին։ Գրիգորը տասն և հինգ տարի մնաց Խոր Վիրապում,
որ լի էր թունաւոր օձերով և Աստուածային հրամանով բո-
լորովին անվնաս էր այդ սողունների մէջ։ Աւանդութիւնն
ասում է, որ մի պառաւ կին այդ ժամանակամիջոցում կե-
րակրում էր նորան օրական մի կտոր ցամաք հացով։

Այդ ժամանակներն էր, (301 թ.) որ հռոմայեցոց կայսր
Դիոկղետիանոսի ձեռքից փախան Հայաստան հաւատացեալ

կոյսերի մի խումբ, որոնց առաջնորդներն էին Հռիփսիմէ և
Գայիանէ, որովհետև կայսրը ուզում էր Հռիփսիմէին կին
առնել ուժով, մինչդեռ վերջինս չէր կամենում։ Սոքա եկան
և բնակուեցան Վաղարշապատ քաղաքում մէկ հնձանի մէջ։
Տրդատը Դիոկղետիանոսի նամակից իմացաւ այդ մասին և
տեսնելով Հռիփսիմէի գեղեցկութիւնը, ինքը կամեցաւ ամուս-
նանալ նորա վերայ։ Կոյսն ընդդիմացաւ և թագաւորը կոտո-
րել տուեց բոլոր խումբը, որոնք 35 հոգի էին։ Այս անիրաւ
արիւնհեղութեան համար Աստուծոյ պատուհասը հասաւ թա-
գաւորի և նորա պալատականների վերայ. նոքա կորցրին ի-
րանց խոհականութիւնը և համարեա անասնական բնաւորու-
թիւն ստացան։ Յետոյ Տրդատի քոյր Խոսրովիդուխտի կրկնա-
կի տեսիլներից դրդուած՝ հանեցին Ս. Գրիգորին Խոր Վիրա-
պից, թէև սկզբում նորան արդէն մեռած էին համարում։
Ս. Ծերունին նախ թաղեց կոյսերի մարմինները և շինեց նո-
ցա վերայ վկայարաններ, որին ամենայն եռանդով և իբրև
հասարակ մշակներ մասնակցում էին թագաւորը, նախարար-
ները և Խոսրովիդուխտը, ապա 65 օր թագաւորին, պալա-
տականներին և հասարակութեանը քարոզելուց յետոյ, բժշկեց
նոցա։ Այսպէս ահա 302 թ. Հայաստանում նորոգուեցաւ
քրիստոնէական հաւատը, որ Աբգարի ժամանակ մասնաւորա-
պէս ընդունուել էր և նորա յաջորդների ժամանակ հալա-
ծանքների ենթարկուելով՝ մոռացուել, թէև չի կարելի ուրա-
նալ, որ կային ծածուկ երկրպագողներ ճշմարիտ Աստուծուն։
Այնուհետև Ս. Գրիգորը թագաւորի և նախարարների հետ
պտտեցին Հայաստանի զանազան կողմերը, ամենայն տեղ կռա-
տունները քանդեցին և նորանց տեղը Քրիստոսի խաչը կանգ-
նեցրին։ Այսպէս, այն մարդու որդին, որը սպանելով մեր
արժանաւոր թագաւորին, գցեց մեզ տառապանքների գիրկը,
հանեց մեր աշխարհը և մեր ազգը հեթանոսական խաւարից
և տարածեց նորանում քրիստոնէական հաւատի փրկարար և

կենդանաբեր լոյսը։ Թագաւորը նախարարների և իշխանների միաձայն հաւանութեամբ Ս. Լուսաւորչին ընդհանուր քահանայապետ ընտրեց և ուղարկեց Կեսարիայ Ղևոնդիէս պատրիարքի մօտ, որ Թագէոս առաքեալի յաջորդն էր և խնդրեց, որ ձեռնադրէ նորան քահանայապետ Հայոց Աշխարհին։ Ղևոնդիէսը մեծ ուրախութեամբ կատարեց Տրդատի խնդիրը։ Կեսարիայից վերադառնալով Հայաստան՝ Ս. Գրիգորը քանդել է տալիս մեհեանները և նրանց տեղը եկեղեցիք է կառուցանում. Մուշ քաղաքի մօտ շինում է, ի միջի այլոց, Ս. Կարապետի վանքը, դնելով Սուրբի մասունքների մի մասը, որը մինչև այսօր հռչակաւոր ուխտատեղի է Հայաստանում։ Յետոյ գալով Վաղարշակերտ (Ալաշկերտ) քաղաքը Եփրատ գետում մկրտում է Տրդատ թագաւորին իւր ընտանիքով, բոլոր նախարարներին և զօրքին։ Այնուհետև Լուսաւորիչը թագաւորի հետ շրջելով Հայաստանի ամենայն կողմերը, մկրտում է ամենքին, շատ տեղերում ուսումնարաններ է բաց անում, ժողովում է քրմերի որդիներին և նորանց ուսուցիչ է նշանակում նորաբաց ուսումնարաններում Յոյն և Ասորի լեզուների, որովհետև այդ ժամանակ Հայերը դեռ այբուբեն չունէին և բոլոր գրագրութիւնները օտար լեզուներով էր լինում։ Քրմերի որդիներից արժանաւորներին Լուսաւորիչը եպիսկոպոս է ձեռնադրում և գաւառների ու քաղաքների վերայ տեսուչներ է կարգում, նոյնպէս կարգադրում և բազմացնում է քահանաների և ստորին պաշտօնակալների թիւը. շինում է շատ եկեղեցիք, վանքեր, կուսանոցներ և հեթանոսական տօների փոխանակ սահմանում է քրիստոնէական տօներ։ Եւ այսպէս ամբողջ Հայաստանը հեղաշրջւում է կռապաշտութեան խաւարից դէպի քրիստոնէութեան լոյսը։

Եկեղեցին այսպէս կարգադրելուց յետոյ, Ս. Գրիգորը բաւական ծառայած համարելով ազգին, իւր պաշտօնը յանձ-

նում է իւր Արիստակէս որդուն և ինքն առանձնանում է Սեպուհ սարի վերայ Մանեայ այրի մէջ և իւր վերջին օրերն անց է կացնում մենակեաց ճգնութեամբ (331 թ.)։ Տրդատ թագաւորն էլ, Լուսաւորչի մահից յետոյ, անբաւական իւր նախարարներից, առանձնանում է նոյն այրի մէջ և չնայելով նախարարների խնդրանքին՝ այլ ևս յանձն չի առնում թագաւորել նոցա վերայ։ Նախարարները՝ տեսնելով որ Տրդատը հրաժարւում է նոցա առաջարկութիւնն ընդունելուց, տիրանենգաբար թունաւորում են նորան և այդպիսի դառն վախճան են տալիս մեծ և բարեպաշտ թագաւորի արդիւնաւոր կեանքին։ Սուրբ թագաւորը մեռնում է 56 տարի թագաւորելուց յետոյ։

112. ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Մեծն Ներսէս Գրիգոր Լուսաւորչի որդի Ս. Վրթանէսի թոռն էր։ Սա իւր բոլոր կեանքի մէջ ջանք էր անում, որ քրիստոնէութիւնը և քրիստոնէական առաքինութիւնը ամենայն տեղ տարածուի և հիմնաւորապէս հաստատուի Հայաստանում։ Ներսէս մեծը՝ սնուած լինելով նախ Բիզանդիայում և ապա Կեսարիայում, երբ որ նստեց կաթուղիկոսական գահի վերայ, տեսաւ որ քրիստոնէական դաստիարակութիւնը պակաս է ժողովրդեան մէջ և շատ հարկաւորութիւններ կայ լրացնելու։ Նա այդ բանի վերայ հոգս քաշեց և շատ դժուարութիւնների յաղթելով, կռուեց կռապաշտական մնացորդների դէմ և քրիստոնէութիւնը գործով սկսեց արդիւնաւոր կացուցանել ժողովրդի համար։ Իսկոյն ընդհանուր ժողով կազմելով աշխարհականներից և հոգևորականներից, կռապաշտական խիստ սովորութիւնների տեղ ողորմածութիւն հաստատեց, որովհետև հեթանոսական օրէնքներով բորոտներին, իբրև պիղծ մարդկանց, հալածում էին և նորանք անապատներում

էին իրանց համար բնակութիւն հաստատում և ոչ ոք չ՚կար, որ մխիթարէր նոցա թշուառ վիճակը. անդամալոյծներին չէին խնամում և անծանօթ հիւրերին ու օտարականներին չէին ընդունում: Այս բոլոր բաները, որոնք քրիստոնեայ Հայոց մէջ քրիստոնէութեան ընդդէմ բաներ էին համարվում, ցոյց էին տալիս, որ կուապաշտական սովորութիւններն այն ժամանակ տակաւին չէին կորցրել իրանց նշանակութիւնը և քրիստոնէական մարդասէր օրէնքները տակաւին խոր չէին դրօշմուել նոցա սրտի մէջ: Ներսէս մեծը այս կուապաշտական սովորութիւնների դէմ պատերազմելով, կարողացաւ նորանցից շատերը ջնջել և նոցա հակառակ Հայոց կոշտ կեանքի մէջ մտցնել քրիստոնէական մարդասիրութեան գործադրութիւնը: Նա հրամայեց իւրաքանչիւր գաւառում օտարականների, որբերի, չքաւորների և ծերերի համար կերակրուելու տեղեր պատրաստել: Անապատներում շինել տուեց եղբայրանոցներ և մենաստաններ: Այսպէս՝ մեծն Ներսէսի ջանքով Հայաստանի բարբարոսանման կոշտ կեանքը ստանում է աւելի քրիստոնէական մարդասիրութիւն և բարքերի համեստութիւն:

Արշակ երկրորդի թոյլ թագաւորութեան ժամանակը, Մեծն Ներսէսի կեանքը գլխաւորապէս անցնում էր քրիստոնէական խաղաղութիւն ձգելով նախարարների և թագաւորների մէջ և որքան հնար էր խաղաղացնում էր աշխարհը: Նա մինչև անգամ իբրև խաղաղութեան դեսպան գնաց Յունաց Վաղես կայսրի մօտ և նորանից աքսորուեցաւ և նաւաբեկութեամբ ընկնելով մի անմարդաբնակ կղզի, ութ ամիս ապրեցաւ նորա մէջ:

Թէոդորոս կայսրի ժամանակ Մեծն Ներսէս աքսորանքից վերադառնալով և Արշակի որդի Պապին կայսրի օգնութեամբ թագաւորեցնելով՝ եկաւ Հայաստան և որքան կարող էր՝ բարեկարգեց նորա վիճակը, որ իւր բացակայութեան միջոցին բաւականին աւերուել էր: Սակայն Հայաստանի այսպիսի լուսատու ճրագը Պապ թագաւորի գազրագործ կրքերին զոհ եղաւ և թունալից բաժակը նորա փառաւոր կեանքին վախճան դրեց, որովհետև նա թագաւորին և նախարարներին ցոյց էր տալիս, որ պէտք է հաւատի համեմատ գործ ունենան, չը գրկեն և չ՚անիրաւեն, այլ սիրեն միմեանց և իւրաքանչիւրն իւր պարտքը և իրաւունքը ճանաչէ և կատարէ:

113. ՄԵԾՆ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ:

Ներսէս մեծի մահից փոքր ինչ յետոյ բացվում է այն լայն մտաւոր ասպարէզը, որտեղ իբրև պարագլուխ հայկական լուսաւորութեան՝ հանդէս են դուրս գալիս նորա որդի և ձեռնասուն աշակերտ Սահակ մեծը և իւր լծակից Մեսրոպ Մաշտոցը, որ նոյնպէս Ներսէս մեծի աշակերտն էր: Այս երկու անձանց բարոյական բարձրութիւնը և հայրենասիրական ոյժը դնում է Հայաստանի մէջ այն կենդանական սերմերը, որոնք ծլելով ու վեր աճելով մտաւորական և բարոյական կենդանութիւն են տալիս հայկական սերունդին:

Սահակ վերջին Պարթև կաթողիկոսը, Գրիգոր Լուսաւորչի վեցերորդ սերունդը, 390 թուականին նստելով կաթուղիկոսական աթոռի վերայ, իսկոյն քննեց ժողովրդի դրութիւնը, տեսաւ ու լաւ նկատեց նորա բարոյական ցաւերը և հմուտ բժշկի պէս վերահասու եղաւ և իմացաւ, որ ազգի տարտամ դրութիւնն ամրացնող և զուարթացնող միակ հնարքը քրիստոնէական ուսումն ու դաստիարակութիւնն է: Նա լաւ էր ճանաչում, որ մի ազգի բարոյական և մտաւոր զօրութիւն տալու համար՝ պէտք է ներգործեն սրտի և հոգու վերայ, որ ֆիզիքական կոշտ զօրութիւնը, առանց ներքին համոզման, շատ դիւրաբեկ է. ներքին համոզմունքն է, որ կենդանութիւն և ամրութիւն է տալիս ֆիզիքական զօրու-

թեանը։ Մեծն Սահակ ազգին բարոյական զօրութիւն տալու համար միակ միջոցը ուսումն ընտրեց։

Հայոց գրերը գտնելուց յետոյ՝ Սահակ մեծ ջանք է անում Մեսրոպ վարդապետի հետ Ս. Գիրքը թարգմանել և Վռամշապուհ թագաւորի ձեռնտուութեամբ բանալ ուսումնարաններ և դաստիարակել ազգի մատաղ սերունդը Հայոց գրով և լեզուով և ընդ նմին տնկել ու հաստատել նորա սրտի մէջ քրիստոնէական և ազգասիրական վսեմ պարտականութիւնները և առաքինութիւնները։ Տեսնելով որ Հայաստանում չի կարելի աւանդել աշակերտներին այն վսեմ և բարձր ուսմունքը և գիտութիւնները, որ աւանդւում էին աւելի ծաղկեալ տէրութիւնների մայրաքաղաքների մէջ, որպիսի էին Բիւզանդիայ, Աթէնք, Աղէքսանդրիայ, Եդեսիայ և այլն, Մեծն Սահակ և Մեսրոպ, երբ Ս. Գիրքը և եկեղեցական հայրերի թղթերից շատերն արդէն թարգմանած էին, վաթսունի չափ ընդունակ և ուսմանը բաւականին ծանօթացած երիտասարդներ ուղարկեցին վերոյիշեալ քաղաքները՝ գիտութեանց այլ և այլ բաժինները սովորելու և կատարելագործելու։

Այսպէս՝ Հայաստանի մեղուները՝ իրանց վարդապետի հոգովը թևաւորուած, դիմում էին դէպի գիտութեան ծաղիկները։ Բիւզանդիայի Մաքսիմիանոս եպիսկոպոսը, այնտեղ գտնուող հայ երիտասարդների վերայ մեծ խնամք և սէր ցոյց տալով, նոցա հետ ուղարկեց Հայաստան Աստուածաշնչի ստոյգ և հարազատ օրինակը Յունաց լեզուով։ Սահակ Հայրապետը և Մեսրոպը միանգամ թարգմանածը ստիպուած էին երկրորդ անգամ թարգմանել իրանց աշակերտների հետ այն ստոյգ օրինակից, որ ուղարկել էր Մաքսիմիանոս եպիսկոպոսը։

Մեծն Սահակ, որ ազգի բարօրութեան և լուսաւորութեան համար նուիրել էր իւր անձը, որ իբրև արթուն և անխոնջ հովիւ՝ աւետարանական քարոզութիւնը տարածել էր Հայաստանի ամենայն կողմերը, իւր ծերութեան օրերն անց-

կացրեց Արշակունեաց Արտաշէս վերջին թագաւորի հետ Պարսկաստանում, բանտի մէջ, Հայոց նախարարների ամբաստանութեամբ։ Թէպէտ Հայոց նախարարները, վերջապէս իմանալով իրանց սխալանքը, միաբան աղաչեցին ծերունի Ս. Սահակին, երբ որ նա ազատուել էր բանտից ու վերադարձել Հայաստան, որ յանձն առնէ կաթուղիկոսական աթոռը, բայց Ս. Սահակը՝ մարգարէական նախազգուշութեամբ լցուած, հրաժարուեցաւ այդ առաջարկութիւնից և փոքր ժամանակից յետոյ կնքեց սուրբ մահուամբ իւր բազմաչարչար և օրհնաբեր կեանքը 441 թուին՝ լուսաւորութեան սերմերը խոր արմատացնելուց յետոյ Հայաստանի պտղաբեր մատաղ սրտերի մէջը, որոնցից դուրս են աճում հինգերորդ դարու Հայկական գրականութեան ծաղիկները, իւր հզօր հոգովը կառավարելով կաթուղիկոսութեան աթոռը 51 տարի։ Նորա պատուական մարմինը իւր հարսը՝ Վարդան Մամիկոնեանի կին Դստրիկը՝ տարաւ Տարօնի գաւառը և իրանց Աշտիշատ գիւղումը հանգիստ տուաւ։ Հայոց եկեղեցին՝ ի շարս սրբոց դասելով մեծ Սահակ Պարթևին, տօնում է նորա յիշատակը ամենայն տարի։

114. ՔԱՀԱՆԱՅ։

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վերայ,
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
Գթառատ աչերն լի արտասունքով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած.
Որին ամէնը հայր են անուանում,
Ծանօթ, անծանօթ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղտնիքը նորան են յայտնում։
Քահանայ է նա, քաւող մեղքերու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,

Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնածիր գանձին նա է արթուն դէտ։
  Երբ մենք թաթխուած Ադամայ մեղօք,
Եկանք այս աշխարհ լըցուած ցաւերով,
Ո՞վ սրբեց մաքրեց մեր հին մեղքերը,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով։
  Կամ՝ երբ ժանտախտած ընկած մահճումը,
Մտատանջ, անյոյս մահ էինք խընդրում,
Պանդըխտի նըման ամենից թողած,
Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն։
  Կամ՝ երբ մոլորուած գառներու նըման,
Կոյր վազում էինք դէպի խորխորատ,
Ո՞վ արդեօք այն օր փըրկեց մեզ մահից,
Դիւական գըրէն հանեց անարատ։
  Կամ՝ երբ մեղսալիր աչքերըս բընաւ
Չէինք համարձակում երկինք ամբառնալ՝
Ո՞րին կանչում ենք միջնորդ հաշտութեան,
Ո՞ւմով յոյս ունինք թողութիւն ստանալ։
  Եւ կամ զբաղուած ունայն գործերով,
Մոռցել ենք Աստուած, կըրօն, սուրբ հաւատ,
Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
Արտասունք թափում աչքէն յորդառատ։
  Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սըրբող, յանցանաց քաւիչ։
  Ե՛կ պատուենք, եղբարք, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդոց վերայ
Պատրաստ է հըսկել անքուն աչքերով։
  Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,

Չ'ուզեց փառք, պատիւ, դըօսանք աշխարհի,
Քանց սուրբ թարգմանչան էլ ով է կարող
Արդեօք մեզ համար լինիլ հայր բարի։

115. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ։

Սուրբն Մեսրոպ, մականուանեալն Մաշտոց, էր Տարօն գաւառի Հացեկաց գիւղից, աշակերտ Ներսէս Մեծի և թագաւորների ատենադպիր։ Այլ և քաջ գիտենալով զինուորական կրթութիւնը, սիրելի էր զօրականներին։ Նա անդադար պարապում էր Սուրբ Գիրքը կարդալով, և այսպիսով այնչափ վարժուեցաւ ու վառուեցաւ հոգևոր մասի մէջ, որ թողեց աշխարհը և՝ աբեղայ ձեռնադրուելով, վանք մտաւ. ապա նա միայնակեաց կեանք վարեց Գողթան գաւառում։ Յետոյ Մեսրոպը, որ լոկ կրօնական անձն չէր, այլ ունէր քաղաքագիտական և ազգասիրական բարձր յատկութիւններ, միայնակեցական կեանքն անձուկ համարելով, սկսեց ազգային լուսաւորութեամբ պարապել. նա ժողովեց շատ աշակերտներ, կրթեց նոցա և իւր հետ առած՝ քարոզութիւններ էր անում զանազան տեղեր. այսպիսով ջնջեց մնացած աղանդները և աւելորդ սնապաշտութիւնները Գողթան գաւառից և Սիւնեաց նահանգից։ Այս քարոզութիւնների ժամանակ մեծ նեղութիւն էր կրում, որովհետև ինքն պէտք է Աստուածաշունչ Գիրքը և՛ կարդար, և՛ թարգմանէր հայերէն։ Այս դժուարութիւնները ստիպում են Մեծ Մարդուն մտածել հայկական տառերը գտնելու, որ նպատակով էլ նա շատ փորձեր արեց, բայց անօգուտ։ Ապա իմանալով Ս. Սահակ հայրապետի բարեկամութեան համբաւը, եկաւ նորա մօտ ու յայտնեց իւր մտադրութիւնը և տեսաւ, որ այդ մի և նոյն բանի գիտով նա ևս զբաղուած է։ Ս. Սահակը ժողով գումարեց Վաղարշապատ քաղաքում, ուր մեր Վռամշապուհ թագաւորը յայտնեց, որ

ինքն երբեմն Միջագետք լինելով, մէկ Յաբէլ երէց ասել է նորան, թէ Դանիէլ եպիսկոպոսի մօտ կան Հայոց նշանագրեր։ Այս նշանագրերը բերել տուին և թէև երկու տարի շարունակ սկսան փորձեր անել և նորանցով ուսուցանել, բայց աշխատանքներն իզուր անցան, որովհետև ձայնաւոր տառերը պակաս էին։ Ս. Մեսրոպը կամեցաւ աւարտել սկսած աշխատութիւնը, ուստի մի քանի աշակերտներով գնաց Դանիէլ եպիսկոպոսի մօտ, որ միասին խորհեն և, եթէ հնար է, լրացնեն տառերի պակասորդը, բայց այս ևս զուր անցաւ։ Մեսրոպը՝ աշակերտներից մի քանիսին Դանիէլի մօտ թողնելով, երկուսի հետ գնաց Եդեսիայ Պղատոն անունով ճարտասան հեթանոսի մօտ։ Այս ևս անօգուտ անցաւ։ Վերջապէս նա գնաց Սամոսատ Հռոփանոս փիլիսոփայի մօտ, բայց իզուր։ Եւ այսպէս՝ օտարների օժանդակութիւնից և մարդկային հնարներից ունայն մնալով, ապաւինեցաւ Աստուծուն և անձնատուր լինելով իւր մտածութեանը՝ վերջապէս գտաւ ցանկացած տառերը 406 թուին։

Գլխաւոր դժուարութիւնը վերցրած էր մէջ տեղից։ Երանելի վարդապետը Սամոսատում ուսումնարան բաց արաւ և իւր աշակերտ Յովհան եկեղեցականի և Յովսէփ Պաղնացու օգնականութեամբ Սողոմոնի Առակաց գիրքը և Նոր Կտակարանը թարգմանեց. իսկ երբ վերադարձաւ Վաղարշապատ, թագաւորը, հայրապետը և բոլոր բազմութիւնը մեծ ուրախութեամբ ընդունեցին նորան, նորագիւտ նշանագրերի և նորաթարգման մատեանների հետ և այն օրը ուրախութեան տօն կատարեցին։ Բացուեցան ուսումնարաններ, ծաղկեցաւ հայերէն դպրութիւնը զարմանալի յառաջադիմութեամբ։ Այնուհետև Մեծ Մարդը հնարեց Վրաց և Աղուանից գրերը։ Յետոյ Ս. Սահակի հետ գնաց Հայաստանի արևմտեան մասը, որ Յունաց բաժնումն էր, որտեղից Մեսրոպը Ս. Հայրապետից դեսպան ուղարկուեցաւ Թէոդոս կայսրի մօտ, և իւր մեծ

գիտութեան համար պատուեցաւ «Էկլէսիաստիկոս» կոչմամբ։ Ս. Սահակից յետոյ վեց ամիս կառավարեց Հայրապետական աթոռը և կնքեց իւր արդիւնաւէտ և յաւիտեան անմոռաց կեանքը։ Հայաստանը դեռ այն ժամանակ ցոյց տուեց նորան իւր երախտագիտութիւնը և Վահան Ամատունի իշխանը մեծ յուղարկաւորութեամբ նորա սուրբ մարմինը հանգստացրեց Օշական գիւղումը և նորա վերայ շինեց եկեղեցի։ Հայրենեաց բարերարների յիշատակը օրհնութեամբ և երախտապարտութեամբ յիշուի . . . :

116. ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ։

«Հա՛յրիկ, տաղ գուարը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Որքան աստղեր փայլում են վառ,
Ասես համար թիւ չը կայ.
Ասում են որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.
Ցրշմարիտ է, աա՛, հայրիկ,
Իմը ո՞ր տեղ է փայլում։»
—Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,
Եւ մեզանից իւրաքանչիւրն
Մի աստղ ունի իւր համար։
«Հա՛յրիկ, տե՛ս, տե՛ս, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքից
Միւս անգամ այլ չ՚երևեց։»
—Ո՛վ իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը

Խիղճ տանը չը գիտէր.
Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածուած
Մի մարդ չըկար նորան ծանօթ,
Որ չըլինէր վըշտացած։
«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չ՚երևեց։
—Ո՛վ իմ զաւակ, մի վրդովուիր,
Դա աղջկայ մի աստղ էր,
Որ իւր հօր ու մօր խօսքը
Իւր կեանքումը յարգած չէր.
Նա փախել էր իւրեանց տնից...
Մուր էր քսել տան վերայ...
Իւր ծնողքը լացուցել էր,
Ինչքը վատնել անխնայ։
«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.
Հայրիկ, ո՞վի աստղն էր արդեօք
Որ զրկուեցաւ իւր տեղից։
—Ո՛հ, դստրիկս, հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր.
Փարիսական իւր ձևերով
Աշխարհք խաբեց, զարմացուց,
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարեցուց։
«Հայրիկ, տես, տես, մի աստղ թռաւ
Եւ գիծ անգամ չ՚թողեց.

Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չ՚երևեց։»
—Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,
Բռնակալի դա աստղ էր,
Որ աշխարհը իւրեան գերի
Ծնած օրից կարծել էր.
Շատ հալածանք, շատ նեղութիւն,
Պատճառեց նա իւր կեանքում,
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,
Գութ չ՚ունեցաւ իւր սրտում։
«Ապա այն ի՛նչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվում է.
Նորա մաքուր, պայծառ լոյսը
Զորս կողմը բակ բռնել է։»
—Ո՛հ, իմ դստրիկ, աղօթք արա,
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչինչ մարդու
Ոչինչ վընաս տուած չէ.
Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործերը.
Աղօթք արա, որ երկարին
Նորա կեանքի թելերը։

117. ՄԷԿ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԲԱՆ։

Մի անգամ վրաց Հերակլ թագաւորը պատերազմելու եկաւ Երևանի Հուսէյն-Ալի խան սարդարի դէմ։ Սարդարը՝ նկատելով իւր թուլութիւնը, Հայոց Սիմէօն կաթուղիկոսին միջնորդ գցեց և մի քանի խոնարհական պայմաններ ընդունելով, հաշտութիւն կապեց թագաւորի հետ։ Հերակլը Երևանից ուխտ գնաց Էջմիածին և մեծ պատուով ընդունուեցաւ։

Աշտարակի իշխաններից մինը, Գէորգ խալֆան, թագաւորին աղաչեց, որ Էջմիածնից վերադառնալիս Աշտարակով անցնի և իւր տանը հիւր լինի։ Թագաւորը խոստացաւ, որ երեք հարիւր ձիաւորով կը գայ։ Գէորգ խալֆան մեծ պատրաստութիւն տեսաւ։

Երբ որ թագաւորը Աշտարակ հասաւ, շատ գոհ մնաց, որ Գէորգ խալֆան նորա 300 ձիաւորին էլ իւր տուն ընդունեց։ Ամէնքի համար ըստ արժանաւորութեան տեղ էր պատրաստել. բոլոր ձիանքը նորա մեծ գոմումը տեղաւորուեցան և կարծես թէ ոչինչ անսովոր բան չէր պատահել։

Շատ հաճելի թուեցաւ թագաւորին, երբ որ իւր բարձի վերայ նստած տեսաւ երեք երեխաներ, որոնք՝ թագաւորը մտնելուն պէս, վեր թռան և միաբերան ձայն տուին. «ոտնամուտդ բարի, տէր թագաւոր։»

«Ի՛նչ գեղեցիկ երեխայք ունիս, Գէորգ խալֆայ, դարձաւ դէպի տանտէրը թագաւորը. Աստուած քեզ բաշխի. բայց բանն այն է, որ միմեանց նման չեն. այս մի տղադ, ասաց թագաւորը բռնելով Վարդի ձեռքը, ճակատիցն երևում է, որ քաջ պէտք է դուրս գայ. այս միւսը՝ դարձաւ դէպի Թորոսը, շատ խելօք աչքեր ունի, իսկ աղջիկդ միանգամայն Վրաստանի թագուհի կարող է դառնալ իւր գեղեցկութիւնով։»

—Փառք իմ ստեղծողին, տէր թագաւոր, ասենք Աստուած ինձ երեխայք չի տուել, բայց էլի իմն են սոքա. այս մի տղան ու աղջիկը իմ ազգականներն են, իսկ միւսը մի աղքատ որբ է, որ մեզ մօտ է մնում ու մեր զաւակիցը պակաս չենք սիրում։

«Կը գա՞ս ինձ հետ՝ քեզ տանեմ, դարձաւ թագաւորը դէպի Վարդը, ինձ մօտ կը պահեմ, լաւ մարդ կը շինեմ։»

—Թէ որ Մամուշակին էլ կը տանես, ես էլ կը գամ. ես սորանից հեռանալ չեմ։

«Մանուշակը որ գնայ՝ իսկի մէկ րոպէ ես այստեղ կը

կենա՞մ. ձեզանից յառաջ կը վազեմ, դուրս ընկաւ Թորոսը. քեզ է կանչում, դու գնա՛, էլ ուրիշի հետ ի՞նչ գործ ունիս։

—Վարդը որ գնայ, ես էլ կը գնամ, թոթովեց աղջիկը. ես Վարդին շատ եմ սիրում։

«Այս դեռ թո՛ղ, յանկարծ ծանրակշիռ դէմք առած, մըտածողական գծագրութիւն երեսի վերայ կերպաւորելով, դարձաւ Թորոսը դէպի թագաւորը. ասենք դու կատակ ես անում, ոչ դու մեզ կը տանես, ոչ էլ մենք կը գանք. բայց թէ դու այդպէս լաւ թագաւոր ես, ի՞նչու ես մեր գիւղը թուրքի ձեռին թողում, մենք մեղք չե՞նք. այս ի՞նչ է մեր դրութիւնը. այս փողոցի բազմութիւնը տեսա՞ր, որ կանգնած էին, նորանց միջին մի մարդ չ՚կայ, որ հարիւր անգամ ծեծ կերած չ՚լինի. մէկ թուրքի [illegible] գալիս՝ մեր գիւղը արիւն արտասունքը տանում է. ի՞նչ կը լինի, որ գաս մեզ սորանց ձեռից ազատես։ Մեր գիւղացիք ամէնքն էլ վախենում են. ես դեռ փոքր եմ, մեծ որ լինէի, ամենևին չէի վախենալ. Աստուած տայ մի մեծանամ, քեզ չափ մարդ դառնամ, տես թուրքերի գլուխն ի՞նչ եմ բերում։

Թագաւորը սառած մնաց։ Բոլոր կանգնողները զարմացան։ Բոլորովին անհնար էր հաւատալ, որ մի փոքրիկ մանուկ, որին բերել, բարձի վերայ նստացրել էին, որպէս զի թագաւորի ոտքը խերով լինի, այդպիսի խօսքեր կ՚ասի։

—Դու ո՞ւմ տղան ես, հարցրեց Թորոսին թագաւորը՝ քմծիծաղ տալով։ Պարզ երևեցաւ, որ նա կարծեց, թէ խօսքերը սովորցրած, երեխայի բերանն են դրած։

«Ինձ հայր չունիմ, որբ եմ. մէկ տէր-տէր կար, Տէր Յարութիւն կ՚ասէին, նորա տղան եմ։»

—Քեզ ո՞վ սովորեցրեց այդ խօսքերը, որ ինձ ասես, Գէորգ խալֆան։

«Ինչի՞, ես խելք չունիմ, որ ուրիշները սովորեցնեն, կո՞յր

եմ. ամենայն օր չեմ տեսնում, թէ ինչ են անում Թուրքերը մեր գիւղը գալու ժամանակ։

—Հաւատա՛, տէր Թագաւոր, քո գլուխը վկայ, որ մենք էլ քեզ հետ առաջին անգամն ենք լսում դորա բերանից այդ խօսքերը։

«Ա՜յ տղայ—բացականչեց Թագաւորը—լուսի բաժին է սորա հայրը, որ այսպիսի տղայ է յետ գցել։ Ա՜խ, երանի չէր, դարձաւ նա դէպի իւր քամակին կանգնած մի վրացի զօրապետ, որ իմ Գեօրգի որդին էլ այս երեխայի նման յոյսեր խոստանար. ես վախենում եմ, որ նա մեր ունեցածն էլ կորցնի։

—«Եթէ դուք հանգիստ ապրել էք ուզում, աչքով նշանացի անելով ուրիշներին, ասաց Հերակլը Թորոսին, էլ ինչի էք այստեղ մնացել, այս Թուրքի աշխարհումը. եկէք ձեզ տանեմ մեր երկիրը. այնտեղ ազատ ու հանգիստ կապրիք, ոչ ոք ձեզ նեղութիւն չի տայ. այնտեղ շատ Հայեր կան, նորանց լաւ լաւ երեխայք ունին, նորանց հետ կը խաղաք։

«Մենք մեր գիւղը թողե՞նք, ուրիշ տե՞ղ գնանք. վե՞ր գըցենք շինած տուն, տեղ, այգի, կալուածք, մեր ծիրանաւորը, մեր եկեղեցիքը, մեր Մուղնու Ս. Գէորգը, ու գնանք օտար աշխարհք, շլինքներս ծռենք, որ մեզ ողորմութիւն անեն, տուն, տեղ, ապրուստ տան։ Չէ, թէ որ ինձ մնար, ես կ՚ուզէի՝ օրը տասն անգամ Թուրքերն այստեղ ինձ ծեծէին, քան թէ ուրիշ աշխարհում ականջս դինջ ապրէի։ Թէ որ մի ճար ունիս, այստեղ արա՛, թէ չէ՝ քո աշխարհքը գալը խելքումս չի նստում։»—Սերտած խօսքերի նման այս բառերը դուրս եկան Թորոսի բերանից։

Թագաւորին այնքան զգալի եղաւ Թորոսի ասածները, որ մոլորուածի նման չէր իմանում՝ ինչ պատասխանի։

—Այս երեխան մեծ յոյսեր է խոստանում, ասաց նա։ Աստուած տայ, երկարակեաց լինի։

—Եթէ այդպէս է, եթէ դուք չէք ուզում ձեր երկիրը թողնել, ես քեզ խօսք եմ տալիս, թէ որ Աստուած մի յաջողութիւն տուեց, մի օր գամ ու Երևանի երկիրը պարսից ձեռքիցն ազատեմ։ Ես քեզ տալիս եմ իմ թագաւորական խօսքը, գիրկն առնելով ու կուրծքին սեղմելով՝ ասաց թագաւորը. բաւական են քեզ իմ ասածները։

Կարծես թէ Հերակլը մոռացել էր, որ իւր խօսակիցը մի մանուկ է։

«Թէ որ մեծացած լինինք, ես ու Թորոսն էլ քո ձեռի տակը կը մտնենք ու Թուրքերին կը կոտորենք», մէջ մտաւ Վարդը՝ ոչ այնքան համարձակ։

«Ես էլ ամեն կիւրակէ բոբիկ ոտով Սանդուխտ տատիս հետ Մողնի կ՚երթամ, աղօթք կ՚անեմ, որ Աստուած քո թուրը կտրուկ անի, Վարդն ու Թորոսն էլ ողջ առողջ յետ գան, թոթովեց Մանուշակը։

Չէր իմանում ինչ անէր թագաւորը. երկար ժամանակ երեք երեխային փոխեփոխ համբուրում էր. վերջը մէկ մէկ ոսկի ընծայեց ու բաց թողեց։

Համադամ խորտիկների անուշահոտութիւնը Գէորգ խալֆի տուն ու դուրսը բռնել էր։ Սողոմոնենց Գասպարը պարտիզումը վրաց իշխաններին էր կառավարում, իսկ ինքը—տանտէրը անմիջապէս մեծապատիւ հիւրի առաջին, ձեռքերը խաչած, սպասաւորներին էր հսկում։

Միւս առաւօտ՝ գնալու ժամանակ, Հերակլը մի քանի անգամ կրկնեց, որ ինքը մի բան իւր կեանքումը երբէք չի մոռանալ, այն է Թորոսի սուր խօսակցութիւնը։

Դուք էլ չ՚մոռանաք, սիրելի՛ կարդացողներ, որ Թորոսը վերջը այն մեծ հայրապետը դարձաւ, որի անունը բոլոր Հայերս սերունդէ սերունդ պարտաւոր ենք յիշել։ Սա Ներսէս Ե-դ հայրենասէր կաթուղիկոսն էր։

---

118. ՄԻ ԱՅԼ ՆԵՐՍԷՍ։

Հայոց ազգը միշտ պատուել ու պաշտել է իւր կրօնի և ազգի բարերարներին. նա շատ նուիրական տեղեր ունի իւր համար սիրելի ու յարգելի. նա մեծամեծ հալածանքների ու բռնակալութիւնների ժամանակներումը կարողացել է մի երկու օր, մի երկու շաբաթ միջոց ճարել և գնալ իւր սիրելի սրբութիւնները համբուրելու։

Մինչև այսօր ևս հազարաւոր ասպարէզները մի ժամի չափ ճանապարհ են թւում ջերմեռանդ Նոր-Նախիջևանցուն կամ Հաշտարխանցուն ու Ղզլարցուն, առ ոչինչ են համարում նորանք բոլոր կրած նեղութիւնները, եթէ արժանանում են համբուրել մեր կռապաշտ պապերից մեզ յանձնուած աւանդը, Անահիտ աստուածուհու ոսկէ արձանի տեղը, ուր մեր Լուսաւորիչը կանգնացրեց եօթն անուան տէր Սուրբ Կարապետի վկայարանը։ Առանց ուրախութեան արտասուք թափելու չի կարող մեզանից ոչ ոք տեսնել Տաճկաստանի խորքերից՝ Արմաշից, Զէյթունից, Փասը գլխին, լայն վարտիքներով, իրանց մայրենի լեզուն իսպառ մոռացած քաջ հայերին, որոնք իրանց ճղոտ երեսի և բիրտ պատկերի վերայ ճանապարհի ազդեցութիւնն էլ միացրած, կէս ժամով ծնկների վերայ ընկած մնում են, արինաթաթախ սուրբ Գեղարդի, Սուրբ Գրիգոր բաբայի Աջի և ուրիշ հրաշագործ մասունքների առաջին, Յիսուսի իջման տեղը, Էջմիածնի հրաշակերտ տաճարի մէջ։

Եթէ հեռաւորներն այսքան երջանիկ են համարում՝ իրանց կեանքի մէջ միանգամ գոնէ այն սրբարար հողերը համբուրելու, ինչ կարծիք, որ մերձաւորներին ոչինչ բան արգելք չի կարող դառնալ՝ տարէնը մի անգամ գնալ դէպի իւր ազգի պարծանաց տունը։ Թո՛ղ այսօր էլ Էջմիածին չ՚տեսնողը գայ ինձ հետ սեպտեմբերի վերջերում, Վարագայ խաչի

կիւրակէ օրը, Հայոց մայր աթոռը և տեսնի, թէ քանի՛ գերդաստան կը գտնի մի քանի օրուան ճանապարհից եկած։ Այս ուխտաւորները միանգամից երկու փափագ են առնում. Շաբաթ օրը Մողնու սուրբ Գէորգի գլխաքարն են համբուրում, իսկ կիւրակէ օրը Էջմիածնում Ղազարապատի ու վանքի ընդարձակ բակերն են լցվում. սայլերի մի ծայրը Վաղարշապատի հրապարակումն է լինում, իսկ միւս ծայրը մինչև Ներսէս կաթուղիկոսի անտառն է ձգվում։

II.

Ներկան թողած՝ մենք վերադառնանք մի այդպիսի հանդիսաւոր օր, հոկտեմբերի սկզբներին, 1770 թուականին, Վարագայ սուրբ խաչի պահոց օրը՝ Էջմիածին։

—Ծառայ եմ, Հո՛գևոր տէր, շնչասպառ տուն ընկաւ վեհարան վանքի հաւատարմատար Գալուստ եպիսկոպոսը. Երևանից չորս մ՚հասիլ են եկել, էլ մեծ ու փոքր, վարդապետ ու եպիսկոպոս չ՚հարցրած, ջարդում են. «շուտ արէ՛ք, տեղ պատրաստեցէ՛ք, ասում են. խանը 50 ձիաւորով էգուց գալիս է այստեղ Էջմիածնին ուխտ։»

—Չէ՞ որ վերջացաւ այդ վնասակար սովորութիւնը. սա ինչ նոր բան է։

—Մ՚հասիլներին ոչինչ չենք կարող հասկացնել. նորանք ուղարկուած են ամէն անօրէնութիւններն անելու։

—Լաւն այն է, որ ասես՝ օր առաջ յափշտակութիւններն սկսելու, խոր հառաչանքով պատասխանեց Էջմիածնի բարեկարգիչ Սիմէոն կաթուղիկոսը. գնա՛, Գալուստ եպիսկոպոս, կանչէ՛ր նրանց այստեղ։

Չէր վերջացրել բազմահոգ ծերունին այս խօսքերը, որ շաթիրների սենեակում մի քանի սովորականից դուրս համարձակ քայլերի ձայն լսուեցաւ։ Վերջին խօսքերի հետ դուռը

թնդումով յետ բացուեցաւ և չորս գլահաւորուած պարսիկներ ներս թափուեցան։

Կաթուղիկոսն իւր հեզ և քաղցր դէմքին տուեց մի խոժոռ ու վեհ հրամայական կերպարանք, վսեմութիւնով գլուխը վեր բարձրացրեց և աչքն ուղղակի առաջին պարսկի վերայ ձգեց, որ միւսներից նախապատիւն էր իւր շքանշաններով։

—Ի՞նչ էք, ո՞վ էք, ի՞նչ էք ուզում, ի՞նչպէս յանդգնաբար առանց հարցնելու ներս էք թափվում, ահարկու ձայնով գոռաց կաթուղիկոսը. ձեզ ո՞վ տուն թողեց, ինչի՞ չ՚սպասեցիք իմ հրամանին, ո՞ւմ դիմացն էք առանց գլուխ տալու այդպէս համարձակ կանգնում. միքանի խիստ հարցեր միմեանց յետևից շարեց նա։

Մհախլապետը, որ երբէք չէր սպասում այդպիսի մի դժուար դրութեան, մունջ կորուեցաւ և մինչև ծունկը երեք անգամ խոր գլուխ տուեց և ձեռքով նշանացի իմացրեց իւր թիկնապահներին, որ յետ կանգնեն։

—Խալֆան ողջ լինի, կմկմաց նա. մենք մեծափառ Հուսէյն Ալի խան սարդարի ծառաներն ենք. նորա հրամանով եկել ենք յայտնելու, որ մեր տէրը էգուց կամենում է գալ ձեզ հիւր։

—Խանը մեր գլխի վերայ տեղ ունի, վեհութիւնը չ՚փոխելով՝ ձայն տուեց կաթուղիկոսը. բայց դու ո՞րքան անպիտան մարդ ես եղել, որ այսքան ժամանակ կարողացել ես խաբել խանին, որ նա քեզ մի օրինաւոր լրաբեր համարելով, ինձ մօտ պատգամաւոր է ուղարկել։ Խանը քեզ պատուիրե՞լ է, որ դաս վանքի մէջ լրբաբար վարուիս, քեզ հրամայե՞լ է, որ իւր կեանքի համար աղօթք անող խեղճ վարդապետներին ծեծես, այն աստիճան կորցնես խանի պատիւը, որ առանց իրաւունք հարցնելու նորա սիրելի խալֆայի մօտ ներս ընկնիս, նորա աղօթքի րոպէները խանգարես։—Գնա՛, հրամայեց

խելօք ծերունին Գալուստ եպիսկոպոսին, թուանքչիք կանչի՛ր ու սրանց կապոտեց, բանդարկեն, իսկ ինքդ արժանաւոր պատրաստութիւն տես խանին ամենայն յարգանքով ընդունելու։ Գնա՛ շուտով, աչքով նշանացի արեց Գալուստ եպիսկոպոսին և ձայնն աւելի բարձրացրեց, կանչի՛ր թուանգչիք ու իմ հրամանս ճշտութեամբ կատարի՛ր։ Իսկ դուք, տէրը խաբող տրգէտ ծառաներ, չ՚համարձակուիք տեղից շարժուիլ, մինչև որ ես էգուց ցցի վերայ բարձրացնել տամ ձեզ։

Սիմէօն կաթուղիկոսը ոչ միայն հոգևորական էր, նա և երևելի քաղաքագէտ էր. նա իմանում էր վարուելու ձևը։

Մհախները ծնկի վերայ ընկան ու չոքէչոք մօտեցան դէպի կաթուղիկոսի ոտները։

Ոչ Գալուստ եպիսկոպոսը և ոչ կաթուղիկոսը չէին նրկատել, թէ ինչպէս այդ միջոցումը մի 8–9 տարեկան նիհար, մանր ու սուր աչքերով ուսումնարանի աշակերտ ներս էր մտել, լսել սուրբ հայրապետի խօսքերը և դուրս գնացել։

Դեռ եպիսկոպոսը տեղից չէր շարժուել, որ չորս կարմիր գանգապաններ հագած շաթիրներ և վեց թուանգչի մանուկի առաջնորդութիւնով ներս մտան։

—Ձեզ ո՞վ կանչեց, զարմացմամբ և ծանրութեամբ հարցրեց կաթուղիկոսը։

—Ես, հոգևո՛ր տէր, դուրս պրծաւ երեխան. ես փոքր ժամանակ յառաջ ներս եկայ յետևի դռնից պապիս կանչելու (այս ասելով՝ նա գլխով ցոյց տուեց Գալուստ եպիսկոպոսին). լսեցի քո հրամանը և էլ չ՚ուզեցի ուշացնել՝ գնացի սրանց բերի, որ թուքերին կապոտեն։

Երեխայի արարքը կաթուղիկոսին ու եպիսկոպոսին զարմանք ու ծիծաղ պատճառեց։

—Արի աջս առ, ասաց հայրապետը մանուկին. իրաւ որ կրակի կտոր, և համբուրելով երեխայի ճակատը, կամաց ցուցամատով խփեց երեսին և շաթիրներից մէկին հրամայեց, որ

տանեն մինչ տան նորան։—Երանի՜ այն աչքերին, որ սորան մեծացած կը տեսնէ, Գո՛լուստ եպիսկոպոս, ասաց ծերունին. ես նախանձում եմ, որ դու այդպիսի սանիկ ունիս. կըներգ գալի՛ր։

—Վերկացէ՛ք, վերջապէս հրամայաբար գոչեց կաթուղիկոսը իւր ոտքերն ընկած մհաջիրներին. Խալֆան ներողամիտ է. ձեր կեանքը բաշխում եմ այն պայմանով միայն, որ իսկոյն վերադառնաք Երևան և միառմի պատմէք մեր ողորմած խանին, ինչ որ տեսաք ու լսեցիք։ Եթէ մի խօսք բաց էք թողել, էլի ձեր գլուխը կը թռչի։ Վերջումը՝ խնդրեցէք իմ կողմից խանին, որ ձեր կեանքը ձեզ բաշխի։ Սպասեցէ՛ք, հրամայեց նա, երբ թուրքերն անդադար գլուխ տալով՝ յետ յետ էին դիմում։

—Բերէ՛ք ներսիցը մի թօփ կարմիր մախմուր ու չորս թօփ կանաչ ղադաք, դարձաւ կաթուղիկոսը դէպի շաթիրը։

—Ահա՛ այս մախմուրը տարէք քնքուշիկ Սուլէյման խանին, և նորա մօրը՝ մեծ տիկնոջը ընծայ, իսկ այս ղադաքը ձեզ արխալուխացու։ Հեռացէ՛ք։

Եասաւուլների դուրս գնալուց յետոյ, կաթուղիկոսը դարձաւ դէպի Գալուստ եպիսկոպոսը և ասաց. «Գնա՛, Գալուստ եպիսկոպոս, մեր հին սովորութիւնները միտդ բեր, պատրաստութիւնների հոգս քաշիր. «բզի գլխին բունցքով տալ չի լինիլ.» ուրիշ հնարքներ պէտք է մտածել մեր իրաւունքները չ՚կորցնելու համար։

III.

—Մի օր այս նեղութիւններին վերջ չ՚պէ՞տք է լինի, հոգևո՛ր Տէր, յանկարծ հարցրեց Թորոսը, որ վաղուց միրգը գրպանն առած՝ դուրս էր եկել այնտեղ կանգնել։ Մի՞թէ մեր ճակատին գրուած է, որ մենք միշտ ուրիշներին գերի

լինինք. Հէնց երէկ Մակար վարժապետը մեզ պատմեց, որ Հայերի մի մասն էլ Օսմանցու ձեռին է և թէ ամեն տեղ էլ անասունի պէս կոտորում են. այս ի՞նչից է, մի՞թէ Հայը թուրքի չափ ույժ չունի։ Իմ միտքս է գալիս, քանի ես դեռ Աշտարակումն էի, այդ անօրէն թուրքերը ինչեր չէին բերում խեղճ գիւղացոց գլխին, ապրանքը տիրոջ ձեռքիցն էին խլում, աղջիկը մօր ձեռքիցը։ Մի անգամ էլ ես մեր գոմի կտուրին կանգնած՝ ականատես էի մի այդպիսի չարչարանքի։ Հարիւր անգամ ձայն տուի մեր տղաներին, որ մօտ գնան, թուրքերին սպանեն, աղջկանն ազատեն. ոչ ոք տեղիցը չ՚շարժուեցաւ։ Այն օրից դէսը ես այդ ղզլբաշներին շան պէս ատում եմ։ Ես ու իմ Աստուածը, հոգևո՛ր տէր, դու լաւ չարի՛ր, որ մհաջիրներին ազատեցիր, խօսքը փոխեց Թորոսը. երբ որ ես տուն մտայ ու քո խօսքդ լսեցի, որ պատրիս հրամայում էիր գնալ, թուանգչիք կանչել, ուրախութիւնից սանդխտի չորս մատը միանգամից էի թռչում. տեսա՛ր ոնց ձեռաց հաւաքեցի, առաջիդ կանգնացրի։ Բայց սիրտս՝ ոնց որ մի դանակ խրեն, երբ որ վերջումը կեանքներն էլ բաշխեցիր, դեռ խալաթ էլ տուիր։»

Չիմացաւ զգայուն ծերունին, թէ ինչպէս ինքը նստած տեղից վեր էր կացել ու այս փոքրիկ երեխայի առաջին կանգնել և դատավճիռը լսող յանցաւորի նման՝ լսում էր մանկան խօսքերը։

Ո՞վ կարող է մեզանից գուշակել, թէ այդ րոպէին ինչեր էին անցնում կաթուղիկոսի մտքից, ինչ ալեծուփ մտքեր տատանում էին նորա անվրդով հոգու խաղաղութիւնը. դէմքից երևում էր, որ այս րոպէին իւր հետ խօսողին ոչ թէ 8—9 տարեկան մի երես առած մանուկ, այլ մի բազմափորձ ու քաջ հսկայ էր կարծում։ Երևում էր, որ ցաւահար ու վշտահար հայրապետն ինքն էլ չէր իմանում, թէ իւր խոշոր ու վսեմ աչքերից միմեանց յետևից սիսեռի հատիկների նր-

ման արտասուքներ էին թափվում և երեսի կնճիռների առուակներով ցած գլորվում, ալեզարդ մօրուքի մէջ անյետանում։ Գալուստ եպիսկոպոսն արձան կտրած՝ մնացել էլ կանգնած. սա էլ ոչ պակաս շարժուել էր իւր սանիկի խօսքերից։

Կարելի է շատ կը խօսէր Թորոսը, եթէ աղեբեկ Հայրապետը առաջ չ՚քաշէր նորան, չ՚սխմէր իւր գրկումը և չ՚ասէր, համբուրելով նորա ճակատը. «Աստուած տայ, որ մեծանաս և սրտիդ փափագն առնես։ Այսուհետև դու իմ որդին ես. հէնց այս րոպէից, Գա՛լուստ եպիսկոպոս, խլում եմ քեզանից քո սանիկին. սա այսուհետև կ՚երթայ ուսումնարան և կը վերադառնայ վեհարան։

Բաւական ժամանակ մանկանը գրկից դուրս չէր թողնում կաթուղիկոսը. պարզ նկատելի էր, որ յիշողութեան մէջ մի միտք է ամփոփում՝ Տրդատ, Գրիգոր, Սահակ, Մեսրոպ, Վարդան, Ղևոնդ, Ներսէս... լսելի ձայնով միմեանց յետևից շարում էր նա յիշեալ անունները։

—Ներսէ՛ս, Ներսէ՛ս, շեշտելով երկարացրեց նա իւր ձայնը, դո՛ւ, մանուկս, այսուհետև ոչ թէ Թորոս, այլ Ներսէս պէտք է կոչուիս. դու պէտք է լինիս մեծն Ներսէսը։

119. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԸ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՒԱՏԻ ՀԱՄԱՐ։

Յազկերտ թագաւորի մտադրութիւնը. նորա հրո՛վարտակը. Հայերի պատասխանը. նախարարները Պարսկաստան կանչուիլը. նախարարների համարձակ պատասխանը. Թագաւորի չար խորհուրդը. նախարարների կեղծ ուրացումը և հայրենիք վերադառնալը։

Պարսից Յազկերտ թագաւորը՝ Յունաց դէմ ունեցած յաղթութիւններով հպարտացած, կամեցաւ գլուխ բերել իւր նախորդների մտադրութիւնը Հայերի վերաբերութեամբ, այն է՝ ջնջել նոցա քրիստոնէական կրօնը և այսպիսով թէ քակել այն

միակ կապը, որով, ըստ նոցա կարծեաց, կապուած էին Հայերը քրիստոնեայ տէրութիւնների հետ և թէ զրկելով նոցա իրանց սուրբ կրօնից, դիւրացնել պարսկանալու և նոցա հետ լուծուելու խնդիրը։ Այս պատճառով Յազկերտը իւր խորհրդատու մոգերից և Միհրներսեհ հազարապետից գրգռուած՝ մի հրովարտակ ուղարկեց բոլոր քրիստոնեայ ազգերին, գլխաւորապէս Հայոց, Վրաց և Աղուանից։ Այդ հրովարտակի մէջ նա բացատրում էր Զրադաշտական օրէնքի առաւելութիւնները և ստիպում էր քրիստոնէութիւնը թողնել ու իրանց մոխրապաշտութիւնն ընդունել։ Հայոց նախարարները՝ Վարդան սպարապետի և Յովսէփ եպիսկոպոսի առաջնորդութեամբ մի ընդհանուր ժողով արեցին Արտաշատ քաղաքումը և թագաւորի նամակը հերքելով, պատասխան գրեցին, որի հետ և յայտնեցին թագաւորին, թէ մենք չենք կարող այդպիսի պահանջ կատարել, որովհետև մեր հաւատը աւելի մեծ և սրբազան առաւելութիւններ ունի քան ձերը։

Երբ Յազկերտն ստացաւ Հայերի համարձակ պատասխանը, կարդաց իւր մեծամեծների և մոգպետների առաջ և ալեկոծուած ծովի նման սկսեց տատանուիլ. կատաղեցաւ ինչպէս մի վայրենի գազան և չարասէր մարդկանց հաւանութեամբ կրկին անգամ հրաման գրեց, որ բոլոր Հայոց նախարարները իւր արքունիքը հաւաքուին և դէմ յանդիման պատասխան տան նորան։ Այս երկրորդ հրամանը Հայաստան հասաւ թէ չէ, իսկոյն ամէն նահանգից, ամէն գաւառից և ամէն քաղաքից հաւաքուեցան նախարարները և իրանց հայրենիքին ու ազգականներին մնաս բարով ասելով՝ ճանապարհ ընկան։ Մնացող հայերն էլ պատուիրեցին նոցա, որ եթէ իրանց հաւատն ու ազգն ուրանան, ամենևին էլ յետ չ՚դառնան իրանց հայրենիքը, ապա թէ ոչ՝ ամենին միասին կ՚կոտորեն։

Նախարարները տեղ հասան։ Թագաւորն այս անգամ նո-

ցա այնպէս պատուով չ՚ընդունեց, ինչպէս սովորութիւն էր. ընդհակառակն՝ սկսաւ բարկանալ, գոռալ և գըրգռացնել բոլոր թագաւորական պալատը և ասել: «Եթէ մինչև առաւօտ չէք մտածիլ և չէք ընդունիլ իմ հաւատը, բոլորիդ այստեղ գտած տանջանքներով սպանել կ՚տամ և անթիւ ու անհամար զօրք կ՚ուղարկեմ, որ ձեր երկիրն ապականեն, ձեր տները քանդուքար անեն և ձեր եկեղեցիքն աւերեն: Նախարարները պատասխանեցին թագաւորին, թէ մինչև այսօր քեզ այնպէս հաւատարմութեամբ ենք ծառայել, որպիսին քո ազգի մէջ էլ չես գտնիլ: Բայց ինչ որ ասում ես մեր հաւատը փոխելու և մեր եկեղեցին քո իշխանութեան տակը ձգելու համար, այդ անհնարին բան է: Մեր եկեղեցին մարդու պարգևած չէ, որ մարդու խօսքով նորան ուրանանք: Ինչ պատիւ, ինչ նշանազգեստներ և որքան պարգևներ մեզ տուել ես, բոլորն մենք կարող ենք մերկանալ և քեզ տալ, բայց մեր եկեղեցին Աստուծունն է, նորան բոլոր աշխարհիս հետ չենք փոխիլ: Այս է բովանդակ աշխարհիս և մեր պատասխանը:

Թագաւորը՝ 'ի խոր խոցուած, հրամայեց որ ամենքին հեռացնեն իւր երեսից և զգուշութեամբ պահպանեն: Այնուհետև սկսաւ ծածուկ պարգևներ խոստանալ նախարարներին, որ իրանց միտքը փոխեն, և երբ որ տեսաւ թէ հնար չ՚կար, իւր մեծամեծների հաւանութեամբ խորհուրդ արեց, որ բոլորին կապեն ու աքսորեն շատ հեռու տեղեր և իրանք արձակ համարձակ մտնեն Հայաստան և իրանց հաւատն ու օրէնքները տարածեն: Այս խորհուրդ անողների միջից մինը, որ ծածուկ քրիստոնեայ էր և հայերին շատ էր սիրում իրանց սուրբ կրօնասիրութեան պատճառով, գիշերով եկաւ, հայ նախարարներին յայտնեց թագաւորի միտքը և խորհուրդ տուեց նոցա, որ առերես ընդունեն մոգութեան օրէնքը և թագաւորին խաբեն, նորա կամքը կատարող ձևանան և ապա դառնալով իրանց երկիրը, բոլոր ազգը թիկունք առնեն և ընդդէմ կենան Պարսիկներին:

Նախարարներն այս խորհուրդը բաւականին հաւանական գտան: Նոքա յայտնեցին թագաւորին, թէ հնազանդ ենք քո հրամանին:

Թագաւորը՝ երբոր լսեց, խաբուեցաւ իջաւ իւր կատաղի բարկութիւնից, սկսաւ ուրախանալ և ցնծալ և մեծամեծ պարգևներ ու ընծաներ բաժանել նախարարներին, քաղաքներ և գիւղեր ընծայել, գահ ու թագեր խոստանալ: Հրաման հանեց, որ ժողովուին իւր թագաւորութեան գլխաւոր մոգերը և իշխանները, կարգադրողները և գրողները, զօրապետները և զօրականները և զանազան պատուէրներով, ընծաներով և հրամաններով ճանապարհ ձգեց դէպի Հայոց Աշխարհը, ինքն էլ բաւական տեղ առաջնորդելով, որ գնան Հայոց մէջ պարսկականութիւն տարածեն: Բայց պէտք է իմացած, թէ ինչքան խորամանկութիւններ և սատանայական հնարքներ էր գործ դրել իւր պատուէրների և հրամանների մէջ: Պատուիրել էր իւր մոգերին և իշխաններին, որ Հայոց մեծամեծներին կաշառքով ու պատուով, իսկ ռամիկ ժողովրդին սպառնալիքով և վախեցնելով խաբեն: Ասել էր, որ Հայոց աղջիկներին շուտով ուսուցանեն պարսկական ուսումը, որ մայր դառնալով՝ իրանց զաւակներին մեծացնեն պարսից հոգով: Հրաման էր տուել, որ Հայոց օրիորդները պսակուին պարսիկների հետ, և կանանց համար պատուիրել էր, որ պարսից կանանց պէս հագնուին և նոցա լեզուով խօսին: Իմանալով, թէ վատ հոգևորականների ձեռքով շուտով կարող է իւր նպատակին հասնիլ՝ հրամայել էր, որ առատ ռոճիկ սահմանեն քահանաների համար և մեծամեծ պատիւներ խոստանան իշխաններին, որ նոցա ձեռնտուութեամբ և օգնութեամբ վերջացնեն Հայոց կրօնական ծէսերը, տօնախմբութիւնները, եկեղեցական երգեցողութիւնները, և, մի խօսքով, շուտով վերջացնեն Հայոց եկեղեցին:

Երբ այս կործանիչ պատուէրներով և հրամաններով Հայաստան էին մտնում Պարսից չարասէր իշխաններն ու մոգերը մնացած բազմութեան հետ՝ համբաւը հայերին հասաւ: Հայաստանի գաւառների, քաղաքների և գիւղերի մէջ շուտով աղմուկներ և

դըղրդումներ վերկացան։ Բոլոր հոգևորականութիւնը ոտի կանգնեց. եպիսկոպոսներ, վարդապետներ և սարկաւագներ տարածուեցան ամեն տեղերում, քարոզեցին ու յորդորեցին ժողովրդին, որ ամենքը՝ կին և մարդ, ծեր և մանուկ, ազնուական և շինական մի հոգով վառուին, մի հաւատի զրահ զգենուն և մէկ տեղ հաւաքուելով՝ դէմ կենան Պարսիկներին — կամ կոտորեն նոցա, կամ իրանք կոտորուին, հայ — քրիստոնեայ անունը իրանց վերայ պահպանելով։ Ծերերը գաւազաններով, պառաւները դողդոջուն ոտքերով, կանայքը՝ հարուստ ու աղքատ խառնուած, ոմը բոբիկ, ոմը մերկ, ոմը երեխաները գրկին կամ շալակին, տղամարդիկը զրահաւորուած՝ հաւաքուեցան, որ պահպանեն մեր հաւատը, մեր պապերից աւանդած արարողութիւնները։ Մանաւանդ երբ լսեցին, թէ մոգերի հետ եկող նախարարներն էլ խօսք են տուել թագաւորին, որ նորա կամքը կատարեն, աւելի բորբոքուեցան և խօսք կապեցին, որ ուրացածներին ամենևին չխնայեն, մինչև անգամ հայրը իւր ուրացած որդուն, եղբայրն իւր ուրացած եղբօրն իրանց ձեռքով քարկոծեն և սպանեն։ Տակաւին չէին իմանում, թէ միայն թագաւորին խաբելու և իրանց հաւատի սիրոյ համար են երեսանց հնազանդուել նորա կամքին, այս պատճառով էլ լացով և աղաղակով սկսան երկինք ու երկիր դղրդացնել, սար ու ձոր արտասուքով շարժել, յառաջ գնալ և յանդիմանել նախարարներին։ Խեղճ նախարարները կամենում էին մօտենալ և փարել իրանց ազգականներին, իրանց կանանցը, գրկել իրանց որդոցը. բայց սոքա փախչում էին նոցանից ճչալով, ինչպէս թշնամի և վնասակար մարդկանցից։ Վերջապէս նախարարներն առաջ եկան և հասկացնելով նոցա բոլորը, միացան նոցա հետ և սկսեցին մոգպետին, մոգերին և նոցա հետ եկած զօրքերին դէմ կենալ։ Հոգևորական և աշխարհական խառնուած, որը խաչը բռնած, որը աւետարանը ձեռին, որը փայտերով ու զէնքերով՝ ջարդեցին ու հալածեցին բոլոր մոգերին ու մոգպետին, որոնք արդէն սկսել էին քանդել մեր եկեղեցիքը. աւելի լաւ էին համարում գետին մտնել, քան թէ կենդանոյն տեսնել իրանց եկեղեցիքը քանդուած, իրանց երկիրն ոտնակոխ եղած և իրանց մէջ պարսից օրէնքները հաստատուած։ Այնուհետև Հայոց զօրքերը յարձակուեցան և լցեցին շատ բերդեր, որոնց մէջ արդէն զետեղուել էին պարսիկները։

Պարսից մեծամեծ իշխանները և մոգպետը, երբ որ տեսան

Հայերի այս համարձակ և անվախ հայրենասիրութիւնը, սարսափեցան և շուտով թուղթ գրեցին — իմացրին թագաւորին, որ եթէ բովանդակ Պարսից աշխարհի մարդիկը մոգեր դառնան, ծով ու ցամաք, սուր ու կրակ, երկինք ու երկիր վերկենան և մեր աստուածներն անգամ աշխարհ գան, չեն կարող Հայերին իրանց քրիստոնէական հաւատից հեռացնել։ Սոքա այնպիսի մարդիկ են, որ իրանց հաւատն ու ազգութիւնը պահպանելու համար պատրաստ են ամեն բան յանձն առնել և ոչ մէկ բանից չ՚վախենալ. սոքա մահն աւելի լաւ են համարում, քան թէ կեանքը, միայն թէ իրանց հաւատով և հայութեամբ մեռնին։

Ուրացեալ Վասակը. Նորա գերութիւնը. Հայոց զօրքի յաջողութիւնները։ Վասակի դարձը։ Հայերը դիմում են Յունաց կայսրի օգնութեան։ Վարդանի քաջագործութիւնն Աղուանից աշխարհում։ Վասակի դաւաճանութիւնը։

Սակայն մեր անուանի նախարարներից մինը, Վասակ մարզպանը, որին Պարսից թագաւորը մեծամեծ երկիրներ, պարգևներ և ուրիշ պատիւներ էր խոստացել, և որը յոյս ունէր նոյն թագաւորից ստանալ մինչև իսկ թագաւորական թագ, իսպառ ուրացել էր իւր հաւատը և միշտ ջանահնար էր լինում, որ միւս Հահերին էս խաբէ և իւր կողմը քաշէ. այս պատճառով էլ սկսաւ Պարսիկներին խրատել, որ ուրիշ կերպով վարուին Հայերի հետ, այն է՝ պատուով, քաղցրութեամբ, մասամբ էս թոյլտուութեամբ։ Վասակի հնարքներով պարսիկները հանդարտեցին շատերին մեր Հայերից, որպէս թէ թագաւորը ներողամիտ է դէպի Հայերը, և սկսան պատիւներ ու գանձեր բաժանել մի քանի փառախնդիր հոգևորականների և աշխարհականների և գիշեր ու ցերեկ պարերելով, խաղալով և երգելով անցկացնել ու շատերին իրանց կողմը որսալ։ Բայց ինչը կարող էր թուլացնել միւս ջերմեռանդ և բազմաթիւ Հայերին։ Այո, մի քանիսը փառասիրութեամբ և շահասիրութեամբ որոգայթի մէջ բռնուեցան, բայց հասկացողներն լաւ էին իմանում, որ այսպիսի բաներով Պարսիկներն աշխատում են Հայերին քնացնել, նոցա հոգին մեռցնել և այսպիսով յափշտակել և գողանալ նորա ամենամեծ ճոխութիւնը և ամենահարուստ ժառանգութիւնը, այն է եկեղեցին։ Այս պատճառով էլ պա-

տուև յետևից ընկած վասակներին համարեցին նրանց առաջին և ամենավտանգաւոր թշնամի և նրանց ուխտին հաստատ մնալով՝ կամեցան վերջնականապէս առաջն առնել արդէն տարածուող գայթակղութիւններին և հաւատափոխութիւններին. ուստի բոլոր միաբանական զօրքը երկու մասի բաժանելով՝ երկու կողմից յարձակուեցան Պարսից բանակի վերայ, կոտորեցին, հալածեցին և շատ պարսիկ մեծամեծների էլ գերի արեցին, որոնց մէջ էր և ուրացող Վասակը։ Այնուհետև Հայոց զօրքը յարձակուեցաւ այն քաղաքների վերայ, որոնցում բուն էր դրել կրօնափոխութիւնը. աւերեցին, կործանեցին և մոգերի մնացորդներին հալածեցին ու նոցա կրակատուները քանդեցին։ Շատ տեղ հէնց ինքը ժողովուրդն էր կատարում այս ամէնը՝ առանց զօրքի օգնութեան։

Բայց անօրէն Վասակը՝ գերի ընկնելով, երդումով միաբանում էր նոցա հետ, որ հաստատ կ՚մնայ նորանց ուխտին. ապաշխարելով ընկնում էր սուրբ եպիսկոպոսների ոտները և աղաչում, որ նորան նրանցից չ՚հեռացնեն, երկու, երեք անգամ երդվում էր բոլոր բազմութեան առաջև, գրում էր երդումը, կնքում և կապում էր Ս. Աւետարանից, որ նոքա մարդկաբար չ՚սպանեն նրան, այլ աղաչում էր, որ Աստուծոյ վրէժխնդրութեանը թողեն։ Նախարարները, թէպէտ հաստատ իմանում էին նորա խաբեբայ կեղծաւորութիւնը և կասկածում էին, որ գուցէ կրկին յետ դառնայ դէպի իւր հին մոլորութիւնը, բայց ափսոս, մեծանձնաբար ներեցին և Աւետարանի դատապարտութեանը յանձնեցին։

Մինչդեռ Հայոց զօրքերն այսպէս յաջողութեամբ հալածում և մաքրում էին նրանց աշխարհը մոգական մոլար կրքից, Աղուանից աշխարհից նոցա եպիսկոպոսը և հազարապետը Հայերից օգնութիւն են խնդրում, յայտնելով, որ Պարսից գունդը մտել է Աղուանից աշխարհը և սպառնում է եկեղեցուն։ Հայերը՝ այս դառն համբաւը լսելով, չ՚վհատեցան, այլ մի ընդհանուր ժողով կազմելով, վճռեցին և դիմեցին այն ժամանակուայ քրիստոնէայ տէրութեան՝ Յունաց Թէոդորոս կայսրի օգնութեանը։ Հայերի տարաբախտութիւնից՝ բարեմիտ կայսրն այդ օրերը վախճանուեցաւ և նորա յաջորդը հրաժարուեցաւ հալածուող քրիստոնեաներին օգնելու և իւր հովանաւորութեան տակն առնելու։

Օտարներից նրանց յոյսը կտրած՝ մեր նախնիքը ապաւինեցան նրանց գէնքին և վճռելով մինչև վերջին շունչը պատերազ-

մել ու պաշտպանուել՝ բոլոր գունդը երեք մասի բաժանեցին — առաջին զօրաբաժինը յանձնեցին Ներշապուհ Ռմբոսեանին, որ պաշտպանէ Ատրպատական Աշխարհի կողմերը. երկրորդ զօրաբաժինը յանձնեցին Հայոց Վարդան զօրավարին, որ Վրաստանից անցնելով՝ Աղուանից աշխարհին օգնութիւն հասնէ։ Իսկ երրորդ զօրաբաժինը յանձն առաւ Վասակ Սիւնեաց իշխանը, որ սրտանց չէր հեռացել հեթանոսների ուխտից և որը խորամանկութեամբ քաշուեց իւր աշխարհի բերդերը, իբրև թէ կամենում է նեղ ճանապարհով յարձակուել Պարսից զօրքի վերայ և հալածել Աղուանից աշխարհից։

Բայց Վասակն այն ծածուկ անկիւնից շտապով դեսպան ուղարկեց Պարսից զօրավարի մօտ, յայտնելով՝ թէ ահա քանդեցի Հայոց միաբանութիւնը և զօրքը բաժանելով երեք կողմ ուղարկեցի։ Առաջին զօրաբաժինն ուղարկեցի Հերայ և Զարևանդի կողմերը. երկրորդ զօրաբաժինն իմ իշխանութեան տակն է, որոնց թոյլ չեմ տայ վնասելու թագաւորական զօրքին. բոլոր միւս պատերազմող մարդկանցը, որ գտնվում էին այստեղ, ցրուեցի զանազան կողմեր. իսկ երրորդ զօրաբաժինը, որ աւելի փոքրաթիւ էր, Վարդանի առաջնորդութեամբ ուղարկեցի Աղուանից աշխարհը։ Համարձակ դուրս արի նորա դէմ և բոլորովին մի երկնչիր պատերազմ տալուց. ես գիտեմ, որ նոքա քո մեծ զօրութեան առաջ կ՚յաղթուեն։ Պարսից զօրավարը, երբ լսեց Վասակի այսպիսի քաջալերութիւնը և ճշմարիտ իմացաւ, որ Վարդանը փոքրաթիւ զօրքով է գալիս իւր վերայ, չ՚մնաց Ճորայի սահմաններում, այլ ժողովեց իւր զօրքի բոլոր բազմութիւնը, շուտով անցաւ Կուր գետը և պատահեցաւ նորան Վրաստանի սահմանումը, Խաղխաղ քաղաքի մօտ, որ Աղուանից թագաւորների ձմերոցն էր։ Այդտեղ բանակ դնելով, բոլոր ընդարձակ դաշտը ծածկում էր զօրքերով, որոնք բոլորովին պատրաստ էին պատերազմ տալու Հայոց զօրքի հետ։

Բայց քաջ Վարդանը և իւր բոլոր զօրքը, երբ որ տեսան հեթանոս զօրքի առաւելութիւնը, նայեցան և նրանց սակաւութեան վերայ։ Չ՚վհատուեցան քաջերը նոցա մեծ բազմութիւնից, այլ բոլորը միաբան ձեռները դէպի երկինք բարձրացնելով՝ աղօթեցին Աստուծուն և միախումբ յարձակուեցան թշնամու վերայ. թշնամու զօրքի աջ թևը ջարդելով ու ձախովը գցելով, բոլորովին սրի

կերակուր աբին պատերազմի դաշտում, իսկ մնացածներին հալածեցին անտառային պինդ տեղերը, Լոփնաս գետի խորին ափերի մօտ, ուր մի քանի Թագաւորազունք Հայոց Նախարարներից մինին, Մուշեղին, վայր գցեցին ձիուց և սպանեցին, իսկ Գադրիկին վիրաւորեցին: Այստեղ աչքը վերև բարձրացրեց Արշաւիր Արշարունին, գոչեց առիւծաբար և յարձակուեց վարագաբար, խփեց, սպանեց Լփնաց Թագաւորի եղբօրը, քաջ Վուրգին, և նորա թիկնապահներից շատերին էլ կոտորեց: Եւ այսպէս առհասարակ ամենայն մարդ իւր հակառակորդին երկիր էր կործանում: Եւ յարձակմունքի սաստկութիւնից գետում խեղդուողների թիւն աւելի էր, քան սրից սպանուածներինը: Սպանուածների դիակների շատութիւնից գետի պարզ ջուրն արիւն դարձաւ, և ոչ ոք չ'կար նորանցից, որ թագկենալով դաշտերի թանձր մայրիների մէջ՝ ապրէր: Բայց թշնամու զօրականներից մինը՝ հազիւ կարողանալով ազատուել պատերազմից, բօթ տարաւ մնացած զօրքերին, որոնք լսելով այս, փախան դէպի Պարսկաստան:

Այնուհետև Հայոց զօրքը ժողովեց հարուստ աւարը, որ մնացել էր պատերազմի դաշտումը և մտնելով Ազուանից աշխարհը, մաքրեց նորան Պարսիկների ներկայութիւնից և ազատեց եկեղեցին ապականութիւնից: Հայերի այս սխրագործութիւնները տեսնելով Ազուանից Նախարարներից շատերը սրտապնդուեցան և դուրս գալով իրանց ամուր տեղերից, միացան Հայոց զօրքի հետ: Աշխարհքը մաքրելուց յետոյ, Վարդանը դաշն կապեց Հոնաց և նոցա բարեկամ մանր ցեղերի հետ, միմեանց օգնելու պայմանով: Այսպէս երրորդ անգամ զգալի հարուած տուեց Վարդանը իւր մի բուռն զօրքով Պարսից ահագին գնդին:

Մինչ այս, մինչ այն, ահա բօթաբեր է հասնում Վարդանի մօտ և յայտնում է, որ Վասակը նորա բացակայութեան ժամանակ սկսեց ասպատակել Հայաստանը և սրի կերակուր անել իւր եղբայրակիցներին: Վարդանանք՝ մեծ աւար վերառած, շտապեցին Հայաստան: Վասակը, երբ իմացաւ Վարդանի քաջագործութիւնը և նորա մօտենալը, մի գիշեր ծածուկ փախաւ պահուեցաւ իւր աշխարհի ամուր տեղերում, թողնելով բոլոր աւարը, որ հաւաքել էր իւր հայրենիքից, իւր եղբայրակիցներից: Վարդանը Հայաստան հասաւ, և որովհետև ձմեռ էր, զօրքը մի քանի մաս բաժանեց և պահով տեղեր ձմերելու ուղարկեց, իսկ ինքը մի փոք-

րիկ գնդով այնպէս նեղը գցեց Վասակեաններին, որ նորանք քաղցածութիւնից սկսան սատկած էշերի և ձիերի միսը ուտել: Երբ որ *քրիստոնեաներն* այսպիսի յաջողութիւններ էին անում, բոլոր եպիսկոպոսներն ու երէցները պատուիրեցին մեր աշխարհին, որ ամբողջ քաղոց (դեկտեմբեր) ամիսը պաս պահելով աղօթք անեն և պատերազմի յաղթութեան տօնը խառնեն Քրիստոսի սուրբ տօնի հետ:

Վասակը շարունակում է իր նենգութիւնները: Հայոց զօրքերը ժողովվում են Արտաշատ քաղաքը: Առանձար Ամատունու զօրաբաժինը. Աւարայրի մեծ ճակատամարտը եւ Վարդանի մահը:

Վասակը, որ ազգի առաջաւոր իշխանն էր, ուրացաւ իւր հաւատը. այս դեռ բաւական չէր, նա թէ կաշառքներով, թէ սուտ խոստմունքներով իւր կողմը ձգեց շատերին, որոնց մէջ կային և մի քանի անարժան քահանաներ. վերջիններիս օգնութեամբ ըսկսեց մոլորեցնել շատ պարզամիտ մարդկանց. սորանով էլ չ'բաւականացած, նա խաբեբայութեամբ խառնուեցաւ միաբանուած զօրքի հետ և նորանց մի քանի մասը ճեղքեց. մի մեծագոյն մասն իւր իշխանութեան տակն առնելով՝ ասպատակեց իւր բուն հայրենիքը, մինչդեռ Վարդանը բացակայ էր, իսկ Վարդանի գալուց յետոյ, դարձեալ դադար չառաւ չար դեւը, այլ զանազան հնարներով կապել տուեց Ճորայ դուռը, որ Յոները — Հայերի միակ դաշնակիցները, չ'կարողանան նոցա օգնութիւն հասնել, և այնուհետև սկսաւ գործով և խօսքով օժանդակել Պարսից Միհրներսեհ Հազարապետին, ցոյց տալով, թէ ովքեր են Հայոց մէջ գլխաւոր ույժ կազմողները և որոնց դէմ պէտք է ուղղել պարսիկ զէնքի գլխաւոր զօրութիւնը: Երբ բոլոր բանը Վասակից տեղեկացաւ, Միհրներսեհը կանչեց իւր բոլոր զօրավարներին և պատուիրեց նորանց որ նորա հրամանը կատարեն, իսկ զօրքի ընդհանուր հրամանատարութիւնը յանձնելով Մուշկան Նիւսալաւուրդին, ինքը գնաց Պարսկաստան:

Երբ մեծ Վարդանը տեսաւ իւր աշխարհի երկճեղքումը, ամենևին չ'վախեցաւ: Հրաման տուեց բոլոր զօրքին ժողովուել Արտաշատ քաղաքը, և այն իշխանների փոխանակ, որոնք բաժա-

նուելով՝ գնացել էին Սիւնեաց իշխանի կողմը, կարգեց իւր ազգականներին։ Այնուհետեւ բոլոր հաւատարիմ իշխաններն իրանց զօրքերով միասին դիմեցին դէպի Աւարայրի դաշտը։ Բոլոր զօրքի թիւը, հեծելազօրն և հետեւակ, 66,000 էր։ Նոցա հետ եկան նաև Ս. Յովսէփ եպիսկոպոսը, Ղեւոնդ երէցը և ուրիշ շատ հոգեւորականներ, որովհետեւ նոքա ևս աներկիւղ պատրաստ էին կռւի դուրս գալ և մասնակից լինել այն քաջ նահատակութեանը, որ սպասում էր ամենին։

Այստեղ Վարդան սպարապետը նախարարների միաբանութեամբ մի ազդու և ընդարձակ ճառ խօսեց....

Այս խրախուսական ճառից յետոյ առանձին առանձին ևս քաջալերում և ոգի էր տալիս ամենքին, հոգում և լրացնում էր ամենի պակասութիւնը, պատմում էր նոցա թէ նախնիների քաջութիւններն ու նահատակութիւնները և թէ անօրէնների և ուրացողների անյիշատակ կորչելը այս և ապագայ աշխարհի տանջանքներում, և այսպիսով ոգի ներշնչելով ամենքի մէջ, մի մի Վարդան էր ստեղծում նոցանից։

Այդ ժամանակ Պարսից բազմաթիւ զօրքն էլ եկաւ — հասաւ Հայաստանի Հեր և Զարեւանդ գաւառները և այնտեղ իւր բանակն ամրացնելով՝ մի մեծ զօրաբաժին ուղարկեց կողոպտելու բոլոր գաւառները։ Երբ որ Հայոց զօրքերն այս բանը լսեցին, ընտրեցին Առանձար Ամատունուն և ուղարկեցին նորա դէմ։ Առանձար իշխանը յարձակուեցաւ նոցա վերայ երկու հազար զօրքով, ջարդ ու փշուր արեց թշնամեաց բազմութիւնը, իսկ ողջ մնացածներին յետ փախցրեց իրանց բանակը և ինքն այն տեղից ողջամբ յետ դարձաւ։ Այն օրը մեծ ուրախութեան հանդէս կատարեցին։ Ուրացեալ Վասակը սուտ քահանաների ձեռքով կրկին անգամ հնարներ գործ դրեց Հայոց միաբանութիւնը քակտելու, բայց իզուր։ Այդ ժամանակն էր, որ երանելի Ղեւոնդ երէցը՝ հրաման առնելով իւր սուրբ ընկերներից, բաց արեց իւր բերանը և մի շատ ազդու ճառով ոգեւորեց և խրախուսեց զօրքին իրանց կրօնն անսասան պահպանելու։

Ղեւոնդ երէցի ճառախօսութիւնից յետոյ սեղան կազմելով՝ ամենասուրբ խորհուրդը կատարեցին. նոյնպէս աւազան շինեցին և եթէ զօրքի բազմութեան մէջ անմկրտիլ մարդ կար, բոլոր գիշերը մկրտեցին, առաւօտը հաղորդուեցան և այնպէս պատրաստուեցան առաջիկայ մարտիրոսութեան համար։ Բոլոր զօրքը ուրախութեամբ և զուարճութեամբ ձայն տուեց. «Թո՛ղ Աստուած մեր մահը հաւասարի արդարների մահի հետ և մեր արեան թափուիլը — մարտիրոսների արեան հետ. թո՛ղ հաճոյ թուի մեր կամաւոր պատարագը Աստուծուն, որ իւր եկեղեցին հեթանոսների ձեռքը չ՚տայ։»

Այս ոգեւորիչ ճառախօսութիւններից և հոգեւոր կարգադրութիւններից յետոյ էր, որ տեղի ունեցաւ այն ընդհանուր և մեծ պատերազմը, որ անմահացրեց Հայերի զէնքի և ոգու յիշատակը։ Պարսից զօրագլուխը մեծ և անդրդուելի բանակ պատրաստեց, բազմաթիւ փղերից և անհամար զօրքերից բաղկացած և խրախուսեց ու զգուշացրեց նորանց թագաւորի պարգեւներով ու պատիժներով։ Մամիկոնեան Վարդանն էլ բոլոր զօրքն այսպէս բաժանեց. առաջին գունդը յանձնեց Արծրունեաց իշխանին, և նորան օգնական նշանակեց Մոկաց Մեծ իշխանին, իսկ նոցա նիզակակից՝ բոլոր նախարարներին իրանց զօրքերով։ Երկրորդ գունդը յանձնեց Խորխոռունեաց իշխան Խորէնին և նորան օգնական նշանակեց Ընծայինին և Ներսեհ Քաջբերունուն։ Երրորդ գունդը յանձնեց Թաթուլ Վանանդեցուն և նորան օգնական տուեց Տաճատ Գնթունուն և ուրիշ շատ քաջ մարդիկներով նոցա զօրքի թեւերը պնդացրեց։ Չորրորդ գունդը վերցրեց ինքը և իրան օգնական նշանակեց քաջ Արշաւրին և իւր հարազատ եղբայր Համազասպեանին։ Այսպէս կարգեց ու սարքեց բոլոր զօրքը դաշտի վերայ, Պարսից զօրքի հանդէպը,

Տղմուտ գետի ափին։ Երբ որ այսպէս պատրաստուեցան, երկու կողմից ևս մեծ բարկութեամբ սաստկացան և գազանական զօրութեամբ յարձակուեցան միմեանց վերայ։ Երկու կողմի աղաղակների գոչիւնը նմանում էր կայծակի, որ խառնուած ամպերի մէջը ճայթմունքներ է գործում. իսկ ձայների հնչիւնը սարերի այրերն էր շարժում։ Բազմաթիւ սաղաւարտների և մետալեայ զրահների փայլմունքները տարածվում էին՝ որպէս արեգակի ճառագայթների նշոյլներ։ Անհամար սրերի շողշողալը, բազմախառն նիզակների ճօճալը, ներկայացնում էին մի երկնային ահագին հրաձգութիւն։ Ո՞վ է կարող պատմել ահաւոր ձայների սրտապատառ սարսափները, որտեղ վահանների միմեանց դիպչելու կափիւնները, աղեղնալարերի ճայթիւնները առհասարակ բոլորի ականջները խլացնում էին։

Այսպէս երկու կողմից ևս յանդուգն յարձակմամբ միմեանց ջարդելով՝ ներկայացնում էին մեծ սրտադողութեան և անչափ տարակուսութեան կսկիծ. որովհետև թանձրամիտները սարսափում էին, թուլասիրտները դողում, քաջերն առաջ էին վազում, իսկ նահատակները գոչում էին, և բոլոր բազմութիւնը միասին ժողովուելով՝ գետի երկու կողմը շարուեցան։ Պարսից զօրքը գետն անցնելու դժուարութիւնից վախենալով՝ տեղը կանգնեց։ Հայոց զօրքը գետին մօտենալով՝ ձիաւորուած անցկացաւ և մեծ սաստկութեամբ յարձակուեցաւ նոցա վերայ։ Սաստկութեամբ միմեանց դիպչելով՝ երկու կողմից ևս շատ վիրաւորներ դիաթաւալ փռուեցան գետնի վերայ։

Այն մեծ տագնապի ժամանակ վերև նայեց քաջ Վարդանը և տեսաւ, որ Պարսից զօրքի ընտիր և քաջ նահատակները Հայոց զօրքի ձախ կողմը շարժեցին. սաստիկ ուժով յարձակուեցաւ այն տեղի վերայ և Պարսից զօրքի աջ թևը ջարդ ու փշուր անելով՝ քշեց փղերի քամակը և շրջան

առնելով կոտորում էր մինչև միևնոյն տեղը, և այնպիսի սարսափ ձգեց նոցա վերայ, որ Մատեան գունտը ցրուելով բաժանուեցաւ այն մեծ ամուր պատրաստութիւնից և դեռ քաջ քաջ սկսաւ փախչիլ։

Մուշկան Նիւսալաւուրդը տեսնելով, որ Հայոց զօրքից ոմանք անջատուելով՝ յետ էին մնացել դաշտի վերայ, բարձր ձայնով քաջալերեց իւր զօրքերին, որոնք կանգնած էին Վարդանի զօրագնդի հանդէպ։ Եւ արդէն նոյն տեղն երկու կողմն ևս իրանց յաղթուած էին համարում, և սպանուածների թանձր ընկած դիակները քարակոյտի նման էին երևում։ Երբ Պարսից զօրագլուխը տեսաւ այս բանը, սպասում էր փղերի առաջնորդ Արտաշրին, որ նստած նոցա վերայ շինած բարձր դիտանոցի մէջ, պատերազմական մեծ փողերի ձայնով քաջալերում էր իւր գնդին. վերջապէս նա իւր յառաջամարտիկ զօրքով շրջապատեց Հայոց զօրավարին. բայց քաջ Վարդանը իւր անվեհեր ընկերներովը նոյն տեղը մեծ կոտորածք արաւ, ուր և արժանացաւ ընդունելու կատարեալ նահատակութիւն։

Պատերազմը տևեց մինչև երեկոյ, իսկ գիշերը վերայ հասնելով՝ վախճան դրեց կռուին։ Շատերը վայր դրեցին իրանց կեանքը։ Դիակները, որոնք խիտ առ խիտ թափուած էին միմեանց մօտ, անտառի կտրած ծառերին էին նմանում։ Այնտեղ տեսնվում էին կոտրտուած նիզակներ ու ջարդուած փշրուած աղեղներ։ Երկու կողմից սպանուածների մարմիններն այնպէս խառնուած էին, որ մերոնք չէին կարողանում ճշգութեամբ ճանաչել երանելիների սուրբ մարմինները։ Իսկ կենդանի մնացածները ամուր ձորերի և լեռնադաշտերի մէջ ցրուած՝ երբ պատահում էին միմեանց, կրկին անգամ միմեանց ջարդում էին։

Որովհետև գարնանային ժամանակ էր, ծաղկալից դաշտերը ներկվում էին յորդահոս արիւնով։ Մարդու սիրտ կրտ-

րատվում և աղիքները տրորվում էին մանաւանդ, երբ տեսնում էր անթիւ դիակները փռուած, երբ լսում էր խոցուածների մնչալը, ջարդուածների մռնչիւնը, վիրաւորների թաւալգլոր շարժումն ու սողալը, վախկոտների փախչիլը, սրտապատառների, անարի մարդկանց սրտաթափ լինիլը, կանանց աղաղակը, սիրելիների ողբալը, ազգականների լացը, բարեկամների վայն ու կոծը . . . Որովհետև ոչ թէ մի կողմը յաղթեց, իսկ միւսը յաղթուեցաւ, այլ քաջերը քաջերին պատահելով՝ երկու կողմն էլ պարտութիւն խոստովանեց։

Որովհետև Հայոց զօրավարը պատերազմի սաստիկ ժամանակն սպանուել էր, այս պատճառով ոչ ոք գլխաւոր չ՚կար, որի մօտ ժողովուէին մնացած զօրքերը։ Եւ թէպէտ մնացածները սպանուածներից շատ էին, սակայն ցան և ցիր լինելով՝ մտան աշխարհի զանազան ամուր տեղերը և տիրեցին շատ գաւառների ու բերդերի, որոնց թշնամին չէր կարողանում առնել։ Այս մեծ պատերազմի մէջ Հայոց կողմից ընկան Հազար երեսուն և վեց նահատակներ։

Ուրացեալների կողմից այն օրն սպանուեցան 3544 մարդ, որոնցից ինն հոգի մեծ և պատուաւոր մարդկանցից լինելով՝ սաստիկ վշտացրին Պարսից զօրագլխին։ Մանաւանդ երբ տեսաւ նա իւր կատարուածքի առաւելութիւնը, աւելի յուսաբեկ եղաւ և մտածում էր, թէ ինչպէս արդարանայ թագաւորի առաջ։ Մինչդեռ նա այսպիսի մտատանջութեան մէջ էր, առաջ եկաւ մեր հաւատի ոսոխը, նենգաւոր Վասակը, որ իբրև թուլամորթ էակ, պատերազմից ազատուել էր գազանների մէջ թագ կենալով, և նորան չարանենգ և խորամանկ հնարքներ ցոյց տուեց, թէ ինչպէս պատերազմէ Հայոց մնացած ուժի հետ և տիրէ բերդերին։ Պարսկի գունդերը յետև ընկած՝ որպիսի տմարդի և խաբեբայական գործեր չը

կատարեց այս փառամոլ հրէշը։ Բայց վերջապէս եկաւ ժամը, երբ անմեղ արեան բողոքը հասաւ Վերնախնամի աթոռին. եկաւ ժամանակը, երբ Պարսից թագաւորը հասկացաւ, թէ ինչ կ՚նշանակէ ունայն տեղը պատերազմիլ հաւատացեալների դէմ, որ իրանց կրօնի պահպանութեան համար ձուլուել՝ մի մարմին էին դարձել։ Այնուհետև անօրէն թագաւորն սկսեց մեղմանալ և որոնել գլխաւոր չարիքների սկզբնապատճառը։ Գանգատներն ամենայն կողմից թափուեցան ուրացեալ Վասակի վերայ։ Եւ շատ գանգատուելու կէտեր կային։ Նորա տիրանենգութիւնը, ցեղանենգութիւնը և ազգանենգութիւնն առանձին ատեանում մանրամասնաբար քննուեցաւ և արքունական գանձերի գողութիւնը, իւր բոլոր սխրագործութիւններից մինը, նոյնպէս յայտնուեցաւ։ Եւ, աւա՜ղ մարդկային մոլորութեան, ա՛յն մարդը, որ այնչափ արիւն թափեց անհաւատ թագաւորի համար, ա՛յն մարդը, որ ուրացաւ իւր Տէրը և կործանեց ու աւերեց իւր հայրենիքը, որ կարողանայ իւր անարժան գլխին կրել այդ Ազգի թագը, տեսէք, ինչպիսի վախճանի է արժանանում այն թագաւորից, որը պիտի տար նորան այդ թագն ու թագաւորութիւնը։ Մի հանդիսաւոր օր թագաւորը ճաշի հրաւիրեց բոլոր մեծամեծներին։ Հրաւիրուած էր և Վասակը։ Նա հագաւ իւր պատուական վերնազգեստը, նորա վերայ դրեց ոսկեայ խոյրը, մէջքը կապեց մարգարիտներով և պատուական ակներով զարդարուած ոսկէ գօտին, հագաւ ականջի գինտերը, մանեակը կախեց վզիցը, սամոյրը ձգեց թիկունքին և բոլոր պատուանշանները հագած՝ գնաց պալատը։ Թագաւորի արտաքին սրահում շղթայակապ կային մի քանի Հայ նախարարներ և սուրբ քահանաներ։ Երբ Վասակն անցաւ սոցա առաջով, ցաւակցական հայեացք ձգեցին այս անխելք վաճառականի վերայ, որ անսպառելի և անփոխարինելի առաքինութիւնը վաճառել էր մի քանի կանացի զարդարանքների։

Դոցա առաջից անցնելով՝ Վասակը մտաւ ներսի դահլիճը, որ մեծ իշխանների հրապարակն էր և նստեց։ Այս միջոցին թագաւորի սենեկապետը դուրս եկաւ թագաւորի մօտից, մերձեցաւ նորան և ասաց. «Թագաւորը, որից դու ստացել ես այդ պատուական պարգևները, ինձ ուղարկեց, որ հարցնեմ քեզանից, թէ ո՞ր արդար աշխատութեանդ համար ես ստացել դոքանք։» Այնուհետև պատմեց բոլոր ամբաստանութիւնները, որով նորան դատապարտել էին, նմանապէս աւելացրեց և այնպիսի բաներ, որ չէին խօսել ատեանի մէջ։ Ասաց՝ որ նա ապօրինի կերպով տիրեց Սիւնեաց աշխարհին, խորամանկութեամբ և ստութեամբ սպանել տուեց իւր եղբայր Վաղենակին և ինքն ստացաւ նորա իշխանութիւնը։ Դատապարտեց նորան և այլ շատ բաներով, որոնց բոլոր մեծամեծները վկայ էին։ Վասակը պապանձուեցաւ և ոչ մի ճշմարիտ բան չըգտնուեցաւ նորա բերանում։ Այնուհետև մահի վճիռ կարդացին նորա գլխին։ Դահճապետն եկաւ, հանեց նորանից այն պատուանշանները, որ ստացել էր թագաւորից և հագցրեց մահապարտի զգեստ։ Նորա ոտներն ու ձեռները կապեցին և իբրև անառակ կին՝ նստացրին էգ ձիու վերայ ու տարան ձգեցին այն բանտը, ուր բանտարկվում էին բոլոր մահապարտները։ Իւրաքանչիւր օր դուրս էին բերում նորան, իբրև անշունչ մարմին ձգում էին հրապարակի մէջ, ցոյց էին տալիս բոլոր զօրքին, ծաղր էին անում և՝ ծիծաղում էին վերան։ Կողոպտեցին և հանեցին նորանից ամենայն բան, ինչ որ ունէր իւր հետ և այնպիսի ծաղրալի աղքատութեան մէջ ձգեցին, որ իւր ծառաները հաց էին հաւաքում նորան տալիս։ Նորա բոլոր կալուածքները, մինչև անգամ կանանց զարդերը, արքունական պարտքի համար վերցրին։

Երբ Վասակն այսպէս ամենայն կողմից անարգուեցաւ, բանտումը կապանքների մէջ դժնդակ ցաւի մէջ ընկաւ։ Նորա փորը տաքութիւնից տապակուեցաւ. Նորա գոգը որորուեցաւ, մաշուեցաւ և քամուելով մզուեցաւ նորա թանձրամսութիւնը։ Որդեր եռացին նորա աչքերի վերայ և ներքև սողացին նորա քթածակերից, խլացան նորա ականջները և չարաչար ծակոտուեցան նորա պռօշները. հատեցին նորա կռների ջլերը և դէպի յետ կռացան նորա ոտների կրունկները։ Մահուան հոտ փչեց նորանից. փախան, հեռացան իւր հաւատարիմ ծառաները. միայն լեզուն էր կենդանի իւր բերանում, բայց խոստովանութիւն չէր դուրս գալիս նորա շրթունքներից։ Ճաշակեց խեղտամահի բաժակը և իջաւ դժոխքը անպատմելի դառնութեամբ։ Ոտի տակ տուին նորան իւր բոլոր սիրելիքը և չ՚կշտացան սաստիկ հարուածներով իւր բոլոր թշնամիքը։ Չ՚երևեցաւ այն մարդու գերեզմանի տեղը, որ կամենում էր մեղքով թագաւորել Հայոց աշխարհի վերայ, որովհետև շան պէս սատակեցաւ և իշի պէս քարշուեցաւ։ Չ՚յիշուեցաւ նորա անունը սուրբերի մէջ և չ՚մերձեցաւ նորա յիշատակը եկեղեցու սուրբ սեղանին։ Նա իւր կեանքումն ոչ մի չարութիւն չ՚թողեց, որ չ՚գործեց, և ոչ մի չարչարանք չ՚մնաց, որ չ՚հասաւ նորան իւր մահուան ժամանակ։

120. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ—ԿԱՆԱՅՔԸ։

Վարդանանց պատերազմի նկարագրութիւնը ցոյց է տալիս, թէ ինչ հոգի և եռանդ էր թագաւորում հինգերորդ դարի հայերի մէջ. բոլոր ազգը, մի սիրտ և մի հոգի դարձած, վճռել էին՝ *ազատութիւն* կամ մահ։ Բայց ազգը միայն արական անդամներից չի բաղկացած, նա ունի մի ուրիշ կիսամասը — *իգական սեռը*։ Ի՞նչ էր անում հինգերորդ դարի իգական սեռը. արդեօ՞ք նա անտարբեր էր դէպի իւր կրօնը, արդեօ՞ք նա չէր մասնակցում այն տառապանքներին, որ կրում էին նոցա ամուսինները, եղբայրները, հայրերը . . . Եթէ դուք ուշադրութեամբ կարդացէք մեր պատմածները, այս հարցերին

հեշտութեամբ կ՚պատասխանէք։ Կ՚պատասխանէք, որ երբ կինը մերժում է իւր զաւակին, իւր մարդուն՝ միմիայն այն պատճառով, որ նա դաւաճանել է իւր հաւատի դէմ, ա՛յդ կինը, ա՛յդ մայրը չի կարող զինուոր չ՚կոչուիլ։ Բայց ահա տեսէք դարձեալ, թէ ինչպէս է խօսում Եղիշէն հինգերորդ դարի կանանց մասին։

«Ես չեմ կարող համարել բոլոր Հայոց աշխարհի երանելի առաքինների, կապուածների և պատերազմի մէջ սպանուածների կանանցը, որովհետև ինձ անծանօթներն աւելի շատ են, քան թէ ծանօթները։ Հինգ հարիւրի չափ անձամբ ճանաչում եմ, ոչ միայն մեծամեծներից, այլ և փոքրերից շատերին։ Նոքա ամենքը միասին երկնաւոր նախանձով վառուած, ոչնչով պակաս չ՚մնացին նոցանից, որոնք աշխարհ չէին մտել։ Որովհետև մեծերն ու փոքրերը մի հաւատի առաքինութեամբ զինուորուեցան. նոքա ամենևին չ՚յիշեցին մայրենի ազատութեան փափկութիւնը, այլ ինչպէս գիւղացի մարդիկ, որոնք սովոր են փոքր հասակից չարչարանքներ և տանջանքներ կրելով անցկացնել իրանց կեանքը, նոյնպէս և նոքա յանձն առան նոցանից աւելի ևս համբերութեամբ դիմանալ ցաւերին։

Նոքա ոչ միայն իրանց հոգու մէջ մխիթարվում էին յաւիտենական աներևոյթ յուսով, այլ մարմնի նեղութիւններովն աւելի ևս դէն ձգեցին ծառայութեան բեռը։ Թէպէտ նոցանից իւրաքանչիւրն ունէր ձեռնասուն սպասաւորներ, բայց բոլորովին չէր կարելի նշմարել, թէ ո՞րն է տիկինը և ո՞րն աղախինը. բոլորի շորերը միևնոյն էին. երկուսն ևս միասին պարկում էին չոր խոտի վերայ։ Ոչ ոք միւսի համար անկողին չէր պատրաստում, որովհետև նոքա չէին ճանաչում խոտերը միմեանցից զանազանել, պատճառ որ, բոլոր խսիրները միապէս թխագոյն էին, իսկ գլխատակի բարձերը սև։ Չ՚կային նոցա համար առանձին խոհարարներ՝ անոյշ կե-

րակուր պատրաստելու և ոչ որոշած հացթուխներ ազատների սովորութիւններին համեմատ, այլ ամենի ուտելիքը մին էր։ Շաբաթամուտն անց էին կացնում այն միայնակեաց մարդկանց պէս, որոնք բնակվում են անապատում։ Ոչ ոք միւսի ձեռին ջուր չէր ածում և փոքրերը մեծերին երեսորբիչ չէին մատուցանում։ Սապոն չ՚գիպաւ փափկասուն կանանց ձեռքերին և հոտաւէտ իւղ չ՚գործ դրուեցաւ նոցա զուարթութեան համար։ Նոցա առաջևը չ՚դրուեցան մաքուր ամաններ և գործ չ՚դրուեցան ուրախութեան համար բաժակակալներ. ոչ ոք չ՚կանգնեց նոցա դրանը հիւրեր ընդունելու և նոցա հոյակապ տների դռները չբացուեցան պատուական հիւրերի առաջև։ Ոչ ոք նոցանից չ՚յիշեց, թէ ունեցել է մի ժամանակ փափկասնունդ դայեակներ կամ սիրելի հարազատներ։

Փոշոտուեցան ու ծխոտուեցան նախարարների սենեակներն ու վարագոյրները և սարդի ոստայն ձգուեցաւ նոցա հարսանիքի սենեակների մէջ։ Կործանուեցան նոցա տները զարդարող աթոռները և փճացան նոցա սեղանները զարդարող ամանները. կործանուեցան ու քանդուեցան նոցա հոյակապ տները և փուլ եկան, աւերուեցան նոցա ապահովութեան ամրոցները։ Զօրացան, ապանձուեցան նոցա ծաղկեալ բուրաստանները և որմատախիլ եղան այգիների գիներեր վազները։ Նոքա իրանց աչքովը տեսան իրանց կայքի յափշտակութիւնը և իրանց ականջովը լսեցին իրանց սիրելիների ցաւալից չարչարանքների հառաչանքները՝ նոցա գանձերը թագաւորական արին և երեսների զարդարանքները յափշտակեցին նորանցից։ Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որոնք գրկուած և գգուած էին իւրաքանչիւր բաստեռունների և գահաւորակների մէջ, միշտ բաց ոտով գնում էին եկեղեցի, ուրախութեամբ խնդրելով, որ կարողանան համբերել այն մեծ նեղութեանը։ Նոքա, որ իրանց մանկութիւնից մեծացել էին հորթերի ուղեղներով և էրէների փափուկ մսով, վայրե-

նիների պէս մեծ ուրախութեամբ ուտում էին խոտեղէն կերակուրները և բոլորովին չէին յիշում իրանց սովորական փափկութիւնը։ Սև գունով ներկուեցաւ նոցա մարմնի մորթը, որովհետև ցերեկն արևախորով էին լինում, իսկ գիշերը գետնի վերայ պարկում։ Սաղմոսներն էին նոցա ամենօրեայ ցաւերը թեթևացնող երգերը, և մարգարէից գրուածներն էին նոցա կատարեալ մխիթարութիւնները։ Նոքա երկու երկու միաբանուեցան, իբրև համահաւասար ջուխտ լծակիցներ, ուղիղ տանելով արքայութեան ակօսը, որ առանց սխալուելու հասնեն խաղաղութեան նաւահանգիստը։ Նոքա մոռացան կանացի տկարութիւնը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մէջ. սաստկութեամբ կռուեցին մեղքերի դէմ, կտրեցին, ջարդեցին, մի կողմը ձգեցին նորա մահաբեր արմատները։ Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեանը և սուրբ սիրով լուացին նախանձի կապոյտ ներկերը, կտրեցին ագահութեան արմատները, չորացրին նոցա ճիւղերի մահաբեր պտուղները։ Խոնարհութեամբ ջարդեցին ամբարտաւանութիւնը և նոյն խոնարհութեամբը հասան երկնաւոր բարձրութեանը։ Իրանց աղօթքներով բաց արին երկնքի փակուած դռները և սուրբ խնդրուածներով իջեցրին հրեշտակներին փրկութեան համար։ Բարի համբաւ լսեցին հեռուից և փառաւորեցին Աստուծուն երկնքում։ Նոցա մէջ եղած այրի կանայքը կրկին առաքինութեան հարսներ դարձան և մերժեցին իրանցից այրիութեան նախատինքը։ Կանայքը յօժարութեամբ կապեցին իրանց մարմնաւոր ցանկութիւնները, մասնակից լինելով սուրբ կապեալների չարչարանքներին։ Նոքա իրանց կեանքովը նմանուեցան քաջ մահուամբ նահատակուածներին և հեռուից մխիթարիչ վարդապետներ դարձան բանտարկուածների համար։ Իրանց ձեռներովն աշխատեցին ու կերակրուեցան, իրանց ռոճիկները տարէց տարի ուղարկելով կապուածների մխիթարութեան հա-

մար։ Նոքա նմանուեցան անարիւն ճպուռներին, որոնք քաղցրութեամբ երգելով՝ ապրում են առանց կերակրի և միայն օդ ծծելով կենդանի են մնում՝ անմարմիններին նմանուելով։ Շատ ձմեռների սառոյցները հալուեցան, հասաւ գարունը, եկան նոր ծիծեռնակներ, կենդանասէր մարդիկը տեսան նոցա և ուրախացան, բայց նոքա երբէք չ՚կարողացան տեսնել իրանց սիրելիներին։ Գարնանային ծաղիկները Հայոց կանանց միտը բերեցին իրանց ծաղկազարդ ամուսինները, բայց նրանց աչքերը կարօտեցան տեսնելու նոցա երեսի ցանկալի գեղեցկութիւնը։ Վերջացան որսի բ ա ր ա կ ն ե ր ը և դադարեցան որսորդների արշաւանքները։ Ննագիրներով յիշատակուեցան նոքա և ոչ մի տարեկան տօն չ՚բերեց նոցա հեռու երկրից. նոցա սեղանատան վերայ նայեցան և արտասուք թափեցին և ամեն տանեանի մէջ յիշեցին նոցա անունները։ Շատ արձաններ կանգնեցրին նոցա անուններովը և իւրաքանչիւրի անունը նշանակեցին նոցա վերայ։

Երբ այնպէս ամեն կողմից մտքերն ալեկոծվում էին, այն ժամանակը նոքա բոլորովին չէին թուլանում և չէին հեռանում երկնաւոր առաքինութիւնից։ Արտաքուստ նոքա երեւում էին զարդարուած և մխիթարուած երկնաւոր սիրով։ Այլ ևս չէին հարցնում հեռաւոր տեղերից եկողներին, թէ Երբ կարող ենք տեսնել մեր սիրելիներին, այլ նոցա դէպի Աստուած աղօթելու գլխաւոր նպատակն այն էր, որ ինչպէս սկսեցին, նոյնպէս երկնաւոր սիրով լցուած՝ քաջութեամբ մեռնին» . . .

121. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ։

Վարդանի մահից յետոյ՝ նորա և իւր ընկերների պատերազմը դեռ երկար շարունակուեցաւ։ Հայ նախարարները՝ չունենալով մի ընդհանուր սպարապետ, ամրացան երկրի այլ և

այլ մասներում և սկսան պաշտպանուիլ ու շատ անգամ էլ յարձակուելով իրանց ամուր կացարաններից, մեծամեծ վնասներ տալ Պարսից զօրքին։ Յազկերտը՝ տեսնելով իւր կրած վնասները և Հայերի անընկճելի արիութիւնը, թողութեան և կրօնական ազատութեան հրովարտակ ուղարկեց և այսպիսով առժամանակ դադարեցրեց կրօնական պատերազմի բոցավառ դրութիւնը։ Այսու ամենայնիւ Հայոց նախարարներից շատերը, որոնց Յազկերտը Պարսից դուռն էր կանչել, իբր ճշմարտութեանը վերահասու լինելու, բանտարկուած էին մինչև նորա մահը, իսկ ազատուեցան նորա յաջորդի ժամանակ միայն։ Նախարարներն ազատուեցան, վերադարձան իրանց հայրենիքը, բայց Պարսից քաղաքականութեան վտանգաւոր ուղղութիւնը նոյնը մնաց։ Պարսիկները զանազան միջոցներով, թէև ոչ զէնքի զօրութեամբ, սկսան նախարարներից շատերին դէպի կռապաշտութիւն գրաւել, մանաւանդ որ անօրէն Վասակի ընկերակիցներից ոմանք դեռ իրանց սրտի մէջ թարմ ունէին նորանից ձգած սերմերը և ջատագով լինելով մոլորապաշտութեան, մեծամեծ պատիւներ էին վայելում Պարսից թագաւորներից։ Միւս նախարարները, նախանձախնդիր լինելով հայրենի աստուածապաշտութեան, զչարվում էին նոցա վերայ, և այսպէս՝ նոյն իսկ մի տան անդամների մէջ թշնամական շարժողութիւններ էր առաջանում և մինը միւսին, տեղի թէ անտեղի, մատնում և վտանգաւոր էր ցոյց տալիս տէրութեան առաջը. իսկ թագաւորը՝ առանց քննելու ամբաստանութեան իրաւացի կամ անտեղի լինելը, վճիռ էր տալիս։ Այսպիսի անարդար երևոյթներից դրդուած՝ Մամիկոնեան քաջ Վարդանի եղբօր որդին, Վահանը, միաբանութեամբ քանի մի նախարարների, սկսեց պաշտպանել կրօնի և արդարութեան իրաւունքը, քաջութեամբ հալածեց կռապաշտ պարսիկներին և նոցա հետ մոլորուած ուրացողներին։ Չնայելով որ Վահանը սկզբում ունէր շատ սակաւաթիւ զօրք և շատ

անգամ պարսից հազարաւոր զօրքի դէմ կռւում էր երեսուն մարդով, բայց նա այնպիսի փայլուն յաղթութիւններ և սքանչելի գործողութիւններ էր անում, որ միայն նորա անունը լսելով, պարսիկ զօրքը դողում էր, և ամենքը կարծում էին, որ նորան առաջնորդում է մի գերբնական զօրութիւն։

Երբ Պարսից գահի վերայ նստեցաւ Վաղարշը (484 թ.) և իւր մեծամեծներից լսեց Վահանի անպարտելի քաջագործութիւնները, հրովարտակ ուղարկեց, որ հաշտուի և խաղաղութեամբ ապրի։ Վահանն ընդունեց թագաւորի առաջարկութիւնը, բայց ինքն էլ իւր կողմից առաջարկեց երեք պայման, աւելացնելով, որ այդ պայմանների ընդունելուց է կախուած իւր և բոլոր Հայերի հնազանդութիւնը։ Պայմանները սոքա էին. նախ՝ որ թոյլ տան Հայերին ամենայն տեղ ազատ պաշտել իրանց կրօնը, չ՛ստիպեն և չ՛ուրացնեն որևիցէ Հայի և կրակատուները վերացնեն Հայաստանից։ Երկրորդ՝ թող իմանան լաւ մարդը զանազանել վատից. մարդկանց պատուեն և վարձատրեն իրանց արժանաւորութեան վայելուչ և ոչ թէ կրօնափոխութեան պատճառով։ Երրորդ՝ թագաւորն անձամբ վերահասու լինի բողոքներին և ոչ թէ լսելով հաւատայ, և մինչև որ երկու կողմի գանգատները և արդարացուցիչ պատճառները չ՛լսի, որևիցէ վճիռ չ՛կապի։

Թագաւորը տեսաւ, որ իրաւացի էին Վահանի պահանջները, ուստի գովեց նորա ազգասիրական եռանդը և հրամայեց, որ Վահանը անձամբ ներկայանայ իրան և փառաւորուի իւր աննման քաջութեան, առաքինութեան և հայրենասիրութեան համար։ Վահանը մի քանի հաւատարիմ նախարարներով ներկայացաւ Վաղարշին և ազդու ատենաբանութեամբ բացադրեց բոլոր թշուառութիւնների պատճառները և իւր պահանջի անհրաժեշտութիւնը։ Ամենքը գովեցին նորան։ Թագաւորն արքունական հրովարտակով ու կնքով շնորհեց նորան իւր պահանջած իրաւունքները, այլ և մեծամեծ պատիւնե

տալով թէ նորան և թէ ուխտապահ նախարարներին, նշանակեց Վահանին սպարապետ Հայոց և վերադարձրեց Հայաստան։ Հայերը՝ իրանց կաթուղիկոսի—Յովհան Մանդակունու առաջնորդութեամբ նորա առաջը դուրս եկան և մեծ ուրախութեամբ և հանդիսով ընդունեցին։

Սորանից յետոյ Վաղարշ թագաւորը, տեսնելով Վահանի հաւատարմութիւնը և խոհեմութիւնը, տուեց նորան մարզպանութեան իշխանութիւն և նա եղաւ տէր և գլուխ ազգին։ Բոլոր Հայաստանը, որ ճաշակել էր պարսից մարզպանների հալածիչ իշխանութեան պտուղը, ցնծութեամբ և ուրախութեամբ լցուեցաւ։ Իսկ մեծ Հայրապետը՝ օրհնելով իւր քաջ իշխանին, մի գեղեցիկ ատենաբանութիւն արեց, որի մէջ Աստուծուն փառաբանելուց յետոյ, ցոյց տուեց Վահանի բոլոր քաջութիւնները, ազգասիրական ձգտումները և նոցա փայլուն արդասիքը և ապա օրհնելով ժողովրդին՝ դէպի ջերմեռանդ աստուածապաշտութիւն և հաւատարմութիւն հրաւիրեց։ Իսկ Վահանը՝ խոնարհելով Աստուծոյ առաջը, շնորհակալ եղաւ և այնուհետև մինչև իւր մահը հաւատարմութեամբ կառավարեց իւր ազգը և երեսուն տարի տքնելով ազգի և եկեղեցու համար՝ մեռաւ, իւր քաջագործութեան և ազգասիրութեան ոգին մեզ ժառանգութիւն թողնելով։ Վահանի մահից յետոյ Հայաստանը կառավարվում էր երբեմն հայ, իսկ երբեմն պարսիկ մարզպաններով։ Վերջիններիս ժամանակը, որ աւելի յաճախ էր պատահում, Հայաստանում նորոգվում էին Պարսից նախկին բռնութիւններն ու հալածանքները։

122. ՁՆՐԻԴ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ։

Արեգակն եկել, երկնքի մէջ տեղը բռնել էր. օրուան փուշը միջից կտրուել, տաքացել էր։ Սար ու ձոր արծաթի

պէս պսպղում պլպլում էին։ Այս միջոցին ով որ Քանաքեռ մտնէր, հէնց կիմանար, թէ երկնքից մէկ աւետեաց ձայն է եկել, աշխարհս արքայութիւն է դարձել։ Այստեղ զուռնէն էր փչում, այնտեղ ծըզլախտի էին խաղում, միւս տեղը գոտեմարտներն էին կոխ անում։ Աղասին էլ քէֆն արել՝ պըրծել՝ իր խումբը յետևից գցած՝ եկաւ մէկ տասը ձիաւորով գիւղի միջովն անցկացաւ, որ գնայ կալերի գզումը (տափարակումը) իւր շնորհքը ցոյց տայ՝ ջիրիտ խաղայ, որովհետև գիւղամիջին այդպիսի տափարակ տեղ չ՛կար։ Հէնց իմանաս մէկ թագաւորի որդի է գալիս։ Չէնք ու զրահը կապած, հրացանն ուսին, թուրը կողքիցը կախ, ջուխտ փշտովն ու դաշոյնը կողքումը, կանաչ մովի շալվարը, զառ կաբէն հագին, մետաքսէ ադլուխը վզին փաթաթած, բուխարայ թուխ գդակը կիսով չափ կտրած՝ թեք գլխին դրած, բեխերն էլ աբրեշումի պէս ոլորել՝ այնպէս էր թշի վրովը դուրս տարել։ Մտիկ անողի խելքը գնում էր։

Հեռուից երևում էր, թէ ինչ կրակ էր անում կտրիճը։ Ձիու ականջը մտած՝ այնպէս էր քշում, կրակին տալիս, որ հէնց իմանաս թևաւոր թռչուն լինի։ Շատ անգամ ջիրիդը հեռու տեղից շպրտում, ձին չափ էր գցում ու գետնիցը վեր ցատքելիս, ձիու վրայից բռնում, նորից գցում։ Շատ անգամ հէնց այնպէս ուղիղ շպրտում էր ու կրակի պէս յետևից հասնում, բռնում, էլ յետ ծուլ անում։ Գետնին վայր ընկած տեղիցն էլ այնպէս էր թամբի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին դողում էր։ Ընկերների վերայ էլ եթէ երբեմն երբեմն ջիրիդ էր գցում, այնպէս էր նշանում, որ գլխարկների ծայրին էր դիպչում, կամ գդակը հետը տանում, որ իմանան թէ նա նորանց խնայում է։ Շատ անգամ թամքի միջին ջուխտ ոտի վերայ կանգնում, այնպէս էր ձին չափ-գցում։ Աչք պէտք է լինէր, որ նորա կտրիճութիւնը, տղամարդութիւնը, շնորհքը տեսնէր ու զարմանար։

Յանկարծ՝ երբ մեր տղերքը Ջիրիդ էին խաղում և բոլոր գիւղը բարիկենդանի քէֆի մէջն էր, Հէնց բռնես մի ամպ տրաքեց, կամ երկինքը փուլ եկաւ: «Տարա՜ն, տարա՜ն, Ա՛ստուածասէրք, մօտ եկէք, օգնեցէք, գլուխս լացէք. տունս կոխեցին, օջաղս քանդեցին, աչքիս լոյսը Հանում են, Թագուհուս խլում են: Թա՛գուհի ջան, գլխիդ մատաղ գնամ, Թա՛գուհի, անունիդ մեռնիմ, աչքիս լոյսի պէս մեծացրի, որ այդ տեղն ընկնիս. թող ինձ սպանեն, այդ թուրը թող իմ սիրտս կոխեն, թող առաջ ես Հողը մտնեմ, յետոյ ուր տանում են քեզ, թող տանեն:»

Այսպէս աղիողորմ կերպով մորմոքվում էր աննման Թագուհու մայրը, որի ձեռքերը սարդարի կատաղի սպասաւորները զօրով կամենում էին նորա մին ու ճար աղջիկը դուրս խլել և սարդարի պիղծ կանանոցում գերի շինել: «Ձայնդ կտրի՛ր, անզգամ, ասում էին անբաղդ մօրը. Հէնց այս րոպէիս փորդ վէր կ՚ածեմ: Սարդարի Հրամանն է՝ պէտք է ձեր աղջիկը քաշենք, տանենք, ի՞նչ խօսք ունիք, ի՞նչ կարողութիւն. սարդարի Հրամանին սարը չի դիմանալ՝ դուք ի՞նչ կարող էք անել:»

Խալխի գլխին ջուր մաղուեցաւ. բարիկենդանը Հարամ եղաւ. ամէնքը ձեռները խաչած, մնացին կանգնած. սարդարի ֆառաշները եկել էին, որ աղջիկ քաշեն, ո՞վ յանդգնութիւն ունէր ընդդիմանալ: Երեխանց լացը, կանանց սուգ ու ողբը իրար խառնուեցան: Գիւղը Հէնց բռնես՝ գլխովին քանդուեցաւ: Տարաբաղդ մայրը շատ գլուխը թակելուց՝ նուաղեց, անշնչացած վայր ընկաւ: Թագուհին Հօ վաղուց էր թուլացել: Հէնց այն է՝ ֆառաշները տեսնելով՝ որ մայր ու աղջիկ դարդի ձեռքից նուաղեցան, էլ ձայն, շունչ չէին տալիս, լաւ Համարեցին՝ որ այսպէս թուլացած՝ վերցնեն երկուսին էլ տանեն: Երկուսը ձիու վերայ նստել՝ այն է տեղ էին բաց անում, որ մէկը մօրը խորտի, միւսը աղջկանն առաջն առնի,

—մէկ թուր պսպղաց, ֆառաշների մէկի գլուխը գետնի վերայ ընկաւ ու սկսեց ղլդըլացնել ու պար գալ: Դեռ սա ձայնը չէր կտրել, որ միւս ընկերն էլ սորա Հացը կերաւ, սորա մօտ գնաց:

«Ա՛ղասի ջան, ձեռդ քեզ քաշի՛ր, քո խեղճ, ալևոր Հօրը խնայի՛ր, մեր տունը մի՛ քանդիր,» ձայն տուեցին չորս կողմից Հայերը: Բայց թնդանօթ էլ տրաքէր, Աղասին չէր իմանալ. էլ ոչ ականջն էր իրանը, ոչ մարմինը, ոչ աչքը. բայց խելքն ու ձեռքը լաւ իմանում էին, թէ ինչ բանի վերայ են: Ջիրիդատեղիցը նկատել էր, որ աշխարհն իրարոցով դիպաւ ու ձայնը կտրեց: Տղէք, սորանում մէկ բան կայ, գնանք. մեր բարիկենդանը Հարամ եղաւ:» Առիւծի պէս ներս ընկաւ Հսկայ երիտասարդը: Երկուսի գլուխը սրբելուց յետոյ՝ միւսները կամեցան, որ թուր Հանեն, բայց քաջն Աղասի որ բերանը բաց չ՚արեց. «Դժողքի՛ որդիք, ձեզ ո՞վ է ուղարկել այստեղ, ո՞ւմ վերայ էք այդպէս կատաղել. ասենք թէ Հայը ձայն չի Հանում, պէտք է նորան ողջ-ողջ ուտէք. աչքներիդ լոյսը կը թռցնեմ այս րոպէիս. կորէք, թէ չէ ամէն մէկդ ճուտի պէս առաջս կը թըրպըրտաք:» Ասեց ու մէկի էլ ուսը վէր բերեց, միւսի աղիքը վէր ածեց: Մնացած վեցը տեսան որ ճար չ՚կայ, ձիանը Հեծան ու մինչև Երևանի բերդը մէկ գնացին:

123. ԱՂԱՍՈՒ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՀՈԳՍԵՐԸ:

Աղասին՝ երբ Քանաքեռ սարդարի ֆառաշներին սպանեց, ինքն էլ այնպէս մնաց ազիզ Թագուհու և իւր արածի վերայ սառած՝ կանգնած: Ընկերներն էլ ժամանակ չ՚կորցրին. գիտէին՝ որ բոլորի վերջը մահն է. էլ ոչ Հօր մտիկ արին, ոչ մօր, Աղասուն կապեցին ձիու վերայ ու ընկան Աբարանի սարը, որ կամ Փամբակ փախչին, կամ Ղարս, կամ Ախալցխայ, որ իրանց գլուխն ազատեն:

Բայց ի՜նչ Աղասու հալն էր, Աստուած ո՛չ շհանց տայ. ձեռն ու ոտը կապած, դժոխքը փորումը, սադայէլեան չար հրեշտակները գլխին պտոյտ տալով՝ Զանգուի վրայով անցկացրին ու հէնց բռնես՝ սար ու ձոր բերանները բաց՝ կամենում էին նորանց կուլ տալ։ Շատ տեղ իրանից գնում՝ փոքր էր մնում ձիուցը վայր ընկնի. դարձեալ ընկերները հասնում, երեսին ջուր էին ածում, ականջները տրորում, ուշքի բերում. կրկին սիրտը գնում՝ ձիու գլխովն էր ընկնում։ Երբեմն էլ որ յանկարծ՝ «Թա՛գուհի, հա՛յրիկ, մա՛յրիկ, Նա՛զլու» չէ՛ր ձայն տալիս՝ քար ու հող կամենում էին կրակուիլ։ Հէնց մութը գետինն առաւ, նրանք ներս մտան Աբարանի քանդուած եկեղեցին։ Ձիանքը որ շունչ չէին քաշում, աչքներից կարծես արիւն էր կաթում, քթից ու բերանից՝ կրակ։ Վաթոն սկսեց ձիանը ման ածել. Կարոն սար ու ձոր աչքի տակն առնել, հսկողութիւն անել. Մուսէն՝ Աղասուն ուսին դրած, մտաւ եկեղեցու աւերակը, գլուխը դրեց գոգը, ձեռը երեսին ու աչքը երկինքը գցեց, որ իմանայ թէ աստղերն ի՞նչ են ասում։ Միւսները այս կողմ այն կողմն ընկան, որ ձիանոնց համար մի փոքր ուտելիք ճարեն։ Բայց այն ժամանակ հանդումն ի՞նչ կը լինէր. խոտի չոփերն էին մնացել տեղ տեղ ցից կանգնած։ Երկինքն աչք ու յօնք կիտած՝ իր անիւը պտըտում էր. հանդարտ լուսինը ամպերի տակիցը մէկ երեսը հանում, ցոյց էր տալիս, մէկ էլ ծածկում, կորչում էր։ Գերեզմանատունն այնքան սարսափելի չէր լինիլ, ինչպէս այս ամայի հանդը։ Ամէն մէկ սարի արանքից կամ քարի տակից դժոխքի ձայն էր գալիս։ Գայլ, չաղալ, արջ մէկ կողմից՝ դառնաշունչ բուքը միւս կողմից, Սանդարամետը բաց էին արել, սար ու ձոր իրար գլխով տալիս։ Ամեն մէկ քար, ամեն մէկ թուփ նորանց աչքին դև էր դառել, ու ձին ոտը փոխելիս, կամ փռընչալիս՝ քարերը կամենում էին ճաքիլ, ձորերը տրաքիլ։ Աղասին՝ շունչը փորն ընկած, երբեմն որ ա՛խ չէ՛ր քա-

շում, գետինն ուզում էր պատռուի, ընկերներին ներս տանի։ Նորա հաւատարիմ շունը գլուխը նորա ոտի տակն էր դրել՝ մնացել փէտացած։ Ձին էլ բերին, գլխավերևը կապեցին, որ գուցէ նորա շունը Աղասուն մի ճար անի։ «Ջանի՛դ մատաղ, Աղասի, այս ի՞նչ օրն ես ընկել, մեր աչքը պէտք է դուրս գար, որ քեզ այսպէս չ՛տեսնէինք. այս ի՞նչ է քո դրութիւնը, ասում էր երիտասարդ Մուսէն ու գլխին տալիս, երեսը երեսին դնում, ձեռը կուրծքին. երակի զարկն ու ջերմի սաստկութիւնն էլ որ չէր տեսնում, գլխին կրակ էր վառվում։

Միւս ընկերներն էլ, ձիանոնցը ջուր տուեցին, ձեռները քամակներին քսեցին և նորից թամքեցին, սանձը բերանը գցեցին, հրացանների, ատրճանակների ոտներն էլ քաշեցին, նորոգեցին և ամեն մարդ իւր ձիու սանձը ձեռին՝ եկան, Աղասու չորս կողմը կտրեցին։ Աչքերից արտասուքը գետի պէս էր վէր թափվում։ Ծնողաց հոգսը մէկ կողմից, իրանց սև օրը միւս կողմից, իրանց սիրելի ընկերին էլ այդ դրութեանը տեսնելիս՝ ուզում էին քար ու թուփ պոկեն, գլխներին տան։ «Փառքի՛դ մատաղ, Աստուած, հէնց այս առաւօտ ամեն աչք մեզ էր երանի տալիս՝ ի՞նչ արինք, որ մեզ այս պատժին հասցրիր։ Ա՛ղասի ջան, Աղասի՝ ի՞նչ կը լինէր, որ ամենքս էլ քո բաղդին մատաղ լինէինք. Եղբա՛յր ջան, մե՛ր հոգի, մե՛ր աչքի լոյս։ Մէկ ճանճ անգամ իգուր տեղը չես սպանել, մէկ սառը խօսք քո բերնիցը չի դուրս եկել, ա՛յ Աստուծու զառը, ուրեմն ինչի՞ պէտք է Աստուած քեզ էլ, մեզ էլ այստեղ հասցնէր։ Տօ՛ մէկ բերանդ գոնէ բաց արա՛, քո ջանին մեռնիմ. ինչի՞ ես այսպէս մեզ այրում, փոթոթում. ի՞նչ կը լինի, որ այդ սիրուն աչքդ բաց անես, մեզ այսպէս չ՛սպանես։ Մեր գլուխը քեզ մատաղ, ամէնքս էլ քո առաջ մեր արիւնը վէր կ՛ածենք։ Կաթն ու ծիծ մէկ տեղ նորա համար ենք կերել, որ քեզանից ձեռը քաշենք, բաղդ ու լաւ օր մէկ տեղ նորա համար ենք վայելել, որ քեզ նեղ օրը բաց թողնենք։

Որխս ուզում ես, վե՛ր կաց, քո ձեռովը մատաղ արա՛, ով երեսը յետ թեքի, պարանոցը կտրիր, քո ձեռին մատաղ. ա՛խր մէկ խօսես ի՞նչ կը լինի:»

Այս խօսքին յանկարծ մէկ ձիու ոտի շփլթոց եկաւ: Երկինք, գետինք գլխներին սևացաւ. Հէնց իմացան մէկ ամպ տրաքեց, մէկ սար գռռաց՝ փուլ եկաւ: Ձէնք ու զրահ առան ուսները. ամեն մէկը մէկ բուռը հող սրբութիւնի տեղակ բերանը գցեց, մէկ քարի առաջի չոքեց, իր մեղքը խոստովանուեց, մէկ քանի ծունր դրեց, երեսին խաչ հանեց, ժամի քարերը պաչելով՝ տեղիցը վեր կացաւ, ձիու աչքերը ճմռեց, աղալեց, որ ականջները սրել, խլշացրել՝ այն կողմն էին մըտիկ անում, որտեղից ձայնը գալիս էր: Շունը մի կողմ քաշեցին, մատով ձեռով արեցին, որ ձայն չ՚հանի, ու իրանք թուր ու հրացան պատրաստած, ձիու սանձը գցած՝ սկսեցին պատի ճեղքիցը անձայն ականջ դնել, որ տեսնեն եկողներն ովքեր են:

Այսպէս կէս ժամաչափ մնացին փէտացած, էլ չէին ուզում ծպտան. շատ մտիկ արին, ձայն չ՛եկաւ. Հէնց այն է՝ կամենում էին տեղները նստել, որ մէկը այն կողմիցն սկսեց բերանը բաց անիլ. «Տղէրք, ինչ կը լինի թող լինի. տղամարդութիւնն այն է, որ մարդ իւր գլուխը թշնամու ձեռքը չ՚տայ: Դուք լաւ գիտէք, որ մեր մէկ հայը տասը թուրքի հաւասար է: Երևում է յետևներիցս մարդ են գցել, թո՛ղ գան, դրանց [illegible] իրանց խռով կենայ: Բոլորին կամ կը ջարդենք, կամ կը ջարդուինք: Մէջք մէջքի տանք, տմարդի մուհթաջ չ՚լինինք:

Հէնց այս խօսքն էր Կարոյի բերանում, որ յանկարծ երկու գազ ծուլ եղաւ, թուրը դուրս քաշեց և կամենում էր որ դուրս պրծնի. բայց ընկերները փեշիցը քաշեցին, ձեռքները բերան դրին, որ սուս տեղը նստի. որովհետև ձիանոց ոտի թրըխկոցն ու փռնչոցը այնպէս մօտեցաւ, որ կ՚ասես թէ

ականջների տակին լինէր: Բայց նորանք լաւ գիտէին, որ գիշերը ձայնը շատ շուտ տեղ կը հասնի, այդ պատճառով էլ չ՚ուզեցան, որ իրանց տեղն իմաց անեն ու նորանք հազրուած գան: Քիչ քիչ եկողների խօսակցութիւն էլ էին ջոկում, որովհետև պարզկայ գիշեր էր, քարերն էլ էին համբաւ բերում:

«Լաւ ուժ են տուել», ասաց թուրքերից մինը. «կեցցեն. անիծած բուքն էլ հետքերը կորցրել է. գիշեր էլ է, որ գոնէ մարդ տեսնի. բայց ո՞ւր կը կորչին. երկնքումն էլ լինին, վար կը բերենք. դեռ քշենք. այս ամայի տեղը նորանք չէին մնալ:» — Թո՛ւր, հրացա՛ն պատրաստի պահեցէք, ասաց թուրքերից մէկը. մի գուցէ հէնց այս թփերի տակ թագկացած լինին, ասածներս լսեն ու յանկարծ այնպէս վրայ թափուին, որ էլ չ՚կարողանանք ձեռներս գլուխներս տանել: Սրան Աբարան կասեն. Աղասու պէս առիծը այսպէս տեղը մէնակ քսան ձիաւորի չի ասիլ, թէ Աստուած է ստեղծել:

— Տօ, քիչ գովիր այդ պիղծ, անհաւատ հային, չէ՛, չէ՛ մեզ ողջ ողջ կ՚ուտի: Հայն ինչ է, որ ինչ ջան ունենայ: Չ՚մեռնիմ, մինչև աչքս նորան հասնի. կը տեսնէք, թէ ինչպէս ճուտ կը դառնայ առաջիս: — «Ա՛յ տղայ, ա՛յ տղայ, ասաց այն կողմից թուրքերից մինը. այս եկեղեցուց հեռու կենանք. սորա միջումն, ասում են, սուրբ Մողնու մասունք կայ թաղած ու դուք լաւ գիտէք, որ այս գիժ սրբի հետ գլխի տալ չի լինիլ. մարդի պարանոցը ծռում, երեսն յետևն է ընկնում . . . Հազար այսպիսի բան իմ աչքովս եմ տեսել. Հայ, Թուրք, ամենն էլ նորա ծառան են:» — «Բերանիցդ հայի հոտ է գալիս, մա՛շադի, ասաց մի ուրիշ թուրք. տօ, հայն ի՞նչ է, որ իր սուրբն ի՞նչ լինի: Ես քո ջգրու այս գիշեր մինչև սորա միջումը խորոված չանեմ, չուտեմ, ձիս միջին չ՚կապեմ, բաս ես մարդ չեմ: . . »

Դեռ խօսքի կէսը թուրքի բերանումն էր, որ ո՛վ Սուրբ Սարգիս ձայն տալն ու թուանքների ճռռոցը մէկ եղաւ:

«Տղէք, ձեր ջանին մեռնիմ, էլ մտիկ մի՛ անէք. մեր թուրը նրանց գլուխը. էլ որ օրուան համար ենք կողքներիցս կախ անում,» ձայն տուեց Հսկայ Կարոն. «երեքի գլուխը գնաց, սրանց ֆէր՞ անխծած։»—Երկուսին էլ իմ թրիս մատաղ արի, քաջացէք, այն կողմիցը գոռայ Վաթոն։»—Երկուսն սպանել, մէկի գլուխն էլ ահա՛ ոտքիս տակն է, ասաց Վանին։—Տղէք, փախան, ձիանը հեծէք, սրանց եկած ճանապարհը քոռանայ. սովորել են գիւղերումը հաւի գլուխ թռցնելով մտն գան, Հայերի արիւնը խմեն. սրանց տունը քանդուի. տղէք, յետամուտ եղէք, սուրբ Սարգսի ջանին մեռնիմ. Հրապարակը մերն է. ասացին ու վիշապի պէս ընկան թշնամու քամակից, ո՛րին ինչ տեղ հասցրին, այնտեղ կտոր կտոր արին։ Քար ու սար աչքներին լոյս էր տալիս, կռներին ույժ։

Բայց ա՛խ, արիւնն աչքները կոխած՝ հէնց քշեցին գնացին, էլ միտք չարին, թէ Աղասին ինչ նեղ դրութեան մէջ ընկեր է ձայն տալիս, ընկեր չ՛կայ, ախ է քաշում, ձայնը լըսող, իմացող չ՛կայ։ Հրացանները որ միանգամից չ՛ճռռացին, հէնց իմանաս թէ հոգին յետ եկաւ տեղը. վրայ թռաւ տեղիցը, ընկաւ ձիու քամակը ու խելքը կորցրածի պէս՝ էլ չիմացաւ, թէ ուր է գնում։ Թուրը որ մէկի գագաթին չ՛հասցրեց, գլխի հետ երկու կտոր եղաւ, մինչև թուրը կամ գաշոյնը կը հանէր, պարանն ընկաւ ճտովը ու շատ էլ կամեցաւ որ ձին առաջ քշի, չ՛եղաւ. ձին տակիցը դուրս թռաւ, ինքը գետնին դիպաւ ու չորս հսկայ տղամարդ վրայ թափեցին։ Նորա շունը վաղուց էին ուզում սպանել, որ ձայն չ՛հանի. բայց այս տիրասէր հաւատարիմ կենդանին՝ տեսնելով որ իւր տիրոջն էլ օգուտ չի անիլ, ընկաւ գնացածների յետևիցը։ Աղասու ձեռները կապեցին, բերանը բամբակով լցրին, աղլուխով պինդ հուպ տուին ու աչքդ բարին տեսնի. միւս օրն էր թնդանոթն ու Աղասու ջանը։

Շատն ու քիչն Աստուած գիտէ, թէ ուր հասան, տղերքը յանկարծ որ յետ դարձան, գլխներին կրակ վառուեց, երբ Աղասու շունը տեսան ճանապարհին։ «Վա՛յ, մեր տունը քանդուեց, տղէք», ձայն տուին. «այս ինչ արինք. մեր ձեռովը մեր աչքը հանեցինք. հասնինք, գնանք. էլ ինչ ենք անում մեր գլուխը, երբ նորան կը տանեն։ Բայց ո՛ւր Աղասին... Լուսնիակ գիշերը շատ այս ու այն կողմն ընկան, բան չըգտան. էլ յետ հաւաքուեցան ու միտք արին։ Տղէք, մնանք այստեղ. Աղասու շունը՝ տեսնում էք, անյայտացել է. նա իմաստուն կենդանի է. ինչպէս որ լինի՝ հոտի վրայ կարող է գտնել. թէ ճար կայ, նրանից կը լինի այս գիշեր. մենք ոչինչ չենք կարող անիլ։» Այսպէս բաւական ժամանակ տարակուսած միտք էին անում, որ յանկարծ խելօք շունը՝ լեզուն հանած, հեւթեւթալով լոյս ընկաւ։ Շունը վազեց, նրանք յետևից։ Բաւական տեղ անցկենալուց յետոյ՝ շունը յետի ոտը վէր քաշեց՝ կանգնեց։ Շատ էլ զօր արին, որ տեղիցը եռայ, չ՛եղաւ։ Իսկոյն իմացան գգոյշ կենդանու միտքը, ձիաներից վէր եկան, մէկին տուին ու Կարոն առաջներն ընկած՝ կամաց կամաց ոտները փոխեցին։ Մէկ բլրակի մօտեցան թէ չէ, էլի շունը կանգնեց, հոտոտեց։ Հրացաններն առան ձեռները։ Աստուծոյ ողորմութիւնը հասաւ, նրանք այն կողմիցը գնացին, որ բլրակի ստուերը մնաց առաջներին։ Քարերի տակովը փորսող անելով՝ այնքան գնացին, որ մտան մէկ քանդուած փոսի մէջ։ Ջուր չ՛կար միջումը. անձրևի ճղած էր։ Բլրակի ստուերը մէկ հինգ գազ էլ այն կողմն էր ընկել նրանց գլխի վրայովը։ Այս հեղեղատի միջովն այնքան այսպէս զգուշութեամբ գնացին կռացած, որ թշնամին մնաց դէմուդէմը։ Լուսնիակը հէնց ընկաւ թուրքերի ճակատներին, տեսան որ Աղասին մէջներումը չի. սիրտներն ընկաւ տեղը. մի փոքր էլ շունչ առան ու ամէն մէկը մէկի ճակատին նըշանիլը, հրացանների տրաքիլն ու թշնամիների բանհոգի լինիլը մէկ եղաւ։ Հաւի պէս դեռ այնպէս թրպրտում էին, որ

մեր տղայքը վրայ հասան։ Ա՜խ, ո՞վ է կարող նորանց ուրախութիւնն ու արտասուքը պատմել. երկնքիցը իրանց հոգին յետ բերին. էլ նրանց բերանն ինչ խօսք կը գար։ Որ էլ ժամանակ չ՚կորցնեն, վեր առան իրանց կորցրած գանձը, հանեցին թշնամու զէնք ու զրահը, և բարձեցին թուրքերի ձիանոնց վերայ ու ճանապարհ ընկան։ Ո՞վ կը զարմանայ, որ լսի, թէ Աղասին ամէն անգամ իր շանը տեսնելիս՝ ուզում էր կեանքը նրան տայ։ Նշաններով մինչև տասն և հինգ մարդ այն գիշերն սպանել էին։ Երբոր կրկին եկեղեցու մօտ հասան, հանեցին մի քանի շահի փող, դրին սեղանի վերայ, չոքեցին, Աստուծուն փառաբանութիւն տուին ու ճանապարհ ընկան։

124. ԱՂԱՍԻՆ ԱՆԻԻ ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՄ։

I.

Հանգստարանի ձայն էր գալիս, երբ մեր ճանապարհորդները գիշերուայ կիսին Անիի պարիսպներին մօտեցան։ Լաւ կտրիճ մարդ պէտք է լինէր, որ այս ժամանակին այսպիսի վայրենի ամայի տեղ վստահանար մտնիլ։ Գուցէ մեր յոգնած ճանապարհորդներն այստեղ չ՚հասնէին, եթէ հեռուից լուսնեակի լուսով նոքա չ՚խաբուէին տաճարների ու բուրգերի գլուխները նշմարելով։ Նրանց խաբողը մանաւանդ իրանց տգիտութիւնն էր. Անի քաղաքի անունն էլ չէին լսել, ուր մնաց որ իմանային, թէ նորա աւերակները դեռ աշխարհումս կան։ Ճշմարիտ է՝ հեռուից աքաղաղի ձայն չէր գալիս, բայց սարերի հովիւների ձայնը լսելով՝ էլ կասկած չունեցան. ուղղակի քշեցին ու մտան ամայի քաղաքի մէջ։ Մի րոպէական սարսափ կալաւ կտրիճ երիտասարդներին. հէնց իմացան՝ թէ մեռելատուն կամ գերեզմանատուն ընկան և ամէն մէկ ձիու ոտի շփլթոցը կամ իրանց քաշած շունչը սար ու ձոր կ՚ասես թէ կատաղեցնում էր։

Ամենայն մարդ փորձած կը լինի, որ երբ մարդս մութը ժամանակի մէկ գերեզմանատան կամ քանդուած եկեղեցու մօտով անցնում է, սիրտը թուլանում է, մարմինը ցնցվում, հազարաւոր ցնորքներ հոգին կտրատում, քարերն էլ դև ու վիշապ համարում, որ իրան կամենում են ուտել. շատ անգամ ուշագնաց էլ է լինում։ Սորա պատճառն այն է, որ մարդ սովոր է, ինչ տեղ տուն է տեսնում կամ շինութիւն, կարծում է թէ նորա մէջ մարդ կը լինի, բայց յետոյ, որ ձայն չի լսում, այնպէս է ենթադրում, թէ անպատճառ չար հոգիք են այնտեղ բուն դրել։ Ապա թէ ոչ՝ մեռելի չոր մարմինը կամ աւերակ պատերը ինչ զօրութիւն ունին, որ մեզ ինչ անեն։ Էլ ով սիրտ կ՚անէր ապա մէկ եկեղեցու մօտենալ կամ մէկ բուրջ մտնել, այն էլ այնպիսի ժամանակ, երբ ամէն քարի տակի հարիւր գլուխ էր կտրվում։ «Տղէք, չար սատանի թուրը գլխներիս խաղում է,» ձայն տուեց քաջն Աղասի. «Տղամարդութիւնն այսպիսի տեղը յայտնի կը լինի. զէնք, զրա՛հ պատրաստեցէք, ձիանոցը հանգստացրէք, որ եթէ Աստուած տայ մինչև առաւօտ գլխներս վրաներս լինի, տեսնենք թէ այս ո՞ր տարտարոսն ենք ընկել։ Տմարդութիւնն էլ ձեռք չի տալ. ձիանները ջրեցէք, քաշեցէք մէկ պատի տակ, ես մէկ շունս առնեմ, կամաց կամաց մէկ աչք ածեմ՝ տեսնեմ թէ տեղներս ապահով է, թէ էլի սրով ու արիւնով պէտք է կամ գլուխ պահենք կամ գլուխ կտրենք։» Ընկերները շատ խնդրեցին, որ չ՚գնայ, ականջ չարեց. հրացանն ուսին դրեց, փշտովները (ատրճանակ) պատրաստեց, Սուրբ Սարգսի անունը տուեց ու ոտը փոխեց։ Դիժ կը լինի այն մարդը, որ իւր գլուխը մահու կը տայ. բայց Աղասին իւր գլխից վաղուց էր ձեռք վերառել։ Հաւատարիմ շունը գլուխը նորա ոտիցը չէր հեռացնում. մէկ հոտ առնելիս՝ կամ շշուկ լսելիս՝ կանգնում էր յետի ոտների մինն էլ ցցում, երկար ժամանակ ականջ դնում, յետոյ առաջ գնում։

Հէնց մի փոքր Հեռացան թէ չէ՝ մէկ եկեղեցու դռնից կրակի լոյսն ընկաւ Աղասու աչքը։ Արիւնն աչքերն առած, էլ չ՚մտածեց՝ թէ այսպիսի տեղը գողից, թշնամուց աւելի ուրիշ ոքմին չի լինիլ. ուղիղ կրակի վերայ գնաց։ Աստուած Հեռու տանի, ինչ նա տեսաւ. տասը քուրդ եկեղեցու մէջ տեղը կրակ էին վառել, չորս կողմը նստել՝ խորոված էին անում, շամփուրներով բերանները քաշում, ուտում, խնդում և աչքները զգաստ որսորդի շան պէս կամ դէպի դուռը դըցում կամ դէպի սուճախը։ Թշնամին որքան էլ գազան լինի, շատ անգամ իւր ստուերից էլ կը վախենայ։ Մինչև որ նըրանք կրակի մօտիցը ձեռներն աչքներին կը դնէին ու դրան ուրուականը կը տեսնէին, Աղասին կամաց կամաց ներս մըտաւ, ծանր դէմքով՝ առանց բարև տալու, կրակին մօտեցաւ ու ձեռը մեկնեց, որ մէկ խորովածի շամփուր էլ ինքը քաշի։ Նրա դեղնած մեռելային պատկերը, նրա անահ շարժմունքը ու այնպէս անժամանակ և անակնկալ ներս գալը երբ տեսան քրդերը, Հէնց իմացան թէ նա այն աշխարհից է վայր եկել. լեզուները չորացան, ձեռները թուլացան. ինչպէս կարող էին կարծել, թէ այդ միջոցին ադամորդին մենմենակ սիրտ կանէր այն աւազականոցը մտնել, որի մօտիցն անցկենալիս ցերեկն էլ Հարիւրաւոր մարդիկ սարսափում էին, որի մէջ Հազար տարուց աւելի էր, ոչոք չէր վստաՀանում գալ և պատրաստի տներում բնակութիւն Հաստատել։ Բայց Աղասին այնպէս էր ձևացնում, իբր թէ իր առաջինը մարդիկ չեն. աչքը խոժոռած՝ մէկ այս կողմը գցեց, մէկ այն կողմը. քրդերէն էլ չ՚գիտէր, որ մէկ բառ անգամ խօսի. բայց այս էր որ նորան ազատեց, որովՀետև եթէ խօսեցել էր, կիմանային, որ մարդ է, դև չէ, և իսկոյն պատառ պատառ կանէին։ Մէկ շամփուր խորովածից որը կերաւ, որն էլ յետ կրակը գցեց, տաճարի Հիանալի շինուածքին ու գեղեցկութեանը մտիկ արեց ու գլուխը շարժեց։ Քրդերը փէտացած՝

մնացել էին նստած. աչքը որ յանկարծ նրանց վրայ չ՚խոժոռեց, ամէն մէկը քիչ մնաց որ տեղն ու տեղը Հալուի։ Այնքան այսպէս նրանց աչքը մոխիր ածեց, որ ընկերների ոտի շփլթունն իմացաւ և շունն ուրախ ուրախ ներս ընկաւ, ոտներովը փաթաթուեցաւ։ Հէնց շունը տեսան թշնամիքը թէ չէ, աչքների փառը վայր ընկաւ. ամէն մարդ թրին վրայ վազեց, որ նրան կտոր կտոր անի։ Առաջին թուրը վրայ բերողի գլուխը կէս եղաւ. փշտովների երկուսն էլ իրանց որսը ճարեցին. յետոյ գաշոյնը Հանեց և գոռաց. «Տղէք, ձեր արևին մատաղ, Աստուած մեր կողմն է, դուռը փակեցէք, որ սրանց մատաղն այս գիշեր անենք։» Հայի խօսքեր որ չ՚լսուեցան, Հէնց բռնես պատերը լեզու առան. «Ամա՛ն, ձեր եկած Հոգին մատաղ, ճար ունիք՝ տեսէք, մեզ ազատեցէք», լսուեցաւ տաճարի խորքից։ Տասը-տասնուՀինգ քրդստանցի Հայ էլ այս կողմից այն կողմից որ գլուխ չ՚բարձրացրի՛ն ու քրդերի մնացած թրերն ու մզրախները ձեռք առան, թշնամու աստղը թեքուեցաւ. ութը կոտորուել էին, երկուսը մնացել վիրաւորուած, ընկած. սրանց էլ կապեցին մէկ ձիու բՀրի (ցից) վրայ ու... աչքդ բարին տեսնի. երբէք մարդկային քաջութիւնը այն բարերարութիւնը չի արել, ինչպէս Հիմակ։ Աղջիկ ասես, տղայ, Հարսը, երեխայ, ծծկեր՝ Հազարաւոր թոկերով կապած՝ տուն էին արել, Ղարսի գիւղերիցը գերի բերել, որ տանեն կամ սարդարին ընծայեն, կամ ծախեն։ Ում այսպիսի րոպէին մարդ կեանք տայ, որ նրա առաջին ծունր չ՚դնեն, երկրպագութիւն չ՚անեն։ Բայց Հսկայն Աղասի ինքն էր ընկնում նրանց ճտովը, ինքը նրանց կապը յետ անում, ինքը երեխային ջոկ, մօրը ջոկ փայփայում, գուրգուրում, որ Աստուծուն փառք տան, սուրբ Սարգսին խունկ ու մոմ վառեն, ապա թէ ոչ սա իւր շնորՀքը չէր։ Ոչինչ գիշեր այն լոյսը, այն կեանքը չի տեսել, ինչպէս այս։ Ազատուողք թէ ազատողք իրար տեսնելիս՝ Հէնց իմանում էին՝ թէ երկնքումն են և ոչ երկրումը։

II.

Փոքր ինչ որ հանգստացան, աչքդ բարին տեսնի։ Քրդերի շորերը, զրահները, ձիու սարքը և խուրջինները որ բաց չարին, հազար արիւնի գին կար մէջներումը. ամէն մէկի վերայ հարիւր թումանի զարդ, արծաթ ու ոսկի կար, բացի պատրաստի փողից։ Աղասին ոչ մէկին մտիկ չարեց, ուղարկեց՝ ձիանքը բերել տուեց, ներս քաշեց և քրդստանցի հայերին հարցրեց, որ իրան միամտացնեն, թէ արդեօ՞ք այն գիշերը կարող են այնտեղ ապահով ու հանգիստ մնալ թէ ոչ։

—Ա՛ղա, գլխուդ, արևուդ ղուրբան, վալլախայ չընք գինայ, թէ էս շան լաճերիցն էլ կան, թէ չէ. ամա օյաղութիւնն աղէկ է։ Սրանց չանգիցը շունը չի խլրսի, մարդն իմա՞լ կը խլրսի։ Մկայ Աստծուն փառք. խազար էնպէս ջանավար մեր առաջը գան, գէնոնց խէրն անիծեմ, մէկ թուր տո՛ւր մեր ձեռը, մենք գինանք թէ իմալ քո ճակատը պարզ կէնենք։ Մեր ամէն մէկը, սուրբ Կարապետ գինայ, էսոնց տասնին խաւի պէս կը ծալի, տակը կը քաշի. դու դարդ մի արա՛, ռահաթ պարկի, մեր երեսն ոտացդ հողն ըլի։ Էսոնց քոքը կտրվի, քանց շուն շատ են, քանց գէլ առաւել։ Թէ մեզ կը խարցնես, մենք էմլայ խէյրաթ կը տեսնենք, որ մեր կէսը պարկի, կէսը ղարաւուլ քաշի. էս ձորեր խանայ լիքն են։»

Հէնց այս զրոյցն էին անում, մէկ էլ այն տեսան, որ ձիաւորի ոտի ձայն է գալիս։ Արիասիրտն Աղասի միտք արեց, որ սրանք նրանց ընկերները պէտք է լինին. ական թոթափել՝ մանուկներին ու կանանց մի կողմը քաշեց, հազար անգամ ձեռքը սրա ու նրա բերանին դրեց, որ ձայն չ՚հանեն, երկու քրդին էլ, որոնք կենդանի էին մնացել, բերան, ձեռք, ոտք աւելի պինդ կապեց ու մէկ քաջ քրդստանցու՝ թուրը հանած, վերաները կանգնացրեց, միւս քրդստանցոց կրակի չորս կողմը նստացրեց, որ կարծիք չ՚ընկնին, ու ինքն

իր քաջասիրտ տղերանցովը եկեղեցու դրան աջ ու ձախ կողմը կտրեցին՝ թուրները հանած՝ պատն ի վեր ցցուեցին ու թշնամուն ճանապարհ տուին։

Լոլոյ ձայն տալով՝ քանից աւելի ձիաւոր ժամի դրանը վեր եկան, ձիանը տուին մէկ երկուսի ձեռքը, որ ման ածեն։ Նրանց բերած հայի երեխաների ու կանանց ողբի ու լացի ձայնը որ ժամը չէր ընկնում, պատերն էլ սուգ էին անում։ Բայց խեղճերը չէին իմանում, թէ Աստուած ինչ բարի հրեշտակ է ուղարկել նրանց համար։ Քրդերը հէնց խմբովին որ աղմուկ անելով ներս չ՚ընկան, էլ չիմացան թէ մարդ է, որ իրանց գլուխը կտրում է. դև կարծեցին կամ սուրբ. էլ թրի, տեգի կամ վահանի ժամանակ չէր։ Քրդըստանի հայերը միջոց էլ չ՚տուին աջամի հայերին. շատին հէնց կրակի շամփուրը կամ թուրն էին բերանը կոխում, գլխին, կուրծքին քարով, փայտով ծեծում, որ շուտով չ՚մեռնին ու տանջուին։ Էլի Աղասին էր, որ այս կատաղութեանը չափ դրեց. սպանածներին դուրս ածել տուեց ու որք կենդանի էին կամ վիրաւորուած, ձեռն ու ոտք կապել տուեց ու մի կողմ քաշել տուեց։—«Ա՛ղա, մեր տուն քանդող էսոնք են, էսոնց խոր տունը քանդուի. էսոնք մեր ճիժ ու մանչ խատացրին. թո՛րկ, թո՛րկ էսոնց սատանի կեր անենք, էսոնց խոր գաղտը գեօռբէզեօռ ըլի։»

Թող կարդացողն ինքը մտածի, թէ այս գիշեր ինչ գիշեր կը լինէր այս ջրատար գերիների համար, թէ ինչ սրտով նրանք աղօթք կ՚անէին, ինչ հոգով իրար կը նայէին ու Աստուծուն փառք կը տային։ Զարմացած, մահի դուռը գնացած ու յետ եկած հայերը իրանց ազատողին որ չ՚տեսան, կամենում էին ոտներն արտասուքով լուանան. բայց համեստ երիտասարդը հէնց այն էր խնդրում, որ Աստուծուն փառք տան, սուրբ Սարգսի և սուրբ Կարապետի անունը յիշեն։ Աղասու սիրտը վկայում էր, թէ այն գիշերը այլ ևս փորձանք

չ՚կար։ Բոլորին էլ խնդրեց, որ չոքեն, աղօթք անեն։ Գերիների մէջ տէրտէր էլ կար, տիրացու էլ. սրանք սկսեցին առաւօտեան ժամերգութիւնը…

125. ԻՆՉԵՐ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ ՔԱՋՈՒԹԻՒՆԸ։

I.

Արեգակն սկսել էր՝ որ մայր մտնի. մութն այն է գետինն առաւ։ Աղասին աչքը ձորին գցեց՝ աչքը սեւացաւ. Հինգհարիւր ձիաւորից աւելի թարաքեամայ, քուրդ՝ Ղարսի դաշտավայրից հազարից աւելի ընտանիք, ապրանք, հօտեր, ջոկեր առաջ էին արել ու վերհատելով՝ սարից ձորն արին, որ տանեն Երեւան՝ կամ սպանեն, կամ ծախեն, կամ թուրքացնեն։ Նատին այնքան ծեծել էին, որ մարմնի մէջ այլեւս ոյժ չէր մնացել։ Հէնց նստած տեղից ընկերներին զգուշութեամբ ձեռով արեց, որ տեղներից չ՚շարժուին. ինքն էլ քարափն ի վայր կուզէկուզ նորանց մօտ հասաւ, այնպէս որ թշնամին չ՚տեսնի և իր պատրաստութիւնը չ՚անի։ Այնքան կացան, որ թշնամիքն եկան՝ գետի ափին վէր եկան, թուրները, երեսները լուացան, նամազներն արին և իրանց ծառաներին հրամայեցին, որ գերիների մէջ որքան ավեր լօղնած ծեր կամ պառաւ կայ՝ աչք ու ձեռք կապեն, բերեն իրանց առաջին չոքացնեն կարգով, որ իրիգնահացն ուտեն, սրբնեն ու նրանց անմեղ գլուխը իրանց պիղծ սրին մատաղ անեն։

Մինչև անգամ թոյլ չ՚տուին, որ հայր ու որդի կամ մայր ու աղջիկ իրանց յետին բարովն ասեն, իրար համբուրեն, իրար օրհնեն, իրարով փարուին. Թրի յետքով ջարդելով, ծեծելով՝ հրամանը կատարեցին և բերին ողորմելիքը իրար մօտ չոքացրին։

Մինչև այս ամէնը կը կատարէին՝ սար ու ձոր մութն առաւ։ Մեր քաջ հայերը թուր ու հրացան պատրաստեցին,

չոքեցին, աղի արտասունքով աղօթք արին, յետոյ վերկացան, միմեանց յետին բարեւը տուին, ձիաները մէկին պահ տուին ու Աստուծոյ անունը յիշելով՝ ճանապարհ ընկան, բայց այնպիսի ճանապարհով, այնպիսի տեղով՝ որ թռչունն էլ չէր իմանալ։ Հինգը մէկ կողմից գնաց, հինգը միւսից. մնացած տասը հոգին էլ այնպէս պէտք է գային, որ բոլորը մէջ ամէին, թրի առաջին ընկածը կտորէին, կենդանի բռնուածներին գերի անէին և որքան կարելի է կապոտած հայերին արձակէին, նրանց թուր ու հրացան տային, որ օգնութիւն անեն։ Այսպէս՝ բոլորը քսան մարդ պէտք է հինգհարիւր մարդի հախից գային։ Լսողը թող չ՚զարմանայ, թէ այս ինչպէս կարելի է. քաջութիւնը սրտից է կախուած. մէկ էլ որ ինչ կուզէ թշնամին շատ լինի, յանկարծ վրայ—տալիս, այն էլ գիշերը, ինչ կարող է իմանալ դիմացի կռուողի շատութիւնն ու սակաւութիւնը։ Բացի սորանից՝ Աղասին պատուէր էր տուել, որ հայերէն կամ թուրքերէն ամենևին չ՚խօսեն, քրդերէն դուրս տան։ Եւ այն գերի արած հայերի մէջ ինչպէս կը լինէր, որ մէկ երկու հարիւր տղամարդ չ՚լինէր, որոնք սուր չ՚ունէին, նորա համար էին խեղճացել։

Հէնց այն սուփրի ու խարովածի չաղ ժամանակը՝ հրացանների տրաքիլը, տասնուհինգ քսան թշնամու հոգին տալը, ձիանոց խառնուիլն ու թշնամու փախչիլը մէկ եղաւ։ Աղասին՝ իւր ընկերների կէսը վերան, ձորի ճանապարհն էր կտրել, միւս կէսը հարիւրից աւելի հայ արձակած, յետևները գցած, ձորի յետևն էին բռնել։ Մի քսան—երեսուն մարդ էլ վրայ թռան այն խեղճ չոքածների աչք ու ձեռները յետ արին, և այս ավեր ծերունի, որոնց մազերը կռվումն էր սպիտակել, թուր որ չ՚տեսան ձեռներին, առիւծ դարձան. որը մէջ տեղիցը, որը ձորի քամակիցն ու յետևիցը այն կարկուտն ածեցին թշնամու գլխին, որ Աստուած հեռու տանի։ Ղարսցի հայերը այս ձորի քարերն էլ ունէին համարած.

ինչտեղ փշտով կամ հրացան էր տրաքում կամ թուր խաղում, առանց կուրծքի ու գլխի չէր անցկենում։ Մենակ Նաղի-խանն ու Օքիւզ-աղան, ինչպէս որ եղաւ, գլխները թափեցին, ձիանները ձեռք գցեցին ու մէկ քանի մարդով դուրս փախան։ Մնացածը՝ ինչ կոտորուել էին կոտորուել, ինչ չէ՝ մնացել էին ձորի մէջը հովիւը կորցրած ոչխարների պէս կանգնած։ Սրանց մեր տղէքը մինչև ծէգը բացուիլն այսպէս պահեցին։ Ծէգը որ բացուեց, աչքդ բարին տեսնի. տասնից աւելի ուղեղ մենակ Աղասին էր ցրուել։

Լսողը կարելի է զարմանայ, թէ ինչպէս այսքան բաները մէկ օր ու գիշերումը պատահեցան։ Ղզլբաշը այս միջոցումը Ղարսի վերայ պատերազմ էր դուրս եկել և պատմածս 1821 թուին էր, երբ սար ու ձոր, մանաւանդ Անին, գողի ու աւազակի բնակարան էր դառել։

Առաւօտը լուսացաւ։ Այն առաւօտը երանի ամէն խեղճի ու տառապեալի պատահի։ Հինգ հարիւր հոգուցը վաթսուն հոգի չէր մնացել։ Ձիուն, շորին, զէնք ու զրահին թիւ ու համար չ՚կար։ Լեզու պէտք է լինի, որ պատմի այն փառքը, այն ուրախութեան արտասուքը, որ այսօր Անին տեսաւ։ Ղարսցի հայերը՝ կասես թէ դեռ չէին հաւատում, թէ ճշմարիտ թշնամու ձեռքից ազատուած, նորից իրանց աշխարհը պէտք է գնային։ Աղասուն ասացին, որ Հասան-խանը Ղարսից որտեղ որ է յետ կը գայ։ Քաջ երիտասարդը շուտով մարդիկ ուղարկեց Գիւմրի (Ալէքսանդրօպօլ) բարութ բերելու, միւսներին էլ հրամայեց, որ էլ ժամանակ չ՚կորցնեն, օղլը-շաղը տանեն բերդումն ամրացնեն, ապրանքը ձորն ի վեր քշեն, Շիրակայ հանդը տանեն. իսկ ինքը՝ որքան զէնք բռնելու ընդունակ մարդիկ կային, գլխին հաւաքեց։ Տասը-տասնուհինգ տարեկան պատանիներն էլ առիւծ էին դարձել, կամենում էին իրանց արիւնի վրէժը հանել։

II.

Արեգակը երկնքի միջիցը երկու գազաչափ թեքուել էր, որ բերդիցը մէկ թոզ տեսան. փոշին քիչ քիչ շատացաւ և ամպի պէս Անիի բոլոր դաշտավայրը բռնեց։ Երակ էր, որ ուզում էր տրաքիլ, սիրտ էր, որ ուզում էր պատռիլ։ Շատերն ուզում էին բերդ ու ձոր թողնեն, հրապարակ դուրս գան, իրանց տղամարդութիւնը ցոյց տան։ Աստուծոյ ողորմութիւնից այնպէս էր երևում, որ թշնամին ոչինչ բանից տեղեակ չէ. հէնց նորա համար է այնպէս ոտն առել, որ գայ այնտեղ մի փոքր հանգստանայ և յետոյ իրիկնահովին ճանապարհ ընկնի. հետները ոչ թնդանօթ էր երևում, ոչ ջըխ-խտայ. հէնց սոսկ ձիաւորներն էին ճանապարհ ընկել, որ հասնեն Երևան, աւետիք տան, թէ Ղարսն առան, քանդեցին, բոլոր գիւղօրայքն էլ քոչացրել, թրի առաջն են արել, բերում են։ Այնպիսի մարդաշատ երկիրները քանդող Հասան-խանը էլ ինչ կասկած կը տանէր, թէ մէկ աւերակ տեղում, ուր հովիւներն էին իրանց օրերն անցկացնում, ագռաւները բուն դնում, գլխին փորձանք պէտք է գայ։

Փոշուց գոյացած մառախուղի տուտը քաղաքը բռնեց. աւերակ պարիսպն ու այգիքն էլ՝ հէնց գիտես, իրանց քանդողներին տեսնելով, աչքները խփում էին, չէին ուզում մտիկ անիլ։ Աստուծու աչքը որ քաղցր լինի, մատաղի գառը իրան ոտովը կը գայ դուռդ, ասած է։ Հէնց այս օրինակին բանը պատահեցաւ. քաղաք մտնիլն ու Հասան-խանի ձիուց վէր գալը, վրաններ զարկիլը մէկ եղաւ։ Ղզլբաշի սովորութիւնն է՝ ձիուց վէր եկաւ թէ չէ, հրացան ու զէնք կը գցի թամբի ղաշը, ձիանը ման ածել կը տայ, չորս-հինգ ձի մի ծառայի ձեռք տուած, ինքը թէ նամազի ժամանակ է՝ նամազը կանի, թէ հացի՝ կալիանը կը քաշի ու հացի կը նստի ծաչապատիկ։ Այս անգամ երկուսի ժամանակն էլ էր։ Ծանա-

պարհից եկած, ջարդուած, քանի մէկ տեղ, հարիւրը միւս
տեղ, եափունջիները փռեցին, կոլոլ քարերը ու սանդրները
ծոցներից, թրերը պատեաններից հանեցին, առաջներին
դրին և սև սև սատանաների պէս, լեզու, բերան փակած,
սկսեցին բարձր ու ցածր անել. երեսները դնում են քարի,
թրի վրայ, փոքր ժամանակ մնում գետնին կպած, էլ յետ
գլխները վեր քաշում, նորից երեսի վրայ ընկնում, գդակը
գլխներին, յետոյ բարձրանում, կիսով չափ գլխները կախ գը-
ցում, աղօթքները մեղմով քթների առաջին այնպէս ասում,
որ իրանց ականջն էլ չէր իմանում, յետոյ ձեռները ծնկների
վերայ դնում՝ քարին թրին կռացած մտիկ տալիս, էլ յետ
չոքում, գլխները գետնին կպցնում։ Մահմեդականին նամազ
անելիս որ գլուխը կտրես, ամեն մարդ էլ գիտէ, երեսը չի
թեքիլ, այնքան է յարգում իւր աղօթքը, բայց մի բառ ան-
գամ չի հասկանում, որովհետև բոլոր աղօթքները Արաբե-
րէն են։

Հէնց առաջին չոքելումը կամեցան մեր տղայքը, որ
վրայ տան, բայց քաջն Աղասին մատը բարձրացրեց, որ տեղ-
ներից չ՚եռան։ Նա Ղզլբաշի մէջ մեծացած լինելով, գիտէր,
որ նամազը մինչև կէս չ՚լինի, ժամանակը չէ։ Փոքր ժամա-
նակից յետոյ Երևանի կողմից հեռուից մի երկու ձիաւոր
երևեցան. նրանք ձիանոց ականջը մտած, ուղիղ այդ տեղ
էին գալիս։ Էլ ժամանակ չէր կարելի կորցնել։ Նամազի ամե-
նաջերմ ժամանակն էր։ Հէնց մէկ էլ ձեռները ականջներին
դրին, չոքեցին ու գետնին կպան, հրացանները բերդիցը ճըռ-
ռացին, սար ու ձոր թնդացին, եկեղեցիքը գլուխ բարձրաց-
րին, ձիանքը թոկ ու սանձ կտրեցին, երկու հազարից աւելի
եափունջի, թուր, հրացան, գետնի վրայ մնացին, ու Ղզլբաշի
շատը անգդակ, բոբիկ ընկաւ ձորնըվեր, որովհետև հրաշքից
կամ քաջքից աւելի՝ ոչինչ չէին կարծում. քաջասիրտ հայի
տղայքը, քար ու ձոր բռնած, էլ այնքան հրացանին չէին

զօր տալիս, որքան թրին ու դաշոյնին։ Գազան Հասան-խանի
մահը լաւ էր մօտեցել, բայց նորա բաղդն էր, որ այն Երև-
անից եկող ձիաւորները հէնց այս ժամին ձորաբաշը հասան.
մինչև հայի տղայքը ոտով նրանց կը հասնէին, սրանք ներ-
քև եկան, Հասան-խանին ձիու վրայ դրին ու թռցրին։ Ողոր-
մելին ձորի այս կողմից որ աչքը չ՚գցեց և իր ջրատար բա-
նակը տեսաւ, երեսը կալաւ ու ձիուն մտրակել տուեց։ Հա-
զար մարդից աւելի հողին տուել էին այսօր. միւսները՝ որը
քարափի գլխովը վայր ընկել, կտոր կտոր եղել, որը բանհոգի
եղած՝ վայրընկած մնացել, որն էլ քարի, թփի տակի թագ
կացել, ճապաղել։ Շատին հէնց այսպիսի տեղերից հանեցին,
կռները կապեցին ու դարիգուս տարան։ Հարիւրից աւելի գե-
րի էլ այսօր ձեռք բերին։ Փոքր ժամանակի մէջ Անին այն-
պիսի անուն հանեց, որ ողջ Երևան դողում էր։

III.

Անիի բոլոր դաշտավայրը կրակ էր դառել։ Իմացել էր
քաջն Աղասի, որ Հասան-խանը Ղարսի բոլոր ժողովուրդը
քոչացրել, ուզում էր որ բերի Երևան ածի։ Լաւ իմանում
էր, որ սրանց վրայ զօրք էլ որ լինի, այնքան շատ չեն լի-
նիլ, որ իրան դէմ կենան։ Հասան-խանին որ կոտրեց, նրան
ինչ կը դիմանար։ Նրա համար կռուիլը խաղալիք էր դար-
ձել. մինչև առաւօտն սպասել չէր ուզում. կասկածում էր՝
թէ նրանց գլխին էլ այն բերեն, ինչպէս միւս հայերին, և
ծեր ու պառաւ սուրը քաշեն։ Երկու հարիւրաչափ ընտիր
ձիաւոր քամակը գցած, դուրս եկան դաշտը. այն միջոցին
վրայ հասան, որ նոր վէր էին եկել ու շունը տէրը չէր ճա-
նաչում։ Կայծակի պէս վրայ տուեց։ Թշնամին այնպէս ցրուեց,
որ մէկը չ՚մնաց։ Հայերին որ չ՚արձակեցին ու մէկ տեղ հա-
ւաքեցի՛ն, նրանք իրանց հոգսը մոռացած, ձայն տուին եկող-

ներին, որ թափ ու չոբանները ձեռք գցեն և սուրճաններին հալածեն: Սարվազները երկու հազարից աւելի էին: Հասան-խանը թողել էր սրանց, որ ժողովուրդը քշեն-բերեն: Երբ որ աղաղակն ու վրդովմունքն ընկաւ, հէնց իմացան թէ եկողներն ռուս են. բոլորն էլ թնդանօթները թողին ու ձորը թափուեցին: Մէկ քանի Երևանցի թնդանօթաձիգ և սարվազ ձեռքներն ընկաւ. էլ ինչ էր պակաս, որ Անի քաղաքին թշնամի մօտենայ: Ինչպէս որ էր՝ գիշերն անցկացրին: Միւս օրը որ լուսացաւ, Աստուծոյ լոյսն ընկաւ Հայերի վերայ: Այնքան փառօք, հրացան, թնդանօթ էին ճարել, որ ողջ աշխարհք պոկ գար, նրանց վնաս չէր լինիլ: Աղասին այստեղ էլ փորձ փորձեց հայերին համոզել, որ Անի մնան. բայց նրան լսող չ՚եղաւ:

Ղարսեցիք խնդալով, պար գալով յետ դարձան և իրանց հողը մտան: Աղասին էլ աչքերը սրբելով՝ ախ քաշելով Անին թողեց հեռացաւ:

126. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ:

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ.
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտռում եմ:

Բայց նոքա միշտ յեղ-յեղուկ
Պղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով՝
Փախչում էին լալագին:

«Արա՛քս, ինչու ձկանց հետ
Խաղ չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սգաւո՞ր ես ինձ նման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քո սեգ հպարտ աչերից.
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:

Մի՛ պղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ խայտալով՝
Մանկութիւնը քո կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով:

Վարդի թփեր թող բռնին
Քո հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ:

Մըշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քո ջրին
Ծըկուն ոստըն ու տերև
Թող թաց անեն տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քո վճիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ:»

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իւր տակից,
Ամպի նըման գոռալով՝
Էսպէս խօսեց յատակից:

—«Խիզա՛խ, անմիտ պատանի,
Ներհըս ինչո՞ւ դարևոր
Վրդովում ես նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր:

Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել որ այրին
Ոսկից գլուխ պճնուի
Իւր զարդերով թանկագին:

Ո՞րի համար զարդարուիմ,
Ո՞րի աչքը հրապուրեմ.
Տատերն ինձ են ատելի,
Տատերին ես օտար եմ:

Կար ժամանակ, որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պճրանքով
Փախչում էի ափերէս:

Ցատկս պարզ ու վճիտ,
Գոհակներս ոլորուն,
Լուսաբերը մինչև այգ
Ջրիս միջին էր լողում:

Ինչըս մընաց այն օրից՝
Ո՞ր ջրամօտ գեղերըս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս:

Տուրքը ջրի ամէն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախընամ ինձ սընունդ
Պարգևում է լիառատ:

Բայց ես այն սուրբ ջրերով
Սուրբ Յակոբայ աղբիւրին
Պիտի յօղեմ արտորայք
Իմ ատելի օտարին:

Կամ՝ կենսատու իմ ջրով
Ափերիս մօտ կըկըզած
Իր նամազը կատարէ
Թուրք կամ պարսիկը հատած:

Մինչ իմ որդիք — ո՜վ գիտէ —
Ծարաւ, նօթի, անտէրունջ,
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով, կիսաշունչ...

Հեռո՛ւ, հեռո՛ւ քըշեցին
Բընիկ ազգը իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկրօն, մոլեկան:

Դոցա՞ համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ՝ դոցա՞ հըրապուրեմ
Ծըպռոտ, պըլշած աչերը:

Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կըմընան պանդուխտ

Ինձ միշտ սըգւոր կը տեսնէք, Յորձանք տուեց ահագին,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ... Օղակ օղակ օձի պէս
Է՛լ չի խօսեց Արաքսը, Առաջ սողաց մոլեգին։

127. ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌ ԿՌՈՒՆԿՆ։

Կռո՜ւնկ, ուստի՞ կը գաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մի չ՚ունի՞ս.
Մի՛ վազիր, երամիդ շուտով կը հասնիս,
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չ՚ունի՞ս։
Թողել եմ ու եկել մըլքերս ու այգիս,
Քանի որ ախ կանեմ, կը քաղուի հոգիս.
Կռո՜ւնկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս,
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չ՚ունի՞ս։
Սրրտերնիս կամեցաւ, ելանք գընացինք,
Այս սուտ տեղացիկս հոգսերն իմացինք,
Աշ ու հոյշէր մարդկանց կարօտ մընացինք.
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չ՚ունի՞ս։
Տեղացոնց բաները կամաց կամաց է.
Գուցէ Աստուած լսէ. դըռնակըն բացէ.
Ղարիբի սիրտն է սուգ, աչերն ի լացէ։
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չ՚ունի՞ս։
Ա՛ստուած, քեզնից խնդրեմ շնորհ, գըթութիւն,
Ղարիբի սիրտն է խոց, լեարդ ու թոքն արիւն,
Կերած հացն է լեղի, ջուրն է դառնութիւն։
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չ՚ունի՞ս։
Ոչ ըզ-լուր օրն գիտեմ, ոչ ըզ-կիրակին,
Զարկած է գլխս շամփուրն ըռնած կըրակին.
Այրիլը չեմ հոգար, ձեզի կարօտիմ։
Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չ՚ունի՞ս։
Բաղդադու կը գաս, կ՚երթաս ի Սեհրադ,

Թըղթիկ մի գըրեմ, տամ քեզ ամանաթ,
Աստուած թող վըկայ լինի քո վըրադ,
Տարեալ հասուցես զայդ իմ սիրելեաց։
Գրեր եմ մէջ թըղթիս, թէ հոս մընացի,
Օրիկ մի օրիկ զաչերս չը բացի,
Սիրելիք, ձեզանէ կարօտ մընացի։
Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չ՚ունի՞ս։
Աշունն է մօտեցել, գընալու ես թէտարիր.
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չը տուիր, ելար գընացիր,
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն գընա՛, հեռացի՛ր։

ՎԵՐՋ։

4573

2013

Հայաստանի Ազգային գրադարան

NL0439457